3186

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

Ի. ՍՏԱԼԻՆ

1. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ЗК 33
Լ-35

ԿՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1933

ՀԿ(բ)ԿԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍՀՐԱՏ

21 JUN 2005
3К33 / L-35

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

20 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

1. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

3969
1007 / 34035

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

05 .0000 2013. 12
3186

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1924 Թ. ԱՊՐԻԼԻ ՍԿԶԲԻՆ ՍՎԵՐԴԼՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՐԴԱՑԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվիրում եմ լենինյան կոչին
Ի. ՍՏԱԼԻՆ

Լենինիզմի հիմունքները—մեծ թեմա յե։ Մի ամբողջ գիրք ե անհրաժեշտ այդ թեման սպառելու համար։ Ավելին, անհրաժեշտ են մի ամբողջ շարք գրքեր։ Ուստի, բնական ե, վոր իմ դասախոսությունները չեն կարող լենինիզմի սպառիչ շարադրությունը լինել։ Նրանք կարող են, լավագույն դեպքում, լենինիզմի հիմունքների լոկ հակիրճ կոնսպեկտը լինել։ Չնայած դրան, յես ոգտակար եմ համարում շարադրել այդ կոնսպեկտը, վորպեսզի տամ լենինիզմի հաջող ուսումնասիրության համար անհրաժեշտ միքանի հիմնական մեկնակետեր։

Շարադրել լենինիզմի հիմունքները, այդ դեռ չի նշանակում շարադրել Լենինի աշխարհայացքի հիմունքները։ Լենինի աշխարհայացքը և լենինիզմի հիմունքները միևնույնը չեն ըստ իրենց ծավալի։ Լենինը մարքսիստ ե, և նրա աշխարհայացքի հիմունքը, իհարկե, մարքսիզմն ե։ Բայց դրանից բնավ չի հետևում, վոր լենինիզմի շարադրությունը պետք ե սկսել մարքսիզմի հիմունքների շարադրությունից։ Շարադրել լենինիզմը՝ նշանակում ե շարադրել այն առանձնահատուկը և նորը Լենինի աշխատություններում, ինչ մտցրել ե Լենինը մարքսիզմի ընդհանուր գանձարանը և ինչ բնականորեն կապված ե նրա անվան հետ։ Իմ դասախոսությունների մեջ միայն այս իմաստով յես կխոսեմ լենինիզմի հիմունքների մասին։

Ուրեմն, ինչ ե լենինիզմը։

Վոմանք ասում են, թե լենինիզմը մարքսիզմի կիրառումն ե ռուսաստանյան իրականության յուրահատուկ պայմանների նկատմամբ։ Այդ բնորոշման մեջ ճշմարտության մասնիկ կա, սակայն նա հեռու յե ամբողջ ճշմարտությունը սպառելուց։ Լենինն իսկապես կիրառեց մարքսիզմը ռուսաստանյան իրականության նկատմամբ և կիրառեց վարպետորեն։ Բայց յեթե լենինիզմը լոկ մարքսիզմի կիրառումը լիներ Ռուսաստանի յուրահատուկ պայմանների նկատմամբ, ապա այն ժամանակ լենինիզմը կլիներ զուտ ազգային և միմիայն ազգային, զուտ ռուսական և միմիայն ռուսական յերևույթ։ Այնինչ մենք գիտենք, վոր լենինիզմը ինտերնացիոնալ յերևույթ ե, և վոչ թե միայն ռուսական, և իր արմատներն ունի ամբողջ միջազգային զարգացման մեջ։

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այս բնորոշման մեջ կա միակողմանիություն։

Ուրիշներն ասում են, թե լենինիզմը XIX դարի քառասնական թվականների մարքսիզմի հեղափոխական տարրերի վերածնունդն է՝ ի տարբերություն հետագա տարիների մարքսիզմից, յերբ վերջինս իբր թե դարձավ չափավոր, վոչ-հեղափոխական։ Յեթե մի կողմ թողնենք Մարքսի ուսմունքը նման տխմար ու գռեհիկ ձևով յերկու մասի՝ հեղափոխական և չափավոր՝ բաժանելը, ապա պետք է ընդունել, վոր նույնիսկ այդ բոլորովին թերի և անբավարար բնորոշման մեջ ճշմարտության մի մասնիկ կա։ Ճշմարտության այդ մասնիկն այն է, վոր Լենինն իրոք վերածնեց մարքսիզմի հեղափոխական բովանդակությունը, վորը կոծկել եյին II Ինտերնացիոնալի ոպորտունիստները։ Բայց դա ճշմարտության լոկ մի մասնիկն է։ Ամբողջ ճշմարտությունը լենինիզմի մասին այն է, վոր լենինիզմը վոչ միայն վերածնեց մարքսիզմը, այլև մի քայլ առաջ գնաց, ավելի ևս զարգացնելով մարքսիզմը կապիտալիզմի և պրոլետարիատի դասակարգային կռվի նոր պայմաններում։

Ուրեմն, վերջիվերջո, ինչ է լենինիզմը։

Լենինիզմը պրոլետարական հեղափոխության և իմպերիալիզմի դարաշրջանի մարքսիզմն է։ Ավելի ճշտորոշ՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան է ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և տակտիկան՝ հատկապես։ Մարքսը և Էնգելսը գործում եյին նախահեղափոխական ժամանակաշրջանում (մենք նկատի ունենք պրոլետարական հեղափոխությունը), յերբ դեռ գոյություն չուներ զարգացած իմպերիալիզմը, յերբ պրոլետարները հեղափոխության եյին պատրաստվում, յերբ պրոլետարական հեղափոխությունը դեռ անմիջական գործնական անխուսափելիություն չեր։ Իսկ Լենինը—Մարքսի և Էնգելսի աշակերտը՝ գործում եր զարգացած իմպերիալիզմի, ծավալվող պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունն արդեն հաղթանակել եր մի յերկրում, փշրել եր բուրժուական դեմոկրատիան և բացել պրոլետարական դեմոկրատիայի դարագլուխը, խորհուրդների դարագլուխը։

Ահա թե ինչու լենինիզմը մարքսիզմի հետագա զարգացումն է։

Սովորաբար նշում են լենինիզմի բացառիկ մարտական և բացառիկ հեղափոխական բնույթը։ Դա միանգամայն ճիշտ է։ Սակայն լենինիզմի այդ առանձնահատկությունը բացատրվում է յերկու պատճառով.—նախ՝ վոր լենինիզմը ծագեց պրոլետարական հեղափոխությունից, վորի կնիքը նա չի կարող չկրել իր վրա, յերկրորդ՝ վոր նա աճեց ու ամրապնդվեց II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի դեմ ունեցած մարտերում, վորի դեմ մղված պայքարը յեղել է և է կապիտալիզմի դեմ հաջող պայքար մղելու անհրաժեշտ նախապայմանը։ Չպետք

է մոռանալ, վոր մի կողմից Մարքսի և Էնգելսի և մյուս կողմից Լենինի միջև ընկած է II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի անբաժան տիրապետության մի ամբողջ շրջան, ոպորտունիզմի, վորի դեմ մղվող անողոք պայքարը չեր կարող չկազմել լենինիզմի կարևորագույն խնդիրներից մեկը։

I. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Լենինիզմն աճեց և ձևավորվեց իմպերիալիզմի պայմաններում, յերբ կապիտալիզմի հակասություններն իրենց գագաթնակետին հասան, յերբ պրոլետարական հեղափոխությունն անմիջական պրակտիկա հարց դարձավ, յերբ հեղափոխության համար բանվոր դասակարգի նախապատրաստվելու հին ժամանակաշրջանը դեմ առավ և գերաճեց կապիտալիզմի դեմ անմիջական գրոհի նոր ժամանակաշրջանի։

Լենինն իմպերիալիզմն անվանում եր «մեռնող կապիտալիզմ»։ Ինչու։ Վորովհետև իմպերիալիզմը կապիտալիզմի հակասությունները հասցնում է ամենավերջին կետին, ամենավերջին սահմաններին, վորոնցից այն կողմն սկսվում է հեղափոխությունը։ Այդ հակասություններից ամենից կարևորները պետք է համարել յերեքը։

Առաջին հակասությունը — դա հակասությունն է աշխատանքի և կապիտալի միջև։ Իմպերիալիզմն արդյունաբերական յերկրներում մոնոպոլիստական տրեստների և սինդիկատների, բանկերի և ֆինանսական օլիգարխիայի ամենակարողությունն է։ Այդ ամենակարողության դեմ մղած պայքարում բանվոր դասակարգի կռվի սովորական մեթոդները՝ արհեստակցական միությունները, կոոպերատիվները, պարլամենտական կուսակցությունները և պարլամենտական պայքարը, միանգամայն անբավարար դուրս յեկան։ Կամ անձնատուր յեղիր կապիտալի վողորմածությանը, առաջվա նման քարշ տուր քո գոյությունը և ստորացիր, կամ նոր զենք վերցրու— իմպերիալիզմն այսպես է դնում հարցը պրոլետարիատի միլիոնավոր մասսաների առաջ։ Իմպերիալիզմը բանվոր դասակարգին մոտեցնում է հեղափոխությանը։

Յերկրորդ հակասությունը— դա հակասությունն է զանազան ֆինանսական խմբավորումների և իմպերիալիստական պետությունների միջև յեղած այն պայքարում, վոր նրանք մղում են հումքի աղբյուրներ, օտար տերիտորիաներ ձեռք բերելու համար։ Իմպերիալիզմը կապիտալի արտահանությունն է դեպի հումքի աղբյուրները, այդ աղբյուրները մոնոպոլ ձևով տիրապետելու համար մղվող կատաղի պայքարն է, պայքար, վոր մղվում է արդեն բաժանված աշխարհը վերաբաժանելու համար, պայքար, վոր առանձին մոլեգնությամբ մղվում է «արևի տակ տեղ» փնտրող նոր ֆինանսական խմբավորումների և պետությունների կողմից հին խմբավորումների և պետությունների դեմ, վորոնք ամուր կառչել են իրենց տիրացածին։ Այդ կատաղի պայ-

քերը կապիտալիստների զանազան խմբավորումների միջև նշանակալից է նրանով, որ նա պարունակում է իր մեջ, որպես անխուսափելի տարր, իմպերիալիստական պատերազմներ, պատերազմներ օտար տերիտորիաներ գրավելու համար։ Այս հանգամանքն իր հերթին նշանակալից է նրանով, որ տանում է դեպի իմպերիալիստների փոխադարձ թուլացում և թուլացնում է ընդհանրապես կապիտալիզմի դիրքերը, մոտեցնում է պրոլետարական հեղափոխության մոմենտը, այդ հեղափոխության գործնական անհրաժեշտությունը։

Երրորդ հակասությունը — դա հակասությունն է մի բուռն տիրապետող «քաղաքակիրթ» ազգերի և յերկրագնդի հարյուր-միլիոնավոր գաղութային և կախման վիճակում գտնվող ժողովուրդների միջև։ Իմպերիալիզմը կախումն ունեցող յերկրների և ընդարձակ գաղութների հարյուր-միլիոնավոր բնակչության ամենալիրբ և գազանային շահագործումն է։ Այդ շահագործման և ճնշման նպատակը **գերշահույթ** քամելն է։ Բայց շահագործելով այդ յերկրները, իմպերիալիզմն ստիպված է այնտեղ կառուցել յերկաթուղիներ, ֆաբրիկաներ և գործարաններ, արդյունաբերական և առևտրական կենտրոններ։ Պրոլետարների դասակարգի յերևան գալը, տեղական ինտելիգենցիայի սաղմնավորվելը, ազգային ինքնագիտակցության արթնանալը, ազատագրական շարժման ուժեղանալը — սրանք են այդ «քաղաքականության» անխուսափելի հետևանքները։ Այդ մասին ակնհայտորեն վկայում է հեղափոխական շարժման ուժեղացումն առանց բացառության բոլոր գաղութներում և կախումն ունեցող յերկրներում։ Այս հանգամանքը պրոլետարիատի համար կարևոր է այն տեսակետից, որ նա հիմնավորապես խարխլում է կապիտալիզմի դիրքերը՝ գաղութները և կախումն ունեցող յերկրներն իմպերիալիզմի ռեզերվներից պրոլետարական հեղափոխության ռեզերվների վերածելով։

Սրանք են, ընդհանուր առմամբ, իմպերիալիզմի գլխավոր հակասությունները, որոնք «ծաղկած» հին կապիտալիզմը վերածել են մեռնող կապիտալիզմի։

Տաս տարի առաջ տեղի ունեցած իմպերիալիստական պատերազմի նշանակությունը, ի միջի այլոց, այն է, որ նա հավաքեց այդ բոլոր հակասությունները մի հանգույցի մեջ և դրանք նետեց կշեռքի նժարը՝ արագացնելով ու հեշտացնելով պրոլետարիատի հեղափոխական ճակատամարտերը։

Այլ կերպ ասած՝ իմպերիալիզմը հասցրեց ոչ միայն այն բանին, որ հեղափոխությունը դարձավ գործնական անխուսափելիություն, այլև այն, որ կապիտալիզմի ամրությունների վրա ուղղակի գրոհելու համար ստեղծվեցին բարեհաջող պայմաններ։

Այս է լենինիզմ ծնող միջազգային իրադրությունը։

Այդ բոլորը լավ, կասեն մեզ, բայց ինչ գործ ունի այստեղ

Ռուսաստանը, որը չէ՞ որ չի յեղել և չէր էլ կարող լինել իմպերիալիզմի կլասիկ յերկիր։ Ի՞նչ գործ ունի այստեղ Լենինը, որն աշխատում էր նախ և առաջ Ռուսաստանում և Ռուսաստանի համար։ Ինչու՞ հենց Ռուսաստանը դարձավ լենինիզմի օջախ, պրոլետարական հեղափոխության թեորիայի ու տակտիկայի ծննդավայր։

Որովհետև Ռուսաստանն իմպերիալիզմի այս բոլոր հակասությունների հանգուցակետն էր։

Որովհետև Ռուսաստանը հղի յեր հեղափոխությամբ ավելի, քան որևէ այլ յերկիր, և այդ պատճառով միայն նա յեր ի վիճակի հեղափոխական ճանապարհով լուծելու այդ հակասությունները։

Վերցնենք թեկուզ այն, որ ցարական Ռուսաստանն ամեն տեսակ ճնշման օջախ էր — և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ զինվորական ճնշման՝ իր ամենավայրագ ու բարբարոսական ձևով։ Ո՞ւմ հայտնի չէ, որ Ռուսաստանում կապիտալի ամենակարողությունը ձուլվում էր ցարիզմի դեսպոտիզմի հետ, ռուսական նացիոնալիզմի ագրեսիվությունը՝ ցարիզմի դահճային վերաբերմունքի հետ դեպի ոչ-ռուս ժողովուրդները, ամբողջ շրջանների՝ Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի շահագործումը՝ այդ շրջանները ցարիզմի կողմից նվաճելու և նվաճման համար պատերազմներ մղելու հետ։ Լենինն իրավացի յեր՝ ասելով, թե ցարիզմը «ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմ է»։ Ցարիզմն իմպերիալիզմի քառակուսի աստիճան բարձրացրած ամենաբացասական կողմերի կենտրոնն էր։

Այնուհետև։ Ցարական Ռուսաստանն արևմտյան իմպերիալիզմի մեծագույն ռեզերվն էր, ոչ միայն այն իմաստով, որ ազատ մուտք էր տալիս արտասահմանյան կապիտալին, որն իր ձեռքին էր պահում Ռուսաստանի ժողովրդական տնտեսության այնպիսի վճռական ճյուղեր, ինչպիսիք են վառելիքը և մետալուրգիան, այլև այն իմաստով, որ նա հօգուտ արևմտյան իմպերիալիստների կարող էր միլիոնավոր զինվորներ տրամադրել։ Հիշեցեք 12 միլիոնանոց ռուսական բանակը, որ իմպերիալիստական ճակատներում արյուն էր թափում անգլո-ֆրանսիական կապիտալիստների ահռելի շահույթներն ապահովելու համար։

Ապա։ Ցարիզմը ոչ միայն իմպերիալիզմի պահապան շունն էր Յեվրոպայի արևելքում, այլև արևմտյան իմպերիալիզմի ագենտուրան՝ ժողովրդից դուրս կորզելու հարյուր-միլիոնավոր տոկոսներն այն փոխառությունների, որ նրան տրամադրում էին Պարիզում ու Լոնդոնում, Բեռլինում ու Բրյուսելում։

Վերջապես, ցարիզմն արևմտյան իմպերիալիզմի ամենահավատարիմ դաշնակիցն էր Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի և այլ յերկրների բաժանման գործում։ Ո՞ւմ հայտնի չէ, որ ցարիզմն իմպերիալիստական պատերազմը մղում էր Անտանտայի իմպերիալիստ-

ների հետ դաշնակցած, և որ Ռուսաստանն այդ պատերազմի եյական տարրն էր։

Ահա թե ինչու արևմտյան իմպերիալիզմի և ցարիզմի շահերը հյուսվում եյին միմյանց և վերջիվերջո ձուլվում, կազմում եյին իմպերիալիզմի շահերի մի կծիկ։ Արևմտյան իմպերիալիզմը կարո՞ղ էր արդյոք հաշտվել Արևելքում այդպիսի կարող նեցուկ և ուժերով ու միջոցներով հարուստ այնպիսի մի ռեզերվուար կորցնելու հետ, ինչպիսին էր հին ցարական, բուրժուական Ռուսաստանը, առանց փորձելու իր բոլոր ուժերը՝ Ռուսաստանի հեղափոխության դեմ մահացու պայքար մղելու համար, նպատակ ունենալով պաշտպանել և պահպանել ցարիզմը։ Իհարկե, չէր կարող։

Սակայն սրանից հետևում է, վոր նա, ով ուզում էր հարվածել ցարիզմին, նա անխուսափելիորեն ձեռք էր բարձրացնում իմպերիալիզմի վրա, ով ապստամբում էր ցարիզմի դեմ, նա պետք է ապստամբեր և՛ իմպերիալիզմի դեմ, վորովհետև ով տապալում էր ցարիզմը, պետք է տապալեր և իմպերիալիզմը, յեթե նա իսկապես մտածում էր վոչ միայն փշրել ցարիզմը, այլև վոչնչացնել այն առանց մնացորդի։ Ցարիզմի դեմ ուղղված հեղափոխությունն այսպիսով մերձենում էր և պետք է վերածվեր իմպերիալիզմի դեմ ուղղված հեղափոխության, պրոլետարական հեղափոխության։

Մինչդեռ, Ռուսաստանում բարձրանում էր մեծագույն ժողովրդական հեղափոխությունը, վորի գլուխն էր կանգնած աշխարհի ամենահեղափոխական պրոլետարիատը, վորն իր տրամադրության տակ ուներ այնպիսի մի լուրջ դաշնակից, ինչպիսին էր Ռուսաստանի հեղափոխական գյուղացիությունը։ Հարկ կա՞ արդյոք ապացուցելու, վոր այդպիսի հեղափոխությունը չէր կարող կանգ առնել կես ճանապարհին, վոր նա հաջողության դեպքում պետք է առաջ գնար՝ ապստամբության դրոշ բարձրացնելով իմպերիալիզմի դեմ։

Ահա թե ինչու Ռուսաստանը պետք է դառնար իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետը վոչ միայն այն իմաստով, վոր այդ հակասություններն ամենից հեշտ դրսևորվում եյին հենց Ռուսաստանում՝ նրանց ավելի այլանդակ և անհանդուրժելի բնույթի շնորհիվ, և վոչ միայն այն պատճառով, վոր Ռուսաստանն արևմտյան իմպերիալիզմի ամենակարևոր հենարանն էր, վորը միացնում էր Արևմուտքի ֆինանսական կապիտալն Արևելքի գաղութների հետ, այլև այն պատճառով, վոր միայն Ռուսաստանում գոյություն ուներ այն ռեալ ուժը, վորը կարող էր լուծել իմպերիալիզմի հակասությունները հեղափոխական ճանապարհով։

Բայց սրանից հետևում է, վոր հեղափոխությունը Ռուսաստանում չէր կարող պրոլետարական չդառնալ, վոր նա իր զարգացման առաջին իսկ օրերին չէր կարող չստանալ միջազգային բնույթ, վոր

նա չէր կարող, այդպիսով, չցնցել համաշխարհային իմպերիալիզմի բուն հիմքերը։

Ռուսական կոմունիստները նման պայմաններում կարո՞ղ եյին արդյոք սահմանափակվել իրենց աշխատանքում ռուսական հեղափոխության նեղ-ազգային շրջանակներով։ Իհարկե, վո՛չ։ Ընդհակառակը, ամբողջ իրադրությունը, ինչպես ներքին (խոր հեղափոխական ճգնաժամը), այնպես էլ արտաքին (պատերազմը), դրդում էր նրանց, վոր իրենց աշխատանքում դուրս գան այդ շրջանակներից, պայքարը փոխադրեն միջազգային ասպարեզ, բացեն իմպերիալիզմի խոցերը, ապացուցեն կապիտալիզմի կրախի անխուսափելիությունը, ջախջախեն սոցիալ-շովինիզմը և սոցիալ-պացիֆիզմը, վերջապես, տապալեն իրենց յերկրում կապիտալիզմը և կոփեն պրոլետարիատի համար պայքարի նոր զենք՝ պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան, վորպեսզի այդպիսով հեշտացվի բոլոր յերկրների պրոլետարների համար կապիտալիզմի տապալման գործը։ Ռուսական կոմունիստներն այլ կերպ գործել չեյին էլ կարող, վորովհետև միայն այդ ճանապարհին կարելի յեր սպասել միջազգային դրության վորոշակի փոփոխություններ, վորոնք կկարողանային ապահովել Ռուսաստանը բուրժուական կարգերի ռեստավրացիայից։

Ահա թե ինչու Ռուսաստանը դարձավ լենինիզմի օջախը, իսկ ռուսական կոմունիստների առաջնորդը՝ Լենինը—նրա ստեղծագործողը։

Ռուսաստանի և Լենինի հետ այստեղ մոտավորապես «պատահեց» նույնը, ինչ պատահել էր անցյալ դարի քառասնական թվականներին Գերմանիայի և Մարքս-Ենգելսի հետ։ Գերմանիան այն ժամանակ, ինչպես և Ռուսաստանը XX դարի սկզբներում, հղի յեր բուրժուական հեղափոխությամբ։ Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստում» այն ժամանակ գրում էր, թե՝

«Կոմունիստներն իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում են Գերմանիայի վրա, վորովհետև նա բուրժուական հեղափոխության նախօրյակին է գտնվում, վորովհետև այդ հեղաշրջումը նա կկատարի յեվրոպական քաղաքակրթության՝ ընդհանրապես առած՝ ավելի առաջադեմ պայմաններում և ունենալով շատ ավելի զարգացած պրոլետարիատ, քան **XVII** դարում Անգլիայում և **XVIII** դարում Ֆրանսիայում էր։ Հետևաբար գերմանական բուրժուական հեղափոխությունը կարող է պրոլետարական հեղափոխության լոկ անմիջական նախերգանքը դառնալ»։

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը տեղափոխվում էր Գերմանիա։

Հազիվ թե կարելի յե կասկածել, վոր հենց այդ հանգամանքը, վորը նկատել է Մարքսը վերը բերած ցիտատում, հավանական պատճառ է այն բանի, վոր հենց Գերմանիան դարձավ գիտական սոցիա-

լիզմի ծննդավայրը, իսկ գերմանական պրոլետարիատի առաջնորդները՝ Մարքսը և Էնգելսը՝ նրա ստեղծագործողները։

Նույնը պետք է ասել, բայց եվ ավելի մեծ չափով, XX դարի սկզբի Ռուսաստանի մասին։ Ռուսաստանն այդ ժամանակաշրջանում գտնվում եր բուրժուական հեղափոխության նախօրյակին, նա պետք է կատարեր այդ հեղափոխությունը Եվրոպայում յեղած ավելի պրոգրեսիվ պայմաններում և ավելի զարգացած պրոլետարիատով, քան Գերմանիան եր (ել չենք խոսում Անգլիայի և Ֆրանսիայի մասին), ընդ վորում բոլոր տվյալներն ասում եյին, վոր այդ հեղափոխությունը պետք է լիներ պրոլետարական հեղափոխության խմորիչն ու նախերգանքը։ Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր դեռ 1902 թվին, յերբ ռուսական հեղափոխությունը միայն սկիզբ եր առնում, Լենինը իր «Ի՞նչ անել» բրոշյուրում գրում եր իր մարգարեյական խոսքերն այն մասին, թե՝

> «Պատմությունն այժմ դրել է մեր առաջ (այսինքն՝ ռուսական մարքսիստների առաջ։ Ի. Ստ.) մոտալուտ մի խնդիր, վորը ուզածդ յերկրի պրոլետարիատի ամենամոտակա խնդիրներից ամենահեղափոխականն է։ Այդ խնդրի իրականացումը, վոչ միայն յեվրոպական, այլև ասիական ամենառեակցիոն պատվարի խորտակումը, ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը» (տես՝ հ. IV, եջ 382, ռուս. հրատ.)։

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը պետք է տեղափոխվեր Ռուսաստան։

Հայտնի յե, վոր հեղափոխության ընթացքը Ռուսաստանում հավելուրդով արդարացրեց Լենինի այդ նախագուշակումը։

Դրանից հետո զարմանալի՞ յե արդյոք, վոր մի յերկիր, վորը կատարեց այդպիսի հեղափոխություն և ուներ այդպիսի պրոլետարիատ,— դարձավ պրոլետարական հեղափոխության թեորիայի և տակտիկայի ծննդավայրը։

Զարմանալի՞ յե արդյոք, վոր այդ պրոլետարիատի առաջնորդը՝ Լենինը դրա հետ մեկտեղ դարձավ այդ թեորիայի և տակտիկայի ստեղծագործողն ու միջազգային պրոլետարիատի առաջնորդը։

II. ՄԵԹՈԴԸ

Վերը յես ասացի, վոր մի կողմից Մարքս-Էնգելսի և մյուս կողմից Լենինի միջև ընկած է II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի տիրապետության մի ամբողջ շրջան։ Ճշտորոշ արտահայտվելու համար յես պետք է ավելացնեմ, վոր այստեղ խոսքը վոչ թե ոպորտունիզմի ձևական տիրապետության, այլ լոկ նրա փաստական տիրապետության մասին է։ Ձևականորեն II Ինտերնացիոնալի գլուխ կանգնած եյին «ուղղափառ» մարքսիստները, «որթոդոքսները» — Կաուցկին և ուրիշ-

ները։ Սակայն, իրականում II Ինտերնացիոնալի հիմնական աշխատանքը տարվում եր ոպորտունիզմի գծով։ Ոպորտունիստները հարմարվում եյին բուրժուազիային, շնորհիվ իրենց հարմարվողական, մանր-բուրժուական բնության, — իսկ «որթոդոքսներն» ել իրենց հերթին հարմարվում եյին ոպորտունիստներին, ոպորտունիստների հետ «միասնությունը պահպանելու» և «կուսակցության մեջ խաղաղությունը» պահպանելու նկատառումներով։ Դրա հետևանքը լինում եր ոպորտունիզմի տիրապետությունը, վորովհետև բուրժուազիայի քաղաքականության և «որթոդոքսների» քաղաքականության միջև յեղած շղթան միացվում, ամբողջանում եր։

Դա կապիտալիզմի համեմատաբար խաղաղ զարգացման ժամանակաշրջանն եր, այսպես ասած, նախապատերազմյան ժամանակաշրջանը, յերբ իմպերիալիզմի կատաստրոֆիկ հակասությունները դեռ չեյին դրսևորվել իրենց լիակատար ակներևությամբ, յերբ բանվորների տնտեսական գործադուլները և արհմիությունները զարգանում եյին քիչ թե շատ «նորմալ» կերպով, յերբ ընտրական պայքարը և պարլամենտական ֆրակցիաները տալիս եյին «գլխապտույտ» հաջողություններ, յերբ պայքարի լեգալ ձևերը մինչև յերկինք եյին բարձրացվում և լեգալությամբ մտածում եյին «սպանել» կապիտալիզմը — մի խոսքով՝ յերբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները ճարպակալում եյին և չեյին ցանկանում լրջորեն մտածել հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի, մասսաների հեղափոխական դաստիարակության մասին։

Ամբողջական հեղափոխական թեորիայի փոխարեն—հակասական տեսական դրույթներ և տեսության բեկորներ՝ մասսայի կենդանի հեղափոխական պայքարից անջատված ու հին խարխլված դոգմաներ դարձած։ Ձևի համար, իհարկե, հիշում եյին Մարքսի թեորիան, բայց այն նպատակով, վորպեսզի զրկեն նրան կենդանի հեղափոխական վոգուց։

Հեղափոխական քաղաքականության փոխարեն—թուլամորթ ֆիլիստերություն և ժուժկալ պոլիտիկանություն, պարլամենտական դիպլոմատիա և պարլամենտական կոմբինացիաներ։ Ձևի համար, իհարկե, ընդունվում եյին «հեղափոխական» վորոշումներ և լոզունգներ, սակայն մահուդի տակ դնելու համար։

Կուսակցությանն իր սեփական սխալների վրա դաստիարակելու և ուղիղ հեղափոխական տակտիկա սովորեցնելու փոխարեն, ուշի-ուշով խուսափում եյին ցավոտ հարցերից, քողարկում եյին նրանց և սվաղում։ Ձևի համար, իհարկե, չեյին հրաժարվում խոսել ցավոտ հարցերի մասին, սակայն նրա համար, վորպեսզի գործը վերջացնեն վորևե «կաուչուկային» բանաձևով։

Այս էր II Ինտերնացիոնալի ֆիզիոնոմիան, նրա աշխատանքի մեթոդը, նրա արսենալը։

Մինչդեռ, մոտենում էր իմպերիալիստական պատերազմների և պրոլետարիատի հեղափոխական մարտերի նոր շրջանը։ Պայքարի հին մեթոդներն ակնհայտորեն անբավարար և թույլ հանդիսացան ֆինանսական կապիտալի ամենակարողության հանդեպ։

Անհրաժեշտ էր վերաքննել II Ինտերնացիոնալի ամբողջ աշխատանքը, նրա աշխատանքի ամբողջ մեթոդը, դուրս վռնդելով ֆիլիստերությունը, նեղմտությունը, պոլիտիկանությունը, ուրացողությունը, սոցիալ-շովինիզմը, սոցիալ-պացիֆիզմը։ Անհրաժեշտ էր ստուգել II Ինտերնացիոնալի ամբողջ արսենալը, դուրս շպրտել այն ամենը, ինչ ժանգոտել ու հնացել էր, դարբնել պայքարի նոր տեսակի զենքեր։ Առանց այսպիսի նախապատրաստական աշխատանքի իմաստ էլ չունէր պատերազմի գնալ կապիտալիզմի դեմ։ Առանց դրան պրոլետարիատը ռիսկ էր անում նոր հեղափոխական մարտերի հանդեպ մնալ վոչ բավականաչափ զինված կամ նույնիսկ պարզապես անզեն։

II Ինտերնացիոնալի ավգեյան ախոռների հիմնական ստուգման և հիմնական մաքրման այդ պատիվը վիճակվեց լենինիզմին։

Ահա ինչպիսի պայմաններում ծնվեց և կոփվեց լենինիզմի մեթոդը։

Ինչի՞ յեն հանգում այդ մեթոդի պահանջները։

Առաջին—մասսաների հեղափոխական պայքարի կրակում, կենդանի պրակտիկայի կրակում II Ինտերնացիոնալի տեսական դոգմաները ստուգելուն, այսինքն՝ թեորիայի և պրակտիկայի խախտված միասնությունը վերականգնելուն, նրանց միջև յեղած անջրպետը վերացնելուն, վորովհետև միայն այդ կերպ կարելի յե ստեղծել հեղափոխական թեորիայով զինված իսկական պրոլետարական կուսակցություն։

Յերկրորդ—II Ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքականության ստուգմանը վոչ թե նրանց լոզունգներով և բանաձևերով (վորոնց հավատալ չի կարելի), այլ նրանց գործերով, նրանց գործողություններով, վորովհետև միայն այդպես կարելի յե նվաճել և արժանի դառնալ պրոլետարական մասսաների վստահությանը։

Յերրորդ—ամբողջ կուսակցական աշխատանքի վերակառուցմանը նոր հեղափոխական յեղանակով, մասսաները հեղափոխական պայքարի համար դաստիարակելու և նախապատրաստելու վոգով, վորովհետև միայն այդպիսով կարելի յե նախապատրաստել մասսաները պրոլետարական հեղափոխության համար։

Չորրորդ—պրոլետարական կուսակցությունների ինքնաքննադատությանը, նրանց ուսուցմանը և դաստիարակմանը իրենց սեփական սխալների վրա, վորովհետև միայն այդպիսով կարելի յե դաստիարակել կուսակցության իսկական կադրեր և իսկական լիդերներ։

Սրանք են լենինիզմի մեթոդի հիմունքը և էությունը։

Ի՞նչպես էր այդ մեթոդը կիրառվում գործնականում։

II Ինտերնացիոնալի օպորտունիստներն ունեն մի շարք տեսական դոգմաներ, վոր նրանց մշտական մեկնակետն են դարձել։ Վերցնենք դրանցից մի քանիսը։

Դոգմա առաջին—պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու պայմանների մասին։ Օպորտունիստները հավատացնում են, վոր պրոլետարիատը չի կարող և չպետք է վերցնի իշխանությունը, յեթե նա ինքը մեծամասնություն չի հանդիսանում յերկրում։ Վոչ մի ապացույց, վորովհետև վոչ մի հնարավորություն չկա արդարացնելու այդ անհեթեթ դրույթը վոչ տեսականորեն, վոչ գործնականորեն։ Դիցուք թե այդպես է,—պատասխանում է Լենինը II Ինտերնացիոնալի պարոններին։ Իսկ յեթե ստեղծվել է այնպիսի պատմական իրադրություն (պատերազմ, ագրարային ճգնաժամ և այլն), յերբ բնակչության փոքրամասնությունը կազմող պրոլետարիատը հնարավորություն ունի աշխատավոր մասսաների հսկայական մեծամասնությունն իր շուրջը համախմբելու,—ինչու իշխանությունը չվերցնի։ Ինչու պրոլետարիատը չօգտագործի բարենպաստ միջազգային և ներքին իրադրությունը, կապիտալի ֆրոնտը ճեղքելու և հարցի ընդհանուր լուծումն արագացնելու համար։ Մի՞թե Մարքսը չէր ասում դեռ անցյալ դարի 50-ական թվականներին, թե Գերմանիայում պրոլետարական հեղափոխության գործը կարող էր «աքանչելի» վիճակում լինել, յեթե կարելի լիներ պրոլետարական հեղափոխությանն օգնության գալ «այսպես ասած՝ գյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակությամբ»։ Մի՞թե հայտնի չէ բոլորին և ամեն մեկին, վոր Գերմանիայում այն ժամանակ պրոլետարները համեմատաբար ավելի քիչ էյին, քան Ռուսաստանում 1917 թվին։ Մի՞թե ռուսական պրոլետարական հեղափոխության պրակտիկան ցույց չտվեց, վոր II Ինտերնացիոնալի հերոսների այդ սիրած դոգման պրոլետարիատի համար զուրկ է վորևէ կենսական նշանակությունից։ Մի՞թե պարզ չէ, վոր մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան հարվածում, ջախջախում է այդ հնացած, մաշված դոգման։

Յերկրորդ դոգմա—պրոլետարիատը չի կարող իր ձեռքում պահել իշխանությունը, յեթե նա չունի բավական քանակությամբ պատրաստի կուլտուրական և վարչական կադրեր, վորոնք ընդունակ լինեյին կարգի դնել յերկրի կառավարումը. նախ պետք է պատրաստել այդ կադրերը կապիտալիզմի պայմաններում, ապա իշխանությունը վերցնել։ Դիցուք թե այդպես է, պատասխանում է Լենինը, բայց ինչու չի կարելի գործին տալ այնպիսի ընթացք, վոր նախ իշխանությունը վերցնենք, պրոլետարիատի զարգացման համար բարենպաստ

պայմաններ ստեղծենք, ապա 7-մղոնյան քայլերով առաջ շարժվենք աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, բանվորներից ղեկավարների և վարչական բազմաքանակ կադրեր պատրաստելու համար։ Մի՞թե ռուսաստանյան պրակտիկան ցույց չտվեց, որ բանվորներից ղեկավարների կադրերը պրոլետարական իշխանության օրով հարյուր անգամ ավելի արագ և հիմնականորեն են աճում, քան կապիտալի իշխանության օրով։ Մի՞թե պարզ չէ, որ մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան անողաքարար ջախջախում է օպորտունիստների և՛ այս տեսական դոգման։

Յերրորդ դոգմա—ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդը պրոլետարիատի համար անընդունելի յէ, վորովհետև այն տեսականորեն սնանկ է (տես՝ Ենգելսի քննադատությունը), գործնականորեն վտանգավոր (կարող է խանգարել յերկրի տնտեսական կյանքի սովորական ընթացքը, կարող է արհեստակցական միությունների գանձարկղները դատարկել), չի կարող փոխարինել պայքարի պարլամենտական ձևերին, վորոնք պրոլետարիատի դասակարգային կռվի գլխավոր ձևն են։ Լավ, պատասխանում են լենինյանները։ Բայց, նախ և առաջ՝ Ենգելսը քննադատում էր վոչ թե ցանկացած ընդհանուր գործադուլը, այլ միայն ընդհանուր գործադուլի վորոշ տեսակը՝ անարխիստների ընդհանուր տնտեսական գործադուլը, վոր անարխիստներն առաջ էյին քաշում պրոլետարիատի քաղաքական պայքարի փոխարեն. էլ ինչ գործ ունի այստեղ ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդը։ Յերկրորդ՝ ո՞վ և վո՞րտեղ է ապացուցել, վոր պարլամենտական պայքարի ձևը համարվում է պրոլետարիատի պայքարի գլխավոր ձև։ Մի՞թե հեղափոխական շարժման պատմությունը ցույց չի տալիս, վոր պարլամենտական պայքարը լոկ մի դպրոց, ոժանդակ միջոց է պրոլետարիատի արտապարլամենտական պայքարի կազմակերպման համար, վոր կապիտալիզմի օրով բանվորական շարժման հիմնական հարցերը լուծվում են ուժով, պրոլետարական մասսաների անմիջական պայքարով, նրանց ընդհանուր գործադուլով, նրանց ապստամբությամբ։ Յերրորդ՝ վո՞րտեղից ծագեց պարլամենտական պայքարն ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդով փոխարինելու հարցը։ Համաքաղաքական գործադուլի կողմնակիցները յե՞րբ և վո՞րտեղ են փորձել պարլամենտական պայքարի ձևերը փոխարինել պայքարի արտապարլամենտական ձևերով։ Չորրորդ՝ մի՞թե հեղափոխությունը Ռուսաստանում ցույց չտվեց, վոր ընդհանուր քաղաքական գործադուլը պրոլետարական հեղափոխության մեծագույն դպրոցն է և անփոխարինելի միջոց է կապիտալիզմի ամրությունների վրա գրոհելու նախօրյակին պրոլետարիատի ամենալայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու համար. էլ ինչացի՞ են այստեղ ֆիլիստերական տրտունջները տնտեսական կյանքի սովորական ընթացքի խանգարման և արհեստակցական միությունների գանձարկղների մասին։ Մի՞թե պարզ չէ, վոր հեղափոխական պայքարի պրակտիկան ջախջախում է օպորտունիստների և՛ այս դոգման։

Յեվ այլն և այլն։

Ահա թե ինչու Լենինն ասում էր, վոր «հեղափոխական թեորիան դոգմա չէ», վոր «նա դասավորվում է վերջնականապես միայն սերտորեն կապված լինելով իսկական մասսայական և իսկական հեղափոխական շարժման պրակտիկայի հետ» («Յերեխայական հիվանդությունը»), վորովհետև թեորիան պետք է ծառայի պրակտիկային, վորովհետև «թեորիան պետք է պատասխանի պրակտիկայի առաջ դրած հարցերին» («Ժողովրդի բարեկամները»), վորովհետև նա պետք է ստուգվի պրակտիկայի տվյալներով։

Ինչ վերաբերում է II Ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքական լոզունգներին ու քաղաքական վորոշումներին, ապա բավական է հիշել «պատերազմ պատերազմին» լոզունգի հետ կապված պատմությունը, վորպեսզի հասկանանք այդ կուսակցությունների քաղաքական պրակտիկայի ամբողջ կեղծությունը և ամբողջ փտածությունը, կուսակցություններ, վորոնք քողարկում են իրենց անտիհեղափոխական գործը փարթամ հեղափոխական լոզունգներով և բանաձևերով։ Բոլորն էլ լավ են հիշում II Ինտերնացիոնալի փառահեղ դեմոնստրացիան Բազելի կոնգրեսում, դեմոնստրացիա, վորին զուգակցված էր ապստամբության բոլոր արհավիրքների սպառնալիքն իմպերիալիստների հասցեյին, յեթե վերջիններս համարձակվեն պատերազմ սկսել, և՝ «պատերազմ պատերազմին» ահարկու լոզունգը։ Բայց ո՞վ չի հիշում, վոր միառժամանակ անց, պատերազմի հենց նախօրեյին, Բազելի բանաձևը մահուդի տակ դրվեց, իսկ բանվորներին նոր լոզունգ առաջադրվեց՝ բնաջնջել իրար ի փառս կապիտալիստական հայրենիքի։ Մի՞թե պարզ չէ, վոր հեղափոխական լոզունգները և բանաձևերը վոչ մի գրոշ չարժեն, յեթե նրանք չեն ամրապնդվում գործով։ Բավական է միայն զուգադրել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան քաղաքականությունը II Ինտերնացիոնալի դավաճանական քաղաքականության պատերազմի ընթացքում, վորպեսզի հասկանալի լինի օպորտունիզմի պոլիտիկանների քաղաքականության վողջ գռեհկությունը, լենինիզմի մեթոդի ամբողջ վեհությունը։ Չեմ կարող այստեղ մեջ չբերել Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին» գրքից մի կտոր, վորտեղ նա դաժանորեն խարազանում է II Ինտերնացիոնալի լիդեր Կ. Կաուցկու օպորտունիստական փորձը՝ [illegible] կուսակցությունների մասին

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ. ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀԱՅԿ-ССР

վոչ թե նրանց գործերով, այլ նրանց թղթե լոզունգներով ու դոկումենտներով:

«Կաուցկին անց է կացնում տիպիկ քաղքենիական, ֆիլիստերական քաղաքականություն, յերևակայելով,... որ իբր թե լոզունգի առաջադրումը փոխում է գործը: Բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պատմությունը մերկացնում է այդ իլյուզիան. ժողովրդին խաբելու համար բուրժուական դեմոկրատները միշտ էլ առաջադրել են և առաջադրում են ինչպիսի կուզեք «լոզունգներ»: Բանն այն է, որ ստուգենք նրանց անկեղծությունը, որ նրանց խոսքերին զուգադրենք գործերը, որ չբավականանանք իդեալիստական կամ շառլատանական ֆրազով, այլ հետամուտ լինենք դասակարգային ռեալության» (տես՝ հ. **XXIII**, *եջ 377, ռուս. հրատ.):*

Յես էլ չեմ խոսում II *Ինտերնացիոնալի կուսակցությունների ինքնաքննադատության վախի մասին, իրենց սխալները թաքցնելու, ցավոտ հարցերը քողարկելու, իրենց թերությունները բարեհաջողության կեղծ պարադով վարագուրելու նրանց մանիայի մասին, վորը բթացնում է կենդանի միտքը և կասեցնում կուսակցության հեղափոխական դաստիարակումը սեփական սխալների վրա, մանիա, վորը Լենինը ծաղրել ու անարգանքի սյունին է գամել: Ահա թե ինչ է գրել Լենինն իր «Յերեխայական հիվանդությունը» բրոշյուրում պրոլետարական կուսակցությունների ինքնաքննադատության մասին.*

«Քաղաքական կուսակցության վերաբերմունքը դեպի իր սխալները՝ կուսակցության լրջության և իր դասակարգի ու աշխատավորական մասսաների առաջ իր պարտականությունները իրականում կատարելու ամենակարևոր ու ամենահուսալի կրիտերիաներից մեկն է: Բացեիբաց ընդունել սխալը, բաց անել նրա պատճառները, վերլուծել նրան ծնող իրադրությունը, ուշադրությամբ քննարկել սխալն ուղղելու միջոցները,—այ, սա լուրջ կուսակցության հատկանիշն է, այ, սա իր պարտականությունների կատարումն է նրա կողմից, այ, սա դասակարգի, ապա նաև մասսայի դաստիարակությունն է և ուսուցումը» (տես՝ հ. **XXV**, *եջ 201, ռուս. հրատ.):*

Վոմանք ասում են, թե սեփական սխալների բաց անելը և ինքնաքննադատությունը վտանգավոր են կուսակցության համար, վորովհետև դրանք կարող են օգտագործվել հակառակորդի կողմից պրոլետարիատի կուսակցության դեմ: Նման առարկությունները Լենինը համարում էր վոչ-լուրջ և միանգամայն սխալ: Ահա թե նա ինչ է ասել այդ մասին դեռ 1904 թվին իր «Մի քայլ առաջ» բրոշյուրում, յերբ մեր կուսակցությունը դեռ թույլ էր ու աննշան.

«Նրանք (այսինքն՝ մարքսիստների հակառակորդները: Ի. Ստ.) չարախնդում և կատաղում են, դիտելով մեր վեճերը. նրանք, իհարկե, կաշխատեն իրենց նպատակների համար դուրս կորզել առանձին տեղեր իմ բրոշյուրից, որ նվիրված է մեր կուսակցության պակասություններին և թերություններին: Ռուսական մարքսիստներն արդեն բավականաչափ գնդակոծված և կոփված են ճակատամարտերում, վորպեսզի չամաչեն այդ կծոտոցներից, վորպեսզի նրանց հակառակ՝ շարունակեն իրենց ինքնաքննադատության և սեփական բացերի անողոք մերկացման աշխատանքը, բացեր, վորոնք անպայման և անխուսափե-

լիորեն կգերազանցվեն բանվորական շարժման աճմամբ» (տես՝ հ. **VI**, *եջ 161, ռուս. հրատ.):*

Ահա, ընդհանուր առմամբ, սրանք են լենինիզմի մեթոդի բնորոշ գծերը:

Այն, ինչ տրված է Լենինի մեթոդի մեջ, հիմնականում արդեն կար Մարքսի ուսմունքի մեջ, վորն ըստ Մարքսի խոսքերի՝ «իր էու- թյամբ քննադատական էր և հեղափոխական»: Հենց այդ քննադատա- կան և հեղափոխական ոգին է, վորով սկզբից մինչև վերջը տոգորված է Լենինի մեթոդը: Սակայն ճիշտ չէր լինի մտածել, թե Լենինի մեթոդը հասարակ վերականգնումն է այն բանի, ինչ տվել է Մարքսը: Իրականում Լենինի մեթոդը վոչ միայն վերականգնումն է, այլև կոնկրետացումը և հետագա զարգացումը Մարքսի քննադատական ու հեղափոխական մեթոդի, նրա (Մարքսի) մատերիալիստական դիալեկտիկայի:

III. ԹԵՈՐԻԱՆ

Այս թեմայից յես վերցնում եմ յերեք հարց. ա) թեորիայի նշանակությունը պրոլետարական շարժման համար, բ) տարերայնության «թեորիայի» քննադատությունը և գ) պրոլետարական հեղափոխության թեորիան:

1) Թեորիայի նշանակության մասին: *Վոմանք կարծում են, թե լենինիզմը պրակտիկայի առաջնությունն է (պրիմատ) թեորիայի հանդեպ այն իմաստով, վոր գլխավորը նրանում — մարքսիստական դրույթունների կենսագործումն է, այդ դրույթների «իրագործումը», իսկ ինչ վերաբերում է թեորիային, ապա լենինիզմն այդ կողմից բավական թեր թե անհոգ է: Հայտնի յե, վոր Պլեխանովը քանիցս ծիծաղում էր Լենինի թեորիայի և հատկապես փիլիսոփայության վերաբերյալ «անհոգության» վրա: Հայտնի յե նույնպես, վոր ժամանակակից շատ պրակտիկ-լենինյաններ այնքան էլ բարեհաճ չեն դեպի թեորիան, հատկապես այն հսկայական գործնական աշխատանքի պատճառով, վոր ըստ իրադրության նրանք ստիպված են տանել: Յես պետք է հայտարարեմ, վոր այդ ավելի քան տարօրինակ կարծիքը Լենինի և լենինիզմի մասին միանգամայն սխալ է ու վոչ մի չափով չի համապատասխանում իրականությանը, վոր պրակտիկ աշխատողների ձըգտումը՝ գլուխներն ազատել թեորիայից՝ հակասում է լենինիզմի ամբողջ վոգուն ու հղի յե գործին սպառնացող մեծ վտանգներով:*

Թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն է՝ վերցրած իր ընդհանուր առումով: Թեորիան, իհարկե, անառարկա յե դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այնպես, ինչպես պրակտիկան կույր է դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով: Սակայն թեորիան

կարող է բանվորական շարժման հսկայական ուժ դառնալ, յեթե նա գոյանում է հեղափոխական պրակտիկայի հետ անքակտելիորեն կապակցված, վորովհետև նա, և միայն նա կարող է շարժմանը վստահություն ներշնչել, տալ կողմնորոշման ուժ և շրջապատող անցքերի ներքին կապի ըմբռնում, վորովհետև նա, և միայն նա կարող է օգնել պրակտիկային հասկանալու վոչ միայն այն, թե ինչպես և դեպի ո՛ւր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև ինչպես և դեպի ո՛ւր պետք է շարժվեն նրանք ամենամոտիկ ապագայում։ Վոչ այլ վոք, բայց յեթե Լենինն էր, վոր տասնյակ անգամներ ասում և կրկնում էր իր հայտնի դրությունն այն մասին, թե՝

«Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաեվ հեղափոխական շարժում» (*տես՝ հ. IV, էջ 380, ռուս. հրատ.*)։

Լենինն ավելի, քան վորևե մեկ ուրիշը, հասկանում էր թեորիայի կարևոր նշանակությունը, մանավանդ այնպիսի կուսակցության համար, ինչպիսին է մերը, շնորհիվ միջազգային պրոլետարիատի առաջավոր մարտիկի այն դերի, վոր վիճակվել է նրան, և շնորհիվ նրան շրջապատող ներքին ու արտաքին իրադրության բարդության։ Կանխատեսելով մեր կուսակցության այդ առանձնահատուկ դերը դեռ 1902 թ., Լենինն արդեն այն ժամանակ հարկավոր էր համարում հիշեցնել, վոր՝

«Առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն այն կուսակցությունը, վոր ղեկավարվում է առաջավոր թեորիայով» (*տես՝ հ. IV, էջ 380, ռուս. հրատ.*)։

Հազիվ թե հարկ լինի ապացուցել, վոր այժմ, յերբ Լենինի այդ կանխագուշակությունը մեր կուսակցության դերի մասին արդեն կենսագործվել է, Լենինի այդ դրությունն ստանում է առանձին ուժ և առանձին նշանակություն։

Գուցե ամենացայտուն արտահայտությունն այն բարձր նշանակության, վոր տալիս էր Լենինը թեորիային, պետք էր համարել այն փաստը, վոր վոչ այլ վոք, բայց յեթե Լենինը ձեռնարկեց իրագործելու ամենալուրջ մի խնդիր, այն է՝ ընդհանրացնել այն ամենակարևորը մատերիալիստական փիլիսոփայության ասպարեզում, ինչ տվել է գիտությունը Ենգելսից մինչև Լենինը հասնող ժամանակաշրջանում, և բազմակողմանի քննադատության յենթարկել մարքսիստների շրջանում գոյություն ունեցող անտիմատերիալիստական հոսանքները։ Ենգելսն ասում էր, վոր «ամեն մի նոր մեծ հայտնագործություն ստիպում է մատերիալիզմին նոր տեսք ընդունել»։ Հայտնի յե, վոր այդ խնդիրն իր ժամանակի համար իրագործեց վոչ այլ վոք, բայց յեթե Լենինն իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» նշանակալից գրքում։ Հայտնի յե, վոր Պլեխանովը, վորը սիրում էր ծիծաղել Լենինի՝ փի-

լիսոփայության նկատմամբ ունեցած «անհոգության» վրա, նույնիսկ չհամարձակվեց լրջորեն դիմել այդպիսի մի խնդրի իրագործման։

2) Տարերայնության «թեորիայի» քննադատությունը, կամ ավանգարդի դերը շարժման մեջ։ Տարերայնության «թեորիան» ոպորտունիզմի թեորիան է, բանվորական շարժման տարերայնության առջև խոնարհվելու թեորիան, բանվոր դասակարգի ավանգարդի, նրա կուսակցության դերի փաստացի ժխտման թեորիան։

Տարերայնության առջև խոնարհվելու թեորիան բացարձակապես հակառակ է բանվորական շարժման հեղափոխական բնույթին. Նա դեմ է, վոր շարժումն ուղղվի կապիտալիզմի հիմունքների դեմ պայքարելու գծով. Նա կողմնակից է, վոր շարժումն ընթանա բացառապես «իրագործելի», կապիտալիզմի համար «ընդունելի» պահանջների գծով, նա ամբողջությամբ կողմնակից է «նվազագույն դիմադրության գծին»։ Տարերայնության թեորիան տրեդ-յունիոնիզմի իդեոլոգիան է։

Տարերայնության առջև խոնարհվելու թեորիան կտրականապես դեմ է տարերային շարժմանը գիտակից, պլանաչափ բնույթ տալուն, նա դեմ է, վոր կուսակցությունն ընթանա բանվոր դասակարգի առջևից, վոր կուսակցությունը մասսաներին բարձրացնի մինչև գիտակցականության մակարդակը, վոր կուսակցությունն իր հետևից տանի շարժումը. Նա կողմնակից է, վոր շարժման գիտակից տարրերը չխանգարեն շարժմանն իր ճանապարհով գնալու, նա կողմնակից է, վոր կուսակցությունը միայն ականջ դնի տարերային շարժմանը և նրա պոչից քարշ գա։ Տարերայնության թեորիան շարժման մեջ գիտակցական տարրի նշանակությունը նվազեցնելու թեորիան է, «պոչականության» իդեոլոգիան, ամեն մի ոպորտունիզմի տրամաբանական հիմունքը։

Գործնականորեն այդ թեորիան, վոր հրապարակ է յեկել դեռևս մինչև Ռուսաստանի առաջին հեղափոխությունը, բերում էր այն բանին, վոր նրա հետևողները, այսպես կոչված «եկոնոմիստները» ժխտում եյին ինքնուրույն բանվորական կուսակցության անհրաժեշտությունը Ռուսաստանում, դեմ եյին դուրս գալիս բանվոր դասակարգի հեղափոխական կռվին ցարիզմի տապալման համար, քարոզում եյին տրեդյունիոնիստական քաղաքականություն շարժման մեջ և ընդհանրապես բանվորական շարժումը հանձնում եյին լիբերալ բուրժուազիայի հեգեմոնիային։

Հին «Искра»-յի պայքարը և «պոչականության» թեորիայի փայլուն քննադատությունը, վոր տրված է Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրում, վոչ միայն ջախջախեցին այսպես կոչված «եկոնոմիզմը», այլև ստեղծեցին ռուսական բանվոր դասակարգի իսկապես հեղափոխական շարժման տեսական հիմունքները։

Առանց այդ պայքարի անզամ ավելորդ էր մտածել Ռուսաս-

տանում ինքնուրույն բանվորական կուսակցություն ստեղծելու և հեղափոխության մեջ նրան ղեկավար դեր վերապահելու մասին:

Սակայն տարերայնության հանդեպ խոնարհվելու թեորիան միայն ռուսական յերևույթ չէ: Նա ամենալայն կերպով տարածված է, ճիշտ է, մի քիչ այլ ձևով, II Ինտերնացիոնալի առանց բացառության բոլոր կուսակցությունների մեջ: Յես նկատի ունեմ II Ինտերնացիոնալի լիդերների կողմից գռեհկացված, այսպես կոչված «արտադրողական ուժերի» թեորիան, վորն ամեն ինչ արդարացնում և բոլորին հաշտեցնում է, վորն արձանագրում է փաստերը ու բացատրում է դրանք այն ժամանակ, յերբ նրանք ամենքին ձանձրացրել են, ու, արձանագրելով, դրանով հանգստանում է: Մարքսն ասում եր, թե մատերիալիստական թեորիան չի կարող սահմանափակվել աշխարհի բացատրությամբ, թե նա դեռ պետք է փոխի աշխարհը: Բայց Կաուցկին և Ընկ. ինչ գործ ունեն դրա հետ. նրանք գերադասում են կառչած մնալ Մարքսի ֆորմուլայի առաջին մասին: Ահա այդ «թեորիայի» կիրառման բազմաթիվ որինակներից մեկը: Ասում են, թե իմպերիալիստական պատերազմի նախորյակին II Ինտերնացիոնալի կուսակցությունները սպառնում եյին «պատերազմին պատերազմ» հայտարարել, յեթե իմպերիալիստները պատերազմ սկսեն: Ասում են, թե պատերազմի նախօրեյին այդ կուսակցությունները «պատերազմ պատերազմին» լոզունգը մահուդի տակ դրին և կյանքում իրականացրին դրան հակառակ «պատերազմ իմպերիալիստական հայրենիքի համար» լոզունգը: Ասում են, թե լոզունգների այդ փոփոխման հետևանք յեղան բանվորների միլիոնավոր զոհերը: Բայց սխալ կլիներ մտածել, թե այստեղ մեղավորներ կան, թե ինչ-վոր մեկը դավաճանել է բանվոր դասակարգին, կամ մատնել նրան: Բոլորովին վոչ: Ամեն բան տեղի ունեցավ այնպես, ինչպես պետք է տեղի ունենար: Նախ՝ այն պատճառով, վոր Ինտերնացիոնալը «խաղաղության գործիք է» և վոչ թե պատերազմի: Յերկրորդ՝ այն պատճառով, վոր այն ժամանակ գոյություն ունեցած «արտադրողական ուժերի մակարդակի» պայմաններում ուրիշ վոչինչ չեր կարելի ձեռնարկել: «Մեղավոր են» «արտադրողական ուժերը»: Այս բանը «մեզ» ճշտորոշ կերպով բացատրում է պարոն Կաուցկու «արտադրողական ուժերի թեորիան»: Իսկ ով չի հավատում այդ «թեորիային», նա մարքսիստ չէ: Կուսակցությունների դերը: Նրանց նշանակությունը շարժման մեջ: Սակայն ինչ կարող է անել կուսակցությունն այնպիսի վճռական ֆակտորի հանդեպ, ինչպիսին է «արտադրողական ուժերի մակարդակը»...

Կարելի յեր բերել մարքսիզմի ֆալսիֆիկացիայի նման որինակների մի ամբողջ կույտ:

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր ֆալսիֆիկացիայի յեն-

թարկված այն «մարքսիզմը», վորը կոչված է ոպորտունիզմի մերկությունը ծածկելու, լոկ յեվրոպական ձևի դարձրած այլաձևությունն է հենց այն «պոչականության» թեորիայի, վորի դեմ պատերազմում եր Լենինը դեռևս մինչև առաջին ռուսական հեղափոխությունը:

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր այդ տեսական ֆալսիֆիկացիայի վերացումը նախապայմանն է իսկական հեղափոխական կուսակցությունների ստեղծման Արեմուտքում:

3) Գրոլետարական հեղափոխության թեորիան: Պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիան յելնում է յերեք հիմնական դրույթներից:

Առաջին դրույթը: Ֆինանսական կապիտալի տիրապետություն կապիտալիզմի առաջավոր յերկրներում. արժեթղթերի եմիսիան, վորպես ֆինանսական կապիտալի ամենակարևոր ոպերացիա. կապիտալի արտահանությունը դեպի հումքի աղբյուրները, վորպես իմպերիալիզմի հիմքերից մեկը. ֆինանսական ոլիգարխիայի ամենակարողությունը, վորպես ֆինանսական կապիտալի տիրապետության հետևանք, — այս բոլորը դրսևորում է մոնոպոլիստական կապիտալի բիրտ-պարազիտային բնույթը, հարյուրապատիկ ավելի զգալի յե դարձնում կապիտալիստական տրեստների և սինդիկատների ճնշումը, ուժեղացնում է աճումը բանվոր դասակարգի զայրույթի ընդդեմ կապիտալիզմի հիմունքների, մասսաներին բերում է դեպի պրոլետարական հեղափոխություն, վորպես դեպի միակ փրկություն (տես՝ Լենինի «Իմպերիալիզմը»):

Այստեղից բղխում է առաջին հետևությունը՝ հեղափոխական ճգնաժամի ուժեղանալը կապիտալիստական յերկրների ներսում, պայթյունի տարրերի աճելը «մետրոպոլիաների» ներքին, պրոլետարական ֆրոնտում:

Յերրորդ դրույթը: Կապիտալի ուժեղացրած արտահանություն դեպի գաղութներն ու կախում ունեցող յերկրները. «ազդեցության շրջանների» և գաղութային տիրակալությունների ընդարձակումը մինչև ամբողջ յերկրագնդի ընդգրկումը. կապիտալիզմի վերածվելը ֆինանսական ստրկացման և յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը մի բուռն «առաջավոր» յերկրների կողմից գաղութային ճնշման յենթարկելու համաշխարհային սիստեմի, — այդ բոլորը մի կողմից՝ վերածել է առանձին ազգային տնտեսությունները և ազգային տերիտորիաները մի միասնական շղթայի ողակների, վորը կոչվում է համաշխարհային տնտեսություն, — մյուս կողմից՝ հերձել, բաժանել է յերկրագնդի բնակչությունը յերկու բանակի՝ մի բուռն «առաջավոր» կապիտալիստական յերկրների, վորոնք շահագործում և ճնշում են լայնատարած գաղութներն ու կախում ունեցող յերկրները, և գաղութային ու կախում ունեցող յերկրների հսկայական մեծամաս-

նության, վորոնք ստիպված են պայքարել իմպերիալիստական ճնշումից ազատագրվելու համար (տես՝ «Իմպերիալիզմը»)։

Այստեղից բղխում է չորրորդ հետևությունը՝ հեղափոխական ճգնաժամի ուժեղանալը գաղութային յերկրներում, գաղութի տարրերի աճելն իմպերիալիզմի դեմ արտաքին, գաղութային ֆրոնտում։

Երրորդ դրույթը։ «Ազդեցության շրջանների» և գաղութների մոնոպոլ տիրապետությունը, զանազան կապիտալիստական յերկրների անհամաչափ զարգացումը, վոր տանում է դեպի կատաղի պայքար՝ վերաբաժանելու աշխարհն այն յերկրների միջև, վորոնք արդեն զավթել են տերիտորիաները, և այն յերկրների միջև, վորոնք ցանկանում են իրենց «բաժինն» ստանալ.— իմպերիալիստական պատերազմները, վորպես միակ միջոց՝ վերականգնելու խանգարված «հավասարակշռությունը».— այս բոլորը տանում է դեպի յերրորդ ֆրոնտի՝ միջկապիտալիստական ֆրոնտի ուժեղացումը, վորը (այդ ֆրոնտը) թուլացնում է իմպերիալիզմը և հեշտացնում միավորումն իմպերիալիզմի դեմ ուղղված առաջին յերկու ֆրոնտների՝ պրոլետարական-հեղափոխական ֆրոնտի և գաղութային-ազատագրական ֆրոնտի (տես՝ «Իմպերիալիզմը»)։

Այստեղից բղխում է յերրորդ հետևությունը՝ պատերազմների անխուսափելիությունն իմպերիալիզմի օրոք և անհրաժեշտությունը Յեվրոպայի պրոլետարական հեղափոխության ու Արևելքի գաղութային հեղափոխության կոալիցիայի՝ վորպես մի ընդհանուր համաշխարհային հեղափոխական ֆրոնտի՝ ընդդեմ իմպերիալիզմի համաշխարհային ֆրոնտի։

Այս բոլոր հետևությունները Լենինի մոտ միավորվում, դառնում են մի ընդհանուր հետևություն այն մասին, վոր «իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախօրյակն է» (տես՝ հ. XIX, եջ 71, ռուս. հրատ.)։

Դրան համապատասխան փոխվում է և մոտեցումը պրոլետարական հեղափոխության հարցին, հեղափոխության բնույթի, նրա ծավալի, նրա խորության հարցին,— փոխվում է հեղափոխության սխեման ընդհանրապես։

Առաջներում պրոլետարական հեղափոխության նախապայմանների վերլուծությանը մոտենում եյին սովորաբար այս կամ այն առանձին յերկրի տնտեսական կացության տեսակետից։ Այժմ այդ մոտեցումն արդեն թերի յե։ Այժմ գործին պետք է մոտենալ բոլոր յերկրների, կամ յերկրների մեծամասնության տնտեսական կացության տեսակետից, համաշխարհային տնտեսության կացության տեսակետից, վորովհետև առանձին յերկրները և առանձին ազգային տնտեսությունները դադարել են ինքնաբավ միավորներ լինելուց, վերածվել են համաշխարհային տնտեսություն կոչվող միասնական շղթայի առանձին օղակ-

ների, վորովհետև հին «կուլտուրական» կապիտալիզմը գերաճել է իմպերիալիզմի, իսկ իմպերիալիզմը ֆինանսական ստրկացման և յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը մի բուռն «առաջավոր» յերկրների կողմից գաղութային ճնշման յենթարկելու մի համաշխարհային սիստեմ է։

Առաջներում ընդունված եր խոսել առանձին յերկրներում, կամ ավելի ճշտորոշ՝ այս կամ այն զարգացած յերկրում պրոլետարական հեղափոխության օբյեկտիվ պայմանների առկա կամ բացակա լինելու մասին։ Այժմ այս տեսակետն արդեն թերի յե։ Այժմ պետք է խոսել հեղափոխության օբյեկտիվ պայմանների առկայության մասին ամբողջ համաշխարհային իմպերիալիստական տնտեսության սիստեմի՝ վորպես մի միասնական ամբողջության մեջ, ընդ վորում յեթե այդ սիստեմում գոյություն ունեն միքանի յերկրներ, վորոնք արդյունաբերական տեսակետից բավարար չափով զարգացած չեն, դա չի կարող անհաղթահարելի արգելք հանդիսանալ հեղափոխության համար, յեթե սիստեմն ամբողջությամբ առած կամ ավելի ճիշտ՝ քանի վոր սիստեմն ամբողջությամբ առած արդեն հասունացել է հեղափոխության համար։

Առաջներում ընդունված եր խոսել պրոլետարական հեղափոխության մասին այս կամ այն զարգացած յերկրում, վորպես մի առանձին ինքնաբավ մեծության մասին, վոր հակադրված է կապիտալի, վորպես իր հակոտնյայի, առանձին, ազգային ֆրոնտին։ Այժմ այդ տեսակետն արդեն թերի յե։ Այժմ պետք է խոսել համաշխարհային պրոլետարական հեղափոխության մասին, վորովհետև կապիտալի առանձին ազգային ֆրոնտները վերածվել են միասնական շղթայի օղակների, վոր կոչվում է իմպերիալիզմի համաշխարհային ֆրոնտ և վորին պետք է հակադրվի բոլոր յերկրների հեղափոխական շարժման ընդհանուր ֆրոնտը։

Առաջներում պրոլետարական հեղափոխությունը դիտում եյին բացառապես իբրև արդյունք տվյալ յերկրի ներքին զարգացման։ Այժմ այդ տեսակետն արդեն թերի յե։ Այժմ պրոլետարական հեղափոխությունը պետք է դիտել նախ և առաջ վորպես իմպերիալիզմի համաշխարհային սիստեմի հակասությունների զարգացման արդյունք, վորպես արդյունք համաշխարհային իմպերիալիստական ֆրոնտի շղթայի կտրվելու՝ այս կամ այն յերկրում։

Վ՞որտեղ կսկսվի հեղափոխությունը, վ՞որտեղ, ամենից առաջ, կարող է ճեղքվել կապիտալիզմի ֆրոնտը, վ՞որ յերկրում։

Այնտեղ, վորտեղ արդյունաբերությունն ավելի յե զարգացած, վորտեղ պրոլետարիատը մեծամասնություն է կազմում, վորտեղ ավելի շատ կուլտուրականություն կա, վորտեղ դեմոկրատիան ավելի շատ է,— պատասխանում եյին սովորաբար առաջներում։

Վո՛չ, առարկում ե հեղափոխության լենինյան թեորիան, — վո՛չ պարտավորապես այնտեղ, վորտեղ արդյունաբերությունն ավելի յե զարգացած և այլն։ Կապիտալի ֆրոնտը կճեղքվի այնտեղ, վորտեղ իմպերիալիզմի շղթան ավելի թույլ ե, վորովհետև պրոլետարական հեղափոխությունն արդյունք ե համաշխարհային իմպերիալիստական ֆրոնտի շղթայի կտրվելու նրա ամենաթույլ տեղում, ընդ վորում կարող ե պատահել, վոր հեղափոխություն սկսած յերկիրը, կապիտալի ֆրոնտը ճեղքած յերկիրը, կապիտալիստական տեսակետից պակաս զարգացած լինի, քան ուրիշ, ավելի զարգացած յերկրներ, վորոնք, սակայն, մնացել են կապիտալիզմի շրջանակներում։

1917 թվին իմպերիալիստական համաշխարհային ֆրոնտի շղթան ավելի թույլ գտնվեց Ռուսաստանում, քան այլ յերկրներում։ Այնտեղ ել նա ճեղքվեց՝ ելք տալով պրոլետարական հեղափոխությանը։ Ինչու։ Այն պատճառով, վոր Ռուսաստանում ծավալվում եր մեծագույն ժողովրդական հեղափոխությունը, վորին առաջնորդում եր հեղափոխական պրոլետարիատը, ունենալով այնպիսի լուրջ դաշնակից, ինչպիսին եր կալվածատիրոջ կողմից ճնշվող և շահագործվող բազմամիլիոն գյուղացիությունը։ Այն պատճառով, վոր հեղափոխության դեմ այնտեղ կանգնած եր իմպերիալիզմի մի այնպիսի նողկալի ներկայացուցիչ, ինչպիսին եր ցարիզմը, վորը զուրկ եր վորևե բարոյական կշռից և արժանացել եր բնակչության ընդհանուր ատելության։ Շղթան Ռուսաստանում ավելի թույլ դուրս յեկավ, թեև նա կապիտալիստական տեսակետից պակաս զարգացած եր, քան, ասենք, Ֆրանսիան կամ Գերմանիան, Անգլիան կամ Ամերիկան։

Մոտ ապագայում վո՞րտեղ կճեղքվի շղթան։ Դարձյալ այնտեղ, վորտեղ նա ավելի թույլ ե։ Անհնար չե, վոր շղթան ճեղքվի, ասենք, Հնդկաստանում։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, վոր այնտեղ կա յերիտասարդ մարտական հեղափոխական պրոլետարիատ, վորն ունի այնպիսի դաշնակից, ինչպիսին ե ազգային ազատագրական շարժումը, — անկասկած մեծ և անկասկած լուրջ դաշնակից։ Այն պատճառով, վոր այնտեղ հեղափոխության դեմ կանգնած ե ամենքին հայտնի այնպիսի հակառակորդ, ինչպիսին ե օտարերկրյա իմպերիալիզմը, վորը զուրկ ե բարոյական վարկից և արժանացել ե Հնդկաստանի ճնշված ու շահագործվող մասսաների ընդհանուր ատելության։

Միանգամայն հնարավոր ե նույնպես, վոր շղթան կարող ե ճեղքվել Գերմանիայում։ Ինչու։ Այն պատճառով, վոր, ասենք, Հնդկաստանում գործող ֆակտորներն սկսում են գործել նաև Գերմանիայում, ընդ սմին հասկանալի յե, վոր զարգացման մակարդակի հսկայական տարբերությունը, վոր գոյություն ունի Հնդկաստանի և Գերմանիայի միջև, չի կարող իր կնիքը չդնել Գերմանիայի հեղափոխության ընթացքի և վերջավորության վրա։

Ահա թե ինչու յե Լենինն ասում, վոր՝

> «Արևմտա-յեվրոպական կապիտալիստական յերկրներն ավարտում են իրենց զարգացումը դեպի սոցիալիզմ... Վոչ թե սոցիալիզմի համաչափ «հասունանալով» այդ յերկրներում, այլ վորոշ պետությունների կողմից մյուսներին շահագործելու ճանապարհով, իմպերիալիստական պատերազմի ժամանակ հաղթված պետություններից առաջինի շահագործման ճանապարհով, ընդ վորում այդ շահագործումը միանում ե վողջ Արևելքի շահագործմանը։ Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես հեղափոխական շարժման մեջ ե մտել հենց այդ առաջին իմպերիալիստական պատերազմի շնորհիվ և վերջնականապես ներգրավվել ե հեղափոխական շարժման ընդհանուր շրջապտույտի մեջ» (տես՝ հ. **XXVII**, եջ 416, ռուս. հրատ.)։

Ավելի կարճ՝ իմպերիալիստական ֆրոնտի շղթան, վորպես կանոն, պետք ե ճեղքվի այնտեղ, վորտեղ շղթայի օղակներն ավելի թույլ են և, համենայն դեպս, վոչ պարտավորապես այնտեղ, վորտեղ կապիտալիզմն ավելի յե զարգացած, վորտեղ պրոլետարներն այսքան տոկոս են, իսկ գյուղացիներն այսքան և այլն։

Ահա թե ինչու ստատիստիկական հաշիվները առանձին յերկրի բնակչության պրոլետարական կազմի տոկոսային հաշվարկման վերաբերմամբ կորցնում են այն բացառիկ նշանակությունը պրոլետարական հեղափոխության հարցի լուծման ժամանակ, վոր դրանց սիրով տալիս եյին II Ինտերնացիոնալի գրքերը, վորոնք չեյին հասկացել իմպերիալիզմը և վախենում եյին հեղափոխությունից, ինչպես ժանտախտից։

Ապա։ II Ինտերնացիոնալի հերոսները պնդում եյին (և շարունակում են պնդել), վոր մեկ կողմից բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և մյուս կողմից պրոլետարական հեղափոխության միջև գոյություն ունի անդունդ, կամ, համենայն դեպս, չինական պարիսպ, վորը բաժանում ե մեկ հեղափոխությունը մյուսից ավելի կամ պակաս յերկարատև ինտերվալով, վորի ընթացքում իշխանություն ձեռք բերած բուրժուազիան զարգացնում ե կապիտալիզմը, իսկ պրոլետարիատն ուժեր ե կուտակում և պատրաստվում ե «վճռական պայքարի» ընդդեմ կապիտալիզմի։ Այդ ինտերվալը սովորաբար հաշվվում ե տասնյակ տարիներով, յեթե վոչ ավելի։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր չինական պարսպի այս «թեորիան» զուրկ ե վորևե գիտական իմաստից իմպերիալիզմի պայմաններում, վոր նա հանդիսանում ե, և չի կարող չհանդիսանալ, վորպես լոկ քողարկումը, գունազարդումը բուրժուական հակահեղափոխական իղձերի։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ընդհարումներով և պատերազմներով հղի իմպերիալիզմի պայմաններում, «սոցիալիստական հեղափոխության նախորեյի» պայմաններում, յերբ «ծաղկած» կապիտալիզմը վերածվում ե «մեռնող» կապիտալիզմի, իսկ հեղափոխական շարժումն աճում ե յերկրագնդի

բոլոր երկրներում, երբ իմպերիալիզմը միանում է առանց բացառության բոլոր ռեակցիոն ուժերին, ընդհուպ մինչև ցարիզմն ու ճորտատիրությունը, դրանով իսկ անհրաժեշտ դարձնելով կոալիցիան բոլոր հեղափոխական ուժերի՝ սկսած Արևմուտքի պրոլետարական շարժումից մինչև ազգային-ազատագրական շարժումն Արևելքում, երբ ավատական-ճորտատիրական կարգերի մնացուկների տապալումն անհնար է դառնում առանց հեղափոխական պայքարի ընդդեմ իմպերիալիզմի,—հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, ավելի կամ պակաս զարգացած երկրում, այդ պայմաններում պետք է մոտենա պրոլետարական հեղափոխությանը, որ առաջինը պետք է գերաճի երկրորդին: Ռուսաստանի հեղափոխության պատմությունն ակներև կերպով ապացուցեց այս դրության ճշտությունն ու անվիճելիությունը: Իզուր չէ, որ Լենինը դեռևս 1905 թվին, ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին, իր «Երկու տակտիկա» բրոշյուրում պատկերում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը և սոցիալիստական հեղաշրջումը որպես մի շղթայի երկու օղակները, որպես ռուսական հեղափոխության թափի միասնական և ամբողջական նկար.

«Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հեղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիության մասսան, որպեսզի ուժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը: Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի, իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, որպեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և ջլատի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը: Սրանք են պրոլետարիատի խնդիրները, որոնք այնպես նեղ կերպով են պատկերացնում նորիսկրայականները հեղափոխության թափի վերաբերյալ իրենց բոլոր դատողություններում և բանաձևերում» (տես՝ հ. VIII, էջ 96, ռուս. հրատ.):

Ես էլ չեմ խոսում Լենինի ուրիշ, ավելի ուշ ժամանակի աշխատությունների մասին, որտեղ բուրժուական հեղափոխության պրոլետարականի գերաճելու գաղափարը հանդես է գալիս ավելի ռելյեֆ, քան «Երկու տակտիկայում», որպես հեղափոխության լենինյան թեորիայի անկյունաքարերից մեկը:

Բանից դուրս է գալիս, որ ընկերներից ոմանք յենթադրում են, թե Լենինն այդ գաղափարին հանգել է միայն 1916 թվին, որ մինչև այդ ժամանակը նա, իբր թե, գտնում էր, թե Ռուսաստանում հեղափոխությունը կանգ կառնի բուրժուական շրջանակներում, թե իշխանությունը, հետևաբար, պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի օրգանի ձեռքից կանցնի ոչ թե պրոլետարիատի, այլ բուրժուազիայի ձեռքը: Ասում են, թե այս պնդումը թափանցել է նույնիսկ մեր կոմունիստական մամուլը: Ես պետք է ասեմ, որ այդ

պնդումը բոլորովին սխալ է, որ այն բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Ես կարող եյի վկայակոչել Լենինի հայտնի ճառը կուսակցության II համագումարում (1905 թ.), որտեղ նա պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան, այսինքն դեմոկրատիկ հեղափոխության հաղթանակը որակում էր ոչ թե որպես «կարգի կազմակերպում», այլ որպես «պատերազմի կազմակերպում» (տես՝ հ. VII, էջ 264, ռուս. հրատ.):

Այնուհետև յես կարող եյի վկայակոչել Լենինի «Ժամանակավոր կառավարության մասին» (1905 թ.) հայտնի հոդվածները, որտեղ պատկերացնելով ռուսական հեղափոխության ծավալման հեռանկարը, նա կուսակցության առաջ խնդիր է դնում «հասնել այնպիսի դրության, որ ռուսական հեղափոխությունը լինի ոչ թե միքանի ամսվա շարժում, այլ շատ տարիների շարժում, որպեսզի նա հանգեցնի բարձր իշխանություններից ոչ միայն մանր զիջումների, այլ այդ իշխանությունների լիակատար տապալման», որտեղ նա, այդ հեռանկարն ավելի ծավալելով և կապելով Եվրոպայի հեղափոխության հետ, շարունակում է.

«Իսկ յեթե այդ հաջողվի,—այն ժամանակ... այն ժամանակ հեղափոխական հրդեհը կվառի Եվրոպան. բուրժուական ռեակցիայում տառապած յեվրոպական բանվորը իր հերթին վոտքի կելնի և ցույց կտա մեզ, թե «այդ ինչպես է արվում». այն ժամանակ Եվրոպայի հեղափոխական վերելքը հակառակ ազդեցություն կանի Ռուսաստանի վրա, և միքանի հեղափոխական տարիների էպոխան կդարձնի միքանի հեղափոխական տասնամյակների էպոխա»... (տես նույն տեղը, էջ 191, ռուս. հրատ.):

Ես կարող եյի վկայակոչել, այնուհետև, Լենինի հայտնի հոդվածը, որ հրապարակված է 1915 թվի նոյեմբերին, և որտեղ նա գրում է.

«Պրոլետարիատը պայքարում է և անձնվիրաբար պայքարելու յէ հանուն իշխանության նվաճման, հանուն հանրապետության, հանուն հողերի կոնֆիսկացիայի... հանուն «ոչ-պրոլետարական ժողովրդական մասսաների» մասնակցության բուրժուական Ռուսաստանի ազատագրմանը ռազմա-ֆեոդալական «իմպերիալիզմից» (=ցարիզմից): Եվ բուրժուական Ռուսաստանի այդ ազատագրությունից ցարիզմից, կալվածատերերի հողային իշխանությունից պրոլետարիատը կօգտվի անմիջապես*) ոչ թե օգնելու ունևոր գյուղացիներին նրանց պայքարում ընդդեմ գյուղական բանվորների, այլ — կատարելու սոցիալիստական հեղափոխություն՝ դաշնակցած Եվրոպայի պրոլետարների հետ» (տես՝ հ. XVIII, էջ 318, ռուս. հրատ.):

Ես կարող եյի վկայակոչել, վերջապես, Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին» բրոշյուրի հայտնի

*) Ընդգծումն իմն է Ի. Ստ.:

տեղը, վորտեղ նա, վկայակոչելով վերը բերված ցիտատը «Յերկու տակտիկայից» ռուսական հեղափոխության թափի մասին, գալիս է հետևյալ յեզրակացության.

«Յեղավ հենց այնպես, ինչպես մենք ասում եյինք։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը։ Նախ «ամբողջ» գյուղացիության հետ ընդդեմ միապետության, ընդդեմ կալվածատերերի, ընդդեմ միջնադարի (և այդքանով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-դեմոկրատական)։ Ապա ամենաչքավոր գյուղացիության հետ, կիսապրոլետարիատի հետ, բոլոր շահագործվողների հետ միասին ընդդեմ կապիտալիզմի, այդ թվում ընդդեմ գյուղական հարուստների, կուլակների, սպեկուլյանտների, և այդքանով հեղափոխությունը դառնում է սոցիալիստական։ Փորձել արհեստական չինական պարիսպ կանգնեցնել մեկի և մյուսի միջև, բաժանել դրանք միմյանցից վորևե այլ բանով, բացի պրոլետարիատի պատրաստականության աստիճանից և գյուղական չքավորության հետ պրոլետարիատի միավորվելու աստիճանից,—դա մարքսիզմի մեծագույն աղավաղումն է, նրա գռեհկացումը, փոխարինումը լիբերալիզմով» (տես՝ հ. XXIII, եջ 391, ռուս. հրատ.)։

Թվում է, թե բավական է։

Լավ, կասեն՝ մեզ, բայց Լենինն, այդ դեպքում, ինչու՞ յեր պատերազմում «պերմանենտ (անընդհատ) հեղափոխության» գաղափարի դեմ։

Այն պատճառով, վոր Լենինն առաջարկում եր «սպառել» գյուղացիության հեղափոխական ընդունակությունները և օգտագործել մինչև հատակը նրա հեղափոխական յեռանդը ցարիզմի լիակատար լիկվիդացիայի համար, պրոլետարական հեղափոխությանն անցնելու համար, մինչդեռ «պերմանենտ հեղափոխության» կողմնակիցները չեյին հասկանում գյուղացիության լուրջ դերը ռուսական հեղափոխության մեջ, թերագնահատում եյին գյուղացիության հեղափոխական յեռանդի ուժը, թերագնահատում եյին ռուսական պրոլետարիատի ուժն ու ընդունակությունը՝ իր հետևից տանելու գյուղացիությունը և դժվարացնում եյին, այդպիսով, բուրժուազիայի ազդեցությունից գյուղացիությանն ազատագրելու գործը, գյուղացիությունը պրոլետարիատի շուրջը համախմբելու գործը։

Այն պատճառով, վոր Լենինն առաջարկում եր հեղափոխության գործը պսակել իշխանության անցումով պրոլետարիատի ձեռքը, այնինչ «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցները մտածում եյին գործն սկսել ուղղակի պրոլետարիատի իշխանությունից, չհասկանալով, վոր դրանով իսկ իրենք փակում են իրենց աչքերն այնպիսի «մանրունքի» հանդեպ, ինչպիսին են ճորտատիրության մնացուկները, և հաշվի չեն առնում այնպիսի մի լուրջ ուժ, ինչպիսին է ռուսական գյուղացիությունը, չհասկանալով, վոր այդպիսի քաղաքականությունը կարող է

միայն արգելակել գյուղացիությունը պրոլետարիատի կողմը նվաճելու գործը։

Հետևաբար, Լենինը պատերազմում եր «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցների դեմ վոչ թե անընդհատության հարցի պատճառով, քանի վոր Լենինն ինքը կանգնած եր անընդհատ հեղափոխության տեսակետի վրա, այլ պրոլետարիատի մեծագույն ռեզերվ հանդիսացող գյուղացիության դերը նրանց կողմից թերագնահատելու պատճառով, պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը չհասկանալու պատճառով։

«Պերմանենտ» հեղափոխության գաղափարը նոր գաղափար չէ։ Այն առաջին անգամ առաջադրեց Մարքսը 40-ական թվականների վերջում «Կոմունիստների միությանը» (1850 թ.) ուղղած իր հայտնի «Դիմումի» մեջ։ Հենց այդ դոկումենտիցել վերցրել են մեր «պերմանենտականները» անընդհատ հեղափոխության գաղափարը։ Հարկավոր է նկատել, վոր մեր «պերմանենտականները», այդ գաղափարը Մարքսից վերցնելով, փոքր ինչ փոփոխել են և, փոփոխելով, «փչացրել» են այն, անպետք դարձնելով պրակտիկ գործածության համար։ Հարկավորվեց Լենինի փորձված ձեռքը՝ այդ սխալը շտկելու, անընդհատ հեղափոխության գաղափարը մաքուր ձևով Մարքսից վերցնելու և այն հեղափոխության իր թեորիայի անկյունաքարերից մեկը դարձնելու համար։

Ահա թե ինչ է ասում Մարքսն իր «Դիմումի» մեջ անընդհատ հեղափոխության մասին այն բանից հետո, յերբ թվում է մի շարք հեղափոխական-դեմոկրատական պահանջներ, վորոնց նվաճմանն է կոչում կոմունիստներին.

«Այն ժամանակ, յերբ դեմոկրատական մանր բուրժուաները ցանկանում են վերոհիշյալ պահանջների կարելույն չափ մեծ մասն իրագործելուց հետո վորքան կարելի յե արագ ավարտել հեղափոխությունը, մեր շահերը և մեր խնդիրները կայանում են նրանում, վոր հեղափոխությունը դարձնենք անընդհատ մինչև այն ժամանակը, յերբ փոքրիշատե ունևոր դասակարգերը կհեռացվեն տիրապետությունից, յերբ պրոլետարիատը պետական իշխանություն կնվաճի, յերբ պրոլետարների ասոցիացիաները վոչ միայն մի յերկրում, այլև յերկրագնդի բոլոր տիրապետող յերկրներում այնքան կզարգանան, վոր այդ յերկրների պրոլետարների միջև մրցումը կդադարի և մինչև վոր գոնե վճռական արտադրողական ուժերը կենտրոնացված կլինեն պրոլետարների ձեռքերում»։

Այլ կերպ ասած՝

ա) Մարքսը բնավ չեր առաջարկում 50-ական թվականների Գերմանիայում հեղափոխության գործն սկսել ուղղակի պրոլետարական իշխանությունից՝ հակառակ մեր ռուսական «պերմանենտականների» պլաններին.

բ) Մարքսն առաջարկում եր միայն պսակել հեղափոխության

գործը պրոլետարական պետական իշխանությամբ, քայլ առ քայլ գլորելով իշխանության բարձունքից բուրժուազիայի մի ֆրակցիան մյուսի հետևից այն հաշվով, վոր հասնելով պրոլետարիատի իշխանության, այնուհետև հեղափոխություն վառի բոլոր յերկրներում, — լիովին համապատասխան այն ամենին, ինչ ուսուցանում եր Լենինը և ինչ կենսագործում եր մեր հեղափոխության ընթացքում, հետևելով պրոլետարական հեղափոխության իր թեորիային իմպերիալիզմի պայմաններում։

Բանից դուրս ե գալիս, վոր մեր ռուսական «պերմանենտականները» վոչ միայն թերագնահատեցին գյուղացիության դերը ռուսական հեղափոխության մեջ և պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի նշանակությունը, այլև դեռ ձևափոխեցին ել (դեպի վատը) «պերմանենտ» հեղափոխության մարքսյան գաղափարը, պրակտիկայի համար անպետք դարձնելով այն։

Ահա թե ինչու Լենինը ծաղրում եր մեր «պերմանենտականների» թեորիան, անվանելով այն «որիգինալ» և «սքանչելի» ու մեղադրելով նրանց այն բանում, վոր նրանք չեն ցանկանում «մտածել այն մասին, թե ինչ պատճառներով կյանքն ամբողջ տաս տարի անցել ե այդ սքանչելի թեորիայի կողքով» (Լենինի հոդվածը գրված ե 1915 թվին, 10 տարի անց այն ժամանակից, յերբ Ռուսաստանում յերևան յեկավ «պերմանենտականների» թեորիան, — տես՝ հ. XVIII, ե 317, ռուս. հրատ.)։

Ահա թե ինչու Լենինն այդ թեորիան համարում եր կիսամենշևիկյան, ասելով, վոր նա «բոլշևիկներից վերցնում ե պրոլետարիատի վճռական հեղափոխական պայքարի և նրա կողմից քաղաքական իշխանություն նվաճելու կոչը, իսկ մենշևիկներից — գյուղացիության դերի «ժխտումը»» (տես՝ Լենինի հոդվածը «Հեղափոխության յերկու գծերի մասին», նույն տեղում)։

Այս ե Լենինի գաղափարը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության պրոլետարականի վերաճելու մասին, «անհապաղ» պրոլետարական հեղափոխության անցնելու համար բուրժուական հեղափոխությունն ոգտագործելու մասին։

Այնուհետև։ Առաջներում հեղափոխության հաղթանակը մի յերկրում անհնար եյին համարում, յենթադրելով, վոր բուրժուազիային հաղթելու համար անհրաժեշտ ե բոլոր առաջավոր յերկրների պրոլետարների, կամ համենայն դեպս այդպիսի յերկրների մեծ մասի պրոլետարների միատեղ յելույթը։ Այժմ այդ տեսակետն այլևս իրականության չի համապատասխանում։ Այժմ հարկավոր ե յելնել այդպիսի հաղթության հնարավորությունից, վորովհետև զանազան կապիտալիստական յերկրների՝ իմպերիալիզմի պայմաններում տեղի ունեցող անհամաչափ և թռիչքաձև զարգացման բնույթը, դեպի անխուսափելի

պատերազմներ տանող կատաստրոֆիկ հակասությունների զարգացումն իմպերիալիզմի ներսում, հեղափոխական շարժման աճումը աշխարհի բոլոր յերկրներում — այդ բոլորը տանում ե վոչ միայն դեպի պրոլետարիատի հաղթանակի հնարավորությունն առանձին յերկրներում, այլև դեպի այդ հաղթանակի անհրաժեշտությունը։ Ռուսաստանի հեղափոխության պատմությունը դրա ուղղակի ապացույցն ե։ Ընդ սմին անհրաժեշտ ե միայն հիշել, վոր բուրժուազիայի տապալումը հաջողությամբ կարող ե անցկացվել միայն այն դեպքում, յերբ առկա յեն միքանի, միանգամայն անհրաժեշտ, պայմաններ, առանց վորոնց առկայության՝ պրոլետարիատի կողմից իշխանություն վերցնելու մասին մտածելն անգամ ավելորդ ե։

Ահա թե ինչ ե ասում Լենինն այդ պայմանների մասին իր «Ձերխայական հիվանդությունը» բրոշյուրում.

«Հեղափոխության հիմնական որենքը, վոր հաստատված ե բոլոր, հեղափոխություններով և, մասնավորապես, բոլոր յերեք ռուսական հեղափոխություններով XX դարում, ահա թե ինչում ե կայանում. հեղափոխության համար բավական չե, վոր շահագործվող և ճնշված մասսաները գիտակցեն ըստ հնի ապրելու անկարելիությունը և պահանջեն փոփոխություններ. հեղափոխության համար անհրաժեշտ ե, վոր շահագործողները չկարողանան ապրել և կառավարել ըստ հնի։ Միայն այն ժամանակ, յերբ «ստորին խավերը» չեն ցանկանում հինը և յերբ «վերին խավերը» չեն կարող կառավարել ըստ հնի, միայն այն ժամանակ հեղափոխությունը կարող ե հաղթել։ Այլ կերպ այդ ճշմարտությունն արտահայտվում ե այս բառերով՝ հեղափոխությունն անհնարին ե առանց համազգային (յե՛վ շահագործվողների, յե՛վ շահագործողների շահերը շոշափող) կրիզիսի *)։ Նշանակում ե հեղափոխության համար հարկավոր ե, նախ՝ հասնել այնպիսի դրության, վոր բանվորների մեծամասնությունը (կամ, համենայն դեպս, գիտակից, մտածող, քաղաքականապես ակտիվ բանվորների մեծամասնությունը) լիովին հասկանա հեղաշրջման անհրաժեշտությունը և պատրաստ լինի հանուն նրա իր կյանքը զոհելու. յերկրորդ՝ վոր կառավարող դասակարգերն ապրեն կառավարական կրիզիս, վորը քաղաքականության մեջ ե ներգրավում նույնիսկ ամենահետամնաց մասսաներին... ուժասպառ ե անում կառավարությունը և հեղափոխականների համար հնարավոր ե դարձնում նրա արագ տապալումը» (տես՝ հ. XXV, եջ 223, ռուս. հրատ.)։

Բայց տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել մի յերկրում — դեռ չի նշանակում ապահովել սոցիալիզմի լիակատար հաղթանակը։ Ամրապնդելով իր իշխանությունը և իր հետևից տանելով գյուղացիությունը, հաղթած յերկրի պրոլետարիատը կարող ե և պետք ե կառուցի սոցիալիստական հասարակություն։ Բայց արդյոք այդ նշանակում ե, վոր նա դրանով իսկ կհասնի սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթանակի, այսինքն՝ արդյոք այդ նշանակում ե, վոր նա կարող ե միայն մի յերկրի ուժերով վերջնականապես

*) Ընդգծումն իմն ե։ Ի. Ստ.։

ամրապնդել սոցիալիզմը և լիովին ապահովել յերկիրը ինտերվենցիայից, ուրեմն և ռեստավրացիայից։ Վոչ, չի նշանակում։ Դրա համար հարկավոր է հեղափոխության հաղթանակ գոնե միքանի յերկրներում։ Այդ պատճառով այլ յերկրների հեղափոխության զարգացումն ու նրան աջակցելը հաղթած հեղափոխության եյական խնդիրն է։ Այդ պատճառով հաղթած յերկրի հեղափոխությունը պետք է դիտի իրեն վոչ թե վորպես ինքնաբավ մեծություն, այլ վորպես օժանդակ, վորպես միջոց՝ արագացնելու հեղափոխության հաղթանակն այլ յերկրներում։

Լենինն այս միտքն արտահայտել է յերկու խոսքով, ասելով, վոր հաղթած հեղափոխության խնդիրն է՝ իրագործել «մի յերկրում իրականացնելիի առավելագույնը՝ բոլոր յերկրներում հեղափոխությունը զարգացնելու, նրան աջակցելու, այն արթնացնելու համար» (տես՝ հ. XXIII, եջ 385, ռուս. հրատ.)։

Սրանք են, ընդհանուր առմամբ, պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի բնորոշ գծերը։

IV. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Այս թեմայից յես վերցնում եմ յերեք հիմնական հարց. ա) պրոլետարիատի դիկտատուրան, վորպես պրոլետարական հեղափոխության զենք, բ) պրոլետարիատի դիկտատուրան, վորպես պրոլետարիատի գերիշխանություն բուրժուազիայի նկատմամբ, գ) խորհրդային իշխանությունը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև։

1) Պրոլետարիատի դիկտատուրան, վորպես պրոլետարական հեղափոխության զենք։ Պրոլետարական դիկտատուրայի հարցն ամենից առաջ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակության հարցն է։ Պրոլետարական հեղափոխությունը, նրա շարժումը, նրա թափը, նրա նվաճումները միս ու արյուն են ստանում միայն պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով։ Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության զենքն է, նրա օրգանը, նրա կարևորագույն հենակետը, վոր կյանքի յե կոչված, վորպեսզի, նախ՝ ճնշի տապալված շահագործողների դիմադրությունը և ամրապնդի իր նվաճումները, յերկրորդ՝ մինչև վերջը հասցնի պրոլետարական հեղափոխությունը, հասցնի հեղափոխությունը սոցիալիզմի լիակատար հաղթանակի։ Հաղթել բուրժուազիային, տապալել նրա իշխանությունը հեղափոխությունը կկարողանա և առանց պրոլետարիատի դիկտատուրայի։ Բայց ճնշել բուրժուազիայի դիմադրությունը, պահպանել հաղթանակը և առաջ շարժվել դեպի սոցիալիզմի վերջնական հաղթանակը հեղափոխությունն արդեն անկարող է, յեթե իր զարգացման վորոշ աստիճանի վրա չստեղծի

հատուկ օրգան՝ հանձին պրոլետարիատի դիկտատուրայի, վորպես իր հիմնական հենարան։

«Հեղափոխության հիմնական հարցը իշխանության հարցն է» (Լենին)։ Արդյոք այս նշանակում է, վոր գործն այստեղ սահմանափակվում է իշխանություն վերցնելով, նրա գրավումով։ Վոչ, չի նշանակում։ Իշխանություն վերցնելը—դա գործի միայն սկիզբն է։ Մի յերկրում տապալված բուրժուազիան դեռ յերկար ժամանակ, շատ պատճառներով, ավելի ուժեղ է, քան բուրժուազիային տապալած պրոլետարիատը։ Այս պատճառով ամբողջ գործը հանգում է այն բանին, վոր պահպանենք իշխանությունը, այն ամրացնենք, այն անհաղթելի դարձնենք։ Այս նպատակին հասնելու համար ինչ է հարկավոր։ Դրա համար անհրաժեշտ է իրագործել առնվազն յերեք գլխավոր խնդիրներ, վորոնք ցցվում են պրոլետարիատի դիկտատուրայի առաջ հաղթության «հետևյալ օրը».

ա) կոտրել հեղափոխության կողմից տապալված և եքսպրոպրիացիայի յենթարկված կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրությունը, վերացնել նրանց բոլոր և ամեն տեսակ փորձերը՝ վերականգնելու կապիտալի իշխանությունը.

բ) կազմակերպել շինարարությունը՝ բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը համախմբելու վողով և տանել այդ աշխատանքը դասակարգերի լիկվիդացիան, նրանց վոչնչացումը նախապատրաստող ուղղությամբ.

գ) զինել հեղափոխությունը, կազմակերպել հեղափոխության բանակը՝ արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար, իմպերիալիզմի դեմ պայքարելու համար։

Պրոլետարիատի դիկտատուրան հարկավոր է այդ խնդիրն անցկացնելու, իրագործելու համար։

«Կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելը,—ասում է Լենինը,—մի ամբողջ պատմական եպոխա յե։ Քանի այն չի վերջացել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը դառնում է ռեստավրացիայի փորձեր։ Առաջին լուրջ պարտությունից հետո էլ տապալված շահագործողները, վորոնք չեյին սպասում տապալման, դրան չեյին հավատում, մտքով անգամ չեյին անցկացնում այն, տասնապատկած յեռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ ուժեղացած ատելությամբ նետվում են կռվի ասպարեզ՝ հանուն խլված «դրախտի» վերադարձման, հանուն իրենց ընտանիքների, վորոնք այնպես քաղցր եյին ապրում և վորոնց հիմա «ռամիկ սրիկաները» դատապարտում են քայքայման և աղքատության (կամ «հասարակ» աշխատանքի...)։ Իսկ շահագործող-կապիտալիստների հետևից քաշ է գալիս լայն մասսան մանր բուրժուազիայի, վորի նկատմամբ բոլոր յերկրների պատմական փորձի տասնյակ տարիները վկայում են, վոր նա յերերվում է ու տատանվում, այսօր գնում է պրոլետարիատի հետևից, վաղը վախենում է հեղաշրջման դժվարություններից, խուճապի յե մատնվում բանվորների առաջին պարտությունից

կամ կիսապարտությունից, ջղայնանում է, պատեպատ դիպչում, նվվում, մի բանակից մյուսն է փախչում» (տես՝ հ. XXIII, էջ 355, ռուս. հրատ.):

Իսկ բուրժուազիան իր հիմքերն ունի ռեստավրացիայի փորձեր անելու, քանի վոր իր տապալումից հետո յերկար ժամանակ նա դեռ ավելի ուժեղ է մնում իրեն տապալող պրոլետարիատից:

«Յեթե շահագործողները ջախջախված են միայն մի յերկրում,—ասում է Լենինը,—իսկ այդ, իհարկե, տիպիկ դեպք է, քանի վոր միաժամանակ հեղափոխությունը մի շարք յերկրներում՝ հազվագյուտ բացառություն է,—ապա նրանք մնում են այնուամենայնիվ ավելի ուժեղ, քան շահագործվողները» (տես՝ նույն տեղը, էջ 354):

Ինչումն է տապալված բուրժուազիայի ուժը:

Նախ՝ «միջազգային կապիտալի ուժի մեջ, բուրժուազիայի միջազգային կապերի ուժի և ամրության մեջ» (տես՝ հ. XXV, էջ 173, ռուս. հրատ.):

Յերկրորդ՝ նրանում, վոր «հեղաշրջումից հետո շահագործողները յերկար ժամանակ անխուսափելիորեն իրենց ձեռքին են պահում մի շարք հսկայական փաստացի առավելություններ. նրանց ձեռքին մնում է փողը (միանգամից փողը վոչնչացնել չի կարելի), վորոշ շարժական գույք՝ հաճախ խոշոր չափերի հասնող, մնում են կապերը, կազմակերպման և կառավարման սովորքները, կառավարման բոլոր «գաղտնիքներին» (նրա սովորություններին, պրիոմներին, միջոցներին, հնարավորություններին) գիտակ լինելը, մնում է ավելի բարձր կրթությունը, մոտիկությունը տեխնիկական բարձր (բուրժուականորեն ապրող և մտածող) պերսոնալի հետ, մնում է անչափելիորեն ավելի մեծ սովորքը ռազմական գործում (սա շատ կարևոր է) և այլն և այլն» (տես՝ հ. XXIII, էջ 354, ռուս. հրատ.):

Յերրորդ՝ «սովորույթի ուժի մեջ, մանր արտադրության ուժի մեջ, քանի վոր մանր արտադրություն աշխարհում դեռևս, ցավոք սրտի, շատ ու շատ է մնացել, իսկ մանր արտադրությունը ծնում է կապիտալիզմ և բուրժուազիա մշտապես, ամեն օր, ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական մասշտաբով»... քանի վոր «վոչնչացնել դասակարգերը—նշանակում է վոչ միայն վռնդել կալվածատերերին և կապիտալիստներին,—այդ մենք համեմատաբար հեշտ արինք,—այդ նշանակում է նույնպես վոչնչացնել մանր ապրանք-արտադրողներին, իսկ նրանց չի կարելի վռնդել, նրանց չի կարելի ճզմել, նրանց հետ հարկավոր է յոլա գնալ, նրանց կարելի յե (և հարկավոր է) վերափոխել, վերադաստիարակել միայն շատ յերկարատև, դանդաղ, զգույշ կազմակերպական աշխատանքով» (տես՝ հ. XXV, էջ 173 և 190, ռուս. հրատ.):

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր՝

«Պրոլետարիատի դիկտատուրան նոր դասակարգի ամենաանձնազոհ և ամենաանողոք պատերազմն է ընդդեմ ավելի հզոր թշնամու, ընդդեմ բուրժուազիայի, վորի դիմադրությունը տասնապատկվել է նրա տապալումով», վոր «...պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար է՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար ընդդեմ հին հասարակության ուժերի և տրադիցիաների» (տես՝ նույն տեղը, էջ 173 և 191, ռուս. հրատ.):

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր իրագործել այս խնդիրները կարճ ժամանակամիջոցում, այս բոլորը կենսագործել միքանի տարում—վոչ մի հնարավորություն չկա: Այս պատճառով պրոլետարիատի դիկտատուրան, անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ հարկավոր է դիտել վոչ թե վորպես մի փութանցիկ ժամանակաշրջան՝ մի շարք «ամենահեղափոխական» ակտերի և դեկրետների ձևով, այլ վորպես մի ամբողջ պատմական եպոխա, լի քաղաքացիական պատերազմներով ու արտաքին ընդհարումներով, համառ կազմակերպական աշխատանքի և տնտեսական շինարարության եպոխա, հարձակումների և նահանջների, հաղթանակների և պարտությունների եպոխա: Այդ պատմական եպոխան անհրաժեշտ է վոչ միայն նրա համար, վորպեսզի ստեղծվեն սոցիալիզմի լիակատար հաղթության տնտեսական և կուլտուրական նախադրյալները, այլև նրա համար, վորպեսզի պրոլետարիատին հնարավորություն տրվի, նախ՝ դաստիարակելու և կոփելու իրեն, վորպես մի ուժ, վորն ընդունակ է յերկիրը կառավարել, յերկրորդ՝ վերադաստիարակելու և վերափոխելու մանր-բուրժուական խավերը՝ սոցիալիստական արտադրության կազմակերպումն ապահովող ուղղությամբ:

«Դուք պետք է,—ասում էր Մարքսը բանվորներին,—տարեք քաղաքացիական պատերազմի և միջազգային ճակատամարտերի 15, 20, 50 տարիներ վոչ միայն նրա համար, վորպեսզի փոխեք գոյություն ունեցող հարաբերությունները, այլ վորպեսզի ինքներդ էլ փոխվեք և քաղաքական գերիշխանության ընդունակ դառնաք» (տես՝ Կ. Մարքսի և Էնգելսի յերկերի VIII հ., էջ 506, ռուս. հրատ.):

Շարունակելով և ավելի զարգացնելով Մարքսի միտքը, Լենինը գրում է.

«Պրոլետարիատի դիկտատուրայի օրով պետք կլինի վերադաստիարակել միլիոնավոր գյուղացիներ և մանր տնտեսատերեր, հարյուր-հազարավոր ծառայողներ, չինովնիկներ, բուրժուական ինտելիգենտներ, նրանց բոլորին յենթարկել պրոլետարական պետությանը և պրոլետարական ղեկավարությանը, հաղթել նրանց մեջ բուրժուական սովորություններն ու տրադիցիաները» նույնպես, ինչպես վոր անհրաժեշտ կլինի՝ «...վերադաստիարակել յերկարատև պայքարում, պրոլետարիատի դիկտատուրայի հողի վրա, նաև հենց իրենց՝ պրոլետարներին, վորոնք իրենց սեփական մանր-բուրժուական նախապաշարումներից ազատվում են վոչ մեկ անգամից, վոչ թե հրաշքով, վոչ թե տիրամոր հրամանով, վոչ թե լոզունգի, բանաձևի, դեկրետի հրամանով, այլ միայն յերկար ու դժվարին մասսայական պայքարով՝ մասսայական մանր-բուրժուական ազդեցությունների դեմ» (տես՝ հ. XXV, էջ 248 և 247, ռուս. հրատ.):

2) **Պրոլետարիատի դիկտատուրան վորպես պրոլետարիատի գերիշխանություն բուրժուազիայի նկատմամբ:** Արդեն ասվածից յերևում է, վոր պրոլետարիատի դիկտատուրան կառավարության մեջ մտնող անձերի հասարակ փոփոխություն, «կաբինետի» և այլնի փոփոխություն չէ,

որի ժամանակ անձեռնմխելի յեն թողնվում հին տնտեսական և քաղաքական կարգերը։ Բոլոր յերկրների մենշևիկներն ու օպորտունիստները, վորոնք վախենում են դիկտատուրայից, ինչպես կրակից, և յերկյուղից դիկտատուրայի հասկացողությունը փոխարկում են «իշխանություն նվաճելու» հասկացողությամբ, սովորաբար «իշխանություն նվաճելը» հանգեցնում են «կաբինետի» փոխման, իշխանության ղեկի մոտ Շայդեմանի և Նոսկեյի, Մակդոնալդի և Հենդերսոնի նման մարդկանցից բաղկացած նոր մինիստրության յերևան գալով։ Հազիվ թե հարկ կա պարզաբանելու, վոր կաբինետների այս և սրանց նման փոփոխումներն ընդհանուր վոչինչ չունեն պրոլետարիատի դիկտատուրայի հետ, իսկական իշխանությունն իսկական պրոլետարիատի ձեռքով նվաճելու հետ։ Մակդոնալդներն ու Շայդեմաններն իշխանության գլուխ անցած, սակայն հին բուրժուական կարգերն անձեռնմխելի թողնված, նրանց՝ այսպես ասած՝ կառավարությունները չեն կարող լինել վորևե այլ բան, բացի սպասարկող ապարատից բուրժուազիայի ձեռքերում, բացի իմպերիալիզմի խոցերի քողարկիչից, բացի զենքից բուրժուազիայի ձեռքին՝ ուղղված ճնշված և շահագործվող մասսաների հեղափոխական շարժման դեմ։ Նրանք, այդ կառավարությունները, հարկավոր են կապիտալին իբրև շիրմա, յերբ նրա համար անհարմար է, անձեռնտու, դժվար՝ ճնշել և շահագործել մասսաներին առանց շիրմայի։ Իհարկե, այդպիսի կառավարությունների յերևան գալը նշան է, վոր «նրանց մոտ՝ այնտեղ» (այսինքն կապիտալիստների մոտ), «Շիպկայի վրա», դրությունը հանգիստ չէ, բայց այդ տեսակի կառավարությունները, չնայած դրան, անխուսափելիորեն մնում են վորպես կապիտալի՝ գույն տված կառավարություններ։ Մակդոնալդի կամ Շայդեմանի կառավարությունից մինչև պրոլետարիատի կողմից իշխանություն նվաճելը նույնքան հեռու յե, վորքան յերկրից մինչև յերկինքը։ Պրոլետարիատի դիկտատուրան վոչ թե կառավարության փոփոխում է, այլ նոր պետություն, վորն ունի իշխանության նոր օրգաններ կենտրոնում և տեղերում, պրոլետարիատի պետություն, վոր ծնունդ է առել հին պետության, բուրժուազիայի պետության փլատակների վրա։

Պրոլետարիատի դիկտատուրան ծնունդ է առնում վոչ թե բուրժուական կարգերի հիման վրա, այլ նրանց կոտրելու ընթացքում, բուրժուազիայի տապալումից հետո, կալվածատերերին և կապիտալիստներին եքսպրոպրիացիայի յենթարկելու ընթացքում, արտադրության հիմնական գործիքների և միջոցների սոցիալիզացիայի ընթացքում, պրոլետարիատի բռնի հեղափոխության ընթացքում։ Պրոլետարիատի դիկտատուրան հեղափոխական իշխանություն է, վոր հենվում է բուրժուազիայի նկատմամբ կիրառվող բռնության վրա։

Պետությունը մի մեքենա յե գերիշխող դասակարգի ձեռքին՝ իր

դասակարգային հակառակորդների դիմադրությունը ճնշելու համար։ **Այս տեսակետից** պրոլետարիատի դիկտատուրան ըստ եյության վոչնչով չի տարբերվում ամեն մի ուրիշ դասակարգի դիկտատուրայից, վորովհետև պրոլետարական պետությունը մի մեքենա յե՝ բուրժուազիայի ճնշելու համար։ Բայց այստեղ կա մի **եյական տարբերություն**։ Դա այն է, վոր մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր դասակարգային պետությունները հանդիսանում եյին շահագործող փոքրամասնության դիկտատուրան շահագործվող մեծամասնության նկատմամբ, այնինչ պրոլետարիատի դիկտատուրան շահագործվող մեծամասնության դիկտատուրա յե՝ շահագործող փոքրամասնության նկատմամբ։

Կարճ ասած՝ պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի՝ օրենքով չսահմանափակված և բռնության վրա հենվող՝ գերիշխանությունն է բուրժուազիայի նկատմամբ, — վոր վայելում է աշխատավոր և շահագործվող մասսաների համակրանքն ու աջակցությունը («Պետություն և հեղափոխություն»)։

Սրանից բխում է յերկու հիմնական հետևություն.

Առաջին հետևություն։ Պրոլետարիատի դիկտատուրան չի կարող լինել «լրիվ» դեմոկրատիա, դեմոկրատիա **բոլորի** համար՝ և՛ հարուստների, և՛ չքավորների համար — պրոլետարիատի դիկտատուրան «պետք է լինի **նոր ձևով** դեմոկրատական պետություն, — պրոլետարների և չունևորների **համար***) ընդհանրապես, և **նոր ձևի** դիկտատորական, — բուրժուազիայի **դեմ***)»... (տես՝ հ. XXI, եջ 393, ռուս. հրատ.)։ Կաուցկու և Ընկ. խոսակցությունները ընդհանուր հավասարության, «մաքուր» դեմոկրատիայի, «կատարյալ» դեմոկրատիայի մասին և այլն բուրժուական քողարկումն են այն անկասկածելի փաստի, վոր շահագործողների և շահագործվողների հավասարությունն անհնարին է։ «Մաքուր» դեմոկրատիայի թեորիան բանվոր դասակարգի վերնախավի թեորիան է, այն վերնախավի, վորին իմպերիալիստական թալանչիները ձեռնասուն են դարձրել և փշրանքներով են կերակրում։ Նա կյանքի յե կոչված, վորպեսզի քողարկի կապիտալիզմի խոցերը, գույն տա իմպերիալիզմին և բարոյական ուժ տա նրան՝ շահագործվող մասսաների դեմ մղվող պայքարում։ Կապիտալիզմի օրով չեն լինում և չեն կարող լինել իսկական «ազատություններ» շահագործվողների համար, թեկուզ հենց այն պատճառով, վոր «ազատությունների» օգտագործման համար անհրաժեշտ շենքերը, տպարանները, թղթի պահեստները և այլն շահագործողների արտոնություններն են։ Կապիտալիզմի օրով չի լինում և չի կարող լինել շահագործվող մասսաների իսկական մասնակցություն յերկրի կառավարման գործում, թեկուզ հենց այն պատճառով, վոր կապիտալիզմի պայմաններում ամենադեմոկրատիկ

---

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

յերկրներում կառավարություններին նշանակում է վոչ թե ժողովուրդը, այլ Ռոտշիլդներն ու Ստիննեսները, Ռոկֆելլերներն ու Մորգանները: Դեմոկրատիան կապիտալիզմի օրոք կապիտալիստական դեմոկրատիա է, շահագործող փոքրամասնության դեմոկրատիա, վոր հենվում է շահագործվող մեծամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված է այդ մեծամասնության դեմ: Միայն պրոլետարական դիկտատուրայի օրոք հնարավոր են իսկական «ազատություններ» շահագործվողների համար և պրոլետարների ու գյուղացիների իսկական մասնակցություն յերկրի կառավարման գործում: Դեմոկրատիան պրոլետարիատի դիկտատուրայի օրոք պրոլետարական դեմոկրատիա է, շահագործվող մեծամասնության դեմոկրատիա, վոր հենվում է շահագործող փոքրամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված է այդ փոքրամասնության դեմ:

Յերկրորդ եզրակացություն: Պրոլետարիատի դիկտատուրան չի կարող ծագել վորպես բուրժուական հասարակության և բուրժուական դեմոկրատիայի խաղաղ զարգացման արդյունք. նա կարող է ծագել միայն բուրժուական պետական մեքենայի, բուրժուական բանակի, բուրժուական չինովնիկական ապարատի, բուրժուական վոստիկանության կոտրելու հետևանքով:

«Բանվոր դասակարգը չի կարող սոսկ տիրանալ պատրաստի պետական մեքենային և այն գործի դնել իր նպատակների համար»,—ասում են Մարքսն ու Ենգելսը «Քաղաքացիական պատերազմի» առաջաբանում:— Պրոլետարական հեղափոխությունը պետք է «...վոչ թե մեկ ձեռքից մյուս ձեռքը հանձնի բյուրոկրատիկ զինվորական մեքենան, ինչպես յեղել է մինչև այժմ, այլ պետք է կոտրի այն... — այս է նախապայմանն ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության՝ կոնտինենտում»,— ասում է Մարքսը Կուգելմանին ուղղած իր նամակում 1871 թվին:

Մարքսի սահմանափակիչ ֆրազը կոնտինենտի մասին առիթ ավեց բոլոր յերկրների օպորտունիստներին և մենշևիկներին բղավելու, թե Մարքսը, հետևաբար, յենթադրում եր, վոր հնարավոր է բուրժուական դեմոկրատիայի խաղաղ զարգանալը և պրոլետարական դեմոկրատիայի վերածվելը, գոնե յեվրոպական կոնտինենտի կազմի մեջ չմտնող միքանի յերկրների (Անգլիա, Ամերիկա) համար: Մարքսն, իսկապես, յենթադրում եր այդպիսի հնարավորություն և նա հիմք ուներ այդպիսի յենթադրություն անելու անցած դարի 70-ական թվականների Անգլիայի և Ամերիկայի համար, յերբ դեռ չկար մոնոպոլիստական կապիտալիզմ, չկար իմպերիալիզմ և դեռևս այդ յերկրներում, նրանց զարգացման առանձին պայմանների շնորհիվ, չկար զարգացած զինվորականություն ու բյուրոկրատիզմ: Այսպես եր դրությունը մինչև զարգացած իմպերիալիզմի յերևան գալը: Բայց հետո, 30 — 40 տարի անց, յերբ գործերի դրությունն այդ յերկրներում արմատապես փոխ-

վեց, յերբ իմպերիալիզմը զարգացավ ու ընդգրկեց առանց բացառության բոլոր կապիտալիստական յերկրները, յերբ զինվորականությունը և բյուրոկրատիզմը յերևան յեկան նաև Անգլիայում ու Ամերիկայում, յերբ Անգլիայի և Ամերիկայի խաղաղ զարգացման հատուկ պայմանները չքացան,— այդ յերկրների վերաբերյալ սահմանափակումն ինքն իրեն պետք է վերանար:

«Հիմա,— ասում է Լենինը,— 1917 թվին, առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի եպոխայում, Մարքսի այդ սահմանափակումը վերանում է: Թե Անգլիան, թե Ամերիկան, խոշորագույն և վերջին — ամբողջ աշխարհում — ներկայացուցիչներն անգլո-սաքսոնական «ազատության»՝ զինվորականության և բյուրոկրատիզմի բացակայության իմաստով առած՝ լիովին գլորվել են բոլորն իրենց յենթարկող, բոլորն իրենցով ճզմող բյուրոկրատիկ-զինվորական հիմնարկների համաեվրոպական կեղտոտ, արյունալից ճահիճը: Այժմ թե Անգլիայում, թե Ամերիկայում «մեծ, իսկական ժողովրդական հեղափոխության նախապայմանն» է հանդիսանում «պատրաստի» «պետական մեքենայի» (վոր պատրաստվել է այնտեղ 1914 — 1917 թ. թ. մինչև «յեվրոպական», համաիմպերիալիստական, կատարելությունը) կոտրելը, կործանելը» (տես՝ հ. XXI, եջ 395, ռուս. հրատ.):

Այլ կերպ ասած՝ պրոլետարիատի բռնի հեղափոխության օրենքը, բուրժուական պետական մեքենայի կոտրելու, վորպես այդպիսի հեղափոխության նախապայմանի, օրենքը աշխարհի իմպերիալիստական յերկրների հեղափոխական շարժման անխուսափելի օրենքն է:

Իհարկե, հեռավոր ապագայում, յեթե պրոլետարիատը կհաղթանակի կապիտալիզմի կարևորագույն յերկրներում և յեթե այժմ կապիտալիստական շրջապատումը կփոխարինվի սոցիալիստական շրջապատումով, միանգամայն հնարավոր է զարգացման «խաղաղ» ճանապարհը միքանի կապիտալիստական յերկրների համար, վորոնց կապիտալիստները, «աննպաստ» միջազգային իրադրության շնորհիվ, նպատակահարմար կհամարեն «կամովին» լուրջ զիջումներ անել պրոլետարիատին: Բայց այս յենթադրությունը վերաբերում է միայն հեռավոր և հնարավոր ապագային: Մոտավոր ապագայի համար այդ յենթադրությունը չունի վոչ մի, ուղղակի վոչ մի հիմք:

Այդ պատճառով Լենինն իրավացի յե, յերբ ասում է.

«Պրոլետարական հեղափոխությունն անհնարին է առանց բուրժուական պետական մեքենայի բռնի կործանման և այն նորով փոխարինելու» (տես՝ հ. XX, եջ 342, ռուս. հրատ.):

3) Խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև: Պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակը նշանակում է բուրժուազիայի ճնշում, բուրժուական պետական մեքենայի կոտրում, բուրժուական դեմոկրատիայի փոխարինում պրոլետարական դեմոկրատիայով: Այս պարզ է: Բայց վորոնք են այն կազմակերպությունները, վորոնց օգնությամբ այս հսկայական աշխատան-

քը կարող է կատարվել։ Որ պրոլետարիատի կազմակերպության հին ձևերը, վորոնք աճել են բուրժուական պարլամենտարիզմի հիման վրա, անբավարար են այդպիսի աշխատանքի համար, — այդ հազիվ թե կասկածի յենթակա լինի։ Ապա վորո՞նք են պրոլետարիատի կազմակերպության այն նոր ձևերը, վորոնք ընդունակ են բուրժուական պետական մեքենայի գերեզմանափորի դեր խաղալու, վորոնք ընդունակ են վոչ միայն կոտրելու այդ մեքենան և վոչ միայն փոխարինելու բուրժուական դեմոկրատիան պրոլետարական դեմոկրատիայով, այլև դառնալու պրոլետարական պետական իշխանության հիմունքը։

Պրոլետարիատի կազմակերպության այս նոր ձևը խորհուրդներն են։

Ի՞նչումն է խորհուրդների ուժը՝ համեմատած կազմակերպության հին ձևերի հետ։

Նրանում, վոր խորհուրդները պրոլետարիատի ամենից ավելի համապարփակ մասսայական կազմակերպություններն են, վորովհետև նրա՛նք և միա՛յն նրանք են ընդգրկում առանց բացառության բոլոր բանվորներին։

Նրանում, վոր խորհուրդները միակ մասսայական կազմակերպություններն են, վորոնք ընդգրկում են բոլոր ճնշվածներին և շահագործվողներին, բանվորներին և գյուղացիներին, զինվորներին և նավաստիներին, և վորտեղ մասսաների պայքարի քաղաքական ղեկավարությունը մասսաների ավանգարդի կողմից, պրոլետարիատի կողմից կարող է՝ դրա շնորհիվ՝ իրականացվել ամենից հեշտ և ամենից լրիվ կերպով։

Նրանում, վոր խորհուրդները մասսաների հեղափոխական պայքարի, մասսաների քաղաքական յելույթների, մասսաների ապստամբության ամենից ավելի հզոր օրգաններն են, — օրգաններ, վորոնք ընդունակ են կոտրելու ֆինանսական կապիտալի և նրա քաղաքական կցորդների ամենակարողությունը։

Նրանում, վոր խորհուրդները հենց մասսաների անմիջական կազմակերպություններն են, այսինքն մասսաների ամենից ավելի դեմոկրատիկ և, ուրեմն, ամենից ավելի հեղինակավոր կազմակերպությունները, վորոնք առավելագույն չափով հեշտացնում են նրանց մասնակցությունը նոր պետություն կազմակերպելու և այն կառավարելու գործում ու առավելագույն չափով ստանձալու յեն անում մասսաների հեղափոխական յեռանդը, նախաձեռնությունը և ստեղծագործական ընդունակությունները հին կենսակարգի կործանման համար մղվող պայքարում, նոր՝ պրոլետարական կենսակարգի համար մղվող պայքարում։

Խորհրդային իշխանությունը տեղական խորհուրդների միավորումը, ձևավորումն ու վերածվելն է մի ընդհանուր պետական կազմակերպության պրոլետարիատի, վորպես ճնշված ու շահագործվող մասսաների ավանգարդի և վորպես գերիշխող դասակարգի պետական կազմակերպության, — նրանց միավորվելը և խորհուրդների հանրապետության վերածվելը։

Խորհրդային իշխանության եյությունն այն է, վոր ամենից ավելի մասսայական և ամենից ավելի հեղափոխական կազմակերպությունները հենց այն դասակարգերի, վորոնց ճնշում եյին կապիտալիստներն ու կալվածատերերը, հիմա հանդիսանում են «ամբողջ պետական իշխանության, ամբողջ պետական ապարատի մշտական յեվ միակ հիմունքը», վոր «հենց այն դասակարգերը, վորոնք նույնիսկ ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետություններում», օրենքով ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետություններում», օրենքով իրավահավասար լինելով, «իրականում հազարավոր պրիոմներով ու խորամանկ հնարքներով հեռացվում եյին քաղաքական կյանքին մասնակցելուց և դեմոկրատական իրավունքներից ու ազատություններից օգտվելուց, հիմա ներգրավվում են մշտական և անպայման, այն էլ վճռական մասնակցության՝ պետության դեմոկրատիկ կառավարման գործում» *) (տես՝ հ. XXIV, եջ 13, ռուս. հրատ.)։

Ահա թե ինչու խորհրդային իշխանությունը պետական կազմակերպության նոր ձեվ է, սկզբունքորեն տարբեր հին, բուրժուա-դեմոկրատիկ և պարլամենտար ձևից, հանդիսանում է պետության նոր տիպ, վոր հարմարեցված է ոչ թե աշխատավոր մասսաների շահագործման և ճնշման խնդիրներին, այլ ամեն տեսակ ճնշումից և շահագործումից նրանց լիովին ազատագրելու խնդիրներին, պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրներին,

Լենինն իրավացի յէ, յերբ ասում է, վոր խորհրդային իշխանության յերևան գալով «բուրժուական-դեմոկրատիկ պարլամենտարիզմի եպոխան վերջացավ, սկսվեց համաշխարհային պատմության նոր գլուխը՝ պրոլետարական դիկտատուրայի եպոխան»։

Վորո՞նք են խորհրդային իշխանության բնորոշ գծերը։

Այդ գծերից մեկն այն է, վոր խորհրդային իշխանությունը դասակարգերի գոյության պայմաններում հնարավոր բոլոր պետական կազմակերպություններից ամենամասսայական և ամենադեմոկրատիկ պետական կազմակերպությունն է, վորովհետև նա, լինելով բանվորների և շահագործվող գյուղացիների զոդման ու գործակցության ասպարեզ շահագործողների դեմ մղվող պայքարում և իր աշխատանքում հենվելով այդ զոդման ու այդ գործակցության վրա, դրանով իսկ հանդիսանում է բնակչության մեծամասնության իշխանություն փոքրամասնության նկատմամբ, հանդիսանում է այդ մեծամասնության պետությունը, նրա դիկտատուրայի արտահայտությունը։

---

*) Ընդգծումներն ամենուրեք իմն են։ Ի. Ստ.։

Այն, որ խորհրդային իշխանությունը դասակարգային հասարակության պետական կազմակերպություններից ամենից ավելի ինտերնացիոնալն է, քանի որ, խորտակելով ամեն մի ազգային ճնշում և հենվելով զանազան ազգությունների աշխատավոր մասսաների գործակցության վրա, դրանով իսկ հեշտացնում է այդ մասսաների միավորումը մի միասնական պետական միության մեջ:

Այն, որ խորհրդային իշխանությունը, հենց իր իսկ կառուցվածքով, հեշտացնում է ճնշված և շահագործվող մասսաների ղեկավարումն այդ մասսաների ավանգարդի կողմից, պրոլետարիատի, որպես խորհուրդների ամենից ավելի համախմբված և ամենից ավելի գիտակից միջուկի կողմից:

«Բոլոր հեղափոխությունների և ճնշված դասակարգերի բոլոր շարժումների փորձը, համաշխարհային սոցիալիստական շարժման փորձը սովորեցնում է մեզ, — ասում է Լենինը, — որ միայն պրոլետարիատն ի վիճակի է միավորել և իր հետևից տանել աշխատավոր և շահագործվող բնակչության ցանուցիր և հետամնաց շերտերին» (տես՝ հ. XXIV, էջ 14, ռուս. հրատ.): Խորհրդային իշխանության կառուցվածքը հեշտացնում է այս փորձի ցուցումների կենսագործումը:

Այն, որ խորհրդային իշխանությունը, պետության միասնական կազմակերպության մեջ միավորելով օրենսդիր և կատարողական իշխանությունները և տերիտորիալ ընտրական շրջանները փոխարինելով արտադրական միավորներով՝ գործարաններով ու ֆաբրիկաներով, — բանվորական և առհասարակ աշխատավոր մասսաներին անմիջականորեն կապում է պետական կառավարման ապարատների հետ, նրանց սովորեցնում է երկիրը կառավարել:

Այն, որ միայն խորհրդային իշխանությունն ընդունակ է ազատել բանակը բուրժուական հրամանատարության ենթարկվելուց և վերածել այն ժողովրդին ճնշելու գործիքից, որպիսին նա հանդիսանում է բուրժուական կարգերում, ժողովրդին իր և օտար բուրժուազիայի լծից ազատելու գործիքի:

Այն, որ «պետության միայն խորհրդային կազմակերպությունը կարող է մեկ անգամից և վերջնականապես կործանել հին, այսինքն բուրժուա-չինովնիկական դատական ապարատը» (տես՝ նույն տեղը):

Այն, որ պետության միայն խորհրդային ձևը, որը աշխատավորների և շահագործվողների մասսայական կազմակերպություններին ներգրավում է պետական կառավարման գործի մշտական և անպայման մասնակցության մեջ, ընդունակ է նախապատրաստել պետականության այն մահացումը, որն ապագա անպետական, կոմունիստական հասարակության հիմնական տարրերից մեկն է:

Այդպիսով խորհուրդների հանրապետությունն այն փնտրվող և, վերջապես, գտնված քաղաքական ձևն է, որի շրջանակներում պետք

է կատարվի պրոլետարիատի տնտեսական ազատագրությունը, սոցիալիզմի լիակատար հաղթանակը:

Պարիզի կոմունան այդ ձևի սաղմն էր: Խորհրդային իշխանությունը նրա զարգացումն ու վերջավորումն է:

Ահա թե ինչու Լենինն ասում է, որ՝

> «Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների հանրապետությունն ավելի բարձր տիպի դեմոկրատիկ հիմնարկությունների ոչ միայն ձևն է... այլև միակ ձևը, որն ընդունակ է ապահովելու ամենաանհիվանդագին անցումը դեպի սոցիալիզմ» (տես՝ հ. XXII, էջ 131, ռուս. հրատ.):

V. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Այս թեմայից ես վերցնում եմ չորս հարց՝ ա) հարցի դրումը, բ) գյուղացիությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ, գ) գյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ, դ) գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրապնդվելուց հետո:

1) Հարցի դրումը: Ոմանք կարծում են, թե հիմնականը լենինիզմի մեջ — գյուղացիական հարցն է, թե լենինիզմի մեկնակետը գյուղացիության, նրա դերի, նրա տեսակարար կշռի հարցն է: Այդ միանգամայն սխալ է: Լենինիզմի հիմնական հարցը, նրա մեկնակետը ոչ թե գյուղացիական հարցն է, այլ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, նրա նվաճման պայմանների, նրա ամրապնդման պայմանների հարցը: Գյուղացիական հարցը, որպես իշխանության համար մղած պայքարում նրան դաշնակից հանդիսացողի պրոլետարիատի հարց, արտաբերվող հարց է:

Սակայն այս հանգամանքը նրան բնավ չի զրկում այն լուրջ, այն կենսաթրթիռ նշանակությունից, որ նա անկասկած ունի պրոլետարական հեղափոխության համար: Հայտնի է, որ գյուղացիական հարցի լուրջ մշակումը ռուսական մարքսիստների շրջերում սկսվեց առաջին հեղափոխության (1905 թ.) հենց նախօրյակին, երբ ցարիզմի տապալման և պրոլետարիատի հեգեմոնիայի անցկացման հարցը ծառացավ կուսակցության առաջ իր ամբողջ հասակով, իսկ առաջիկա բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատին դաշնակից հանդիսացողի հարցն ընդունեց հրատապ բնույթ: Հայտնի է նույնպես, որ գյուղացիական հարցը Ռուսաստանում ընդունեց էլ ավելի ակտուալ բնույթ պրոլետարական հեղափոխության ժամանակ, երբ պրոլետարիատի դիկտատուրայի, նրա նվաճելու և իր ձեռքին պահելու հարցը հանգրեց առաջիկա պրոլետարական հեղափոխության մեջ պրոլետարիատին դաշնակից հանդիսացողների հարցին: Ցեվ այդ հասկա-

նալին. ով գնում է դեպի իշխանություն և պատրաստվում է դրան, նա չի կարող չհետաքրքրվել իր իսկական դաշնակիցների հարցով։

Այս իմաստով գյուղացիական հարցը պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասն է և, վորպես այդպիսին, լենինիզմի ամենակենսաթրթիռ հարցերից մեկն է։

II Ինտերնացիոնալի կուսակցությունների անտարբեր, իսկ յերբեմն էլ ուղղակի բացասական վերաբերմունքը դեպի գյուղացիական հարցը բացատրվում է Արևմուտքի զարգացման վոչ միայն հատուկ պայմաններով։ Դա բացատրվում է ամենից առաջ նրանով, վոր այդ կուսակցությունները չեն հավատում պրոլետարական դիկտատուրային, վախենում են հեղափոխությունից և չեն մտածում պրոլետարիատին տանել դեպի իշխանություն. իսկ ով վախենում է հեղափոխությունից, ով չի ցանկանում պրոլետարներին տանել դեպի իշխանություն, նա չի կարող հետաքրքրվել այն հարցով, թե ովքեր են լինելու պրոլետարիատի դաշնակիցները հեղափոխության մեջ,— նրա համար դաշնակիցների հարցը իրեն չհետաքրքրող, վոչ ակտուալ հարց է։ II Ինտերնացիոնալի հերոսների հեգնական վերաբերմունքը դեպի գյուղացիական հարցը նրանց մոտ համարվում է բարեկրթության նշան, «իսկական» մարքսիզմի նշան։ Իրականում այստեղ չկա վոչ մի գրամ մարքսիզմ, վորովհետև անտարբերությունը դեպի այնպիսի կարևոր հարցը, ինչպես գյուղացիական հարցն է, պրոլետարական հեղափոխության նախօրյակին հանդիսանում է վորպես պրոլետարական դիկտատուրայի ժխտման հակառակ կողմը, վորպես մարքսիզմին ուղղակի դավաճանելու անկասկածելի նշան։

Հարցն այսպես է դրված՝ արդյո՞ք արդեն սպառված են գյուղացիության խորքերում թաքնված հեղափոխական հնարավորությունները՝ գյուղացիության գոյության վորոշ պայմանների շնորհիվ, թե վոչ. և յեթե չեն սպառված, արդյո՞ք հույս, հիմք կա օգտագործելու այդ հնարավորությունները պրոլետարական հեղափոխության համար, գյուղացիությունը, նրա շահագործվող մեծամասնությունը վերածելու բուրժուազիայի ռեզերվից, վորպիսին էր նա Արևմուտքի բուրժուական հեղափոխությունների ժամանակ և վորպիսին նա մնում է և այժմ,— պրոլետարիատի ռեզերվի, նրա դաշնակցի։

Լենինիզմն այս հարցին տալիս է դրական պատասխան, այսինքն այն վոգով, վոր ընդունում է հեղափոխական ընդունակությունների առկայությունը գյուղացիության մեծամասնության շարքերում և այդ ընդունակությունները պրոլետարական դիկտատուրայի համար օգտագործելու հնարավորությունները։ Ռուսաստանի յերեք հեղափոխությունների պատմությունն ամբողջությամբ հաստատում է լենինիզմի այս առթիվ արած յեզրակացությունները։

Այստեղից հետևում է պրակտիկ յեզրակացություն՝ աջակցել,

պարտավորապես աջակցել գյուղացիության աշխատավոր մասսաներին նրանց պայքարում ընդդեմ ստրկացման ու շահագործման, նրանց պայքարում՝ ճնշումից և աղքատությունից ազատվելու համար։ Այս, իհարկե, չի նշանակում, վոր պրոլետարիատը պետք է պաշտպանի ամեն մի գյուղացիական շարժում։ Այստեղ խոսքը գյուղացիության այնպիսի շարժմանը և այնպիսի պայքարին աջակցելու մասին է, վորոնք ուղղակի կամ կողմնակի կերպով հեշտացնում են պրոլետարիատի ազատագրական շարժումը, վորոնք այս կամ այն կերպ ջուր են լցնում պրոլետարական հեղափոխության ջրաղացին, վորոնք նպաստում են գյուղացիության վերածմանը բանվոր դասակարգի ռեզերվի և դաշնակցի։

2) Գյուղացիությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ։ Այս ժամանակաշրջանն ընդգրկում է առաջին ռուսական հեղափոխությունից (1905 թ.) մինչև յերկրորդը (1917 թ. փետրվար), ներառյալ, ձգվող ժամանակամիջոցը։ Այդ ժամանակաշրջանի բնորոշ գիծ հանդիսանում է գյուղացիության ազատագրումը լիբերալ բուրժուազիայի ազդեցությունից, գյուղացիության հեռանալը կադետներից, գյուղացիության շրջադարձը դեպի պրոլետարիատը, դեպի բոլշևիկների կուսակցությունը։ Այդ ժամանակաշրջանի պատմությունը պատմությունն է կադետների (լիբերալ բուրժուազիայի) և բոլշևիկների (պրոլետարիատի) պայքարի՝ գյուղացիության համար։ Այդ պայքարի բախտը վորոշեց դումայական ժամանակաշրջանը, վորովհետև չորս Դումաների ժամանակաշրջանն առարկայական դաս հանդիսացավ գյուղացիների համար, իսկ այդ դասն ակներև կերպով ցույց տվեց գյուղացիներին, վոր նրանք կադետների ձեռքից չեն ստանա վոչ հող, վոչ ազատություն, վոր ցարն ամբողջովին կալվածատերերի կողմն է, իսկ կադետներն աջակցում են ցարին, վոր միակ ուժը, վորի վրա կարելի յե հույս դնել,— քաղաքային բանվորներն են, պրոլետարիատը։ Իմպերիալիստական պատերազմը միայն հաստատեց դումայական ժամանակաշրջանի դասը, ավարտելով գյուղացիության հեռանալը բուրժուազիայից, ավարտելով լիբերալ բուրժուազիայի մեկուսացումը, վորովհետև պատերազմի տարիները ցույց տվին, վոր ցարից և նրա բուրժուական դաշնակիցներից հաշտություն ստանալու հույսերն ամբողջովին ապարդյուն, ամբողջովին խաբուսիկ են։ Առանց դումայական ժամանակաշրջանի ակնառու դասերի, պրոլետարիատի հեգեմոնիան անհնարին կլիներ։

Այսպես առաջ յեկավ բանվորների և գյուղացիների դաշինքը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ընթացքում։ Այսպես առաջ յեկավ պրոլետարիատի հեգեմոնիան (ղեկավարությունը) ցարիզմի տապալման համար մղվող ընդհանուր պայքարում,— հեգեմոնիա, վորը հասցրեց 1917 թ. Փետրվարյան հեղափոխության։

Արևմուտքի (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա) բուրժուական հեղափոխություններն ընթացան, ինչպես հայտնի յե, ուրիշ ճանապարհով։ Այնտեղ հեղափոխության ընթացքում հեգեմոնիան պատկանում եր վոչ թե պրոլետարիատին, վորն իր թուլության պատճառով ինքնուրույն քաղաքական ուժ չեր ներկայացնում և չեր կարող ներկայացնել, այլ լիբերալ բուրժուազիային։ Այնտեղ ճորտատիրական կարգերից ազատվելը գյուղացիությունն ստացավ վոչ թե պրոլետարիատի ձեռքից, վորը փոքրաթիվ եր և անկազմակերպ, այլ բուրժուազիայի ձեռքից։ Այնտեղ գյուղացիությունը լիբերալ բուրժուազիայի հետ եր գնում հին կարգերի դեմ։ Այնտեղ գյուղացիությունը բուրժուազիայի ռեզերվ եր հանդիսանում։ Այնտեղ հեղափոխությունը, դրա հետևանքով, հասցրեց բուրժուազիայի քաղաքական կշռի հսկայական մեծացման։

Ռուսաստանում, ընդհակառակը, բուրժուական հեղափոխությունը տվեց ուղղակի հակառակ արդյունքներ։ Հեղափոխությունը Ռուսաստանում հասցրեց բուրժուազիայի, վորպես քաղաքական ուժի, վոչ թե ուժեղացման, այլ թուլացման, վոչ թե նրա քաղաքական ռեզերվների բազմացնելուն, այլ հիմնական ռեզերվը կորցնելուն, գյուղացիությունը կորցնելուն։ Բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում առաջին պլան մղեց վոչ թե լիբերալ բուրժուազիային, այլ հեղափոխական պրոլետարիատին, նրա շուրջը համախմբելով բազմամիլիոն գյուղացիությունը։

Ի միջի այլոց հենց սրանով և բացատրվում այն փաստը, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերաճեց պրոլետարական հեղափոխության։ Պրոլետարիատի հեգեմոնիան պրոլետարիատի դիկտատուրայի սաղմն եր և անցման աստիճանը։

Ինչո՞վ բացատրել այդ յուրահատուկ յերևույթը ռուսական հեղափոխության մեջ, վորն իր պրեցեդենտները չունի Արևմուտքի բուրժուական հեղափոխություններում։ Վորտեղից առաջ յեկավ այդ յուրօրինակությունը։

Այդ բացատրվում է նրանով, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում ծավալվեց դասակարգային կռվի ավելի զարգացած պայմաններում, քան Արևմուտքում, վոր ռուսական պրոլետարիատն այդ պահին արդեն կարողացել եր դառնալ ինքնուրույն քաղաքական ուժ, մինչդեռ լիբերալ բուրժուազիան, պրոլետարիատի հեղափոխականությունից վախեցած, կորցրեց հեղափոխականության տեսքն անգամ (մանավանդ 1905 թ. դասերից հետո) և դաշինքի մեջ մտավ ցարի ու կալվածատերերի հետ՝ ընդդեմ հեղափոխության, ընդդեմ բանվորների ու գյուղացիների։

Հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների

վրա, վորոնք վորոշեցին ռուսական բուրժուական հեղափոխության յուրօրինակությունը.

ա) Ռուսական արդյունաբերության չտեսնված համակենտրոնացումը (կոնցենտրացիա) հեղափոխության նախօրեյին։ Հայտնի յե, որին., վոր 500 հոգ. ավելի բանվոր ունեցող ձեռնարկություններում Ռուսաստանում աշխատում եյին բոլոր բանվորների $54^{0}/_{0}$-ը, մինչդեռ այնպիսի զարգացած յերկրում, ինչպիսին է Հյուսիսային Ամերիկան, համանման ձեռնարկություններում աշխատում եյին բոլոր բանվորների ընդամենը $33^{0}/_{0}$-ը։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր արդեն այս մեկ հանգամանքը, բոլշևիկների կուսակցության պես մի կուսակցության առկայության դեպքում, Ռուսաստանի բանվոր դասակարգը դարձնում եր յերկրի քաղաքական կյանքի մեծագույն ուժը։

բ) Ձեռնարկություններում յեղած շահագործման այլանդակ ձևերը, պլյուս ցարական ոպրիչնիկների անտանելի վոստիկանական ռեժիմը,—մի հանգամանք, վորը բանվորների ամեն մի լուրջ գործադուլ վերածում եր հսկայական քաղաքական ակտի և կոփում եր բանվոր դասակարգին վորպես մինչև վերջը հեղափոխական մի ուժ։

գ) Ռուսական բուրժուազիայի քաղաքական մեղկությունը, վորը 1905 թվի հեղափոխությունից հետո դարձավ սպասավորում ցարիզմին և ուղղակի հակահեղափոխություն, վոր բացատրվում է վոչ միայն ռուսական պրոլետարիատի հեղափոխականությամբ,— պրոլետարիատ, վորը ռուսական բուրժուազիային շպրտեց ցարիզմի գիրկը,—այլև բացատրվում է այդ բուրժուազիայի ուղղակի կախումով արքունական պատվերներից։

դ) Ճորտատիրական կարգերի ամենաայլանդակ և ամենաանտանելի մնացուկների առկայությունը գյուղում, վորոնք լրացվում եյին կալվածատիրոջ ամենակարողությամբ,—մի հանգամանք, վոր գյուղացիությանը նետեց հեղափոխության գիրկը։

ե) Ցարիզմը, վոր ճզմում եր ամեն կենդանի բան և իր կամայականությամբ կրկնապատկում եր կապիտալիստի ու կալվածատիրոջ ճնշումը — մի հանգամանք եր, վոր միացրեց բանվորների և գյուղացիների պայքարը և վերածեց մի միասնական հեղափոխական հոսանքի։

զ) Իմպերիալիստական պատերազմը, վոր Ռուսաստանի քաղաքական կյանքի այդ բոլոր հակասությունները միացրեց ու վերածեց խոր հեղափոխական ճգնաժամի և հեղափոխությանը տվեց գրոհի աներևակայելի ուժ։

Այսպիսի պայմաններում ո՞ւմ պիտի հարեր գյուղացիությունը։ Ո՞ւմ մոտ աջակցություն փնտրեր կալվածատիրոջ ամենակարողության դեմ, ցարի կամայականության դեմ, նրա տնտեսությունն ավերող կործանարար պատերազմի դեմ։ Լիբերալ բուրժուազիայի՞ մոտ։ Բայց նա

թշնամի չէ,— այդ էր ասում բոլոր չորս Դումաների յերկարամյա փորձը: Էս-էռների՞ մոտ: Էս-էռներն, իհարկե, կադետներից «լավ են», և նրանց ծրագիրն էլ «համապատասխան է», համարյա գյուղացիական, բայց ի՞նչ կարող են տալ էս-էռները, յեթե նրանք մտադիր են հենվել միայն գյուղացիների վրա և յեթե նրանք թույլ են քաղաքում, վորտեղ ամենից առաջ իր ուժերը ստանում է հակառակորդը: Վորտե՞ղ է այն նոր ուժը, վորը վոչ մի բանի առաջ կանգ չի առնի վո՛չ գյուղում, վո՛չ քաղաքում, վորը կոգնի գյուղացիությանը՝ դուրս պրծնելու ստրկությունից, հողազրկությունից, ճնշումից, պատերազմից: Ընդհանրապես այդպիսի ուժ կա՞ր արդյոք Ռուսաստանում: Այո՛, կար: Այդ — ռուսական պրոլետարիատն էր, վորը ցույց էր տվել իր ուժը, մինչև վերջը կռվելու իր ընդունակությունը, իր համարձակությունը, իր հեղափոխականությունը դեռևս 1905 թվին:

Համենայն դեպս ուրիշ այդպիսի ուժ չկար և վոչ մի տեղից գտնել չէր կարելի:

Ահա թե ինչու գյուղացիությունը, կադետներից հեռանալով և դեպի էս-էռները գալով, դրա հետ մեկտեղ հանգեց այն մտքին, վոր անհրաժեշտ է յենթարկվել հեղափոխության այնպիսի մի արի առաջնորդի ղեկավարության, վորպիսին է ռուսական պրոլետարիատը:

Սրանք են այն հանգամանքները, վորոնք կանխորոշեցին ռուսական բուրժուական հեղափոխության յուրորինակությունը:

3) Գյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ: Այդ ժամանակաշրջանն ընդգրկում է Փետրվարյան հեղափոխությունից (1917 թ.) մինչև Հոկտեմբերյանը (1917 թ.) հասնող ժամանակամիջոցը: Այդ ժամանակաշրջանը համեմատաբար յերկար չէ, ընդամենն ութ ամիս,— բայց այդ ամիսները՝ մասսաների քաղաքական լուսավորության և հեղափոխական դաստիարակության տեսակետից համարձակորեն կարելի յե հավասարեցնել սովորական սահմանադրական զարգացման ամբողջ տասնամյակների, վորովհետև դրանք հեղափոխության ութ ամիսներ են: Այս ժամանակաշրջանի բնորոշ գիծը գյուղացիության հետագա հեղափոխականացումն է, գյուղացիության հիասթափվելը էս-էռներից, նրա հեռանալը էս-էռներից, գյուղացիության նոր շրջադարձը դեպի ուղղակի համախմբումը պրոլետարիատի շուրջը, վորպես միակ մինչև վերջը հեղափոխական մի ուժի, վորն ընդունակ է յերկիրը խաղաղության հասցնելու: Այս ժամանակաշրջանի պատմությունը — պատմությունն է էս-էռների (մանր-բուրժուական դեմոկրատիա) և բոլշևիկների (պրոլետարական դեմոկրատիա) պայքարի՝ գյուղացիության համար, գյուղացիության մեծամասնությանը տիրելու համար: Այդ պայքարի բախտը վորոշեց կոալիցիոն ժամանակաշրջանը, կերենշչինայի ժամանակաշրջանը, էս-էռների և մենշևիկների հրաժարվելը կալվածատիրական հողի կոնֆիսկացիայից, էս-էռների և մենշե-

վիկների պայքարը պատերազմը շարունակելու համար, հունիսյան հարձակումը ճակատում, զինվորների համար սահմանված մահապատիժը, Կորնիլովի ապստամբությունը:

Յեթե առաջ, նախորդ ժամանակաշրջանում, հեղափոխության հիմնական հարցը ցարի և կալվածատիրական իշխանության տապալումն էր, ապա այժմ, հեղափոխության հետ-փետրվարյան ժամանակաշրջանում, յերբ ցարն այլևս չկար, իսկ վերջ չունեցող պատերազմն սպառել էր յերկրի տնտեսությունը՝ վերջնականապես քայքայելով գյուղացիությունը,— այժմ հեղափոխության հիմնական հարց դարձավ պատերազմի լիկվիդացիայի հարցը: Ծանրության կենտրոնը զուտ ներքին բնույթի հարցերից ակնհայտ կերպով փոխադրվեց հիմնական հարցի — պատերազմի հարցի կողմը: «Վերջացնել պատերազմը», «դուրս պրծնել պատերազմից»,— սա տառապած յերկրի և, ամենից առաջ՝ գյուղացիության ընդհանուր աղաղակն էր:

Սակայն պատերազմից դուրս պրծնելու համար անհրաժեշտ էր տապալել ժամանակավոր կառավարությունը, անհրաժեշտ էր տապալել բուրժուազիայի իշխանությունը, անհրաժեշտ էր տապալել էս-էռների և մենշևիկների իշխանությունը, վորովհետև նրանք և միայն նրանք էին ձգձգում պատերազմը մինչև «հաղթական վախճանը»: Պատերազմից դուրս գալու այլ ճանապարհ, բուրժուազիայի տապալումից բացի, պրակտիկայում չգտնվեց:

Այդ նոր հեղափոխություն էր, պրոլետարական հեղափոխություն, վորովհետև նա իշխանությունից գցում էր իմպերիալիստական բուրժուազիայի վերջին, ծայրահեղ ձախ ֆրակցիան՝ էս-էռների և մենշևիկների կուսակցությունը, նպատակ ունենալով ստեղծել նոր, պրոլետարական իշխանություն, խորհուրդների իշխանություն, նպատակ ունենալով իշխանության գլուխ կանգնեցնել հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը, իմպերիալիստական պատերազմի դեմ հանուն դեմոկրատիկ հաշտության հեղափոխական պայքար մղող կուսակցությունը: Գյուղացիության մեծամասնությունը պաշտպանեց բանվորների կողմից հաշտության համար, խորհուրդների համար մղած պայքարը:

Գյուղացիության համար ուրիշ յելք չկար: Ուրիշ յելք չէր էլ կարող լինել:

Այդպիսով կերենշչինայի ժամանակաշրջանը մեծագույն առարկայական դաս էր գյուղացիության աշխատավորական մասսաների համար, վորովհետև նա ակնառու ցույց էր տալիս, վոր էս-էռների և մենշևիկների իշխանության օրով յերկիրը պատերազմից դուրս չի պրծնի, գյուղացիները չեն տեսնի վո՛չ հող, վո՛չ ազատություն, վոր մենշևիկներն ու էս-էռները կադետներից տարբերվում են լոկ քաղցր ճառերով և կեղծ խոստումներով, իսկ իրականում կիրառում են հենց նույն

իմպերիալիստական, կապիտալական քաղաքականությունը, վոր միակ իշխանություն, վորն ընդունակ կլինի յերկիրը դուրս բերել ճանապարհի վրա, կարող է լինել միայն խորհուրդների իշխանությունը։ Պատերազմի հետագա ձգձգումը միայն հաստատում էր այդ դասի ճշտությունը, առաջ էր մղում հեղափոխությունը և գյուղացիների ու զինվորների միլիոնավոր մասսաներին քշում էր դեպի պրոլետարական հեղափոխության շուրջն ուղղակի կերպով համախմբվելու ուղին։ Էս-էռների և մենշևիկների մեկուսացումը դարձավ անխախտելի փաստ։ Առանց կոալիցիոն ժամանակաշրջանի ակնառու դասերի պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ։

Սրանք են այն հանգամանքները, վորոնք հեշտացրին բուրժուական հեղափոխության վերաճումը պրոլետարական հեղափոխության։

Այսպես առաջ յեկավ պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում։

4) **Գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրապնդվելուց հետո:** Յեթե առաջ, հեղափոխության առաջին շրջանում, գործը վերաբերում էր, գլխավորապես, ցարիզմի տապալմանը, իսկ հետո, Փետրվարյան հեղափոխությունից հետո, հարցը վերաբերում էր, ամենից առաջ, բուրժուազիային տապալելու միջոցով իմպերիալիստական պատերազմից դուրս գալուն, ապա այժմ, քաղաքացիական պատերազմի լիկվիդացիայից և խորհրդային իշխանության ամրապնդվելուց հետո,— առաջին պլան յեկան տնտեսական շինարարության հարցերը։ Ուժեղացնել և զարգացնել ազգայնացրած ինդուստրիան, դրա համար ինդուստրիան կապել գյուղացիական տնտեսության հետ՝ պետության կողմից կարգավորվող առևտրի միջոցով, պարենմասնատրումը փոխարինել պարենհարկով այնպիսի հաշվով, վոր հետո, պարենհարկի չափերն աստիճանաբար նվազեցնելով, գործը հանգեցնենք ինդուստրիայի արտադրանքները գյուղացիական տնտեսության մթերքների հետ փոխանակելուն, աշխուժացնել առևտուրը և զարգացնել կոոպերացիան, այս վերջինի մեջ ներգրավելով միլիոնավոր գյուղացիությունը,— ահա թե ինչպես էր պատկերացնում Լենինը տնտեսական շինարարության խնդիրները՝ դեպի սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը տանող ճանապարհին։

Ասում են, թե այդ խնդիրը կարող է ուժից վեր լինել այնպիսի գյուղացիական յերկրի համար, ինչպիսին է Ռուսաստանը։ Վորոշ սկեպտիկներ խոսում են նույնիսկ այն մասին, վոր դա պարզապես ուտոպիական է, անիրագործելի, վորովհետև գյուղացիությունը — գյուղացիություն է,— նա բաղկացած է մանր ապրանք-արտադրողներից և այդ պատճառով չի կարող օգտագործվել սոցիալիստական արտադրության հիմքի կազմակերպման գործի համար։

Բայց սկեպտիկները սխալվում են, վորովհետև նրանք հաշվի չեն

առնում միքանի հանգամանքներ, վորոնք տվյալ դեպքում ունեն վճռական նշանակություն։ Քննենք դրանցից գլխավորները։

Առաջին: Խորհրդային միության գյուղացիությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ։ Մի գյուղացիություն, վորն անցել է յերեք հեղափոխության շկոլա, կռվել է ցարի դեմ և բուրժուական իշխանության դեմ պրոլետարիատի հետ մեկտեղ և պրոլետարիատի գլխավորությամբ, մի գյուղացիություն, վորը հող և հաշտություն է ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից և այդ պատճառով դարձել է պրոլետարիատի ռեզերվը,— այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուական հեղափոխության ժամանակ կռվել է լիբերալ բուրժուազիայի գլխավորությամբ, հողն ստացել է այդ բուրժուազիայի ձեռքից և այդ պատճառով դարձել է բուրժուազիայի ռեզերվը։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր խորհրդային գյուղացիությունը, վորը սովորել է գնահատել պրոլետարիատի քաղաքական բարեկամությունը և քաղաքական գործակցությունն ու իր ազատությունը պարտական է այդ բարեկամությանը և այդ գործակցությանը,— չի կարող չծառայել իբրև բացառիկ նպաստավոր նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական գործակցություն ունենալու համար։

Էնգելսն ասում էր, վոր «սոցիալիստական կուսակցության կողմից քաղաքական իշխանություն նվաճելը դարձել է մոտիկ ապագայի գործ», վոր «այն (այդ իշխանությունը։ Ծան. հայ. հրատ. խմբ.) նվաճելու համար կուսակցությունը նախ պետք է քաղաքից գնա գյուղ և ուժեղ դառնա գյուղում» (տես՝ Էնգելսի «Գյուղացիական հարցը»)։ Նա դրա մասին գրել է անցած դարի 90-ական թվականներին, նկատի ունենալով արևմտյան գյուղացիությունը։ Հարկավո՞ր է արդյոք ապացուցել, վոր ռուսական կոմունիստները, վորոնք այդ տեսակետով հսկայական աշխատանք են կատարել յերեք հեղափոխությունների ընթացքում, արդեն կարողացել են իրենց համար գյուղում ստեղծել այնպիսի ազդեցություն և այնպիսի հենարան, վորոնց մասին մեր արևմտյան ընկերները յերազել անգամ չեն համարձակվի։ Ի՞նչպես կարելի յե ժխտել, վոր այս հանգամանքը չի կարող արմատապես չհեշտացնել Ռուսաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության միջև տնտեսական գործակցությունը հարթելու գործը։

Սկեպտիկները շատ են խոսում մանր գյուղացիների մասին, իբրև մի ֆակտորի, վորն անհամատեղելի յե սոցիալիստական շինարարության հետ։ Բայց լսեք, թե ինչ է ասում Էնգելսն Արևմուտքի մանր գյուղացիների մասին.

«Մենք վճռականապես կանգնած ենք մանր գյուղացու կողմը. մենք կանենք ամեն հնարավոր բան, վորպեսզի նրա համար ավելի տանելի լինի ապրելը, վորպեսզի հեշտացնենք նրա անցումը դեպի ընկերականություն այն դեպքում,

յիթե նա վճռի այդ անել. իսկ այն դեպքում, յերբ նա դեռևս իվիճակի չի լինի այդ վճիռն ընդունելու, մենք կաշխատենք նրան կարելույն չափ ավելի ժամանակ տրամադրել՝ իր հողի՝ պատառի վրա դրա մասին մտածելու համար։ Մենք այդպես կվարվենք վոչ միայն այն պատճառով, վոր հնարավոր ենք համարում ինքնուրույն աշխատող մանր գյուղացու անցումը մեկ կողմը, այլ նաև յելնելով անմիջական կուսակցական շահերից։ Վորքան շատ լինի այն գյուղացիների թիվը, վորոնց մենք թույլ չենք տա հասնելու պրոլետարների վիճակին և դեռևս իրենց գյուղացի վիճակում կգրավենք մեր կողմը, այնքան ավելի արագ և հեշտ կիրագործվի հասարակական վերափոխությունը։ Մեզ համար անօգուտ կլիներ այդ վերափոխության գործում սպասել մինչ այն ժամանակը, յերբ կապիտալիստական արտադրությունն ամենուրեք կզարգանա մինչև իր ծայրահեղ հետևանքները, յերբ թե վերջին մանր արհեստավորը, թե վերջին մանր գյուղացին զոհ կդնան խոշոր կապիտալիստական արտադրությանը։ Նյութական զոհաբերությունները, վոր այս իմաստով հարկ կլինի անել հասարակական միջոցներից՝ գյուղացիների օգտին, կապիտալիստական էկոնոմիկայի տեսակետից կարող են թվալ դեն գցված փողեր, մինչդեռ այդ — կապիտալի հիանալի գործածումն է, վորովհետև դրանք կխնայեն, թերևս, տասն անգամ ավելի մեծ գումարներ՝ հասարակական վերափոխության վրա — իր ամբողջությամբ առած — ծախսեր անելու ժամանակ։ Այս իմաստով մենք կարող ենք, հետևաբար, շատ առատաձեռն լինել գյուղացիների նկատմամբ» (տես՝ նույն տեղը)։

Այսպես եր ասում Ենգելսը, նկատի ունենալով Արևմտյան գյուղացիությունը։ Բայց միթե պարզ չե, վոր Ենգելսի ասածը վոչ մի տեղ չի կարող իրականացվել այնպիսի հեշտությամբ ու լրիվությամբ, ինչպես պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում։ Միթե պարզ չե, վոր միայն խորհրդային Ռուսաստանում կարող են կենսագործվել այժմ և յեթ և ամբողջությամբ թե «ինքնուրույն աշխատող մանր գյուղացու մեր կողմ անցնելը», թե դրա համար անհրաժեշտ «նյութական զոհաբերությունները», թե դրա համար հարկավոր «առատաձեռնությունը գյուղացիների նկատմամբ», վոր այդ և դրանց նման միջոցառումները գյուղացիների օգտին՝ Ռուսաստանում արդեն կիրառվում են։ Ի՞նչպես կարելի յե ժխտել, վոր այս հանգամանքը, իր հերթին, պետք է հեշտացնի և առաջ շարժի խորհրդային յերկրի տնտեսական շինարարության գործը։

Երկրորդ: Ռուսաստանի գյուղատնտեսությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղատնտեսության հետ։ Այնտեղ գյուղատնտեսության զարգացումն ընթանում է կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խոր շերտավորման պայմաններում, մի բևեռում ունենալով — խոշոր կալվածքներ ու մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաներ, մյուսում — պաուպերիզմ, աղքատություն և վարձու ստրկություն։ Դրա պատճառով անկումն ու քայքայումն այնտեղ միանգամայն բնական են։ Այդպես չե Ռուսաստանում։ Մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղիով թեկուզ հենց այն պատճառով, վոր խորհրդային իշխանության

առկայությունը և արտադրության հիմնական գործիքների ու միջոցների ազգայնացումը չեն թույլատրում այդպիսի զարգացում։ Ռուսաստանում գյուղատնտեսության զարգացումը պետք է ընթանա ուրիշ ուղիով, միլիոնավոր մանր և միջակ գյուղացիության կոոպերացման ուղիով, պետության կողմից արտոնյալ վարկավորման կարգով պաշտպանվող մասսայական կոոպերացիան գյուղում զարգացնելու ուղիով։ Կոոպերացիայի վերաբերյալ հոդվածներում Լենինը ճիշտ է մատնանշել, վոր գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք է ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոոպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղիով, սկզբում գյուղատնտեսության արտադրանքը շուկա հանելու ասպարեզում գյուղատնտեսության մթերքների արտադրության ասպարեզում, իսկ հետո — գյուղատնտեսության մթերքների արտադրության ասպարեզում կոլեկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատավորելու ուղիով։

Այս տեսակետից ծայր աստիճան հետաքրքրական են գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքի հետ կապված միքանի նոր յերևույթները գյուղում։ Հայտնի յե, վոր Սելսկոսոյուզի*) ներսում ծնունդ են առել նոր խոշոր կազմակերպություններ ըստ գյուղատնտեսության ճյուղերի՝ վուշի, կարտոֆիլի, յուղի և այլն, վորոնք մեծ ապագա ունեն։ Դրանցից, որինակ, Լնոցենտրը**) միավորում է վուշագործ-գյուղացիների արտադրական ընկերությունների մի ամբողջ ցանց։ Լնոցենտրն զբաղվում է նրանով, վոր գյուղացիներին մատակարարում է սերմացու և արտադրության գործիքներ, հետո նույն այդ գյուղացիներից գնում է վուշի ամբողջ արտադրանքը, մասսայական մասշտաբով վաճառահանում է շուկայում, ապահովում է գյուղացիների մասնակցությունը շահույթներին և, այդպիսով, գյուղացիական տնտեսությունը Սելսկոսոյուզի միջոցով կապում է պետական արդյունաբերության հետ։ Ի՞նչպես անվանել արտադրության կազմակերպման այս ձևը։ Այդ, ըստ իս, խոշոր պետական-սոցիալիստական արտադրության տնային սիստեմն է՝ գյուղատնտեսության ասպարեզում։ Ես այստեղ խոսում եմ պետական-սոցիալիստական արտադրության տնային սիստեմի մասին՝ անալոգիա անցկացնելով կապիտալիզմի տնային սիստեմի հետ, ասենք, տեքստիլ արտադրության ասպարեզում, վորտեղ տնայնագործները, ստանալով կապիտալիստից հումք և գործիքներ և հանձնելով նրան իրենց ամբողջ արտադրանքը, փաստորեն հանդիսանում եյին տանն աշխատող կիսավարձու բանվորներ։ Սա մեկն է այն շատ ցուցանիշներից, թե մեզ մոտ ինչ ճանապարհով պետք է ընթանա գյուղատնտեսության զարգացումը։ Ահա այստեղ

*) Գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը։ Ծանոթ. հայ. հրատ. խմբ.։

**) Վուշկենտրոն — վուշագործական կոոպերատիվների միություն։ Ծանոթ. հայ. հրատ. խմբ.։

եվ չեմ խոսում նույն այդ տեսակի՝ գյուղատնտեսության այլ ճյուղերին վերաբերող՝ ուրիշ ցուցանիշների մասին։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր գյուղացիության հսկայական մեծամասնությունը սիրով վոտք կդնի զարգացման այս նոր ուղին, դեն նետելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաների և վարձու ստրկության ուղին, աղքատության և քայքայման ուղին։

Ահա թե ինչ է ասում Լենինը մեր գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին.

> «Պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը բազմամիլիոն մանր և մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիության ղեկավարությունն այդ պրոլետարիատի համար ապահովելը և այլն — միթե սա այն ամենը չէ, վոր հարկավոր է, վորպեսզի կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, վորին մենք առաջ արհամարհում էինք, վորպես չարչիական, և վորին վորոշ տեսակետից իրավունք ունենք արհամարհելու այժմ՝ նեպի պայմաններում նույնպես, — միթե սա բոլոր անհրաժեշտը չէ՝ լրակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Այդ դեռևս սոցիալիստական հասարակության կառուցում չէ, բայց դա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բավական՝ այդ կառուցման համար» (տես՝ հ. **XXVII**, եջ 392, ռուս. հրատ.)։

Այնուհետև խոսելով այն մասին, վոր անհրաժեշտ է ֆինանսական և այլ աջակցություն ցույց տալ կոոպերացիային, վորպես «բնակչության կազմակերպման նոր սկզբունքի» և «նոր հասարակարգի»՝ պրոլետարիատի դիկտատուրայի որով, Լենինը շարունակում է.

> «Յուրաքանչյուր հասարակակարգ ծնունդ է առնում միայն վորոշ դասակարգի ֆինանսական աջակցության դեպքում։ Կարիք չկա հիշեցնելու այն հարյուր միլիոնավոր ռուբլիները, վոր արժեցավ «ազատ» կապիտալիզմի ծնունդը։ Հիմա մենք պետք է գիտակցենք ու գործի վերածենք այն, վոր ներկայումս այն հասարակակարգը, վորին մենք պետք է աջակցենք սովորականից ավելի, կոոպերատիվ կարգն է։ Սակայն նրան հարկավոր է աջակցել այս բառի իսկական իմաստով, այսինքն այդ աջակցությունը բավական չէ հասկանալ վորպես աջակցություն ցանկացած կոոպերատիվ շրջանառությանը, — այդ աջակցության տակ հարկավոր է հասկանալ այնպիսի կոոպերատիվ շրջանառության աջակցելը, վորին իսկապես մասնակցում են բնակչության իսկական մասսաները» (տես՝ նույն տեղը, եջ 393)։

Ի՞նչ են ասում այս բոլոր հանգամանքները։

Այն, վոր սկեպտիկներն իրավացի չեն։

Այն, վոր իրավացի յե լենինիզմը, վորը գյուղացիության աշխատավոր մասսաներին դիտում է վորպես պրոլետարիատի ռեզերվ։

Այն, վոր իշխանության գլուխ կանգնած պրոլետարիատը կարող է և պետք է ոգտագործի այդ ռեզերվը, վորպեսզի ինդուստրիան շաղկապի գյուղատնտեսության հետ, բարձրացնի սոցիալիստական շինարարությունը և պրոլետարիատի դիկտատուրային տա այն անհրաժեշտ

հիմքը, առանց վորի անհնարին է սոցիալիստական էկոնոմիկային անցնելը։

VI. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Այս թեմայից յես վերցնում եմ յերկու գլխավոր հարց. ա) հարցի դրումը, բ) ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը և պրոլետարական հեղափոխությունը։

1) Հարցի դրումը։ Վերջին յերկու տասնամյակներում ազգային հարցը կրել է յերկու լրջագույն փոփոխություն։ Ազգային հարցը II Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում և ազգային հարցը լենինիզմի ժամանակաշրջանում միևնույնը չեն։ Նրանք խորապես տարբերվում են իրարից վոչ միայն ծավալով, այլև իրենց ներքին բնույթով։

Առաջներում ազգային հարցը պարփակվում էր սովորաբար այն հարցերի նեղ շրջանակում, վորոնք գլխավորապես վերաբերում էին «կուլտուրական» ազգություններին։ Իռլանդացիք, հունգարացիք, լեհերը, ֆինները, սերբերը և Յեվրոպայի միքանի ուրիշ ազգություններ — ահա իրավազուրկ ժողովուրդների այն շրջանը, վորոնց բախտով հետաքրքրվում էին II Ինտերնացիոնալի հերոսները։ Ամենակոպիտ և դաժան ձևի ազգային ճնշման յենթակա ասիական և աֆրիկական ժողովուրդների տասնյակ և հարյուրավոր միլիոններ կազմող զանգվածները սովորաբար տեսադաշտից դուրս էին մնում։ Սպիտակներին ու սևերին, «կուլտուրականներին» և անկուլտուրականներին չէին համարձակվում միևնույն կարգը դասել։ Յերկու-յերեք դատարկ և թթվաքաղցր բանաձևեր, վորոնք ջանասիրաբար խուսափում էին գաղութների ազատագրման հարցից, — սա այն բոլորն է, ինչով կարող էին պարծենալ II Ինտերնացիոնալի գործիչները։ Այժմ ազգային հարցում յեղած այդ յերկվությունն ու կիսատությունը հարկավոր է վերացված համարել։ Լենինիզմը բաց արեց այդ աղաղակող անհամապատասխանությունը, կործանեց սպիտակների և սևերի միջև, յեվրոպացիների և ասիացիների միջև, իմպերիալիզմի «կուլտուրական» և «անկուլտուրական» ստրուկների միջև յեղած պատը և, այդպիսով, ազգային հարցը կապեց գաղութների հարցի հետ։ Դրանով իսկ ազգային հարցը մասնավոր և ներպետական հարցից վերածվեց ընդհանուր և միջազգային հարցի, կախյալ յերկրների և գաղութների ճնշված ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատելու համաշխարհային հարցի։

Առաջներում ազգերի ինքնորոշման սկզբունքը սովորաբար սխալ էր մեկնաբանվում, հաճախ նեղացվելով մինչև ազգերի ավտոնոմիայի իրավունքը։ II Ինտերնացիոնալի միքանի լիդերներ նույնիսկ այն տեղը հասան, վոր ինքնորոշման իրավունքը վերածեցին կուլտուրական ավտոնոմիայի իրավունքի, այսինքն ճնշված ազգերի իրավունքի՝ ունենալու իրենց կուլտուրական հիմնարկությունները, ամբողջ քաղաքական

իշխանությունը թողնելով գերիշխող ազգի ձեռքին։ Այս հանգամանքը տանում էր դեպի այնպիսի դրություն, յերբ ինքնորոշման գաղափարը ռիսկ էր անում աննեքսիաների դեմ կռվելու զենքից վերածվելու աննեքսիաների արդարացման զենքի։ Հիմա այդ շփոթը պետք է հաղթահարված համարել։ Լենինիզմն ընդարձակեց ինքնորոշման հասկացողությունը, մեկնաբանելով այն վորպես կախյալ յերկրների և գաղութների ճնշված ժողովուրդների լիակատար անջատման իրավունք, վորպես ազգերի ինքնուրույն պետական գոյության իրավունք։ Դրանով իսկ բացառվեց աննեքսիաների արդարացման հնարավորությունը՝ ինքնորոշման իրավունքը վորպես ավտոնոմիայի իրավունք մեկնաբանելու միջոցով։ Իսկ ինքը՝ ինքնորոշման իրավունքը, այդպիսով, մասսաներին խաբելու գործիքից, վորպիսին նա անկասկած հանդիսանում էր սոցիալ-շովինիստների ձեռքին՝ իմպերիալիստական պատերազմի ժամանակ, վերածվեց բոլոր և ամեն տեսակ իմպերիալիստա... իղձերի ու մախինացիաների մերկացման գործիքի, մասսաներ... ինտերնացիոնալիզմի վոգով քաղաքականապես լուսավորելու գործիքի։

Առաջներում ճնշված ազգերի հարցը սովորաբար դիտվում էր վորպես զուտ իրավական հարց։ «Ազգային իրավահավասարության» հանդիսավոր հռչակումը, անթիվ դեկլարացիաներն «ազգերի հավասարության» մասին—ահա թե ինչով էյին ժամանակ անցկացնում II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք սքողում էյին այն փաստը, վոր «ազգերի հավասարությունն» իմպերիալիզմի պայմաններում, յերբ ազգերի մի խումբը (փոքրամասնությունը) ապրում է ի հաշիվ ազգերի մյուս խմբի շահագործման, ծաղր է ճնշված ժողովուրդների նկատմամբ։ Հիմա այդ բուրժուական-իրավական տեսակետն ազգային հարցում հարկավոր է մերկացված համարել։ Լենինիզմն ազգային հարցը լայնահաղորդ դեկլարացիաների բարձունքներից գետին իջեցրեց, հայտարարելով, վոր «ազգերի հավասարության» վերաբերյալ դեկլարացիաները, յեթե նրանք չեն ամրապնդվում ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին պրոլետարական կուսակցությունների կողմից ցույց տրվող ուղղակի աջակցությամբ, դատարկ ու կեղծ դեկլարացիաներ են։ Դրանով իսկ ճնշված ազգերի հարցը դարձավ այդ ազգերին աջակցություն, ոգնություն՝ իսկական և մշտական ոգնություն ցույց տալու հարց, աջակցություն և ոգնություն նրանց պայքարին՝ ընդդեմ իմպերիալիզմի, հանուն ազգերի իսկական հավասարության, հանուն նրանց ինքնուրույն պետական գոյության։

Առաջներում ազգային հարցը դիտվում էր ռեֆորմիստորեն, վորպես առանձին ինքնուրույն հարց, առանց կապակցվելու կապիտալի իշխանության, իմպերիալիզմի տապալման, պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի հետ։ Լռելյայն յենթադրվում էր, վոր պրոլետարիատի հաղթանակը Յեվրոպայում հնարավոր է առանց ուղ-

ղակի դաշինքի գաղութների ազատագրական շարժման հետ, վոր ազգային-գաղութային հարցի լուծումը կարող է անցկացվել «սուսուփուս», «ինքնահոսով», պրոլետարական հեղափոխության մեծ ճանապարհից դուրս, առանց հեղափոխական պայքարի՝ ընդդեմ իմպերիալիզմի։ Հիմա այդ անտիհեղափոխական տեսակետը պետք է մերկացված համարել։ Լենինիզմն ապացուցեց, իսկ իմպերիալիստական պատերազմը և Ռուսաստանի հեղափոխությունը հաստատեցին, վոր ազգային հարցը կարող է լուծվել միմիայն պրոլետարական հեղափոխության կապակցությամբ և նրա հողի վրա, վոր Արևմուտքի հեղափոխության հաղթանակը հնարավոր է իմպերիալիզմի դեմ գաղութների և կախյալ յերկրների ազատագրական շարժման հետ հեղափոխական դաշինք կնքելու միջոցով։ Ազգային հարցը պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն է, պրոլետարիատի դիկտատուրայի հարցի մի մասը։

Հարցն այսպես է դրված. արդյո՞ք արդեն սպառված են ճնշված յերկրների հեղափոխական-ազատագրական շարժման ծոցում յեղած հեղափոխական հնարավորությունները, թե վոչ, և յեթե սպառված չեն՝ արդյոք հույս, հիմք կա՞ ոգտագործելու այդ հնարավորությունները պրոլետարական հեղափոխության համար, կախյալ և գաղութային յերկրները վերածելու իմպերիալիստական բուրժուազիայի ռեզերվից՝ հեղափոխական պրոլետարիատի ռեզերվի, վերջինի դաշնակցի։

Լենինիզմն այս հարցին պատասխանում է դրականապես, այսինքն՝ ճնշված յերկրների ազգային-ազատագրական շարժման ծոցում հեղափոխական ընդունակությունների գոյությունը ճանաչելու իմաստով, այն իմաստով, վոր այդ ընդունակությունները հնարավոր է ոգտագործել ընդհանուր թշնամուն տապալելու նպատակով, իմպերիալիզմը տապալելու նպատակով։ Իմպերիալիզմի զարգացման մեխանիկան, իմպերիալիստական պատերազմը և Ռուսաստանի հեղափոխությունն ամբողջովին հաստատում են լենինիզմի յեզրակացություններն այդ առթիվ։

Այստեղից բղխում է աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը, ճնշված և կախյալ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը պրոլետարիատի կողմից վճռական և ակտիվ աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը։

Այդ, իհարկե, չի նշանակում, թե պրոլետարիատը պետք է աջակցի ԱՄԵՆ մի ազգային շարժման, ամենուրեք և միշտ, բոլոր առանձին կոնկրետ դեպքերում։ Խոսքը վերաբերում է այնպիսի ազգային շարժումներին աջակցելուն, վորոնք նպատակ ունեն թուլացնել, տապալել իմպերիալիզմը, և վոչ թե ամրապնդել ու պահպանել այն։ Լինում են դեպքեր, յերբ առանձին ճնշված յերկրների ազգային շարժումներն ընդհարվում են պրոլետարական շարժման զարգացման շահերին։ Ինքնըստինքյան հասկանալի է, վոր այսպիսի դեպքերում խոսք անգամ չի կարող լինել աջակցության մասին։ Ազգերի իրավունքների հարցը մի-

կուսացած և ինքնաբավ հարց չե, այլ պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն ե, վոր յենթարկված ե ամբողջին և պահանջում ե դիտել իրեն ամբողջի տեսանկյունով: Անցած դարի 40-ական թվականներին Մարքսը կողմնակից եր լեհերի և հունգարացիների ազգային շարժմանը ընդդեմ չեխերի և հարավային սլավոնների ազգային շարժման: Ինչու: Վորովհետև չեխերն ու հարավային սլավոններն այն ժամանակ «ռեակցիոն ժողովուրդներ» եյին, «ռուսական ֆորպոստներ» Յեվրոպայում, աբսոլյուտիզմի ֆորպոստներ, մինչդեռ լեհերն ու հունգարացիները «հեղափոխական ժողովուրդներ» եյին, վորոնք կռվում եյին աբսոլյուտիզմի դեմ: Վորովհետև չեխերի և հարավային սլավոնների ազգային շարժմանն աջակցելն այն ժամանակ նշանակում եր անուղղակի աջակցություն ցարիզմին, Յեվրոպայի հեղափոխական շարժման ամենավտանգավոր թշնամուն:

«Դեմոկրատիայի առանձին պահանջները, — ասում ե Լենինը, — այդ թվում և ինքնորոշումը, աբսոլյուտ չե, այլ մասնիկն ե համադեմոկրատական (ներկայումս՝ համասոցիալիստական) համաշխարհային շարժման: Հնարավոր ե, վոր առանձին կոնկրետ դեպքերում մասնիկը հակասի ընդհանուրին, այն ժամանակ մասնիկը պետք ե մերժել» (տես՝ հ. XIX, եջ 257—258, ռուս. հրատ.):

Այսպես ե դրված առանձին ազգային շարժումների հարցը, այդ շարժումների հնարավոր ռեակցիոն բնույթի հարցը, յեթե, իհարկե, այդ շարժումները գնահատենք վոչ թե ձևական տեսակետից, վոչ թե վերացական իրավունքների տեսակետից, այլ կոնկրետ կերպով, հեղափոխական շարժման շահերի տեսակետից:

Նույնը պետք ե ասել առհասարակ ազգային շարժումների հեղափոխական բնույթի մասին: Ազգային շարժումների հսկայական մեծամասնության անկասկած հեղափոխականությունը նույնքան հարաբերական ե և յուրօրինակ, վորքան հարաբերական ե և յուրօրինակ ե միքանի առանձին ազգային շարժումների հնարավոր ռեակցիոնությունը: Ազգային շարժման հեղափոխական բնույթն իմպերիալիստական ճնշման պայմաններում բնավ չի յենթադրում պրոլետարական տարրերի պարտադիր առկայությունը շարժման մեջ, շարժման հեղափոխական կամ հանրապետական ծրագրի առկայությունը, շարժման դեմոկրատիկ հիմունքի առկայությունը: Աֆղանական եմիրի պայքարը հանուն Աֆղանստանի անկախության օբյեկտիվորեն հեղափոխական պայքար ե, չնայած եմիրի և նրա գործակիցների միապետական հայացքներին, վորովհետև այդ պայքարը թուլացնում ե, քայքայում, խարխլում իմպերիալիզմը, մինչդեռ պայքարն այնպիսի «կատաղի» դեմոկրատների և «սոցիալիստների», «հեղափոխականների» և հանրապետականների, ինչպես են, դիցուք, Կերենսկին և Ծերեթելին, Ռենոդելը և Շայդեմանը, Չերնովը և Դանը, Հենդերսոնը և Կլայնսը, իմպե-

րիալիստական պատերազմի ժամանակ, ռեակցիոն պայքար եր, վորովհետև նրա արդյունքը յեղավ իմպերիալիզմի գունազարդումը, ամրապնդումը, հաղթանակը: Յեգիպտոսի վաճառականների և բուրժուական ինտելիգենտների պայքարը հանուն Յեգիպտոսի անկախության, նույն այդ պատճառներով, օբյեկտիվորեն հեղափոխական պայքար ե, չնայած յեգիպտական ազգային շարժման լիդերների բուրժուական ծագմանը և բուրժուական կոչումին, չնայած այն բանին, վոր նրանք դեմ են սոցիալիզմին, այնինչ անգլիական բանվորական կառավարության պայքարը հանուն Յեգիպտոսի կախյալ դրության պահպանման, նույն այդ պատճառներով, ռեակցիոն պայքար ե, չնայած այդ կառավարության անդամների պրոլետարական ծագմանը և պրոլետարական կոչումին, չնայած այն բանին, վոր նրանք «կողմնակից են» սոցիալիզմին: Յես ել չեմ խոսում ուրիշ, ավելի խոշոր, գաղութային և կախյալ յերկրների ազգային շարժումների մասին, ինչպիսիք են Հնդկաստանն ու Չինաստանը, վորոնց ամեն մի քայլն ազատագրության ճանապարհին, յեթե նա նույնիսկ խախտում ե ձևական դեմոկրատիայի պահանջները, շոգեմուրճի հարված ե իմպերիալիզմին, այսինքն այնպիսի քայլ ե, վորն, անկասկած, հեղափոխական ե:

Լենինն իրավացի յեր, յերբ ասում եր, վոր ճնշված յերկրների ազգային շարժումը պետք ե գնահատել վոչ թե ձևական դեմոկրատիայի տեսակետով, այլ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ընդհանուր հաշվեկշռի փաստական արդյունքների տեսակետով, այսինքն «վոչ թե մեկուսացրած, այլ համաշխարհային մասշտաբով» (տես՝ հ. XIX, եջ 257, ռուս. հրատ.):

2) Ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը յեվ պրոլետարական հեղափոխությունը: Ազգային հարցը լուծելիս լենինիզմը յելնում ե հետևյալ դրույթներից.

ա) աշխարհը բաժանված ե յերկու բանակի՝ մի բուռը քաղաքակիրթ ազգերի բանակ, վորոնք ֆինանսական կապիտալի տեր են և շահագործում են յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը, և գաղութների ու կախյալ յերկրների ճնշված ու շահագործվող ժողովուրդների բանակ, վորոնք կազմում են այդ մեծամասնությունը.

բ) գաղութներն ու կախյալ յերկրները, վորոնց ճնշում և շահագործում ե ֆինանսական կապիտալը, կազմում են իմպերիալիզմի ուժերի մեծագույն ռեզերվը և ամենալուրջ աղբյուրը.

գ) կախյալ և գաղութային յերկրների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարն իմպերիալիզմի դեմ՝ ճնշումից և շահագործումից ազատագրվելու միակ ուղին ե այդ ժողովուրդների համար.

դ) կարևորագույն գաղութային և կախյալ յերկրներն արդեն վոտք են դրել ազգային-ազատագրական շարժման ուղին, — շարժում, վորը չի կարող չտանել դեպի համաշխարհային կապիտալիզմի կրիզիսը.

ե) պրոլետարական շարժման շահերը զարգացած յերկրներում և ազգային-ազատագրական շարժման շահերը գաղութներում պահանջում են միացնել հեղափոխական շարժման այդ յերկու տեսակները և դարձնել մի ընդհանուր ֆրոնտ՝ ընդդեմ ընդհանուր թշնամու, ընդդեմ իմպերիալիզմի.

զ) բանվոր դասակարգի հաղթանակը զարգացած յերկրներում և ճնշված ժողովուրդների ազատագրումն իմպերիալիզմի լծից անհնար են առանց ընդհանուր հեղափոխական ֆրոնտի գոյանալու և ամրապնդվելու.

է) ընդհանուր հեղափոխական ֆրոնտի գոյանալն անհնարին է առանց այն բանի, վոր ճնշող ազգերի պրոլետարիատն ուղղակի և վճռական աջակցություն ցույց տա ճնշված ժողովուրդների ազատագրական շարժմանը՝ ընդդեմ «հայրենական» իմպերիալիզմի, վորովհետև «ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, վոր ճնշում է ուրիշ ժողովուրդների» (Մարքս).

ը) այդ աջակցությունը նշանակում է ազգերի անջատման իրավունք, ինքնուրույն պետական գոյության իրավունք հռչակող լոզունգի կողմնակցություն, պաշտպանություն, կենսագործում.

թ) առանց այդ լոզունգի կենսագործման անհնարին է կազմակերպել ազգերի միավորումն ու գործակցությունը մի միասնական համաշխարհային տնտեսության մեջ, վորը կազմում է սոցիալիզմի հաղթանակի նյութական պատվանդանը.

ժ) այդ միավորումը կարող է լինել միայն կամավոր՝ ծնունդ առած ժողովուրդների փոխադարձ վստահության և յեղբայրական փոխհարաբերությունների հիման վրա:

Այստեղից բղխում են ազգային հարցի յերկու կողմերը, յերկու տենդենցները. իմպերիալիստական կապանքներից քաղաքականապես ազատվելու և ինքնուրույն ազգային պետություն կազմելու տենդենց, վոր ծնունդ է առել իմպերիալիստական ճնշման ու գաղութային շահագործման հիման վրա, և ազգերի տնտեսական մերձեցման տենդենց, վոր ծնունդ է առել համաշխարհային շուկայի և համաշխարհային տնտեսության գոյանալու կապակցությամբ:

«Զարգացող կապիտալիզմին, — ասում է Լենինը, — ծանոթ է յերկու պատմական տենդենց ազգային հարցում: Առաջին տենդենց՝ ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնք, պայքար ընդդեմ ամեն տեսակ ազգային ճնշման, ազգային պետությունների ստեղծում: Յերկրորդ տենդենց՝ ազգերի միջև ամեն տեսակ հարաբերությունների զարգանալն ու հաճախանալը, ազգային միջնապատերի քանդումը, կապիտալի, առհասարակ տնտեսական կյանքի, քաղաքականության, գիտության և այլն ինտերնացիոնալ միասնության ստեղծվելը: Յերկու տենդենցն էլ կապիտալիզմի համաշխարհային օրենքն են: Առաջինը գերակշռում է նրա զարգացման սկզբում, յերկրորդը բնորոշում է հասուն

կապիտալիզմը, վորը դնում է դեպի իր վերածվելը սոցիալիստական հասարակակարգի» (տես՝ հ. XVII, էջ 139—140, ռուս. հրատ.):

Իմպերիալիզմի համար այդ յերկու տենդենցներն անհաշտելի հակասություններ են, վորովհետև իմպերիալիզմը չի կարող ապրել առանց շահագործման և գաղութները «միասնական ամբողջի» շրջանակներում բռնի կերպով պահելու, վորովհետև իմպերիալիզմը կարող է ազգերին մերձեցնել միայն անեքսիայի և գաղութային զավթումների միջոցով, — զավթումներ, առանց վորոնց իմպերիալիզմն, ընդհանրապես ասած, աներևակայելի յե:

Կոմունիզմի համար, ընդհակառակը, այդ տենդենցները յերկու կողմերն են մի գործի, իմպերիալիզմի լծից ճնշված ժողովուրդների ազատագրման գործի, վորովհետև կոմունիզմը գիտե, վոր ժողովուրդների միավորումը միասնական համաշխարհային տնտեսության մեջ հնարավոր է միայն փոխադարձ վստահության և կամավոր համաձայնության հիմունքներով, վոր ժողովուրդների կամավոր միավորում կազմակերպելու նախապայման է գաղութների անջատվելը «միասնական» իմպերիալիստական «ամբողջից», նրանց ինքնուրույն պետությունների վերածվելը:

Այստեղից բղխում է անհրաժեշտությունը համառ, անընդհատ, վճռական պայքարի ընդդեմ գերիշխող ազգերի (Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկա, Իտալիա, Ճապոնիա և այլն) «սոցիալիստների» մեծապետական շովինիզմի, — ազգեր, վորոնք չեն ցանկանում կռվել իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ, չեն ցանկանում աջակցել «իրենց» գաղութների ճնշված ժողովուրդների պայքարին՝ ճնշումից ազատվելու համար, պետական անջատման համար:

Առանց այդպիսի պայքարի աներևակայելի յե գերիշխող ազգերի բանվոր դասակարգի դաստիարակումն իսկական իմպերիալիզմի վոգով, կախյալ յերկրների և գաղութների աշխատավոր մասսաների հետ մերձեցնելու վոգով, պրոլետարական հեղափոխության իսկական նախապատրաստման վոգով: Հեղափոխությունը Ռուսաստանում չեր հաղթի, և Կոլչակն ու Դենիկինը չեյին ջախջախվի, յեթե ռուսական պրոլետարիատը չվայելեր նախկին Ռուսաստանի կայսրության ճնշված ժողովուրդների համակրանքն ու աջակցությունը: Բայց այդ ժողովուրդների համակրանքն ու աջակցությունը նվաճելու համար պրոլետարիատը նախ և առաջ պետք է փշրեր ռուսական իմպերիալիզմի շղթաները և այդ ժողովուրդներին ազատեր ազգային ճնշումից: Առանց այդ բանի անհնար կլիներ ամրապնդել խորհրդային իշխանությունը, արմատցնել իսկական ինտերնացիոնալիզմը և ստեղծել ժողովուրդների այն զարմանալի կազմակերպությունը, վոր կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, և վորը կենդանի

նախատիպն է ժողովուրդների ապագա միավորման՝ մի միասնական համաշխարհային տնտեսության մեջ։

Այստեղից բղխում է ճնշված ժողովուրդների սոցիալիստների ազգային փակվածության, նեղհոգիության, կղզիացման դեմ պայքարելու անհրաժեշտությունը, — սոցիալիստներ, վորոնք չեն ցանկանում իրենց ազգային զանգատնից վեր բարձրանալ և չեն հասկանում իրենց յերկրի ազատագրական շարժման կապը տիրապետող յերկրների պրոլետարական շարժման հետ։

Առանց այդպիսի պայքարի անհնարին է պաշտպանել ճնշված ազգերի պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականությունը և նրա դասակարգային համերաշխությունը տիրապետող յերկրների պրոլետարիատի հետ՝ ընդհանուր թշնամուն տապալելու համար մղվող պայքարում, իմպերիալիզմը տապալելու համար մղվող պայքարում. առանց այդպիսի պայքարի ինտերնացիոնալիզմն անհնարին կլիներ։

Այս է տիրապետող և ճնշված ազգերի աշխատավոր մասսաներին հեղափոխական ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու ուղին։

Ահա թե ինչ է ասում Լենինը՝ բանվորներին ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու համար կոմունիզմի կատարելիք այս յերկկողմանի աշխատանքի մասին.

«Այդ դաստիարակությունը կարող է արդյոք... լինել կոնկրետորեն միանման մեծ ու. ճնշող ազգերում և փոքր, ճնշվող ազգերում, աննեքսիայի յենթարկող ազգերում և աննեքսիայի յենթարկվող ազգերում։

Ակներև է, վոր վոչ։ Դեպի միևնույն նպատակը՝ բոլոր ազգերի լիակատար իրավահավասարությունը, ամենասերտ մերձեցումը և հետագա ձուլումը տանող ուղին այս դեպքում անցնում է, ակներև է, տարբեր կոնկրետ ճանապարհներով — այնպես, ինչպես, դիցուք, տվյալ եջի կենտրոնում գտնվող կետը տանող ուղին անցնում է դեպի ձախ՝ եջի մեկ յեզրից և դեպի աջ՝ հակադիր յեզրից։ Յեթե մեծ, ճնշող. անեքսիա անող ազգի սոցիալիստը, դավանելով ընդհանրապես ազգերի ձուլումը, թեկուզ մի րոպե մոռանա, վոր «իր» Նիկոլայ II-ը, «իր» Վիլհելմը, Գեորգը, Պուանկարեն և այլն նույնպես կողմնակից են մանր ազգերի հետ «ձուլվելուն» (անեքսիայի միջոցով) — Նիկոլայ II՝ Գալիցիայի հետ «ձուլվելուն», Վիլհելմ II՝ Բելգիայի հետ «ձուլվելուն» և այլն, — ապա նման սոցիալիստը դուրս կգա ծիծաղելի դոկտրինյոր՝ թեորիայում, իմպերիալիզմի աջակից՝ պրակտիկայում։

Ճնշող յերկրներում բանվորների ինտերնացիոնալիստական դաստիարակության ծանրության կենտրոն անխուսափելիորեն պետք է հանդիսանա ճնշված յերկրների անջատվելու ազատության պրոպագանդը և պաշտպանությունը՝ նրանց կողմից։ Առանց դրան չկա ինտերնացիոնալիզմ։ Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք արհամարհել ճնշող ազգի ամեն մի սոցիալիստի, վորպես իմպերիալիստի և վորպես սրիկայի, յեթե նա այդպիսի պրոպագանդ չի մղում։ Այս անպայման պահանջ է, նույնիսկ յեթե անջատման դեպքը հնարավոր և «իրականելի» լինի մինչև սոցիալիզմը 1000-ից ընդամենը 1 դեպքում...

Ընդհակառակը, փոքր ազգի սոցիալիստը պետք է իր ագիտացիայի ծանրության կենտրոնը դնի մեր ընդհանուր ֆորմուլայի՝ ազգերի «կամավոր միացում» —

յերկրորդ բառի վրա։ Նա կարող է, չխախտելով իր, վորպես ինտերնացիոնալիստի, պարտականությունները, կողմնակից լինել թե իր ազգի քաղաքական անկախության, թե իր ազգը հարևան X, Y, Z և այլն պետության մեջ մտցնելուն։ Բայց բոլոր դեպքերում նա պետք է կռվի մանր-ազգային նեղհոգիության, փակվածության, կղզիացման դեմ, հանուն ամբողջի և ընդհանուրի հաշվառման, հանուն մասնակիի շահերի յենթարկման ընդհանուրի շահերին։

Հարցի խորքը չթափանցած մարդիկ «հակասական» են գտնում, վոր ճնշող ազգերի սոցիալիստները պնդեն «անջատվելու ազատության» վրա, իսկ ճնշված ազգերի սոցիալիստները՝ «միանալու ազատության» վրա։ Բայց կարճատև խորհրդածությունը ցույց է տալիս, վոր այլ ճանապարհ դեպի ինտերնացիոնալիզմը և ազգերի ձուլումը, տվյալ դրությունից այլ ճանապարհ դեպի այդ նպատակը՝ չկա և չի կարող լինել» (տես՝ հ. XIX, եջ 261—262, ռուս. հրատ.)։

VII. ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ

Այս թեմայից յես վերցնում եմ վեց հարց՝ ա) ստրատեգիան և տակտիկան վորպես պրոլետարիատի դասակարգային կռվի ղեկավարության գիտություն, բ) հեղափոխության և ստրատեգիայի ետապները, գ) շարժման մակընթացություններն ու տեղատվությունները և տակտիկան, դ) ստրատեգիական ղեկավարությունը, ե) տակտիկական ղեկավարությունը, զ) ռեֆորմիզմը և ռեվոլյուցիոնիզմը։

1) Ստրատեգիան յեվ տակտիկան վորպես պրոլետարիատի դասակարգային կռվի ղեկավարության գիտություն։ II Ինտերնացիոնալի տիրապետության ժամանակաշրջանն առավելապես պրոլետարական բանակների ձևավորման և ուսուցման ժամանակաշրջանն եր՝ քիչ թե շատ խաղաղ զարգացման պայմաններում։ Դա պարլամենտարիզմի, վորպես դասակարգային կռվի ամենատարածված ձևի, ժամանակաշրջանն եր։ Դասակարգերի մեծ ընդհարումների, պրոլետարիատը հեղափոխական ճակատամարտերի պատրաստելու, պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու ուղիների հարցերն այն ժամանակ որակարգի մեջ չեյին, ինչպես թվում եր։ Խնդիրը հանգում եր լեգալ զարգացման բոլոր ուղիների ոգտագործմանը՝ պրոլետարական բանակների կազմակերպման և ուսուցման համար, պարլամենտարիզմի ոգտագործմանը՝ համապատասխան այն պայմաններին, վորոնց գոյության ժամանակ պրոլետարիատը շարունակում եր մնալ և պետք է, ինչպես թվում եր, մնար ոպոզիցիայի վիճակում։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի ժամանակաշրջանում և պրոլետարիատի խնդիրների այսպիսի ըմբռնման դեպքում չեր կարող լինել վոչ ամբողջական ստրատեգիա, վոչ մշակված տակտիկա։ Կային բեկորներ, առանձին մտքեր տակտիկայի և ստրատեգիայի մասին, բայց տակտիկա և ստրատեգիա չկար։

II Ինտերնացիոնալի մահացու մեղքը վոչ թե այն եր, վոր նա իր ժամանակ անց եր կացնում պայքարի պարլամենտական ձևերի ոգտա-

գործման տակտիկա, այլ այն, որ նա գերագնահատում էր այդ ձևերի նշանակությունը, այդ ձևերը համարյա միակը համարելով, իսկ յերբ հասավ բացահայտ հեղափոխական ճակատամարտերի ժամանակաշրջանը և պայքարի արտապառլամենտական ձևերի հարցն առաջնահերթ դարձավ, II Ինտերնացիոնալի կուսակցությունները յերես դարձրին նոր խնդիրներից, չընդունեցին այդ խնդիրները:

Միայն հետևյալ ժամանակաշրջանում, պրոլետարիատի բացահայտ յելույթների ժամանակաշրջանում, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ բուրժուազիայի տապալման հարցը դարձավ ուղղակի պրակտիկայի հարց, յերբ պրոլետարիատի ռեզերվների հարցը (ստրատեգիա) դարձավ ամենակենսաթրթիռ հարցերից մեկը, յերբ պայքարի և կազմակերպության բոլոր ձևերը—թե պառլամենտականները, թե արտապառլամենտականները (տակտիկա)—դրսևորեցին իրենց լիակատար վորոշակիությամբ,—միայն այդ ժամանակաշրջանում կարող եյին մշակվել պրոլետարիատի պայքարի ամբողջական ստրատեգիա և մանրակրկիտ մշակված տակտիկա: Մարքսի և Էնգելսի հանճարեղ մտքերը տակտիկայի և ստրատեգիայի մասին, վոր կոծկել եյին II Ինտերնացիոնալի օպորտունիստները, Լենինը դուրս քաշեց լույս աշխարհ հենց այդ ժամանակաշրջանում: Բայց Լենինը չսահմանափակվեց Մարքսի և Էնգելսի առանձին տակտիկական դրույթների վերականգնումով: Նա այդ դրույթներն ավելի զարգացրեց և լրացրեց նոր մտքերով ու դրույթներով, այդ բոլորը միավորելով և պրոլետարիատի դասակարգային կռվի ղեկավարման կանոնների ու ղեկավար սկզբունքների սիստեմի վերածելով: Լենինի այնպիսի բրոշյուրները, ինչպես են՝ «Ի՞նչ անել», «Յերկու տակտիկա», «Իմպերիալիզմը», «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», «Յերեխայական հիվանդությունը», վորպես ամենաթանգագին գանձ, անկասկած կմտնեն մարքսիզմի ընդհանուր գանձարանը, նրա հեղափոխական արսենալը: Լենինիզմի ստրատեգիան և տակտիկան պրոլետարիատի հեղափոխական պայքարի ղեկավարության գիտությունն է:

2) Հեղափոխության էտապները յեվ ստրատեգիան: *Ստրատեգիան պրոլետարիատի գլխավոր հարվածի ուղղության սահմանումն է՝ հեղափոխության տվյալ էտապի հիման վրա, հեղափոխական ուժերի (գլխավոր և յերկրորդական ռեզերվների) դասավորության համապատասխան պլանի մշակումը, այդ պլանի կիրառման համար հեղափոխության տվյալ էտապի ամբողջ ընթացքում մղվող պայքարը:*

Մեր հեղափոխությունն արդեն ապրել, անց է կացրել յերկու էտապ և Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո թևակոխել է յերրորդ էտապը: Դրան համապատասխան փոփոխվում էր ստրատեգիան:

Առաջին էտապ: *1903 թ.—1917 թ. փետրվար:* Նպատակն է՝ գլորել

ցարիզմը, լիովին վերացնել միջնադարի մնացորդները: Հեղափոխության հիմնական ուժը պրոլետարիատն է: Ամենամերձավոր ռեզերվը՝ գյուղացիությունը: Հիմնական հարվածի ուղղությունը՝ մեկուսացումը լիբերալ-միապետական բուրժուազիայի, վորը ջանում է տիրանալ գյուղացիությանը և լիկվիդացիայի յենթարկել հեղափոխությունը՝ ցարիզմի հետ համաձայնության գալու միջոցով: Ուժերի դասավորման պլանն է՝ բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ: «Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հեղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիության մասսային, վորպեսզի ուժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և չլատի բուրժուազիայի անկայունությունը» (տես՝ հ. VIII, եջ 96, ռուս. հրատ.):

Յերկրորդ էտապ: *1917 թ. մարտ—1917 թ. հոկտեմբեր:* Նպատակն է՝ գլորել իմպերիալիզմը Ռուսաստանում և դուրս գալ իմպերիալիստական պատերազմից: Հեղափոխության հիմնական ուժը պրոլետարիատն է: Ամենամերձավոր ռեզերվը՝ ամենաչքավոր գյուղացիությունը: Հարևան յերկրների պրոլետարիատը վորպես հավանական ռեզերվ: Յերկարած պատերազմը և իմպերիալիզմի կրիզիսը վորպես նպաստավոր մոմենտ: Հիմնական հարվածի ուղղությունն է՝ մեկուսացնել մանր-բուրժուական դեմոկրատիային (մենշևիկներ, էս-էրներ), վորն աշխատում է տիրանալ գյուղացիության աշխատավոր մասսաներին և վերջացնել հեղափոխությունը՝ իմպերիալիզմի հետ համաձայնության գալու միջոցով: Ուժերի դասավորման պլանն է՝ պրոլետարիատի դաշինքն ամենաչքավոր գյուղացիության հետ: «Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի, իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, վորպեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և չլատի գյուղացիության ու մանր-բուրժուազիայի անկայունությունը» (տես՝ նույն տեղը):

Յերրորդ էտապ: Սա սկսվեց Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Նպատակն է՝ ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, օգտագործելով այն վորպես հենակետ՝ իմպերիալիզմը բոլոր յերկրներում տապալելու համար: Հեղափոխությունը դուրս է գալիս մի յերկրի շրջանակներից, սկսվել է համաշխարհային հեղափոխության եպոխան: Հեղափոխության հիմնական ուժերն են՝ պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, պրոլետարիատի հեղափոխական շարժումը բոլոր յերկրներում: Գլխավոր ռեզերվներն են՝ կիսապրոլետարական և մանր-գյուղացիական մասսաները զարգացած յերկրներում, ազատագրական շարժումը գաղութներում ու կախյալ յերկրներում: Հիմնական հարվածի ուղղությունն է՝ մեկուսացնել մանր-բուրժուական դեմոկրատիան, մեկուսացնել II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք իմպերիալիզմի հետ համաձայնության գալու քաղաքականության հիմնական հենարանն են: Ուժերի դասավորման պլանն է՝ պրոլետարական

հեղափոխության դաշինքը գաղութների և կախյալ յերկրների ազատագրական շարժման հետ։

Ստրատեգիան գործ ունի հեղափոխության հիմնական ուժերի և նրանց ռեզերվների հետ։ Նա փոփոխվում է՝ համաձայն հեղափոխության անցմանը մեկ էտապից մյուսին, հիմնականում անփոփոխ մնալով տվյալ էտապի ամբողջ ժամանակաշրջանում։

3) Շարժման մակընթացություններն ու տեղատվությունները յեվ տակտիկան։ Տակտիկան պրոլետարիատի վարքագծի սահմանումն է շարժման մակընթացության կամ տեղատվության, հեղափոխության վերելքի կամ վայրէջքի համեմատաբար կարճ ժամանակաշրջանի համար. տակտիկան պայքար է հանուն այդ գծի կիրառման, վոր պետք է կատարվի՝ պայքարի և կազմակերպության հին ձևերը նորերով, հին լոզունգները նորերով փոխարինելու միջոցով, այդ ձևերի զուգակցության միջոցով և այլն։ Յեթե ստրատեգիան նպատակ ունի շահել, դիցուք, ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ մղած պատերազմը, իր վախճանին հասցնել ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ մղած պայքարը, ապա տակտիկան առաջադրում է իրեն նվազ էական նպատակներ, վորովհետև նա ջանում է շահել վոչ թե պատերազմն ամբողջությամբ առած, այլ այս կամ այն ճակատամարտերը, այս կամ այն մարտերը, հաջողությամբ անցկացնել այս կամ այն կամպանիաները, այս կամ այն յելույթները, վորոնք համապատասխանում են կոնկրետ իրադրությանը՝ հեղափոխության վերելքի կամ վայրէջքի տվյալ ժամանակաշրջանում։ Տակտիկան ստրատեգիայի մի մասն է՝ նրան յենթակա, նրան սպասարկող։

Տակտիկան փոխվում է, և այդ փոփոխությունը կախված է մակընթացություններից ու տեղատվություններից։ Մինչդեռ հեղափոխության առաջին էտապի ժամանակաշրջանում (1903—1917, փետրվար) ստրատեգիական պլանն անփոփոխ էր մնում, այս ժամանակվա ընթացքում տակտիկան փոխվում է միքանի անգամ։ 1903—1905 թ. թ. ժամանակամիջոցում կուսակցության տակտիկան հարձակողական էր, վորովհետև հեղափոխության մակընթացություն էր, շարժումը վերելք էր ապրում, և տակտիկան պետք է մեկներ այդ փաստից։ Դրան համապատասխան՝ պայքարի ձևերն էլ հեղափոխական ձևեր էյին, հեղափոխության մակընթացության պահանջներին համապատասխանող։ Տեղական քաղաքական գործադուլներ, քաղաքական ցույցեր, ընդհանուր քաղաքական գործադուլ, Դումայի բոյկոտ, ապստամբություն, հեղափոխական-մարտական լոզունգներ—սրանք են պայքարի միմյանց հաջորդող ձևերն այդ ժամանակամիջոցում։ Պայքարի ձևերի կապակցությամբ այն ժամանակ փոխվեցին և կազմակերպության ձևերը։ Ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ, գյուղացիական-հեղափոխական կոմիտեներ, գործադուլային կոմիտեներ, բանվորական պատգամավորների

խորհուրդներ, փոքրիշատե բացահայտ բանվորական կուսակցություն—սրանք են կազմակերպության ձևերն այդ ժամանակաշրջանում։

1907—1912 թ. թ. ժամանակաշրջանում կուսակցությունն ստիպված էր անցնել նահանջի տակտիկայի, վորովհետև այն ժամանակ հեղափոխական շարժման վայրէջք էր, հեղափոխության տեղատվություն, և տակտիկան չէր կարող հաշվի չառնել այդ փաստը։ Դրան համապատասխան՝ փոխվեցին և պայքարի ձևերը, ինչպես նաև կազմակերպության ձևերը։ Դումայի բոյկոտի փոխարեն՝ մասնակցություն Դումային, բացահայտ արտադումայական հեղափոխական յելույթների փոխարեն՝ դումայական յելույթներ և դումայական աշխատանք, ընդհանուր քաղաքական գործադուլների փոխարեն՝ մասնակի տնտեսական գործադուլներ կամ պարզապես անգործություն։ Հասկանալի յե, վոր այդ ժամանակաշրջանում կուսակցությունը պետք է ընդհատակյա դրության անցներ, իսկ մասսայական հեղափոխական կազմակերպությունները փոխարինվեցին կուլտուր-լուսավորական, կոոպերատիվ, ապահովագրական և այլ յենթաօրինական կազմակերպություններով։

Նույնը պետք է ասել հեղափոխության յերկրորդ և յերրորդ էտապի մասին, վորոնց ընթացքում տակտիկան փոխվել է տասնյակ անգամներ, այնինչ ստրատեգիական պլաններն անփոփոխ էյին մնում։

Տակտիկան գործ ունի պայքարի ձևերի և պրոլետարիատի կազմակերպության ձևերի հետ, նրանց փոփոխման, նրանց միահյուսման հետ։ Հեղափոխության տվյալ էտապի հիման վրա տակտիկան կարող է փոխվել միքանի անգամ՝ հեղափոխության մակընթացությունների և տեղատվությունների, վերելքի կամ վայրէջքի համաձայն։

4) Ստրատեգիական ղեկավարություն։ Հեղափոխության ռեզերվները լինում են՝

ուղղակի՝ ա) իր յերկրի գյուղացիությունը կամ ընդհանրապես անցողիկ խավերը, բ) հարևան յերկրների պրոլետարիատը, գ) գաղութների և կախյալ յերկրների հեղափոխական շարժումը, դ) պրոլետարիատի դիկտատուրայի նվաճումներն ու ձեռքբերումները, վորոնց մի մասից պրոլետարիատը կարող է ժամանակավորապես հրաժարվել, իր կողմը պահելով ուժերի գերակշռությունը, այն հաշվով, վոր կաշառի ուժեղ հակառակորդին և շունչ առնելու հնարավորություն ստանա ու՝

անուղղակի՝ ա) իր յերկրի վոչ-պրոլետարական դասակարգերի միջև յեղած հակասություններն ու կոնֆլիկտները, վորոնք պրոլետարիատը կարող է օգտագործել՝ հակառակորդին թուլացնելու համար, իր ռեզերվներն ուժեղացնելու համար, բ) պրոլետարական պետությանը թշնամի բուրժուական պետությունների միջև յեղած հակասությունները, կոնֆլիկտները և պատերազմները (օրին.՝ իմպերիալիստական պատերազմը), վորոնք պրոլետարիատը կարող է օգտագործել իր հարձակման կամ մանևրելու ժամանակ՝ ստիպողական նահանջի դեպքում։

Առաջին տեսակի ռեզերվների մասին չարժի յերկարորեն խոսել, վորովհետև նրանց նշանակությունը հասկանալի յե բոլորին և ամեն մեկին։ Ինչ վերաբերում ե յերկրորդ տեսակի ռեզերվներին, վորոնց նշանակությունը միշտ չե, վոր պարզ ե, ապա հարկավոր ե ասել, վոր նրանք յերբեմն առաջնակարգ նշանակություն են ունենում հեղափոխության ընթացքի համար։ Հազիվ թե կարելի յե ժխտել հսկայական նշանակությունն, օրինակ, այն կոնֆլիկտի մանր-բուրժուական դեմոկրատիայի (եսերներ) և լիբերալ-միապետական բուրժուազիայի (կադետներ) միջև՝ առաջին հեղափոխության ժամանակ և նրանից հետո, վորը, անկասկած, իր դերը խաղաց գյուղացիությունը բուրժուազիայի ազդեցությունից ազատելու գործում։ Ե՛լ ավելի պակաս հիմքեր կան ժխտելու վիթխարի նշանակությունն իմպերիալիստների հիմնական խմբակների միջև Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանում ծագած մահացու պատերազմի փաստի, յերբ իրենց միջև յեղած պատերազմով զբաղված իմպերիալիստները հնարավորություն չունեյին կենտրոնացնելու իրենց ուժերը յերիտասարդ խորհրդային իշխանության դեմ, իսկ պրոլետարիատը հենց այդ պատճառով հնարավորություն ստացավ ընդհուպ ձեռնարկելու իր ուժերի կազմակերպմանը, իր իշխանության ամրապնդմանը և նախապատրաստելու Կոլչակի ու Դենիկինի ջախջախումը։ Պետք ե յենթադրել, վոր հիմա, յերբ հակասություններն իմպերիալիստական խմբակների միջև ավելի ու ավելի յեն խորանում և յերբ նոր պատերազմը նրանց միջև անխուսափելի յե դառնում, այդ տեսակի ռեզերվները պրոլետարիատի համար կունենան ավելի ու ավելի լուրջ նշանակություն։

Ստրատեգիական ղեկավարության խնդիրը կայանում ե նրանում, վոր ճիշտ օգտագործի բոլոր այդ ռեզերվները՝ հասնելու համար հեղափոխության հիմնական նպատակին՝ նրա զարգացման տվյալ ետապում։

Վո՞րն ե ռեզերվների ճիշտ օգտագործումը։

Իրագործումը միքանի անհրաժեշտ պայմանների, վորոնցից գլխավոր պայմաններ հարկավոր ե համարել հետևյալները.

Առաջին։ Վճռական մոմենտին հեղափոխության գլխավոր ուժերի կենտրոնացումը հակառակորդի համար ամենից ավելի խոցելի կետում, յերբ հեղափոխությունն արդեն հասունացել ե, յերբ հարձակումը ծավալվում ե ամբողջ թափով, յերբ ապստամբությունը դուռն ե թակում և յերբ ռեզերվների մոտեցնելն ավանգարդին — հաջողության վճռական պայմանն ե։ Ռեզերվների այդ տեսակի օգտագործումը ցուցադրող օրինակ կարելի յե համարել կուսակցության ստրատեգիան 1917 թ. ապրիլ—հոկտեմբերի ժամանակաշրջանում։ Կասկած չկա, վոր հակառակորդի ամենախոցելի կետն այդ ժամանակամիջոցում պատերազմն եր։ Կասկած չկա, վոր հատկապես այս, վորպես հիմնական, հարցով կուսակցությունը պրոլետարական ավանգարդի շուրջը հավաքեց բնակ-

չության ամենալայն մասսաներին։ Կուսակցության ստրատեգիան այդ ժամանակաշրջանում հանգում եր այն բանին, վորպեսզի, մանիֆեստացիաների և ցույցերի միջոցով ավանգարդին փողոցային յելույթների սովորեցնելով, դրա հետ մեկտեղ ռեզերվները մոտ բերի ավանգարդին՝ խորհուրդների միջոցով — թիկունքում և զինվորների կոմիտեների միջոցով — ֆրոնտում։ Հեղափոխության վերջավորությունը ցույց տվեց, վոր ռեզերվները ճիշտ են օգտագործվել։

Ահա թե ինչ ե ասում Լենինը հեղափոխության ուժերի ստրատեգիական օգտագործման այդ պայմանի մասին, ֆրազափոխելով Մարքսի և Ենգելսի հայտնի դրույթներն ապստամբության մասին.

«Յերբեք չխաղալ ապստամբության հետ, այլ այն սկսելիս հաստատապես իմանալ, վոր հարկավոր ե գնալ մինչև վերջը։ Անհրաժեշտ ե հավաքել ուժերի մեծ գերակշռություն վճռական մոմենտին, վորովհետև այլապես ավելի լավ պատրաստություն և կազմակերպություն ունեցող թշնամին կվոչնչացնի ապստամբներին։ Յերբ ապստամբությունն սկսված ե, հարկավոր ե գործել մեծագույն վճռականությամբ ու անպատճառ, անպայման հարձակման անցնել։ «Պաշտպանվելը զինված ապստամբության մահն ե»։ Հարկավոր ե ջանալ թշնամուն անակնկալի բերել, վորսալ մոմենտը, քանի նրա զորքերը ցրված են։ Հարկավոր ե ջանալ ամեն օր (կարելի յե ասել ամեն ժամ, յեթե խոսքը վերաբերում ե մի քաղաքի), թեկուզ փոքրիկ հաջողություններ ձեռք բերելու, ամեն գնով պահպանելով «բարոյական գերակշռությունը»» (տես՝ հ. XXI, եջ 319—320, ռուս. հրատ.)։

Յերկրորդ։ Վճռական հարվածի մոմենտի, ապստամբության սկսման մոմենտի ընտրությունը, վորը պետք ե կատարվի այն հաշվով, վոր կրիզիսը հասել ե բարձրագույն կետին, վոր ավանգարդի մինչև վերջ մարտնչելու պատրաստակամությունը, ռեզերվի կողմից ավանգարդին աջակցելու պատրաստակամությունը և հակառակորդի շարքերում առավելագույն շփոթվածությունը — արդեն առկա յեն։

«Վճռական ճակատամարտը, — ասում ե Լենինը, — կարելի յե լիովին հասունացած համարել», յեթե «մեզ թշնամի բոլոր դասակարգային ուժերը բավականաչափ խճճվել են, բավականաչափ կռվել են իրար հետ, բավականաչափ ուժասպառ են արել իրենց», յեթե «բոլոր տատանվող, յերերուն, անկայուն, միջանկյալ տարրերը, այսինքն մանր-բուրժուազիան, մանր-բուրժուական դեմոկրատիան, ի տարբերություն բուրժուազիայից, բավականաչափ մերկացրել են իրենց ժողովրդի առաջ, բավականաչափ խայտառակվել են իրենց պրակտիկ սնանկությամբ», յեթե «պրոլետարիատի մեջ ծայր ե առել և սկսել ե հզոր թափով բարձրանալ մասսայական տրամադրությունը հօգուտ ամենավճռական, անվերապահ-համարձակ հեղափոխական գործողությունների աջակցության՝ ընդդեմ բուրժուազիայի։ Ահա այդ ժամանակ հեղափոխությունը հասունացել ե, ահա այդ ժամանակ մեր հաղթանակը, յեթե մենք ճիշտ ենք հաշվի առել բոլոր վերը հիշված... պայմանները և ճիշտ ենք ընտրել մոմենտը, — մեր հաղթանակն ապահովված ե» (տես՝ հ. XXV, եջ 320—321, ռուս. հրատ.)։

Այդպիսի ստրատեգիայի ակնառու օրինակ կարելի է համարել
Հոկտեմբերյան ապստամբության անցկացումը։
Այս պայմանի խախտումը տանում է դեպի վտանգավոր սխալ,
որ կոչվում է «տեմպի կորուստ», երբ կուսակցությունը հետ է
մնում շարժման ընթացքից կամ շատ առաջ է վազում՝ տապալման
վտանգ ստեղծելով։ Այդպիսի «տեմպի կորստյան» օրինակ, այն բանի
օրինակ, թե ինչպես չպետք է ընտրել ապստամբության մոմենտը,
պետք է համարել ընկերների մի մասի փորձը՝ ապստամբությունն
սկսել Դեմոկրատական խորհրդակցության ձերբակալությամբ 1917 թ.
օգոստոսին, երբ խորհուրդներում դեռ տատանում էր զգացվում,
ֆրոնտը դեռ գտնվում էր ջերկընտրանքի առաջ, ռեզերվները դեռ մոտ
չէյին բերվել ավանգարդին։
Երրորդ։ Արդեն ընդունված կուրսի անշեղ անցկացնելը՝ դեպի
նպատակը տանող ճանապարհի բոլոր և ամեն տեսակ դժվարություն-
ների ու բարդությունների վրայով, որ անհրաժեշտ է, որպեսզի
ավանգարդն աչքաթող չանի պայքարի հիմնական նպատակը, իսկ մաս-
սաները չշեղեն իրենց ճանապարհը՝ դեպի այդ նպատակն ընթանա-
լիս և ավանգարդի շուրջը համախմբվել աշխատելիս։ Այս պայմանի
խախտումը տանում է դեպի հսկայական սխալ, որը շատ լավ հայտնի
յե ծովայիններին «կուրսի կորուստ» անունով։ Այդպիսի «կուրսի կորըս-
տյան» օրինակ պետք է համարել մեր կուսակցության սխալ վարքա-
գիծը Դեմոկրատական խորհրդակցությունից անմիջապես հետո, երբ
կուսակցությունը Նախապարլամենտին մասնակցելու վորոշում ընդու-
նեց։ Այդ մոմենտին կուսակցությունը կարծես թե մոռացել էր, որ
Նախապարլամենտը բուրժուազիայի կողմից ձեռնարկած մի փորձ է՝
յերկիրը խորհուրդների ճանապարհից փոխադրելու բուրժուական պար-
լամենտարիզմի ճանապարհը, որ կուսակցության մասնակցությունը
նման հիմնարկին կարող է խառնել բոլոր խաղաթղթերը և ճանապար-
հից շեղել «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգով հեղա-
փոխական պայքար մղող բանվորներին ու գյուղացիներին։ Այդ սխալն
ուղղվեց նրանով, որ բոլշևիկները հեռացան Նախապարլամենտից։
Չորրորդ։ Ճիշտ նահանջի նպատակով ռեզերվներով մանևր-
ներ անելը, երբ թշնամին ուժեղ է, երբ նահանջն անխուսափելի յե,
երբ հակառակորդի կողմից վկիդ փաթաթվող մարտ ընդունելը կան-
խահայտորեն անձեռնտու յե, երբ ուժերի տվյալ փոխհարաբերության
պայմաններում նահանջը դառնում է ավանգարդը հարվածի տակից
հանելու և ռեզերվները նրա կողմը պահելու միակ միջոց։

«Հեղափոխական կուսակցությունները,— ասում է Լենինը,— պետք է շա-
րունակեն սովորել։ Նրանք սովորել են հարձակվել։ Հիմա ստիպված ենք հաս-
կանալ, որ այդ գիտությունն անհրաժեշտ է լրացնել այն գիտությամբ, թե
ինչ պետք է անել վորքան կարելի յե ճիշտ նահանջելու համար։ Ստիպված ենք

հասկանալ,— և հեղափոխական դասակարգը սեփական դառն փորձով սովորում
է հասկանալ,— որ չի կարելի հաղթել, առանց ճիշտ հարձակվելը և ճիշտ նա-
հանջելը սովորելու» (տես՝ հ. XXV, էջ 177, ռուս. հրատ.)։

Այսպիսի ստրատեգիայի նպատակն է՝ ժամանակ շահել, քայքա-
յել թշնամուն և ուժեր կուտակել՝ հետո հարձակման անցնելու համար։
Այսպիսի ստրատեգիայի ակնառու օրինակ կարելի յե համարել
Բրեստի հաշտության կնքումը, վորը կուսակցությանը հնարավորու-
թյուն տվեց ժամանակ շահել, օգտագործել ընդհարումներն իմպերիա-
լիզմի բանակում, քայքայել հակառակորդի ուժերը, իր կողմը պահել
գյուղացիությունը և ուժեր կուտակել՝ Կոլչակի ու Դենիկինի դեմ հար-
ձակում նախապատրաստելու համար։
Սեպարատ հաշտություն կնքելով,— ասում էր այն ժամանակ Լենինը,—
«Սեպարատ հաշտություն կնքելով, մենք մեծագույն չափով ազատվում ենք թե
մենք տվյալ մոմենտի համար հնարավոր, մեծագույն չափով ազատվում ենք թե
մեկ և թե մյուս կռվող իմպերիալիստական խմբակներից, օգտագործում ենք
նրանց կռիվը և պատերազմը,— վորը դժվարացնում է նրանց գործարքը մեր
դեմ,— օգտագործում ենք այն, ստանալով ձեռքերս ազատ ունենալու վորոշ
ժամանակաշրջան՝ սոցիալիստական հեղափոխությունը շարունակելու և ամրաց-
նելու համար» (տես՝ հ. XXII, էջ 198, ռուս. հրատ.)։
«Այժմ նույնիսկ վերջին հիմարը» տեսնում է,— ասում է Լենինը Բրեստի
հաշտությունից յերեք տարի անց,— «որ «Բրեստի հաշտությունը» մի զիջում
էր, վորն ուժեղացրեց մեզ և տրոհեց միջազգային իմպերիալիզմի ուժերը»
(տես՝ հ. XXVII, էջ 7, ռուս. հրատ.)։
Սրանք են այն գլխավոր պայմանները, վորոնք ապահովում են
ստրատեգիական ղեկավարության ճշտությունը։
5) Տակտիկական ղեկավարություն։ Տակտիկական ղեկավարու-
թյունը ստրատեգիական ղեկավարության մի մասն է, վոր յենթարկ-
վում է վերջինի խնդիրներին և պահանջներին։ Տակտիկական ղեկա-
վարության խնդիրն այն է, վոր տիրապետի պրոլետարիատի պայքա-
րի ու կազմակերպության բոլոր ձևերին և ապահովի նրանց ճիշտ օգ-
տագործումը՝ հասնելու համար ուժերի տվյալ փոխհարաբերության
պայմաններում անհրաժեշտ՝ ստրատեգիական հաջողության նախա-
պատրաստման արդյունքների առավելագույնին։
Ի՞նչ է պրոլետարիատի պայքարի և կազմակերպության ձևերի
ճիշտ օգտագործումը։
Իրագործումը միքանի անհրաժեշտ պայմանների, վորոնցից գըլ-
խավոր պայմաններ հարկավոր է համարել հետևյալները.
Առաջին։ Առաջին պլան քաշել պայքարի և կազմակերպության
հենց այն ձևերը, վորոնք, ամենից ավելի համապատասխանելով շարժ-
ման տվյալ մակընթացության կամ տեղատվության պայմաններին,
ընդունակ են հեշտացնելու և ապահովելու մասսաներին հեղափոխական
դիրքերին մոտ բերելը, միլիոնավոր մասսաներին հեղափոխության
ֆրոնտին մոտ բերելը, նրանց տեղավորելը հեղափոխության ֆրոնտում։

Խոսքն այն մասին չե, վոր ավանգարդը գիտակցի հին կարգերը պահելու անհնարինությունը և նրանց տապալելու անխուսափելիությունը: Խոսքն այն մասին ե, վոր մասսաները, միլիոնավոր մասսաները հասկանան այս անխուսափելիությունը և ավանգարդին աջակցելու պատրաստակամություն հայտաբերեն: Բայց մասսաներն այդ կարող են հասկանալ միայն սեփական փորձի միջոցով: Միլիոնավոր մասսաներին հնարավորություն տալ սեփական փորձով հասկանալու հին իշխանության տապալման անխուսափելիությունը, առաջադրել պայքարի այնպիսի յեղանակներ և կազմակերպության այնպիսի ձևեր, վորոնք մասսաների համար կհեշտացնեյին հեղափոխական լոզունգների ճշտությունը փորձով հասկանալը—այս ե խնդիրը:

Ավանգարդը կկտրվեր բանվոր դասակարգից, իսկ բանվոր դասակարգն էլ կկորցներ կապը մասսաների հետ, յեթե կուսակցությունն իր ժամանակին չվճռեր մասնակցել Դումային, յեթե նա չվճռեր կենտրոնացնել ուժերը դումայական աշխատանքի վրա և ծավալել պայքարն այդ աշխատանքի հիման վրա, նպատակ ունենալով հեշտացնել մասսաների համար սեփական փորձով հասկանալու Դումայի անպետքությունը, կադետական խոստումների կեղծությունը, ցարիզմի հետ համաձայնության գալու անհնարինությունը, գյուղացիության և բանվոր դասակարգի դաշինքի անխուսափելիությունը: Առանց մասսաների փորձի Դումայի ժամանակաշրջանում՝ կադետների մերկացումը և պրոլետարիատի հեգեմոնիան անհնարին կլինեյին:

Ոտզովիզմի տակտիկայի վտանգն այն եր, վոր նա սպառնում եր ավանգարդը կտրել նրա միլիոնավոր ռեզերվներից:

Կուսակցությունը կկտրվեր բանվոր դասակարգից, իսկ բանվոր դասակարգը կզրկվեր ազդեցությունից գյուղացիների և զինվորների լայն մասսաներում, յեթե պրոլետարիատը գնար ձախ կոմունիստների հետքերով, վորոնք ապստամբության եյին կանչում 1917 թ. ապրիլին, յերբ մենշևիկներն ու ես-երները դեռ չեյին մերկացրել իրենց վորպես պատերազմի և իմպերիալիզմի կողմնակիցների, յերբ մասսաները դեռ սեփական փորձով չեյին հասկացել հաշտության, հողի, ազատության վերաբերյալ մենշևիկյան-ես-երական ճառերի կեղծությունը: Առանց մասսաների փորձի կերենշչինայի ժամանակաշրջանում՝ մենշևիկներն ու ես-երները չեյին մեկուսացվի, և պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ: Այդ պատճառով մանր-բուրժուական կուսակցությունների սխալների «համբերատար բացատրության» և խորհուրդների ներսում բացահայտ պայքարի տակտիկան՝ միակ ճիշտ տակտիկան եր:

Ձախ կոմունիստների տակտիկայի սխալի վտանգավորությունն այն եր, վոր այն սպառնում եր կուսակցությունը պրոլետարական հե-

ղափոխության առաջնորդից վերածել պարապ և անհող դավադիրների խմբակի:

«Միայն ավանգարդով,—ասում է Լենինը,—հաղթել չի լինի: Վճռական մարտ նետել միմիայն ավանգարդը, յերբ դեռ ամբողջ դասակարգը, դեռ լայն մասսաները չեն գրավել ավանգարդին ուղղակի աջակցելու, կամ, գոնե, նրա նկատմամբ բարյացակամ չեզոքություն պահպանելու դիրք... վոչ միայն հիմարություն կլիներ, այլև հանցագործություն: Իսկ վորպեսզի իսկապես ամբողջ դասակարգը, վորպեսզի աշխատավորների՝ և կապիտալի կողմից ճնշվածների իսկապես լայն մասսաները հասնեն այդպիսի դիրքի, դրա համար միայն պրոպագանդը, միայն ագիտացիան քիչ ե: Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձը: Այս ե բոլոր մեծ հեղափոխությունների օրենքը, վորն այժմ զարմանալի ուժգնությամբ ու ռելյեֆությամբ հաստատել և վոչ միայն Ռուսաստանը, այլև Գերմանիան: Վոչ միայն Ռուսաստանի անկուլտուրական, հաճախ անգրագետ մասսաների համար, այլև Գերմանիայի բաձրակուլտուր, գլխովին գրագետ մասսաների համար կարիք յեղավ սեփական կաշու վրա փորձել II Ինտերնացիոնալի ասպետների կառավարության ամբողջ անզորությունը, ամբողջ անհաստատակամությունը, ամբողջ անօգնականությունը, ամբողջ լակեյությունը բուրժուազիայի հանդեպ, ծայրահեղ ռեակցիոներների (Կորնիլով՝ Ռուսաստանում, Կապպը և Ընկ.՝ Գերմանիայում) դիկտատուրայի ամբողջ անխուսափելիությունը, վորպես միակ ալտերնատիվ պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ, վորպեսզի վճռաբար շրջադարձ կատարեն դեպի կոմունիզմը» (տես՝ հ. **XXV**, եջ 229—230, ռուս. հրատ.):

Ցերկրորդ: Գտնել յուրաքանչյուր տվյալ մոմենտում պրոցեսների շղթայի այն առանձին օղակը, վորից բռնելով կարելի կլինի իր ձեռքին պահել ամբողջ շղթան և նախապատրաստել պայմաններ՝ ստրատեգիական հաջողության հասնելու համար:

Խոսքն այն մասին ե, վոր կուսակցության առաջ կանգնած խընդիրների շարքից զատենք հենց այն հերթական խնդիրը, վորի լուծումը կենտրոնական կետ ե և վորի անցկացումն ապահովում ե մնացած հերթական խնդիրների հաջող լուծումը:

Այս դրության նշանակությունը կարելի կլիներ ցուցադրել յերկու օրինակի միջոցով, վորոնցից մեկը կարելի կլիներ վերցնել հեռավոր անցյալից (կուսակցության կազմավորման ժամանակաշրջանը), իսկ մյուսը՝ մեզ ամենից ավելի մոտ ներկայից (նեպի ժամանակաշրջանը):

Կուսակցության կազմավորման ժամանակաշրջանում, յերբ խըմբակցությունների և կազմակերպությունների անթիվ բազմությունը դեռևս իրար հետ կապված չեյին, յերբ տնայնագործականությունը և խմբակցականությունը մաշում եյին կուսակցությունը վերից վար, յերբ գաղափարական տարընթացությունը կազմում եր կուսակցության ներքին կյանքի բնորոշ գիծը,—այդ ժամանակաշրջանում հիմնական օղակ և հիմնական խնդիր օղակների շղթայում ու այն ժամանակ կուսակցության առաջ կանգնած խնդիրների շղթայում հանդիսացավ համա-

ռուսական անլեգալ լրագրի ստեղծումը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր միայն համառուսական անլեգալ լրագրի միջոցով այն ժամանակվա պայմաններում կարելի յեր ստեղծել կուսակցության ներդաշնակ միջուկ, վորն ընդունակ լիներ ի մի համախմբել անհամար խմբակցություններն ու կազմակերպությունները, նախապատրաստել գաղափարական և տակտիկական միասնության պայմաններ և, այդպիսով, դնել իսկական կուսակցության կազմավորման հիմքը:

Պատերազմից տնտեսական շինարարության անցնելու ժամանակաշրջանում, յերբ արդյունաբերությունը քաշ եր տալիս իր գոյությունը քայքայման ճիրաններում, իսկ գյուղատնտեսությունը տառապում եր քաղաքային արտադրանքների պակասությունից, յերբ պետական ինդուստրիայի շաղկապը գյուղացիական տնտեսության հետ դարձավ հաջող սոցիալիստական շինարարության հիմնական պայման,— այդ ժամանակաշրջանում հիմնական ողակ պրոցեսների շղթայի մեջ, հիմնական խնդիր՝ մյուս խնդիրների շարքերում հանդիսացավ առևտրի զարգացումը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր նեպի պայմաններում ինդուստրիայի շաղկապը գյուղացիական տնտեսության հետ հնարավոր չե այլ կերպ, բայց յեթե առևտրի միջոցով, այն պատճառով, վոր արտադրությունն առանց վաճառահանման նեպի պայմաններում մահ է ինդուստրիայի համար, այն պատճառով, վոր ինդուստրիան կարելի յե ընդարձակել միայն առևտրի զարգացման միջոցով վաճառահանումն ընդարձակելով, այն պատճառով, վոր առևտրի ասպարեզում ամրանալով միայն, առևտրին տիրանալով միայն, այդ ողակին տիրանալով միայն կարելի յե հուսալ շաղկապել ինդուստրիան գյուղացիական շուկայի հետ և հաջողությամբ լուծել մյուս հերթական խնդիրները՝ նպատակ ունենալով ստեղծել պայմաններ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքերի կառուցման համար:

«Բավական չե լինել հեղափոխական և ընդհանրապես սոցիալիզմի կամ կոմունիզմի կողմնակից...— ասում է Լենինը:— Հարկավոր է կարողանալ յուրաքանչյուր տվյալ մոմենտում գտնել շղթայի այն հատուկ ողակը, վորից պետք է բոլոր ուժերով բռնել՝ ձեռքին պահելու ամբողջ շղթան և ամրապես նախապատրաստելու անցումը դեպի հետևյալ ողակը»... «Տվյալ մոմենտին... այդպիսի ողակ հանդիսանում է աշխուժացումը ներքին առևտրի, նրա ճիշտ պետական կարգավորման (ուղղություն տալու) պայմանով: Առևտուրը—ահա այն «ողակը» անցքերի պատմական շղթայի մեջ, մեր սոցիալիստական շինարարության անցման ձևերի մեջ, վորից հարկավոր է բռնել բոլոր ուժերով»... (տես՝ հ. XXVII, եջ 82, ռուս. հրատ.):

Սրանք են այն գլխավոր պայմանները, վորոնք ապահովում են տակտիկական ղեկավարության ճշտությունը:

6) Ռեֆորմիզմը յեվ ռեվոլյուցիոնիզմը: Հեղափոխական տակտիկան ինչով է տարբերվում ռեֆորմիստական տակտիկայից:

Վոմանք կարծում են, թե լենինիզմը դեմ է ռեֆորմներին, դեմ է ընդհանրապես կոմպրոմիսների և համաձայնությունների: Այդ միանգամայն սխալ է: Բոլշևիկները գիտեն վոչ պակաս, քան ամեն մեկ

ուրիշը, վոր վորոշ իմաստով «ամենայն տուրք բարի յե», վոր վորոշ պայմաններում ռեֆորմներն ընդհանրապես, կոմպրոմիսներն ու համաձայնությունները՝ մասնավորապես—անհրաժեշտ են և ոգտակար:

«Պատերազմ մղել—ասում է Լենինը, — միջազգային բուրժուազիայի տապալելու համար,—մի պատերազմ, վոր հարյուր անգամ ավելի դժվար է, յերկարատև, բարդ, քան սովորական պատերազմներից ամենահամառը պետությունների միջև, — և ընդ սմին առաջուց հրաժարվել ճկուն քաղաքականությունից, թշնամիների միջև յեղած շահերի հակասականության (թեկուզ և ժամանակավոր) ոգտագործումից և կոմպրոմիսներից, համաձայնություններից (թեկուզ և ժամանակավոր, անհաստատ, յերերուն, պայմանական) հնարավոր դաշնակիցների հետ, — միթե սա անսահմանորեն ծիծաղելի բան չե: Միթե սա նման չե այն բանին, ինչպես, որինակ՝ դեռևս չհետազոտված և մինչև այժմ անմատչելի սար բարձրանալիս՝ մենք վաղորոք հրաժարվեյինք գնալ յերբեմն զիգզագ, յերբեմն հետ դառնալ, հրաժարվել մեկանգամ ընտրած ուղղությունից և փորձել զանազան ուղղություններ» (տես՝ հ. XXV, եջ 211, ռուս. հրատ.):

Ակներև է, վոր բանը ռեֆորմները կամ կոմպրոմիսներն ու համաձայնությունները չեն, այլ այն, թե մարդիկ ինչպես են կիրառում ռեֆորմներն ու համաձայնությունները:

Ռեֆորմիստի համար ռեֆորմը ամեն ինչ է, իսկ հեղափոխական աշխատանքը՝ հենց այնպես, խոսակցության համար է, աչք կապելու համար: Այդ պատճառով ռեֆորմը՝ ռեֆորմիստական տակտիկա կիրառելու դեպքում, բուրժուական իշխանության գոյության պայմաններում անխուսափելիորեն դառնում է այդ իշխանության ամրացման գործիք, հեղափոխության կազմալուծման գործիք:

Իսկ հեղափոխականի համար, ընդհակառակը, գլխավորը հեղափոխական աշխատանքն է, այլ վոչ թե ռեֆորմը. նրա համար ռեֆորմը հեղափոխության կողմնակի արդյունքն է: Այդ պատճառով ռեֆորմը՝ հեղափոխական տակտիկա կիրառելիս, բուրժուական իշխանության գոյության պայմաններում բնականաբար դառնում է այդ իշխանության կազմալուծման գործիք, հեղափոխության ամրապնդման գործիք, հեղափոխության շարժման հետագա զարգացման հենակետ:

Հեղափոխականն ընդունում է ռեֆորմը նրա համար, վորպեսզի ոգտագործի այն վորպես առիթ՝ լեգալ աշխատանքը միահյուսելու անլեգալ աշխատանքին, նրա համար, վորպեսզի ոգտագործի այն վորպես քող՝ ուժեղացնելու անլեգալ աշխատանքը՝ բուրժուազիային տապալելու նպատակով մասսաներին հեղափոխական պատրաստություն տալու համար:

Այս է իմպերիալիզմի պայմաններում ռեֆորմների և համաձայնությունների հեղափոխական ոգտագործման եյությունը:

Իսկ ռեֆորմիստը, ընդհակառակը, ընդունում է ռեֆորմները նրա համար, վորպեսզի հրաժարվի ամեն տեսակ անլեգալ աշխատանքից,

ձախողի մասսաներին հեղափոխության համար պատրաստելու գործը և հանգստություն վայելի «շնորհված» ռեֆորմի հովանու ներքո:

Այս է ռեֆորմիստական տակտիկայի էությունը:

Այս է ռեֆորմների և համաձայնությունների հարցի դրությունն իմպերիալիզմի պայմաններում:

Սակայն գործը փոքր ինչ փոխվում է իմպերիալիզմի տապալումից հետո, պրոլետարիատի դիկտատուրայի օրով: Վորոշ պայմաններում, վորոշ իրադրության ավայության դեպքում պրոլետարական իշխանությունը կարող է ստիպված լինել ժամանակավորապես շեղվել գոյություն ունեցող կարգերի հեղափոխական վերակառուցման ճանապարհից՝ այդ կարգերի աստիճանական վերափոխության ճանապարհը, «ռեֆորմիստական ճանապարհը», ինչպես ասում է Լենինը «Ոսկու նշանակության մասին» հայտնի հոդվածում, շուրջանցիկ շարժումների ճանապարհը, ռեֆորմների և վոչ-պրոլետարական դասակարգերին զիջումներ անելու ճանապարհը, նպատակ ունենալով կազմալուծել այդ դասակարգերը, հեղափոխությանը հանգստանալու միջոց տալ, ուժեր հավաքել և նախապատրաստել պայմաններ՝ նոր հարձակման համար: Չի կարելի ժխտել, վոր այս ճանապարհը վորոշ իմաստով ռեֆորմիստական ճանապարհ է: Հարկավոր է միայն հիշել, վոր այստեղ կա մի արմատական առանձնահատկություն, վորը կայանում է նրանում, վոր ռեֆորմը տվյալ դեպքում բղխում է պրոլետարական իշխանությունից, վոր այն ամրացնում է պրոլետարական իշխանությունը, վոր նա այդ իշխանությանն անհրաժեշտ հանգստի միջոց է տալիս, վոր նա կոչված է կազմալուծելու վոչ թե հեղափոխությունը, այլ վոչ-պրոլետարական դասակարգերին:

Այսպիսով ռեֆորմն այսպիսի պայմաններում վերածվում է իր հակադրության:

Այսպիսի քաղաքականության կիրառումը պրոլետարական իշխանության կողմից հնարավոր է դառնում այն պատճառով, և միայն այն պատճառով, վոր հեղափոխության թափը նախորդ ժամանակաշրջանում բավականաչափ մեծ էր, և այդպիսով բացել է բավականաչափ լայն հրապարակ՝ վորպեսզի նահանջելու տեղ լինի, հարձակման տակտիկան փոխարինելով ժամանակավոր նահանջի տակտիկայով, շուրջանցիկ շարժումների տակտիկայով:

Այսպիսով՝ յեթե առաջներում, բուրժուական իշխանության օրով ռեֆորմները հեղափոխության կողմնակի արդյունք էին, ապա այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի օրով, ռեֆորմների աղբյուր հանդիսանում են պրոլետարիատի հեղափոխական նվաճումները, պրոլետարիատի ձեռքերում կուտակված ռեզերվը, վոր բաղկացած է այդ նվաճումներից:

«Թե ինչպես են հարաբերում ռեֆորմները հեղափոխությանը,—ասում է Լենինը,—ճշգրիտ և ուղիղ վորոշել է միայն մարքսիզմը, ընդ վորում Մարքսը

կարող էր տեսնել այդ հարաբերությունը միայն մեկ կողմից, այն է՝ պրոլետարիատի առաջին, փոքրիշատե հաստատուն, փոքրիշատե յերկարատև հաղթանակին թեկուզ մեկ յերկրում նախորդող պայմաններում: Այդպիսի պայմաններում ճիշտ հարաբերության հիմքն այն էր, վոր ռեֆորմները պրոլետարիատի հեղափոխական դասակարգային կռվի կողմնակի արդյունքն են... Պրոլետարիատի թեկուզ մեկ յերկրում տարած հաղթանակից հետո ռեֆորմների հարաբերության մեջ դեպի հեղափոխությունը յերևան է գալիս ինչ-վոր նոր բան: Սկզբունքորեն խնդիրը նույնն է մնում, բայց ըստ ձևի յերևան է գալիս փոփոխություն, վորը Մարքսն անձամբ նախատեսել չէր կարող, բայց վորը գիտակցել կարելի յե միայն մարքսիզմի փիլիսոփայության և քաղաքականության հողի վրա: Հաղթանակից հետո նրանք (այսինքն ռեֆորմները: Ի. Ստ.) (միջազգային մասշտաբով լինելով նույն «կողմնակի արդյունքը») այն յերկրի համար, վորտեղ հաղթանակը տարված է, հանդիսանում են, բացի դրանից, անհրաժեշտ և օրինական հանգստի միջոց այն դեպքերում, յերբ ուժերը, նրանց տավելագույն լարումից հետո, կանխահայտորեն չեն բավականացնում այս-ինչ կամ այն-ինչ անցումը հեղափոխականորեն իրագործելու համար: Հաղթանակը տալիս է «ուժերի» այնպիսի «պաշար», վոր այլես դիմանալու տվյալներ կան նույնիսկ հարկադրված նահանջի դեպքում,—դիմանալու թե նյութական, թե բարոյական իմաստով» (տես՝ հ. XVII, եջ 84—85, ռուս. հրատ.):

VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախահեղափոխական ժամանակաշրջանում, քիչ թե շատ խաղաղ զարգացման ժամանակաշրջանում, յերբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները բանվորական շարժման մեջ տիրապետող ուժ էին, իսկ պայքարի պարլամենտական ձևերը համարվում էին հիմնական ձևեր,—այդ պայմաններում կուսակցությունը չուներ և չէր կարող ունենալ այն լուրջ և վճռական նշանակությունը, վոր նա ձեռք բերեց հետո՝ բացահայտ հեղափոխական ճակատամարտերի պայմաններում: II Ինտերնացիոնալը հարձակումներից պաշտպանելով, Կաուցկին ասում է, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները խաղաղության զենք են և վոչ թե պատերազմի, վոր հենց այդ պատճառով նրանք անզոր գտնվեցին պատերազմի ժամանակ, պրոլետարիատի հեղափոխական յելույթների ժամանակաշրջանում վորևէ լուրջ բան ձեռնարկելու: Այս միանգամայն ճիշտ է: Բայց այդ ինչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները պիտանի չեն պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար, վոր նրանք վոչ թե պրոլետարիատի մարտական կուսակցություններ են, վորոնք բանվորներին առաջնորդում են դեպի իշխանություն, այլ ընտրական ապարատ են, հարմարեցրած պարլամենտական ընտրություններին և պարլամենտական պայքարին: Դրանով էլ հենց բացատրվում է այն փաստը, վոր II Ինտերնացիոնալի օպորտունիստների տիրապետության ժամանակաշրջանում պրոլետարիատի հիմնական քաղաքական կազմակերպությունը հանդիսանում էր վոչ թե կուսակցությունը, այլ պարլամենտական ֆրակցիան: Հայտնի յե, վոր իրականում կուսակցությունն այդ ժա-

մանակաշրջանում պարլամենտական ֆրակցիայի կցորդն ու սպասարկող տարրն էր։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ այսպիսի պայմաններում և այսպիսի կուսակցության ղեկավարությամբ խոսք անգամ չէր կարող լինել պրոլետարիատին հեղափոխության համար նախապատրաստելու մասին։

Սակայն գործն արմատապես փոխվեց, երբ վրա հասավ նոր ժամանակաշրջանը։ Նոր ժամանակաշրջանը դասակարգերի բացահայտ ընդհարումների ժամանակաշրջան է, պրոլետարիատի հեղափոխական ելույթների ժամանակաշրջան, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջան, ուժերն իմպերիալիզմի տապալման համար, իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու համար ուղղակի պատրաստելու ժամանակաշրջան։ Այս ժամանակաշրջանը կուսակցության առաջ դնում է նոր խնդիրներ՝ ամբողջ կուսակցական աշխատանքը նոր, հեղափոխական ձևով վերակառուցելու վերաբերյալ, բանվորներին իշխանության համար պայքար մղելու ոգով դաստիարակելու վերաբերյալ, ռեզերվներ պատրաստելու և մոտ բերելու վերաբերյալ, հարևան երկրների պրոլետարների հետ դաշնակցելու վերաբերյալ, գաղութների և կախյալ երկրների ազատագրական շարժման հետ ամուր կապեր հաստատելու վերաբերյալ և այլն և այլն։ Մտածել, թե այս նոր խնդիրները կարող են լուծվել հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ուժերով,— կուսակցություններ, որոնք դաստիարակվել են պարլամենտարիզմի խաղաղ պայմաններում,— նշանակում է դատապարտել իրեն անհուսալի վհատության, անխուսափելի պարտության։ Այդպիսի խնդիրներ իր ուսերին ծանրացած ունենալով՝ միայն հին կուսակցությունների ղեկավարությամբ—նշանակում է գտնվել լիակատար զինաթափության վիճակում։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ պրոլետարիատը չէր կարող հաշտվել այդպիսի դրության հետ։

Այստեղից բղխում է անհրաժեշտությունը նոր կուսակցության, մարտական կուսակցության, հեղափոխական կուսակցության, որը պետք է բավականաչափ համարձակ լինի՝ պրոլետարներին առաջնորդելու դեպի կռիվ հանուն իշխանության, բավականաչափ փորձված լինի՝ հեղափոխական իրադրության բարդ պայմաններից գլուխ հանելու և բավականաչափ ճկուն լինի՝ իր նպատակի ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակ ստորջրյա քարերից խուսափելու համար։

Առանց այդպիսի կուսակցության նույնիսկ ավելորդ է մտածել իմպերիալիզմի տապալման մասին, պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու մասին։

Այդ նոր կուսակցությունը—լենինիզմի կուսակցությունն է։

Որո՞նք են այդ նոր կուսակցության առանձնահատկությունները։

1) Կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի առաջավոր ջո-

կաս: Կուսակցությունը, ամենից առաջ, պետք է լինի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը։ Կուսակցությունը պետք է իր մեջ առնի բանվոր դասակարգի բոլոր լավագույն տարրերին, նրանց փորձը, նրանց հեղափոխականությունը, նրանց անվերապահ նվիրվածությունը պրոլետարիատի գործին։ Բայց իսկապես առաջավոր ջոկատ լինելու համար՝ կուսակցությունը պետք է զինված լինի հեղափոխական թեորիայով, շարժման օրենքների գիտակությամբ, հեղափոխական օրենքների գիտակությամբ։ Առանց դրան նա անզոր կլինի ղեկավարելու պրոլետարիատի պայքարը, իր հետևից տանելու պրոլետարիատին։ Կուսակցությունը չի կարող լինել իսկական կուսակցություն, յեթե նա սահմանափակվում է այն բանի արձանագրությամբ, ինչ ապրում ու մտածում է բանվոր դասակարգի մասսան, յեթե նա քարշ է գալիս տարերային շարժման պոչից, յեթե նա չի կարողանում հաղթահարել տարերային շարժման անշարժությունը և քաղաքական անտարբերությունը, յեթե նա չի կարողանում պրոլետարիատի բոպեյական շահերից վեր բարձրանալ, յեթե նա չի կարողանում մասսաներին բարձրացնել մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի մակարդակը։ Կուսակցությունը պետք է կանգնած լինի բանվոր դասակարգի առջևում, նա պետք է ավելի հեռուն տեսնի, քան բանվոր դասակարգը, նա պետք է իր հետևից տանի պրոլետարիատին և ոչ թե քարշ գա տարերայնության պոչից։ II Ինտերնացիոնալի կուսակցությունները, որոնք «պոչականություն» են քարոզում, իրականացնողներն են այն բուրժուական քաղաքականության, որը պրոլետարիատին դատապարտում է բուրժուազիայի ձեռքին գործիքի դեր կատարելու վիճակի։ Միայն այն կուսակցությունը, որը կանգնել է պրոլետարիատի առաջավոր ջոկատի տեսակետի վրա և ընդունակ է մասսաներին բարձրացնելու մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի մակարդակը,—միայն այդպիսի կուսակցությունն ընդունակ է բանվոր դասակարգին հանելու տրեդ-յունիոնիզմի ճանապարհից և դարձնելու նրան ինքնուրույն քաղաքական ուժ։ Կուսակցությունը բանվոր դասակարգի քաղաքական առաջնորդն է։

Վերը յես խոսեցի բանվոր դասակարգի պայքարի դժվարությունների մասին, պայքարի պայմանների բարդության մասին, ստրատեգիայի և տակտիկայի մասին, ռեզերվների և մանեվրելու մասին, հարձակվելու և նահանջելու մասին։ Այդ պայմանները պակաս բարդ չեն, յեթե ավելի բարդ չեն, քան պատերազմի պայմանները։ Ո՞վ կարող է գլուխ հանել այդ պայմաններից, ո՞վ կարող է ճիշտ կողմնորոշում տալ պրոլետարների միլիոնավոր մասսաներին։ Ոչ մի բանակ պատերազմում չի կարող յոլա գնալ առանց փորձված շտաբի, յեթե նա չի ցանկանում իրեն պարտության դատապարտել։ Մի՞թե պարզ չէ, որ պրոլետարիատն առավել ևս չի կարող յոլա գնալ առանց այդպիսի շտաբի,

յեթե չի ցանկանում հանձնվել իր յերկրյալ թշնամիներին, վորպես կերակուր: Բայց ո՞ւր է այդ շտաբը: Այդպիսի շտաբ կարող է լինել պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը միայն: Բանվոր դասակարգն առանց հեղափոխական կուսակցության — դա մի բանակ է առանց շտաբի: Կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբն է:

Բայց կուսակցությունը չի կարող լինել միայն առաջավոր ջոկատ: Դրա հետ մեկտեղ նա պետք է լինի դասակարգի ջոկատը, դասակարգի մասը՝ սերտորեն կապված նրա հետ իր գոյության բոլոր արմատներով: Տարբերությունն առաջավոր ջոկատի և բանվոր դասակարգի մնացած մասսայի միջև, կուսակցականների և անկուսակցականների միջև չի կարող անհետանալ, քանի դեռ չեն անհետացել դասակարգերը, քանի դեռ պրոլետարիատը կհամալրվի ուրիշ դասակարգերից յեկածներով, քանի դեռ բանվոր դասակարգն ամբողջությամբ առած զրկված կլինի առաջավոր ջոկատի մակարդակին բարձրանալու հնարավորությունից: Բայց կուսակցությունը կդադարեր կուսակցություն լինելուց, յեթե այդ տարբերությունը վերածվեր խզման, յեթե նա ներփակվեր ինքն իր մեջ և կտրվեր անկուսակցական մասսաներից: Կուսակցությունը չի կարող ղեկավարել դասակարգին, յեթե նա կապված չէ անկուսակցական մասսաների հետ, յեթե կուսակցության և անկուսակցական մասսաների միջև շաղկապ չկա, յեթե այդ մասսաները չեն ընդունում նրա ղեկավարությունը, յեթե կուսակցությունը մասսաների մեջ բարոյական և քաղաքական վարկ չունի: Նորերս մեր կուսակցության մեջ ընդունվեցին յերկու հարյուր հազար նոր անդամներ բանվորներից: Այստեղ նշանակալից է այն հանգամանքը, վոր այդ մարդիկ վոչ այնքան իրենք մտան կուսակցության մեջ, վորքան ուղարկվեցին այնտեղ ամբողջ մնացած անկուսակցական մասսայի կողմից, վորն ակտիվ մասնակցում էր նոր անդամների ընդունելությանը և առանց վորի հավանության առհասարակ նոր անդամներ չեյին ընդունվում: Այս փաստը խոսում է այն մասին, վոր անկուսակցական բանվորների լայն մասսաները մեր կուսակցությունը համարում են իրենց կուսակցությունը, մոտիկ և հարազատ կուսակցությունը, վորի ընդարձակումով և ամրապնդումով նրանք կենսականորեն շահագրգռված են և վորի ղեկավարությանը նրանք կամովին հանձնում են իրենց բախտը: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց այս աննկատելի բարոյական թելերի, վորոնք կուսակցությունը կապում են անկուսակցական մասսայի հետ, կուսակցությունը չեր կարող դառնալ իր դասակարգի վճռական ուժը: Կուսակցությունը բանվոր դասակարգի անբաժանելի մասն է:

«Մենք,"— ասում է Լենինը,— դասակարգի կուսակցությունն ենք. և այդ պատճառով համարյա ամբողջ դասակարգը (իսկ պատերազմի ժամանակ, քաղաքացիական պատերազմի էպոխայում, նո միանգամայն ամբողջ դասակարգը)

պետք է գործի մեր կուսակցության ղեկավարությամբ, պետք է հարի մեր
կուսակցությանը վորքան կարելի յե կից կերպով, բայց մանիլովշչինա և «պո-
չականություն» կլիներ մտածել, վոր յերբևե համարյա ամբողջ դասակարգը
կամ ամբողջ դասակարգն ի վիճակի կլինի, կապիտալիզմի օրով, բարձրանալ
մինչև իր առաջավոր ջոկատի, իր սոցիալիստական կուսակցության գիտակցա-
կանության և ակտիվության մակարդակը: Դեռևս վոչ մի խելացի սոցիալիստ
չի կասկածել, վոր կապիտալիզմի օրով նույնիսկ արհեստակցական կազմակեր-
պությունը, վորն ավելի պրիմիտիվ է, ավելի մատչելի անզարգացած խավերի
գիտակցությանը) ի վիճակի չի ընդգրկելու համարյա ամբողջ կամ ամբողջ բան-
վոր դասակարգը: Միայն ինքն իրեն խաբել, աչք փակել մեր խնդիրների վիթ-
խարիության հանդեպ—կնշանակեր մոռանալ առաջավոր ջոկատի և նրան ձգտող
բոլոր մասսաների միջև յեղած տարբերությունը, մոռանալ առաջավոր ջոկատի
մշտական պարտականությունը՝ ավելի ու ավելի լայն խավեր բարձրացնելու
դեպի այդ առաջավոր մակարդակը» (տես՝ հ. VI, եջ 205—206, ռուս. հրատ.):
2) Կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի կազմակերպված
ջոկատ: Կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը չէ
միայն: Յեթե նա կամենում է իսկապես ղեկավարել դասակարգի
պայքարը, նա դրա հետ մեկտեղ պետք է լինի իր դասակարգի կազմա-
կերպված ջոկատը: Կուսակցության խնդիրները կապիտալիզմի պայման-
ներում չափազանց մեծ են ու բազմազան: Կուսակցությունը պետք է
ղեկավարի պրոլետարիատի պայքարը ներքին և արտաքին զարգաց-
ման չափազանց դժվարին պայմաններում, նա պետք է առաջնորդի
պրոլետարիատին դեպի հարձակում, յերբ իրադրությունը հարձակում
է պահանջում, նա պետք է դուրս տանի պրոլետարիատին ուժեղ հա-
կառակորդի հարվածի տակից, յերբ իրադրությունը նահանջ է պահան-
ջում, անկազմակերպ անկուսակցական բանվորների միլիոնավոր մաս-
սաների մեջ նա պետք է մտցնի կարգապահության և պլանաչափու-
թյան վոգի՝ պայքարի միջոցին, պետք է մտցնի կազմակերպվածու-
թյան և տոկունության վոգի: Բայց կուսակցությունն այդ խնդիրները
կարող է իրագործել միայն այն դեպքում, յեթե նա ինքը հանդիսա-
նում է վորպես կարգապահության և կազմակերպվածության մարմնա-
ցում, յեթե նա ինքը պրոլետարիատի կազմակերպված ջոկատն է:
Առանց այս պայմանների գոյության խոսք անգամ չի կարող լինել՝
կուսակցության կողմից պրոլետարիատի միլիոնավոր մասսաների
խական ղեկավարության մասին: Կուսակցությունը բանվոր դասա-
կարգի կազմակերպված ջոկատն է:
Այն միտքը, վոր կուսակցությունը կազմակերպված ամբողջու-
թյուն է, ամրապնդված է մեր կուսակցության կանոնադրության
առաջին կետի Լենինի հայտնի ձևակերպման մեջ, վորտեղ կուսակ-
ցությունը դիտվում է վորպես կազմակերպությունների գումար, իսկ
կուսակցության անդամները՝ վորպես կուսակցության կազմակերպու-
թյուններից մեկնումեկի անդամներ: Մենշևիկները, վորոնք առարկում
եյին այս ձևակերպման դեմ դեռևս 1903 թվին, դրա փոխարեն առա-

ջարկում էին կուսակցության մեջ ինքնընդունելության «սիստեմ», կուսակցության անդամի «կոչումը» այս կամ այն կերպ կուսակցությանն օժանդակող, բայց կուսակցական կազմակերպություններից և ոչ մեկի մեջ չմտած և մտնել չցանկացող ամեն մի «պրոֆեսորի» և «գիմնազիստի», ամեն մի «համակրողի» և «գործադուլավորի» վրա տարածելու «սիստեմ»։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ այս որեգինալ «սիստեմը», յեթե այն ամրանար մեր կուսակցության մեջ, անխուսափելիորեն կունենար այն հետևանքը, որ կուսակցությունը կգերլցվեր պրոֆեսորներով ու գիմնազիստներով և նա կայլասերվեր ու կդառնար հեղհեղուկ, չձևակերպված, կազմալուծված մի «կազմավորում», որը կկորչեր «համակրողների» ծովում, կջնջեր սահմանը կուսակցության և դասակարգի միջև ու կտապալեր կուսակցության խնդիրը՝ անկազմակերպ մասսաներին մինչև առաջավոր ջոկատի մակարդակը բարձրացնելու մասին։ Ինչ ասել կուզի, որ այդպիսի օպորտունիստական «սիստեմի» գոյության դեպքում մեր կուսակցությունն անկարող կլիներ կատարել բանվոր դասակարգի կազմակերպող միջուկի դերը մեր հեղափոխության ընթացքի մեջ։

«Մարտովի տեսակետով,— ասում է Լենինը,— կուսակցության սահմանը մնում է բոլորովին անորոշ, որովհետև «ամեն մի գործադուլավոր» կարող է «կուսակցության անդամ հայտարարել իրեն»։ Ի՞նչ օգուտ այդ հեղհեղուկությունից։ «Անվան» լայն տարածում։ Նրա վնասն այն է, որ տարածում է դասակարգի և կուսակցության շփոթման կազմալուծող գաղափարը» (տես՝ հ. VI, եջ 211, ռուս. հրատ.)։

Բայց կուսակցությունը կուսակցական կազմակերպությունների գումար չէ միայն։ Կուսակցությունը, դրա հետ մեկտեղ, այդ կազմակերպությունների միասնական սիստեմն է, դրանց ֆորմալ միավորումն է մի միասնական ամբողջի մեջ, ղեկավարության բարձր և ստորին օրգաններով, փոքրամասնության յենթակայությամբ՝ մեծամասնությանը, կուսակցության բոլոր անդամների համար պարտադիր պրակտիկ վճիռներով։ Առանց այս պայմանների կուսակցությունն ի վիճակի չէ լինելու միասնական կազմակերպված մի ամբողջություն՝ ընդունակ կենսագործելու բանվոր դասակարգի պայքարի պլանաչափ և կազմակերպված ղեկավարությունը։

«Առաջ,— ասում է Լենինը,— մեր կուսակցությունը ձևականորեն կազմակերպված ամբողջություն չէր, այլ միայն մասնակի խմբակների գումար էր, և այդ պատճառով այդ խմբակների միջև այլ հարաբերություններ, բացի գաղափարական ներգործությունից, լինել չէին էլ կարող։ Հիմա մենք դարձել ենք կազմակերպված կուսակցություն, իսկ այս էլ հենց նշանակում է իշխանության ստեղծում, գաղափարների հեղինակության վերածում իշխանության հեղինակության, կուսակցության ստորին ինստանցիաների յենթակայություն բարձր ինստանցիաներին» (տես՝ նույն տեղը, եջ 291)։

Փոքրամասնությունը մեծամասնությանը յենթարկելու սկզբունքը, կուսակցական աշխատանքը կենտրոնից ղեկավարելու սկզբունքը հաճախ առաջ է բերում անկայուն տարրերի հարձակումներ, մեղադրանքներ «բյուրոկրատիզմի», «ֆորմալիզմի» մեջ և այլն։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ կուսակցության, որպես ամբողջի, պլանաչափ աշխատանքը և բանվոր դասակարգի պայքարի ղեկավարությունն անհնարին կլինեյին առանց այդ սկզբունքների կիրառման։ Լենինիզմը կազմակերպական հարցում այդ սկզբունքների անշեղ կիրառումն է։ Այդ սկզբունքների դեմ պայքարելը Լենինն անվանում է «ռուսական նիհիլիզմ» և «աղայական անարխիզմ», որը ծաղրվելու և դեն շպրտվելու յե արժանի։

Ահա թե ինչ է ասում Լենինն այդ անկայուն տարրերի մասին իր «Մի քայլ առաջ» գրքում.

«Ռուսական նիհիլիստին այդ աղայական անարխիզմն առանձնապես հատուկ է։ Կուսակցական կազմակերպությունը նրան թվում է հրեշավոր «ֆաբրիկա». մասի յենթարկվելն ամբողջին և փոքրամասնության յենթարկվելը մեծամասնությանը նրան պատկերանում է որպես «ճորտացում»... աշխատանքի բաժանումը կենտրոնի ղեկավարությամբ՝ առաջ է բերում նրա տրագիկոմիկ աղաղակներն ընդդեմ այն բանի, թե մարդկանց «վերածում են անիվների և պտուտակների»... կուսակցության կազմակերպական կանոնադրության մասին հիշատակելը առաջ է բերում արհամարհական ծամածություններ և արհամարհական... նկատողություն, թե՝ կարելի յե և առանց կանոնադրության»... «Թվում է, թե պարզ է, որ չարաբաստիկ բյուրոկրատիզմի վերաբերյալ ճիչերը պարզ քողարկումն են կենտրոնների անձնակազմի նկատմամբ յեղած դժգոհության, թզենու տերև են... Դու բյուրոկրատ ես, որովհետև դու նշանակված ես համագումարի կողմից ոչ թե իմ կամքի համաձայն, այլ նրան հակառակ. դու ֆորմալիստ ես, որովհետև դու հենվում ես համագումարի ֆորմալ վճիռների վրա, և ոչ թե իմ համաձայնության վրա. դու գործում ես կոպիտ-մեխանիկորեն, որովհետև հենվում ես կուսակցական համագումարի «մեխանիկական» մեծամասնության վրա և հաշվի չես առնում կոոպտացված լինելու իմ ցանկությունը. դու ինքնակալ ես, որովհետև չես ցանկանում իշխանությունը հանձնել հին տաքուկ կոմպանիայի ձեռքը» *) (տես՝ հ. VI, եջ 310 և 287, ռուս. հրատ.)։

3) Կուսակցությունը որպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձև։ Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է։ Բայց կուսակցությունը բանվոր դասակարգի միակ կազմակերպությունը չէ։ Պրոլետարիատն ունի ելի մի ամբողջ շարք ուրիշ կազմակերպություններ, առանց որոնց նա չի կարող ճիշտ պայքար մղել կապիտալի դեմ. այդպիսիք են՝ արհեստակցական միությունները, կոոպերատիվները, ֆաբրիկա-գործարանային

*) Խոսքը վերաբերում է II համագումարի վճիռներին չենթարկվող և Լենինին «բյուրոկրատիզմի» մեջ մեղադրող՝ Աքսելրոդի, Մարտովի, Պոտրեսովի և այլոց «կոմպանիային»։ Խմբ.։

նային կազմակերպությունները, պարլամենտական ֆրակցիաները, կանանց անկուսակցական միավորումները, մամուլը, կուլտուր-լուսավորական կազմակերպությունները, յերիտասարդական միությունները, հեղափոխական-մարտական կազմակերպությունները (բացահայտ հեղափոխական յելույթների ժամանակ), պատգամավորների խորհուրդները՝ վորպես կազմակերպության պետական ձև (յեթե պրոլետարիատի իշխանության գլուխ է անցած) և այլն։ Այս կազմակերպությունների հսկայական մեծամասնությունն անկուսակցական կազմակերպություններ են, նրանց միայն մի վորոշ մասն է ուղղակի հարում կուսակցությանը և կազմում նրա ճյուղավորումը։ Այս բոլոր կազմակերպությունները վորոշ պայմաններում բացարձակապես անհրաժեշտ են բանվոր դասակարգին, քանի վոր առանց դրանց անհնար է ամրապնդել պրոլետարիատի դասակարգային դիրքերը պայքարի բազմազան ընագավառներում, քանի վոր առանց դրանց անհնար է կոփել պրոլետարիատը վորպես մի ուժ, վորը կոչված է բուրժուական կարգերը փոխարինելու սոցիալիստական կարգերով։ Բայց ինչպես իրականացնել միասնական ղեկավարությունը կազմակերպությունների այսպիսի առատության դեպքում։ Վո՞րն է այն յերաշխիքը, վոր բազմաթիվ կազմակերպությունների առկայությունն առաջ չի բերի ղեկավարության տարընթացություն։ Կարող են ասել, վոր այդ կազմակերպություններից ամեն մեկն աշխատում է իր առանձնացած ընագավառում և վոր նրանք այդ պատճառով չեն կարող միմյանց խանգարել։ Այդ, ինարկե, ճիշտ է։ Բայց ճիշտ է և այն, վոր այդ բոլոր կազմակերպություններն աշխատանք պետք է տանեն մեկ ուղղությամբ, քանի վոր նրանք սպասարկում են մի դասակարգի, պրոլետարների դասակարգին։ Հարց է ծագում՝ ո՞վ է վորոշում այն գիծը, այն ընդհանուր ուղղությունը, վորով պետք է տանեն իրենց աշխատանքն այդ բոլոր կազմակերպությունները։ Վո՞րն է այն կենտրոնական կազմակերպությունը, վորը՝ անհրաժեշտ փորձի առկայության պատճառով՝ վոչ միայն ընդունակ է մշակելու այդ ընդհանուր գիծը, այլև դեռ հնարավորություն էլ ունի՝ դրա համար բավական հեղինակություն ունենալու շնորհիվ՝ դրդելու այդ բոլոր կազմակերպություններին, վորպեսզի կենսագործեն այդ գիծը՝ ղեկավարության մեջ միասնության հասնելու և ընդհատումների հնարավորությունը վերացնելու համար։

Այդպիսի կազմակերպություն հանդիսանում է պրոլետարիատի կուսակցությունը։

Կուսակցությունը դրա համար ունի բոլոր տվյալները, նախ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը հավաքակայանն է դասակարգի լավագույն տարրերի, վորոնք ուղղակի կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղեկավարում են նրան. յերկրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը,

վորպես բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հավաքակայան, բանվոր դասակարգի լիդերների պատրաստման լավագույն դպրոցն է,— լիդերներ, վորոնք ընդունակ կլինեն ղեկավարելու իրենց դասակարգի կազմակերպության բոլոր ձևերը. յերրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լավագույն դպրոց, իր փորձով ու հեղինակությամբ միակ կազմակերպությունն է, վորն ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկավարությունը և, այդպիսով, բանվոր դասակարգի բոլոր ու ամեն տեսակ անկուսակցական կազմակերպությունները վերածելու սպասարկող օրգանների և մերձեցնող փոկերի, վորոնք միացնելու յեն նրան դասակարգի հետ։ Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է։

Այդ, ինարկե, չի նշանակում, թե անկուսակցական կազմակերպությունները, արհմիությունները, կոոպերատիվները և այլն, պետք է ֆորմալ կերպով յենթարկված լինեն կուսակցական ղեկավարությանը։ Խոսքն այն մասին է միայն, վոր կուսակցության անդամները, վորոնք մտնում են այդ կազմակերպությունների կազմի մեջ վորպես անկասկած ազդեցիկ մարդիկ, ձեռք առնեն համոզելու բոլոր միջոցները, վորպեսզի անկուսակցական կազմակերպությունները իրենց աշխատանքում մերձենան պրոլետարիատի կուսակցությանը և կամովին ընդունեն նրա քաղաքական ղեկավարությունը։

Ահա թե ինչու յե Լենինն ասում, վոր «կուսակցությունը պրոլետարների դասակարգային միավորման բարձրագույն ձևն է», վորի քաղաքական ղեկավարությունը պետք է տարածվի պրոլետարիատի կազմակերպության բոլոր մյուս ձևերի վրա (տես՝ հ. XXV, եջ 195, ռուս. հրատ.)։

Ահա թե ինչու անկուսակցական կազմակերպությունների «անկախության» և «չեզոքության» ոպորտունիստական թեորիան, վորը ծնում է անկախ պարլամենտականներ և կուսակցությունից կտրված մամուլի գործիչներ, նեղմիտ պրոֆեսիոնալիստներ և քաղքենիացած կոոպերատորներ — բոլորովին անհամատեղելի յե լենինիզմի թեորիայի և պրակտիկայի հետ։

4) Կուսակցությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի զենք։ Կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպության բարձրագույն ձևն է։ Կուսակցությունը հիմնական ղեկավար սկզբունքն է պրոլետարների դասակարգի ներսում և այդ դասակարգի կազմակերպությունների մեջ։ Բայց սրանից բնավ չի հետևում, վոր կուսակցությունը կարելի յե դիտել վորպես ինքնանպատակ, վորպես ինքնաբավ ուժ։ Կուսակցությունը պրոլետարների դասակարգային միավորման վոչ միայն բարձրագույն ձևն է, նա դրա հետ մեկտեղ զենք է պրոլետարիատի ձեռքին՝ դիկտատուրա նվաճելու համար՝ յերբ այն դեռ նվաճ-

ված չէ, դիկտատուրան ամրապնդելու և ընդարձակելու համար՝ յերբ այն արդեն նվաճված է։ Կուսակցությունը չեր կարող այնքան բարձրանալ իր նշանակությամբ, և չեր կարող փոխարինել պրոլետարիատի կազմակերպության բոլոր մնացած ձևերին, յեթե պրոլետարիատը կանգնած չլիներ իշխանության հարցի առաջ, յեթե իմպերիալիզմի պայմանները, պատերազմների անխուսափելիությունը, կրիզիսի առկայությունը չպահանջեյին համակենտրոնացնել պրոլետարիատի բոլոր ուժերը մի կետում, կենտրոնացնել հեղափոխական շարժման բոլոր թելերը մի տեղում, նպատակ ունենալով տապալել բուրժուազիային և պրոլետարիատի դիկտատուրա նվաճել։ Կուսակցությունը պրոլետարիատին հարկավոր է ամենից առաջ վորպես իր մարտական շտաբը, վորն անհրաժեշտ է իշխանության հաջող զավթման համար։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց պրոլետարիատի մասսայական կազմակերպություններն իր շուրջը հավաքելու և պայքարի ընթացքում ամբողջ շարժման ղեկավարությունը կենտրոնացնելու ընդունակ կուսակցության՝ պրոլետարիատը Ռուսաստանում չեր կարող իրականացնել իր հեղափոխական դիկտատուրան։

Բայց կուսակցությունը հարկավոր է պրոլետարիատին վոչ միայն դիկտատուրա նվաճելու համար,— դա նրան էլ ավելի հարկավոր է դիկտատուրան իր ձեռքին պահելու, ամրացնելու և սոցիալիզմի լիակատար հաղթության նպատակով ընդարձակելու համար։

«Հավանորեն,— ասում է Լենինը,— հիմա արդեն համարյա ամեն վոք տեսնում է, վոր բոլշևիկներն իշխանության գլուխ մնալ չեյին կարող վոչ թե յերկու և կես տարի, այլև յերկու և կես ամիս, յեթե չլիներ մեր կուսակցության մեջ հաստատված խստագույն, իսկապես յերկաթե կարգապահությունը, յեթե չլիներ ամենալրիվ ու անվերապահ աջակցությունը, վոր ցույց ավեց նրան բանվոր դասակարգի վողջ մասսան, այսինքն այն ամենը, վոր կա նրա մեջ խորհող, ազնիվ, անձնվեր, ազդեցիկ՝ ընդունակ իր հետևից տանելու կամ հրապուրելու հետամնաց խավերին» (տես՝ հ. XXV, եջ 173, ռուս. հրատ.)։

Բայց ինչ է նշանակում «իր ձեռքին պահել» և «ընդարձակել» դիկտատուրան։ Այդ նշանակում է՝ պրոլետարների միլիոնավոր մասսաների մեջ մտցնել կարգապահության և կազմակերպվածության վոգի. այդ նշանակում է՝ պրոլետարական մասսաներում ստեղծել ամուր կապ և հենարան՝ մանր-բուրժուական տարերքի և մանր-բուրժուական սովորությունների խարխլող ազդեցությունների դեմ. այդ նշանակում է՝ ամրապնդել պրոլետարների կազմակերպական աշխատանքը մանր-բուրժուական խավերի վերադաստիարակության և վերափոխության բնագավառում. այդ նշանակում է՝ ոգնել պրոլետարական մասսաներին դաստիարակվելու իրենց վորպես ուժ, վոր ընդունակ լինի վոչնչացնել դասակարգերը և նախապատրաստել պայմաններ՝ սոցիալիստական արտադրություն կազմակերպելու համար։ Բայց այդ բոլորն անհնար է

անել առանց իր համախմբվածությամբ ու կարգապահությամբ ուժեղ կուսակցության։

«Պրոլետարիատի դիկտատուրան,— ասում է Լենինը,— համառ պայքար է՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար ընդդեմ հին հասարակության ուժերի և տրադիցիաների։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների սովորության ուժը ամենասարսափելի ուժն է։ Առանց պայքարում կոփված, յերկաթե կուսակցության, առանց այնպիսի կուսակցության, վորն ոգտվելիս լինի այն ամենի վստահությամբ, ինչն ազնիվ է տվյալ դասակարգում, առանց այնպիսի կուսակցության, վորը կարող լինի հետևել մասսայի տրամադրությանը և ազդել նրա վրա,— անհնարին է հաջողությամբ վարել այդպիսի պայքարը» (տես՝ հ. XXV, եջ 191, ռուս. հրատ.)։

Կուսակցությունը հարկավոր է պրոլետարիատին դիկտատուրա նվաճելու և իր ձեռքին պահելու համար։ Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի զենքն է։

Բայց դրանից հետևում է, վոր դասակարգերի անհետանալով, պրոլետարիատի դիկտատուրայի մահանալով պետք է մահանա և՛ կուսակցությունը։

5) Կուսակցությունը վորպես կամքի միասնություն, վորն անհամատեղելի յե ֆրակցիաների գոյության հետ։ Պրոլետարիատի դիկտատուրայի նվաճելը և իր ձեռքին պահելն անհնար է առանց իր համախմբվածությամբ և յերկաթե կարգապահությամբ ուժեղ կուսակցության։ Բայց յերկաթե կարգապահությունը կուսակցության մեջ աներևակայելի յե առանց կամքի միասնության, առանց կուսակցության բոլոր անդամների գործողության լիակատար և անպայման միասնության։ Այս, իհարկե, չի նշանակում, թե դրանով իսկ բացառվում է կարծիքների պայքարի հնարավորությունը կուսակցության ներսում։ Ընդհակառակը, յերկաթե կարգապահությունը վոչ թե բացառում, այլ յենթադրում է քննադատությունը և կարծիքների պայքարը կուսակցության ներսում։ Դա առավել ևս չի նշանակում, թե կարգապահությունը պետք է «կույր» լինի։ Ընդհակառակը, յերկաթե կարգապահությունը վոչ թե բացառում, այլ յենթադրում է յենթակայության գիտակցությունն ու կամավորությունը, քանի վոր միայն գիտակից կարգապահությունը կարող է լինել իսկական յերկաթե կարգապահություն։ Բայց այն բանից հետո, յերբ կարծիքների պայքարն ավարտված է, քննադատությունը սպառված և վճիռն ընդունված, կուսակցության բոլոր անդամների կամքի միասնությունը և գործողության միասնությունը հանդիսանում է այն անհրաժեշտ պայմանը, առանց վորի աներևակայելի յեն վո՛չ միասնական կուսակցությունը, վո՛չ յերկաթե կարգապահությունը կուսակցության մեջ։

«Սրված քաղաքացիական պատերազմի այժմյան եպոխայում,— ասում է Լենինը,— կոմունիստական կուսակցությունն իր պարտքը կկարողանա կատա-

րել միայն այն դեպքում, յեթե նա կազմակերպված լինի ամենակենտրոնացված ձևով, յեթե նրանում իշխի զինվորական կարգապահությանը սահմանակցող յերկաթե կարգապահություն, և յեթե նրա կուսակցական կենտրոնը լինի՝ կուսակցության բոլոր անդամների ընդհանուր վստահությունը վայելող, լայն լիազորություններով օժտված տիրական հեղինակավոր որգան» (տես՝ «Կոմինտերնի մեջ ընդունվելու պայմանները»)։

Այսպես է դրված կուսակցության կարգապահության հարցը՝ դիկտատուրան նվաճելուց առաջ գոյություն ունեցող պայքարի պայմաններում։

Նույնը պետք է ասել, բայց էլ ավելի մեծ չափով, դիկտատուրան նվաճելուց հետո մեր կուսակցության մեջ լինելիք կարգապահության մասին։

> «Ով թեկուզ փոքրև չափով թուլացնում է,—ասում է Լենինը,—պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (մանավանդ նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն օգնում է բուրժուազիային՝ ընդդեմ պրոլետարիատի» (տես՝ հ. XXV, եջ 191, ռուս. հրատ.)։

Բայց սրանից հետևում է, վոր ֆրակցիաների գոյությունն անհամատեղելի յե թե՛ կուսակցության միասնության, թե՛ նրա յերկաթե կարգապահության հետ։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ֆրակցիաների առկայությունը տանում է դեպի միքանի կենտրոնի գոյություն, իսկ միքանի կենտրոնի գոյությունը նշանակում է ընդհանուր կենտրոնի բացակայություն կուսակցության մեջ, միասնական կամքի տրոհում, կարգապահության թուլացում և քայքայում, դիկտատուրայի թուլացում և քայքայում։ Իհարկե, II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք կռվում են պրոլետարիատի դիկտատուրայի դեմ և չեն ցանկանում պրոլետարիատին առաջնորդել դեպի իշխանություն, կարող են թույլ տալ իրենց այնպիսի լիբերալիզմ, ինչպիսին է ֆրակցիաների ազատությունը, քանի վոր նրանք յերկաթե կարգապահության կարիք բնավ չունեն։ Բայց Կոմունիստական Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք իրենց աշխատանքը կառուցում են պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման և ամրացման հիման վրա, չեն կարող թույլ տալ վո՛չ «լիբերալիզմ», վո՛չ ֆրակցիաների ազատություն։ Կուսակցությունը կամքի միասնություն է, վոր բացառում է ամեն մի ֆրակցիոնականություն և իշխանության տրոհում կուսակցության մեջ։

Ահա թե ինչու յե Լենինը պարզաբանում, վոր՝ «ֆրակցիոնականությունը վտանգավոր է կուսակցության միասնության և պրոլետարիատի ավանգարդի կամքի միասնության կենսագործման, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հաջողության հիմնական պայմանի՝ տեսակետից», — պարզաբանում, վորն ամրապնդված է մեր կու-

սակցության X համագումարի «Կուսակցության միասնության մասին» վերնագրով հատուկ բանաձևում։

Ահա թե ինչու Լենինը պահանջում է՝ «լիովին վոչնչացնել ամեն մի ֆրակցիոնականություն» և «անհապաղ ցրել այս կամ այն պլատֆորմի վրա գոյացած առանց բացառության բոլոր խմբակները»՝ «կուսակցությունից անպայման և անհապաղ վտարելու» սպառնալիքով (տես՝ «Կուսակցության միասնության մասին» բանաձևը)։

6) Կուսակցությունն ամրանում է նրանով, վոր իրեն մաքրում է ոպորտունիստական տարրերից։ Ֆրակցիոնականության աղբյուրը կուսակցության մեջ՝ նրա ոպորտունիստական տարրերն են։ Պրոլետարիատը փակ դասակարգ չէ։ Դեպի պրոլետարիատն անդադար հոսում են կապիտալիզմի զարգացմամբ պրոլետարացած՝ գյուղացիներ, քաղքենիներ, ինտելիգենցիայի խավին պատկանողներ։ Միաժամանակ տեղի յե ունենում պրոլետարիատի վերնախավերի քայքայման պրոցեսը,— վերնախավեր, վորոնք բաղկացած են բուրժուազիայի կողմից ի հաշիվ գաղութային գերշահույթի կերակրվող պրոֆեսիոնալիստներից ու պառլամենտականներից։ «Բուրժուականացած բանվորների», — ասում էր Լենինը, — կամ՝ «բանվորական արիստոկրատիայի այդ խավը» — ամբողջովին քաղքենիական իրենց կենցաղավարությամբ, վաստակների չափերով, իրենց աշխարհայացքով — II Ինտերնացիոնալի գլխավոր հենարանն են, իսկ մեր օրերում՝ բուրժուազիայի գլխավոր սոցիալական (վոչ զինվորական) հենարանը։ Վորովհետև դրանք բուրժուազիայի իսկական գործակալներն են բանվորական շարժման մեջ, կապիտալիստների դասակարգի բանվոր գործակատարները, ռեֆորմիզմի և շովինիզմի իսկական հաղորդիչները» (տես՝ հ. XIX, եջ 77, ռուս. հրատ.)։

Այդ բոլոր մանր-բուրժուական խմբակներն այս կամ այն կերպ թափանցում են կուսակցություն, այնտեղ մտցնելով տատանման ու ոպորտունիզմի վոգի, քայքայման ու անվստահության վոգի։ Հենց նրանք են, գլխավորապես, ֆրակցիոնականության և քայքայման աղբյուրը, կազմալուծման և կուսակցությունը ներսից պայթեցնելու աղբյուրը։ Պատերազմել իմպերիալիզմի դեմ՝ թիկունքում այդպիսի «դաշնակիցներ» ունենալով, նշանակում է ընկնել այնպիսի մարդկանց դրության մեջ, վորոնք գնդակոծվում են յերկու կողմից՝ և՛ ճակատից, և՛ թիկունքից։ Այդ պատճառով անողոք պայքարն այդպիսի տարրերի դեմ, նրանց արտաքսումը կուսակցությունից՝ իմպերիալիզմի դեմ հաջողությամբ պայքարելու նախապայմանն է։

Կուսակցության ներսում գաղափարական պայքար մղելու միջոցով ոպորտունիստական տարրերին «հաղթահարելու» թեորիան, այդ տարրերին մի կուսակցության շրջանակներում «վերացնելու» թեորիան փտած և վտանգավոր թեորիա յե, վոր սպառնում է կուսակցությունը դատապարտե

կաթվածի և խրոնիկական տկարության, պահանջում է կուսակցությունը դարձնել օպորտունիզմի կերակուր, պահանջում է առանց հեղափոխական կուսակցության թողնել պրոլետարիատը, պահանջում է պրոլետարիատը զրկել գլխավոր զենքից՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: Մեր կուսակցությունը չէր կարող ճանապարհ դուրս գալ, նա չէր կարող իշխանություն վերցնել և պրոլետարիատի դիկտատուրա կազմակերպել, նա չէր կարող քաղաքացիական պատերազմից հաղթող դուրս գալ, յեթե իր շարքերում ունենար Մարտովներ և Դաններ, Պոտրեսովներ և Աքսելրոդներ: Յեթե մեր կուսակցությանը հաջողվեց ստեղծել իր մեջ ներքին միասնություն և իր շարքերի չտեսնված համախմբվածություն, ապա այդ, ամենից առաջ, այն պատճառով, վոր նա կարողացավ ժամանակին մաքրվել օպորտունիզմի աղտեղությունից, նա կարողացավ կուսակցությունից դուրս վռնդել լիկվիդատորներին և մենշևիկներին: Պրոլետարական կուսակցությունների զարգացման և ամրապնդման ճանապարհն անցնում է օպորտունիստներից ու ռեֆորմիստներից, սոցիալ-իմպերիալիստներից ու սոցիալ-շովինիստներից, սոցիալ-հայրենասերներից ու սոցիալ-պացիֆիստներից այդ կուսակցությունների մաքրման բովով: Կուսակցությունն ամրանում է նրանով, վոր մաքրվում է օպորտունիստական տարրերից:

«Իր շարքերում ռեֆորմիստներ, մենշևիկներ ունենալով,— ասում է Լենինը,— պրոլետարական հեղափոխության մեջ հաղթել չի լինի, այդ հեղափոխությունը պաշտպանել ու պահպանել չի լինի: Դա ակներև է սկզբունքորեն: Դա ակնառու կերպով հաստատված է և՛ Ռուսաստանի, և՛ Հունգարիայի փորձով... Ռուսաստանում շատ անգամ են յեղել դժվար դրություններ, յերբ խորհրդային ռեժիմն անկասկած կտապալվեր, յեթե մենշևիկները, ռեֆորմիստները, մանրբուրժուական դեմոկրատները մնացած լինեյին մեր կուսակցության ներսում... Իտալիայում, ինչպես բոլորն էլ ընդունում են, գործն ընթանում է դեպի պրոլետարիատի վճռական մարտեր բուրժուազիայի դեմ՝ պետական իշխանությանը տիրանալու համար: Այդպիսի մոմենտին վոչ միայն անպայման անհրաժեշտ է հեռացնել կուսակցությունից մենշևիկներին, ռեֆորմիստներին, տուրատիականներին, այլև կարող է նույնիսկ օգտակար լինել՝ տատանվելու ընդունակ և ռեֆորմիստների հետ «միասնություն» ստեղծելու խնդրում տատանումներ հանդես բերող հիանալի կոմունիստների հեռացնելը, նրանց հեռացնելը ամեն տեսակ պատասխանատու պոստերից... Հեղափոխության նախօրեյին և նրա հաղթանակի համար մղվող ամենադաժան պայքարի մոմենտներին ամենափոքրիկ տատանումները կուսակցության ներսում ընդունակ են կործանել ամեն ինչ, վիժեցնել հեղափոխությունը, խլել իշխանությունը պրոլետարիատի ձեռքից, վորովհետև այդ իշխանությունը դեռ ամուր չէ, վորովհետև գրոհը նրա վրա դեռ չափազանց ուժեղ է: Յեթե տատանվող առաջնորդները հեռանում են գործից այդպիսի ժամանակ, դա վոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում է թե՛ կուսակցությունը, թե՛ բանվորական շարժումը, թե՛ հեղափոխությունը» (տես՝ հ. XXV, եջ 462—464, ռուս. հրատ.):

IX. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՃԸ

Խոսքը գրական վոճի մասին չէ: Յես նկատի ունեմ աշխատանքի վոճը, այն հատուկն ու յուրօրինակը լենինիզմի պրակտիկայում, վորն ստեղծում է լենինիստ-աշխատողի հատուկ տիպը: Լենինիզմը տեսական և պրակտիկ դպրոց է, վորը պատրաստում է կուսակցական և պետական աշխատողի հատուկ տիպը, ստեղծում է աշխատանքի հատուկ, լենինյան վոճը: Վորո՞նք են այդ վոճի բնորոշ գծերը: Վորո՞նք են նրա առանձնահատկությունները:

Այդ առանձնահատկությունները յերկուսն են՝ 1) ռուսական հեղափոխական թափը և 2) ամերիկյան գործարարությունը: Լենինիզմի վոճն այդ յերկու առանձնահատկությունների միացումն է կուսակցական և պետական աշխատանքում:

Ռուսական հեղափոխական թափը հակաթույն է ընդդեմ անշարժության, ռուտինայի, պահպանողականության, մտքի լճացման, ստրկական վերաբերմունքի դեպի պապենական տրադիցիաները: Ռուսական հեղափոխական թափը այն կենարար ուժն է, վոր արթնացնում է միտքը, առաջ է շարժում, կոտրում է անցյալը, հեռանկար է տալիս: Առանց նրան հնարավոր չէ վոչ մի շարժում դեպի առաջ: Բայց նա շանսեր ունի պրակտիկայում այլասերվելու և վերածվելու դատարկ «հեղափոխական» մանիլովշչինայի, յեթե աշխատանքի մեջ չմիացվի ամերիկյան գործարարության հետ: Այդպիսի այլասերման օրինակներ — ինչքան կուզեք: Ո՞ւմ հայտնի չէ «հեղափոխական» հորինարարության և «հեղափոխական» պլանաստեղծության հիվանդությունը, վորի աղբյուրը հավատն է դեպի դեկրետի ուժը, — դեկրետ, վորը կարող է ամեն ինչ սարքել և ամեն ինչ վերափոխել: Ռուսական գրողներից մեկը՝ Ի. Երենբուրգը՝ «Ուսկոմչել» («Усовершенствованный коммунистический человек» — «Կատարելագործված կոմունիստական մարդ») պատմվածքում պատկերել է այդ հիվանդությամբ բռնված «բոլշևիկի» տիպը, մի բոլշևիկի, վորը նպատակ է դրել ուրվագրելու իդեալական կատարելագործված մարդու սխեման և ... «ընկղմվել է» այդ «աշխատանքում»: Պատմվածքում կա մեծ չափազանցում, բայց վոր այն ճիշտ է հասկանում հիվանդությունը — դա կասկածի յենթակա չէ: Բայց վոչ վոք, կարծեմ, այդպիսի հիվանդներին չի ծաղրել այնպես չարախնդորեն ու անողոքաբար, ինչպես Լենինը: «Կոմունիստական սնապարծություն» — այսպիսի արհամարհանքով էր վերաբերվում նա հորինարարության և դեկրետաստեղծության հիվանդագին հավատին:

«Կոմունիստական սնապարծությունը — նշանակում է այն, — ասում է Լենինը, — վոր վորևե մարդ, գտնվելով կոմունիստական կուսակցության մեջ և դեռևս այնտեղից զտված չլինելով, յերևակայում է, թե իր բոլոր խնդիրները կարող է լուծել կոմունիստական դեկրետավորությամբ (декретированием)» (տես՝ հ. XXVII, եջ 50—51, ռուս. հրատ.):

«Հեղափոխական» ճոռոմաբանությանը Լենինը սովորաբար հակադրում է հասարակ և առօրյա գործեր, դրանով ընդգծելով, որ «հեղափոխական» հորինաբանությունը հակառակ է իսկական լենինիզմի թե՛ ոգուն, թե՛ տառին։

«Ավելի քիչ փարթամ ֆրազներ,— ասում է Լենինը,— ավելի շատ հասարակ առօրյա գործ... ավելի քիչ քաղաքական աղմկարարություն, ավելի շատ ուշադրություն կոմունիստական շինարարության ամենահասարակ, բայց կենդանի... փաստերին...» (տե՛ս հ. XXIV, էջ 343 և 335, ռուս. հրատ.)։

Ամերիկյան գործարարությունը, ընդհակառակը, հակաթույն է ընդդեմ «հեղափոխական» մանիլովշչինայի և ֆանտաստիկ հորինաբանության։ Ամերիկյան գործարարությունը՝ դա այն անսանձահարելի ուժն է, որը չունի և չի ճանաչում արգելքներ, որն իր գործարար հաստատակամությամբ վողողում է բոլոր և ամեն տեսակ խոչընդոտները, որը չի կարող վախճանի չհասցնել մեկ անգամ սկսած գործը, և առանց որի աներևակայելի յե լուրջ շինարարական աշխատանքը։ Բայց ամերիկյան գործարարությունն ունի բոլոր շանսերն այլասերվելու և վերածվելու նեղմիտ և անսկզբունք գործամոլության, յեթե այն չմիացվի ռուսական հեղափոխական թափի հետ։ Ո՞ւմ հայտնի չէ նեղ պրակտիցիզմի և անսկզբունք գործամոլության հիվանդությունը,— գործամոլություն, որը հաճախ մի կարգ «բոլշևիկների» հասցնում է այլասերման և հեղափոխության գործից հեռանալուն։ Այդ յուրօրինակ հիվանդությունն իր արտացոլումն է գտել Բ. Պիլնյակի «Մերկ տարի» («Голый год») պատմվածքում, որտեղ պատկերված են ռուսական «բոլշևիկների» տիպեր,— բոլշևիկներ, որոնք լի յեն կամքով ու պրակտիկ վճռականությամբ, «фукцирующих» весьма «энегрично» (գործում են խիստ մեծ յեռանդով), բայց զուրկ են հեռանկարից, չգիտեն «ինչն ինչին է վերաբերում» և, դրա հետևանքով, շեղվում են հեղափոխական աշխատանքի ճանապարհից։ Ոչ ոք այնպես կծու չի ծաղրել այդ գործամոլական հիվանդությունը, ինչպես Լենինը։ «Նեղմտական պրակտիցիզմ», «անխելք գործամոլություն»— այսպիսի արհամարհանքով էր վերաբերվում Լենինն այդ հիվանդությանը։ Նա սովորաբար դրան հակադրում էր կենդանի հեղափոխական գործը և հեղափոխական հեռանկարների անհրաժեշտությունը մեր ամենօրյա աշխատանքի բոլոր գործերում՝ դրանով իսկ ընդգծելով, որ անսկզբունք գործամոլությունը նույնքան հակառակ է իսկական լենինիզմին, որքան որ հակառակ է «հեղափոխական» հորինաբանությունը։

Ռուսական հեղափոխական թափի միացումը ամերիկյան գործարարության հետ — այս է լենինիզմի էությունը կուսակցական և պետական աշխատանքի բնագավառում։

Միայն այդպիսի միացումն է տալիս մեզ լենինիստ-աշխատողի ամբողջացած տիպը, լենինիզմի ոճն աշխատանքի բնագավառում։

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նվիրում եմ Համ Կ (բ) Կ
Լենինգրադի կազմակերպությանը
Ի. ՍՏԱԼԻՆ

I. ԼԵՆԻՆԻԶՄԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում տրված ե լենինիզմի հայտնի բնորոշումը, վորը, ըստ յերևույթին, քաղաքացիության իրավունք ե ստացել: Նա ասում ե.

> «Լենինիզմն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության էպոխայի մարքսիզմն ե: Ավելի ճշգրիտ՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան ե ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և տակտիկան հատկապես»:

Ուղի՞ղ ե արդյոք այս բնորոշումը:

Յես կարծում եմ, վոր ուղիղ ե: Նա ուղիղ ե, նախ՝ այն պատճառով, վոր ուղիղ ե մատնանշում լենինիզմի պատմական արմատները, բնորոշելով այն վորպես իմպերիալիզմի էպոխայի մարքսիզմ, ի հակակշիռ Լենինի քննադատներից վոմանց, վորոնք սխալ կերպով կարծում են, թե լենինիզմը ծագել ե իմպերիալիստական պատերազմից հետո: Յերկրորդ՝ նա ուղիղ ե այն պատճառով, վոր ուղիղ ե նշում լենինիզմի միջազգային բնույթը, ի հակակշիռ սոցիալ-դեմոկրատիայի, վոր լենինիզմը կիրառելի յե համարում միայն ազգային-ռուսական պայմաններում: Յերրորդ՝ նա ուղիղ ե այն պատճառով, վոր ուղիղ ե նշում լենինիզմի օրգանական կապը Մարքսի ուսմունքի հետ, բնորոշելով այն վորպես իմպերիալիզմի էպոխայի մարքսիզմ, ի հակակշիռ լենինիզմի քննադատներից վոմանց, վորոնք այն համարում են վոչ թե մարքսիզմի հետագա զարգացում, այլ միայն մարքսիզմի վերականգնում և նրա կիրառումը ռուսական իրականության նկատմամբ.

Այս բոլորը, կարծես թե, կարոտ չե հատուկ մեկնաբանությունների:

Սակայն և այնպես մեր կուսակցության մեջ, բանից դուրս ե գալիս, վոր կան ընկերներ, վորոնք անհրաժեշտ են համարում լենինիզմը բնորոշել փոքր ինչ այլ կերպ: Ա՛յ, օրին., ընկ. Զինովյեվը կարծում ե, վոր՝

> «Լենինիզմն իմպերիալիստական պատերազմների և համաշխարհային հեղափոխության էպոխայի մարքսիզմն ե, — այն հեղափոխության, վոր սկսվել ե ան-

միջակայնորեն մի յերկրում, վորտեղ գյուղացիությունը գերակշռում է»*) (տես՝ ընկ. Զինովյեվի «Բոլշևիզմ, թե տրոցկիզմ» հոդվածը, „Правда“ № 273, 30/XI 1924 թ.)։

Ի՞նչ կարող են նշանակել ընկ. Զինովյեվի ընդգծած բառերը։ Ի՞նչ է նշանակում լենինիզմի բնորոշման մեջ Ռուսաստանի հետամնացությունը, նրա գյուղացիական բնույթը մացնելը։

Այդ նշանակում է լենինիզմն ինտերնացիոնալ պրոլետարական ուսմունքից վերածել ռուսաստանյան ինքնատիպության արդյունքի։

Այդ նշանակում է ջուր լցնել Բաուերի և Կաուցկու ջրաղացին, վորոնք ժխտում են լենինիզմի պիտանիությունը մյուս, կապիտալիստորեն ավելի զարգացած, յերկրների համար։

Խոսք չկա, վոր գյուղացիական հարցը Ռուսաստանի համար ունի կարեվորագույն նշանակություն, վոր մեր յերկիրը գյուղացիական է։ Բայց այս փաստն ի՞նչ նշանակություն կարող է ունենալ լենինիզմի հիմունքների բնորոշման համար։ Միթե լենինիզմը մշակվել է միայն Ռուսաստանի հողի վրա և Ռուսաստանի համար, և վոչ թե իմպերիալիզմի հողի վրա ու իմպերիալիստական յերկրների համար ընդհանրապես։ Միթե Լենինի այնպիսի աշխատությունները, ինչպիսին են՝ «Իմպերիալիզմը», «Պետություն և հեղափոխությունը», «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», «Ձախության յերեխայական հիվանդությունը» և այլն՝ նշանակություն ունեն միայն Ռուսաստանի համար և վոչ թե ընդհանրապես բոլոր իմպերիալիստական յերկրների համար։ Միթե լենինիզմը բոլոր յերկրների հեղափոխական շարժման փորձի ընդհանրացումը չէ։ Միթե լենինիզմի թեորիայի և տակտիկայի հիմունքները պետքական չեն, պարտադիր չեն բոլոր յերկրների պրոլետարական կուսակցությունների համար։ Միթե Լենինն իրավացի չէր, յերբ ասում էր, վոր «բոլշևիզմը պիտանի յե վորպես տակտիկայի տիպար օրինակ բոլորի համար»**) (տես՝ հ. XXIII, եջ 386, ռուս. հրատ.)։ Միթե Լենինն իրավացի չէր, յերբ խոսում եր խորհրդային իշխանության և բոլշևիկյան թեորիայի ու տակտիկայի «միջազգային նշանակության»**) մասին (տես՝ հ. XXV, եջ 171—172, ռուս. հրատ.)։ Միթե ճիշտ չեն Լենինի գիցուք հետևյալ խոսքերը.

«Ռուսաստանում պրոլետարիատի դիկտատուրան անխուսափելիորեն պետք է աչքի ընկնի միքանի առանձնահատկություններով՝ համեմատած առաջավոր յերկրների հետ՝ մեր յերկրի շատ մեծ հետամնացության և մանր-բուրժուականության հետևանքով։ Բայց հիմնական ուժերը—և հասարակական տնտեսության հիմնական ձևերը—Ռուսաստանում նույնն են, ինչ և ցանկացած կապիտալիստական յերկրում, այնպես վոր այդ առանձնահատկությունները համենայն դեպս չեն կարող վերաբերվել ամենագլխավորին» **) (տես՝ հ. XXIV, եջ 508, ռուս. հրատ.)։

*) Ընդգծումն ընկ. Զինովյեվինն է։ Ի. Ստ.։
**) Ընդգծումն իմն է։ Ի.Ստ.։

Բայց յեթե այս բոլորն ուղիղ է, դրանից չի՞ հետևում արդյոք, վոր լենինիզմի՝ ընկ. Զինովյեվի տված բնորոշումը չի կարող ճիշտ ճանաչվել։

Ի՞նչպես համատեղել լենինիզմի այդ ազգային-սահմանափակ բնորոշումն ինտերնացիոնալիզմի հետ։

II. ԳԼԽԱՎՈՐԸ ԼԵՆԻՆԻԶՄԻ ՄԵՋ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում ասված է.

«Վոմանք կարծում են, թե հիմնականը լենինիզմի մեջ — գյուղացիական հարցն է, թե լենինիզմի մեկնակետը գյուղացիության, նրա դերի, նրա տեսակարար կշռի հարցն է։ Այդ միանգամայն սխալ է։ Լենինիզմի հիմնական հարցը, նրա մեկնակետը վոչ թե գյուղացիական հարցն է, այլ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, նրա նվաճման պայմանների, նրա ամրապնդման պայմանների հարցը։ Գյուղացիական հարցը, վորպես իշխանության համար պրոլետարիատի մղած պայքարում նրան դաշնակից հանդիսացողի հարց, ածանցվող հարց է»։

Արդյո՞ք ճիշտ է այս դրությունը։

Յես կարծում եմ, վոր ճիշտ է։ Այս դրությունն ամբողջությամբ բղխում է լենինիզմի բնորոշումից։ Յեվ իսկապես, յեթե լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան է, իսկ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան, ապա պարզ է, վոր լենինիզմի մեջ գլխավորը՝ պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է, այդ հարցի հիմնավորումն ու կոնկրետացումը։

Սակայն և այնպես՝ ընկ. Զինովյեվը, ըստ յերևույթին, համաձայն չէ այս դրության հետ։ «Լենինի հիշատակին» վերնագրով իր հոդվածում նա ասում է.

«Գյուղացիության դերի հարցը, ինչպես յես արդեն ասացի, բոլշևիզմի, լենինիզմի հիմնական հարցն է» *) (տես՝ „Правда“ № 35, 1924 թ. փետրվարի 13)։

Ընկ. Զինովյեվի այս դրությունը, ինչպես տեսնում եք, ամբողջապես բղխում է լենինիզմի անճիշտ բնորոշումից, վոր տվել էր ընկ. Զինովյեվը։ Այդ պատճառով դա նույնպես սխալ է, ինչպես սխալ է լենինիզմի նրա բնորոշումը։

Արդյո՞ք ճիշտ է Լենինի թեզիսն այն մասին, վոր պրոլետարիատի դիկտատուրան «հեղափոխության հիմնական բովանդակությունն է» (տես՝ հ. XXIII, եջ 337, ռուս. հրատ.)։ Անպայման ճիշտ է։ Արդյո՞ք ճիշտ է այն թեզիսը, թե լենինիզմը պրոլետարական հեղափոխության

* Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

թեորիան է և տակտիկան: Յես կարծում եմ, որ ճիշտ է: Բայց սրանից ինչ է հետևում: Սրանից հենց այն է հետևում, որ լենինիզմի հիմնական հարցը, նրա մեկնակետը, նրա հիմքը պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է:

Միթե ճիշտ չէ, որ իմպերիալիզմի հարցը, իմպերիալիզմի թռիչքաձև զարգացման հարցը, մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը, պրոլետարիատի պետության հարցը, այդ պետության խորհրդային ձևի հարցը, այն հարցը, թե ինչ դեր ունի կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, սոցիալիզմի շինարարության ուղիների հարցը, — որ բոլոր այս հարցերը մանրակրկիտ մշակել է Լենինը: Միթե ճիշտ չէ, որ հենց այդ հարցերն են կազմում պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի հիմունքը, ֆունդամենտը: Միթե ճիշտ չէ, որ առանց այդ հիմնական հարցերի լուծման գյուղացիական հարցերի մանրակրկիտ մշակումը պրոլետարիատի դիկտատուրայի տեսակետով՝ անհնար կլիներ:

Խոսք չկա, որ Լենինը գյուղացիական հարցի գիտակն էր: Խոսք չկա, որ գյուղացիական հարցը, որպես պրոլետարիատի դաշնակցի հարց, կարևորագույն նշանակություն ունի պրոլետարիատի համար և պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական հարցի բաղկացուցիչ մասն է: Բայց միթե պարզ չէ, որ յեթե լենինիզմի առաջ կանգնած չլիներ պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական հարցը, ապա չէր լինի և արտաբերվող հարցը պրոլետարիատի դաշնակցի մասին, չէր լինի գյուղացիության հարցը:

Միթե պարզ չէ, որ յեթե լենինիզմի առաջ կանգնած չլիներ պրոլետարիատի կողմից իշխանություն նվաճելու պրակտիկ հարցը, ապա չէր լինի և գյուղացիության հետ դաշինք կնքելու հարցը:

Լենինը մեծագույն պրոլետարական իդեոլոգ չէր լինի, որպիսին նա, անկասկած, հանդիսանում է, նա կլիներ հասարակ գյուղացիական «փիլիսոփա», որպիսին նրան հաճախ պատկերում են արտասահմանի գրական քաղքենիները, յեթե նա գյուղացիական հարցի մանրակրկիտ մշակումը կատարեր ոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի թեորիայի և տակտիկայի պատվանդանի վրա, այլ այդ պատվանդանից դուրս:

Յերկուսից մեկը.

կամ գյուղացիական հարցը լենինիզմի մեջ գլխավորն է, և այն ժամանակ լենինիզմը պիտանի չէ, պարտադիր չէ կապիտալիստորեն զարգացած յերկրների համար, գյուղացիական յերկիր չհանդիսացող յերկրների համար.

կամ լենինիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրան է, և այն ժամանակ լենինիզմը բոլոր յերկրների պրոլետարների ինտերնացիոնալ ուսմունքն է, որ պիտանի և պարտադիր է առանց բացա-

ռության բոլոր յերկրների, այդ թվում և կապիտալիստորեն զարգացածների համար:

Այստեղ հարկավոր է ընտրություն անել:

III. «ՊԵՐՄԱՆԵՆՏ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում «պերմանենտ հեղափոխության թեորիան» գնահատվում է որպես գյուղացիության դերի թերագնահատման «թեորիա»:

Այնտեղ ասված է.

«Լենինը պատերազմում էր «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցների դեմ ոչ թե անընդհատության հարցի պատճառով, քանի որ ինքը Լենինը կանգնած էր անընդհատ հեղափոխության տեսակետի վրա, այլ պրոլետարիատի մեծագույն ռեզերվ հանդիսացող գյուղացիության դերը նրանց կողմից թերագնահատվելու պատճառով»:

Ռուսական «պերմանենտականների» այս բնութագիրը մինչև վերջին ժամանակը համարվում էր բոլորի կողմից ճանաչված: Բայց և այնպես, նա, լինելով ընդհանրապես ճիշտ, չի կարող սպառիչ ճանաչվել: 1924 թվի դիսկուսիան՝ մեկ կողմից և Լենինի աշխատությունների ուշի-ուշով կատարված վերլուծությունը՝ մյուս կողմից ցույց տվին, որ ռուսական «պերմանենտականների» սխալը ոչ միայն գյուղացիության դերի թերագնահատումն էր, այլև թերագնահատումը պրոլետարիատի ուժերի և ընդունակությունների՝ իր հետևից տանելու գյուղացիությանը, պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարին չհավատալը:

Այդ պատճառով «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրում (1924 թ. դեկտեմբեր) յես ընդարձակեցի այդ բնութագիրը և փոխարինեցի ուրիշ, ավելի լրիվ բնութագրով: Ահա թե ինչ է ասված դրա մասին այդ բրոշյուրում.

«Մինչև հիմա նշում էին «պերմանենտ հեղափոխության» թեորիայի սովորաբար մեկ կողմը՝ գյուղացիական շարժման հեղափոխական հնարավորություններին չհավատալը: Հիմա, արդարացի լինելու համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել մյուս կողմով՝ Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին և ընդունակություններին չհավատալով»:

Այս, իհարկե, չի նշանակում, թե լենինիզմը դեմ էր կանգնած կամ դեմ է կանգնած առանց չակերտների պերմանենտ հեղափոխության գաղափարին, որ հռչակել էր Մարքսը անցած դարի քառասնական թվականներին: Ընդհակառակը: Լենինը միակ մարքսիստն էր, որ ճիշտ հասկացավ ու զարգացրեց պերմանենտ հեղափոխության գաղափարը: Լենինի տարբերությունը «պերմանենտականներից» այս

հարցում այն է, վոր «պերմանենտականները» աղավաղում եյին Մարք-
սի պերմանենտ հեղափոխության գաղափարը, վերածելով այն անկեն-
դան, գրքային իմաստության, այնինչ Լենինն այն վերցրեց մաքուր
ձևով և դարձրեց հեղափոխության իր թեորիայի հիմքերից մեկը։
Հարկավոր է հիշել, վոր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության
սոցիալիստականի վերաճելու գաղափարը, վոր տվել եր Լենինը դեռևս
1905 թվին, պերմանենտ հեղափոխության մարքսյան թեորիայի մարմ-
նացման ձևերից մեկն ե։ Ահա թե ինչ ե գրել Լենինն այդ առթիվ
դեռևս 1905 թվին.

«Դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն կսկսենք անցնել—և հենց
մեր ուժերի,գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ուժերի չափով—կսկսենք
անցնել սոցիալիստական հեղափոխությանը։ Մենք կողմնակից ենք անընդհատ
հեղափոխության*)։ Մենք կիսաճամբին կանգ չենք առնի...
Ավանտյուրիզմի մեջ չընկնելով, մեր գիտական խղճին չդավաճանելով, եժա-
նագին ժողովրդականության հետևից չընկնելով, մենք կարող ենք ասել և
ասում ենք միայն մի բան՝ մենք բոլոր ուժերով կօգնենք ամբողջ գյուղացիու-
թյանը դեմոկրատական հեղափոխություն կատարելու, վորպեսզի այնքան ավելի
հեշտ լինի մեզ համար, պրոլետարիատի կուսակցության համար, վորքան կարելի
յե շուտով անցնել նոր և բարձր խնդրի՝ սոցիալիստական հեղափոխության»
(տես՝ հ. VIII, եջ 186—187, ռուս. հրատ.)։

Իսկ ահա թե ինչ ե գրում Լենինն այդ թեմայի մասին տասնվեց
տարի անց, պրոլետարիատի կողմից իշխանություն նվաճելուց հետո.

«Կաուցկիները,Հիլֆերդինգները, Մարտովները, Չերնովները,Խիլկվիտները,Լոն-
գեները, Մակդոնալդները, Տուրատիները և II $^{1}/_{2}$-անոց մարքսիզմի այլ հերոսները
չկարողացան հասկանալ... ինչպես են հարաբերվում իրար բուրժուա-դեմոկրատա-
կան և պրոլետարական-սոցիալիստական հեղափոխությունները։ Առաջինը վերա-
ճում է յերկրորդին*)։ Յերկրորդն իմիջի այլոց է լուծում առաջինի հարցերը։
Յերկրորդն ամրապնդում է առաջինի գործը։ Պայքարը և միմյն պայքարն է
վճռում, թե յերկրորդին վորքան ե հաջողվում առաջինից դիրաճել» (տես՝
հ. XXVII, եջ 26, ռուս. հրատ.)։

Յես հատուկ ուշադրություն եմ հրավիրում առաջին ցիտատի
վրա, վոր առնված ե Լենինի 1905 թվի սեպտեմբերի 1-ին հրապա-
րակված «Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի գյուղացիա-
կան շարժումը» հոդվածից։ Յես այս ընդգծում եմ ի գիտություն այն
ընկերների, վորոնք դեռևս շարունակում են պնդել, թե Լենինը, իբր
թե, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վե-
րաճելու գաղափարին, պերմանենտ հեղափոխության գաղափարին հան-
գեց իմպերիալիստական պատերազմից հետո, մոտավորապես 1916 թվին։
Այս ցիտատը կասկած չի թողնում այն մասին,- վոր այդ ընկերները
խոր մոլորության մեջ են։

*) Ընդգծումն իմն ե։ Ի. Ստ.։

IV. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ
ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Վորոնք են պրոլետարական հեղափոխության բնորոշ գծերն՝
ի տարբերություն բուրժուական հեղափոխությունից։
Պրոլետարական հեղափոխության և բուրժուական հեղափոխու-
թյան միջև յեղած զանազանությունը կարելի կլիներ ամփոփել հինգ
հիմնական կետում.
1) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար սկսվում ե՝ դեռ-
ևս բացահայտ հեղափոխությունից առաջ ֆեոդալական հասարակության
ծոցում աճած և հասունացած կապիտալիստական կենսակարգի ավելի
կամ պակաս պատրաստի ձևերի առկայության պայմաններում, այնինչ
պրոլետարական հեղափոխությունն սկսվում ե սոցիալիստական կեն-
սակարգի պատրաստի ձևերի բացակայության կամ համարյա բացա-
կայության պայմաններում։
2) Բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրն ե՝ խլել
իշխանությունը և այն համաձայնեցնել առկա բուրժուական եկոնո-
միկային, այնինչ պրոլետարական հեղափոխության հիմնական խըն-
դիրն ե՝ իշխանությունը խլել, կառուցել նոր սոցիալիստական եկոնո-
միկա։
3) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար վերջավորվում ե
իշխանության զավթումով, այնինչ պրոլետարական հեղափոխության
համար իշխանության զավթումը լոկ նրա սկիզբն ե, ընդվորում իշ-
խանությունն օգտագործվում ե վորպես լծակ՝ հին եկոնոմիկայի վե-
րակառուցման և նորի կազմակերպման համար։
4) Բուրժուական հեղափոխությունը սահմանափակվում ե իշխա-
նության գլուխ կանգնած մի շահագործող խմբակը մեկ ուրիշ շահա-
գործող խմբակով փոխարինելով և այդ պատճառով նա կարիք չի զգում
կոտրելու հին պետական մեքենան, այնինչ պրոլետարական հեղափո-
խությունն իշխանությունից հանում ե բոլոր և ամեն տեսակ շահա-
գործող խմբակներին ու իշխանության գլուխ ե կանգնեցնում բոլոր
աշխատավորների և շահագործվողների առաջնորդին՝ պրոլետարների
դասակարգը, և այդ պատճառով նա չի կարող յոլա գնալ առանց հին
պետական մեքենան կոտրելու և նորով փոխարինելու։
5) Բուրժուական հեղափոխությունը չի կարող փոքրիշատե
յերկարատև ժամանակաշրջանով բուրժուազիայի շուրջը համախմբել
աշխատավոր և շահագործվող մասսաների միլիոններ հենց այն պատ-
ճառով, վոր դրանք աշխատավորներ և շահագործվողներ են, այնինչ
պրոլետարական հեղափոխությունը կարող ե և պետք ե յերկարատև
դաշինքով նրանց կապի պրոլետարիատի հետ հենց վորպես աշխա-
տավորների և շահագործվողների, յեթե նա ուզում ե իրագործել պրո-

լետարիատի իշխանության ամրապնդման և նոր սոցիալիստական էկո-
նոմիկայի կառուցման իր հիմնական խնդիրը։

Ահա Լենինի միքանի հիմնական դրույթներն այդ առթիվ.

«Բուրժուական և սոցիալիստական հեղափոխության միջև յեղած հիմնական
դանազանություններից մեկը,—ասում է Լենինը,—այն է, վոր ֆեոդալիզմից
աճող բուրժուական հեղափոխության համար հին կարգերի ծոցում աստիճա-
նաբար ստեղծվում են նոր տնտեսական կազմակերպություններ, վորոնք աս-
տիճանաբար փոխում են ֆեոդալական հասարակության բոլոր կողմերը։ Բուր-
ժուական հեղափոխության առաջ կար միայն մի խնդիր՝ սրբել, դեն գցել, կոր-
ծանել առաջվա հասարակության բոլոր կապանքները։ Այս խնդիրն իրագործե-
լով, ամեն մի բուրժուական հեղափոխություն իրագործում է այն ամենը, ինչ
նրանից պահանջվում է՝ նա ուժեղացնում է կապիտալիզմի աճումը։ Բոլորովին
այլ դրության մեջ է սոցիալիստական հեղափոխությունը։ Վորքան ավելի հե-
տամնաց է այն յերկիրը, վորին պատմության զիգզագների շնորհիվ վիճակվել
է սկսել սոցիալիստական հեղափոխությունը, այնքան ավելի դժվար է նրա
համար հին կապիտալիստական հարաբերություններից սոցիալիստական հարա-
բերություններին անցնելը։ Այստեղ կործանման խնդիրներին ավելանում են
նոր, չլսված դժվարություն ներկայացնող խնդիրները՝ կազմակերպական խն-
դիրները» (տես՝ հ. XXII, էջ 315, ռուս. հրատ.)։

«Յեթե ռուսական հեղափոխության ժողովրդական ստեղծագործությունը—
ասում է Լենինը,—վոր անցել է 1905 թվի մեծ փորձի բովով, խորհուրդներ չէր
ստեղծել նաև դեռևս 1917 թվի փետրվարին, ապա նրանք վոչ մի դեպքում չէին
կարող իշխանություն վերցնել հոկտեմբերին, վորովհետև հաջողությունը կախ-
ված էր միլիոններին ընդգրկած շարժման արդեն պատրաստի կազմակերպական
ձևերի առկայությունից։ Այդ պատրաստի ձևը հանդիսացան խորհուրդները, և
այդ պատճառով քաղաքական ասպարեզում մեզ սպասում էին այն փայլուն
հաջողությունները, այն համատարած հաղթական յերթը, վոր մենք ունեցանք,
վորովհետև քաղաքական իշխանության նոր ձևը պատրաստ էր, և մեզ մնում էր
այն միքանի դեկրետով խորհուրդների իշխանությունն այն սաղմային վիճակից,
վորի մեջ նա գտնվում էր հեղափոխության առաջին ամիսներին, վերածել
ռուսաստանյան պետության մեջ օրենքով ճանաչված, հաստատված ձևի՝ Ռու-
սաստանի խորհրդային հանրապետության» (տես՝ նույն տեղը, էջ 315)։

«Մնում էր դեռևս,—ասում է Լենինը,—վիթխարի դժվարություն ներկա-
յացնող յերկու խնդիր, վորոնց լուծումը վոչ մի կերպ չէր կարող լինել այն
հաղթական յերթը, վորով ընթանում էր մեր հեղափոխությունը» (տես՝ նույն
տեղը, էջ 315)։

«Նախ և առաջ՝ դրանք ներքին կազմակերպության խնդիրներ էին, վորոնք
կանգնած են ամեն մի սոցիալիստական հեղափոխության առաջ։ Սոցիալիստա-
կան հեղափոխության տարբերությունը բուրժուականից հենց այն է, վոր վեր-
ջին դեպքում կան կապիտալիստական հարաբերությունների պատրաստ ձևեր,
իսկ խորհրդային իշխանությունը—պրոլետարականը—այդ պատրաստի
հարաբերությունները չի ստանում, յեթե չվերցնենք կապիտալիզմի ամենազար-
գացած ձևերը, վորոնք, փաստորեն, ընդգրկել են արդյունաբերության վոչ մեծա-
ծավալ վերնախավերը և դեռ բոլորովին քիչ են շոշափել հողագործությունը։
Հաշվառքի կազմակերպում, վերահսկողություն խոշորագույն ձեռնարկություն-
ների նկատմամբ, ամբողջ պետական տնտեսական մեխանիզմի վերածում մի
միասնական խոշոր մեքենայի, տնտեսական օրգանիզմի, վորն այնպես աշխա-

տեր, վորպեսզի հարյուրավոր միլիոն մարդիկ ղեկավարվեն մի պլանով,—ահա
այն վիթխարի կազմակերպական խնդիրը, վոր ծանրացավ մեր ուսերին։ Ըստ
աշխատանքի այժմյան պայմանների՝ նրանք վոչ մի կերպ չէին յենթադրում
լուծում «կեցցե» կանչելով, ինչպես մեզ հաջողվում էր լուծել քաղաքացիական
պատերազմի խնդիրները» (տես՝ նույն տեղը, էջ 316)։

«Վիթխարի դժվարություններից յերկրորդը... միջազգային հարցն է։ Յեթե
մենք այնպես հեշտ վերջացրինք Կերենսկու բանդաների հաշիվը, յեթե այնպես
հեշտ իշխանություն ստեղծեցինք մեզ մոտ, յեթե մենք առանց ամենափոքր աշ-
խատանքի ստացանք հողի սոցիալիզացիայի, բանվորական վերահսկողության
դեկրետը—յեթե մենք այնպես հեշտ ստացանք այս բոլորը՝ ապա միայն այն
պատճառով, վոր բարենպաստ կերպով դասավորված պայմանները կարճ մոմենտով
մեզ ծածկեցին միջազգային իմպերիալիզմից։ Միջազգային իմպերիալիզմն իր
կապիտալի ամբողջ զորությամբ, բարձր կազմակերպված ռազմական տեխ-
նիկայով, վոր հանդիսանում է միջազգային կապիտալի իսկական ուժը,
իսկական ամրությունը, վոչ մի դեպքում—վոչ մի պայմանով չէր կարող հաշտ
ապրել Խորհրդային հանրապետության կողքին՝ թե իր օբյեկտիվ դրությամբ,
թե՛ այն կապիտալիստական դասակարգի տնտեսական շահերով, վոր մարմ-
նացած էր նրա մեջ—չէր կարող առևտրական կապերի, միջազգային և ֆինան-
սական հարաբերությունների շնորհիվ։ Այստեղ կոնֆլիկտն անխուսափելի յեր։
Այստեղ ռուսական հեղափոխության մեծագույն դժվարությունը, նրա մե-
ծագույն պատմական պրոբլեմը՝ միջազգային խնդիրներ լուծելու անհրաժեշ-
տությունն էր, միջազգային հեղափոխություն առաջ բերելու անհրաժեշտու-
թյունը» (տես՝ նույն տեղը, էջ 317)։

Սրանք են պրոլետարական հեղափոխության ներքին բնույթը և
հիմնական իմաստը։

Հին, բուրժուական կարգերի այսպիսի արմատական վերակառու-
ցումը կարելի՞ յեր արդյոք անել առանց բռնի հեղափոխության, ա-
ռանց պրոլետարիատի դիկտատուրայի։

Պարզ է, վոր չէր կարելի։ Մտածել, թե այդպիսի հեղափոխու-
թյունը կարելի յե կատարել խաղաղ ճանապարհով, բուրժուազիայի
գերիշխանությանը հարմարեցրած բուրժուական դեմոկրատիայի շըր-
ջանակներում, նշանակում է՝ կամ խելքը թռցնել և կորցնել նորմալ
մարդկային հասկացողությունները, կամ կոպտաբար ու բացահայտա-
րեն հրաժարվել պրոլետարական հեղափոխությունից։

Այս դրությունը պետք է ընդգծվի էլ ավելի ուժգնորեն ու կըտ-
րական կերպով, քանի վոր մենք գործ ունենք պրոլետարական հեղա-
փոխության հետ, վորը հաղթանակել է առայժմ մեկ յերկրում, վոր
շըրջապատված է թշնամի կապիտալիստական յերկրներով և վորի բուր-
ժուազիային միջազգային կապիտալը չի կարող չպաշտպանել։

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր «ճնշված դասակարգի ազա-
տագրումն անհնար է վոչ միայն առանց բռնի հեղափոխության, այլեվ
առանց վոչնչացնելու պետական իշխանության այն ապարատը, վոր
իշխող դասակարգն է ստեղծել» (տես՝ հ. XXI, էջ 373, ռուս. հրատ.)։

««Թող առաջ մառնավոր սեփականության պահպանման պայմաններում, այ-

[illegible] կապիտալի իշխանության և ճնշման պայմաններում բնակչության մեծամասնությունն արտահայտվի հօգուտ պրոլետարիատի կուսակցության,— միայն այդ ժամանակ պրոլետարիատը կարող է և պետք է վերցնի իշխանությունը»,— այսպես են ասում մանր-բուրժուական դեմոկրատները, բուրժուազիայի այդ փաստացի ծառաները, որոնք իրենց «սոցիալիստ» են անվանում» (տե՛ս հ. XXIV, էջ 647, ռուս. հրատ.):

««Թող առաջ հեղափոխական պրոլետարիատը ցած գլորի բուրժուազիային, կոտրի կապիտալի ճնշումը, ջարդի բուրժուական պետական ապարատը,— այն ժամանակ հաղթանակ տարած պրոլետարիատը կկարողանա արագորեն իր կողմը գրավել աշխատավոր ոչ-պրոլետարական մեծամասնության համակրանքն ու աջակցությունը, բավարարելով նրանց ի հաշիվ շահագործողների»,— ասում ենք մենք» (տե՛ս նույն տեղը):

«Բնակչության մեծամասնությունն իր կողմը նվաճելու համար,— շարունակում է Լենինը,— պրոլետարիատը պետք է, նախ՝ տապալի բուրժուազիային և գրավի, իր ձեռքն առնի պետական իշխանությունը։ Երկրորդ՝ նա պետք է մտցնի խորհրդային իշխանություն, փշուր-փշուր ջարդելով հին պետական ապարատը, որով նա մեկ անգամից կխախտի բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնողականների գերիշխանությունը, հեղինակությունը, ազդեցությունը ոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների շրջանում։ Երրորդ՝ նա պետք է վերջնականապես ոչնչացնի բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնողականների ազդեցությունը ոչ-պրոլետարական աշխատավորական մասսաներում՝ նրանց տնտեսական պահանջմունքների հեղափոխական իրականացմամբ—ի հաշիվ շահագործողների» (տե՛ս նույն տեղը, էջ 641):

Սրանք են պրոլետարական հեղափոխության բնորոշ հատկանիշները:

Որո՞նք են՝ այս կապակցությամբ առած՝ պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական գծերը, եթե ընդունված է, որ պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունն է:

Ահա պրոլետարիատի դիկտատուրայի ամենաընդհանուր բնորոշումը, որ տվել է Լենինը.

«Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային կռվի վերջը չէ, այլ նրա շարունակումը նոր ձևերով: Պրոլետարիատի դիկտատուրան հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի դասակարգային կռիվն է ընդդեմ հաղթված, բայց չվոչնչացված, չանհետացած, դիմադրությունը ցույց տալ չդադարած, իր դիմադրությունն ուժեղացրած բուրժուազիայի» (տե՛ս հ. XXIV, էջ 311, ռուս. հրատ.):

Առարկելով պրոլետարիատի դիկտատուրան «համաժողովրդական», «համընտրական» իշխանության, «ոչ-դասակարգային» իշխանության հետ շփոթելու դեմ, Լենինն ասում է.

«Այն դասակարգը, որն իր ձեռքն է վերցրել քաղաքական գերիշխանությունը, վերցրել է այն, գիտակցելով, որ միանակ է վերցնում: Սա մտնում է պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողության մեջ: Այդ հասկացողությունը միայն այն ժամանակ իմաստ ունի, երբ մի դասակարգ գիտե, որ ինքը միանակ է իր ձեռքը վերցնում քաղաքական իշխանությունը և վոչ իրեն, վոչ ուրիշներին չի խաբում «համաժողովրդական, համընտրական, ամբողջ ժողովրդի կողմից սրբագործված» իշխանության վերաբերյալ խոսակցություններով» (տե՛ս հ. XXVI, էջ 286, ռուս. հրատ.):

Սակայն այդ չի նշանակում, թե մի դասակարգի իշխանությունը, պրոլետարների իշխանությունը, այն դասակարգի, որը չի բաժանում և չի կարող բաժանել այդ իշխանությունն ուրիշ դասակարգերի հետ,— իր նպատակների իրականացման համար կարոտ չի մյուս դասակարգերի աշխատավոր և շահագործվող մասսաների օգնությանը, դաշինքին: Ընդհակառակը: Այդ իշխանությունը, մի դասակարգի իշխանությունը կարող է հաստատվել և անցկացվել մինչև վերջը միայն հատուկ ձևի դաշինքով պրոլետարների դասակարգի և մանր-բուրժուական դասակարգերի աշխատավոր մասսաների, ամենից առաջ գյուղացիության աշխատավոր մասսաների, միջև:

Այդ ինչ հատուկ ձևի դաշինք է, ո՞րն է դրա էությունը: Այդ դաշինքը ուրիշ, ոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների հետ՝ ընդհանրապես առած՝ չի՞ հակասում արդյոք մի դասակարգի դիկտատուրայի գաղափարին:

Դաշինքի այդ հատուկ ձևը կայանում է նրանում, որ այդ դաշինքի ղեկավար ուժը պրոլետարիատն է: Դաշինքի այդ հատուկ ձևը կայանում է նրանում, որ պետության ղեկավարը, պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի ղեկավարը մի կուսակցություն է, պրոլետարիատի կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը, որը ղեկավարությունը չի՛ բաժանում ևվ չի՛ կարող բաժանել ուրիշ կուսակցությունների հետ:

Ինչպես տեսնում եք, հակասությունն այստեղ միայն երևութական է, թվացող:

«Պրոլետարիատի դիկտատուրան,— ասում է Լենինը,— դասակարգային դաշինքի հատուկ ձևն է *),— դաշինք աշխատավորների ավանգարդ պրոլետարիատի և աշխատավորների բազմաթիվ ոչ-պրոլետարական շերտերի (մանր բուրժուազիա, մանր տնտեսատիրություններ, գյուղացիություն, ինտելիգենցիա և այլն) կամ այդ աշխատավորների մեծամասնության միջև, դաշինք ընդդեմ կապիտալի, դաշինք, որի նպատակն է՝ կապիտալի լրիվ տապալումը, բուրժուազիայի դիմադրության և նրա կողմից ձեռնարկվող ռեստավրացիայի փորձերի լրիվ ճնշումը, դաշինք, որի նպատակն է սոցիալիզմի վերջնական ստեղծումն ու ամրապնդումը: Դա — առանձին տեսակի դաշինք է, որ առաջ է գալիս հատուկ պայմաններում, այն է՝ կատաղի քաղաքացիական պատերազմի պայմաններում, դա սոցիալիզմի ամուր կողմնակիցների դաշինքն է՝ նրա տատանվող դաշնակիցների հետ, երբեմն «չեզոքների» հետ (այն ժամանակ պայքարի համաձայնությունից այդ դաշինքը դառնում է չեզոքության համաձայնություն), դաշինք տնտեսապես, քաղաքականապես, սոցիալապես, հոգեպես անհամանման դասակարգերի միջև» (տե՛ս հ. XXIV, էջ 311, ռուս. հրատ.):

---

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

Իր հրահանգչական զեկուցումներից մեկում՝ բանավիճելով պրոլետարիատի դիկտատուրայի այսպիսի հասկացողության դեմ, ընկ. Կամենևն ասում է.

«Դիկտատուրան մի դասակարգի դաշինք չէ *) մեկ ուրիշ դասակարգի հետ» (տես՝ «Правда» № 11, 1925 թ. հունվարի 14):

Ես կարծում եմ, որ ընկ. Կամենևն այստեղ նկատի ունի, ամենից առաջ, իմ՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրի մի տեղը, որտեղ ասված է.

«Պրոլետարիատի դիկտատուրան հասարակ կառավարական վերնախավ չէ, որ «վարպետորեն» «հատընտրված» է «փորձված ստրատեգի» հոգատար ձեռքով և «խելացիորեն հենվում է» բնակչության այս կամ այն շերտերի վրա: Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային դաշինքն է պրոլետարիատի և գյուղացիության աշխատավոր մասսաների՝ կապիտալի տապալման համար, սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, պայմանով, որ այդ դաշինքի ղեկավար ուժ լինի պրոլետարիատը»:

Ես ամբողջովին պաշտպանում եմ պրոլետարիատի դիկտատուրայի այս ձևակերպումը, որովհետև կարծում եմ, որ այն ամբողջապես և լիովին համընկնում է Լենինի հենց նոր մեջ բերված ձևակերպմանը:

Ես պնդում եմ, որ ընկ. Կամենևի հայտարարությունն այն մասին, թե՝ «դիկտատուրան մի դասակարգի դաշինք չէ մեկ ուրիշ դասակարգի հետ», որ տրված է այդպիսի անվերապահ ձևով, ընդհանուր ոչինչ չունի պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիայի հետ:

Ես պնդում եմ, որ այդպես կարող են մտածել միայն այն մարդիկ, որոնք չեն հասկացել պրոլետարիատի և գյուղացիության զոդման գաղափարի, նրանց դաշինքի գաղափարի իմաստը, այդ դաշինքում պրոլետարիատի ունենալիք հեգեմոնիայի գաղափարի իմաստը:

Այդպես կարող են ասել միայն այն մարդիկ, որոնք չեն հասկացել լենինյան թեզիսն այն մասին, որ՝

«Միայն համաձայնությունը գյուղացիության հետ *) կարող է փրկել Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը, քանի դեռ վրա չի հասել հեղափոխությունն ուրիշ յերկրներում» (տես՝ հ. XXVI, եջ 238, ռուս. հրատ.):

Այդպես կարող են ասել միայն այն մարդիկ, որոնք չեն հասկացել Լենինի դրույթն այն մասին, որ՝

«Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքն է *) պահպանել պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ, որպեսզի պրոլետարիատը կարողանա իր ձեռքին պահել ղեկավար դերը և պետական իշխանությունը» (տես՝ հ. XXVI, եջ 460, ռուս. հրատ.):

---

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

Նշելով դիկտատուրայի կարևորագույն նպատակներից մեկը, շահագործողներին ճնշելու նպատակը, Լենինն ասում է.

«Դիկտատուրայի գիտական հասկացողությունը ոչ այլ ինչ է, բայց յեթե ոչնչով չսահմանափակված, ոչ մի օրենքով, բացարձակապես ոչ մի կանոնով չնեղված, անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն»... «Դիկտատուրան նշանակում է—սա մեկ անգամ ընդմիշտ ընդունեցեք ի գիտություն, պարոնայք կադետներ,—անսահմանափակ, ուժի վրա և ոչ թե օրենքի վրա հենվող իշխանություն: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ամեն մի հաղթած իշխանություն միայն դիկտատուրա կարող է լինել» (տես՝ հ. XXV, եջ 441 և 436, ռուս. հրատ.):

Բայց բռնությամբ, իհարկե, չի սպառվում պրոլետարիատի դիկտատուրան, թեպետ առանց բռնության դիկտատուրա չի լինում:

«Դիկտատուրան,—ասում է Լենինը,—նշանակում է ոչ միայն բռնություն՝ թեպետ այն անհնար է առանց բռնության, այն նշանակում է նաև աշխատանքի ավելի բարձր ձևի կազմակերպություն, քան նախորդ կազմակերպությունն էր» (տես՝ հ. XXIV, եջ 305, ռուս. հրատ.):

«Պրոլետարիատի դիկտատուրան... միայն բռնություն չէ շահագործողների նկատմամբ և նույնիսկ գլխավորապես բռնություն չէ: Այդ հեղափոխական բռնության տնտեսական հիմունքը, նրա կենսականության և հաջողության գրավականն այն է, որ պրոլետարիատը ներկայացնում է և կենսագործում աշխատանքի հասարակական կազմակերպության ավելի բարձր տիպ՝ կապիտալիզմի հետ համեմատած: Այս է էյականը: Սրա մեջ է կոմունիզմի ուժի աղբյուրը և անխուսափելի լիակատար հաղթանակի գրավականը» (տես՝ հ. XXIV, եջ 335—336, ռուս. հրատ.):

«Նրա (այսինքն դիկտատուրայի: Ի. Ստ.) գլխավոր էությունն աշխատավորների առաջավոր ջոկատի, նրա ավանգարդի, նրա միակ ղեկավար՝ պրոլետարիատի կազմակերպվածության և կարգապահության մեջ է: Պրոլետարիատի նպատակն է՝ ստեղծել սոցիալիզմ, ոչնչացնել հասարակության բաժանումը դասակարգերի, հասարակության բոլոր անդամներին դարձնել աշխատավորներ, վերացնել մարդու կողմից մարդու որևէ շահագործման յենթարկելու հնարավորությունը: Այս նպատակը մեկ անգամից իրականացնել չի լինի, դա պահանջում է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու բավական յերկարատև ժամանակաշրջան,—և այն պատճառով, որ արտադրության վերակազմակերպումը դժվար բան է, և այն պատճառով, որ կյանքի բոլոր ասպարեզներում արմատական փոփոխություններ կատարելու համար ժամանակ է հարկավոր, և այն պատճառով, որ մանր-բուրժուական և բուրժուական տնտեսության սովորության հսկայական ուժ կարող է հաղթահարվել միայն յերկարատև համառ պայքարում: Այդ պատճառով է, որ Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատուրայի մի ամբողջ ժամանակաշրջանի մասին» (տես՝ նույն տեղը, եջ 314):

Սրանք են պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշ գծերը:

Այստեղից բղխում են պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը:

1) Պրոլետարիատի դիկտատուրայի օգտագործումը շահագործողներին ճնշելու համար, յերկրի պաշտպանության համար, ուրիշ յերկրների

պրոլետարների հետ կապերն ամրացնելու համար, հեղափոխության զարգացման և հաղթանակի համար՝ բոլոր յերկրներում։

2) Պրոլետարիատի իշխանության օգտագործումը՝ աշխատավոր և շահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու համար, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործի մեջ ներգրավելու համար, այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետական ղեկավարության յենթարկելու համար։

3) Պրոլետարիատի իշխանության օգտագործումը՝ սոցիալիզմի կազմակերպման համար, դասակարգերի վոչնչացման համար, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար։

Պրոլետարական դիկտատուրան այդ բոլոր յերեք կողմերի միացումն է։ Այդ կողմերից վոչ մեկը չի կարող առաջ քաշվել վորպես պրոլետարիատի դիկտատուրայի միակ բնորոշ հատկանիշ և, ընդհակառակը, բավական է այդ հատկանիշներից թեկուզ մեկի բացակայությունը, վորպեսզի պրոլետարիատի դիկտատուրան դադարի կապիտալիստական շրջապատման պայմաններում դիկտատուրա լինելուց։ Այս պատճառով այդ յերեք կողմերից վոչ մեկը չի կարող բացարկվել՝ առանց պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունն աղավաղելու վտանգի։ Միայն այդ բոլոր յերեք կողմերը՝ միասին առած՝ տալիս են մեզ պրոլետարիատի դիկտատուրայի լրիվ և ամբողջացած հասկացողությունը։

Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր ժամանակաշրջանները, իր հատուկ ձևերը, աշխատանքի բազմազան մեթոդները։ Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յե զարկում դիկտատուրայի բռնի կողմը։ Բայց դրանից բնավ չի հետևում, վոր քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում վոչ մի շինարարական աշխատանք տեղի չի ունենում։ Առանց շինարարական աշխատանքի քաղաքացիական պատերազմ անհնարին է մղել։ Սոցիալիզմի շինարարության շրջանում, ընդհակառակը, առանձնապես աչքի յե զարկում դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական օրինականությունը և այլն։ Բայց դրանից դարձյալ բնավ չի հետևում, վոր դիկտատուրայի բռնի կողմը շինարարության ժամանակաշրջանում մեջտեղից վերացել է կամ կարող է վերանալ. Ճնշման օրգանները՝ բանակը և մյուս կազմակերպությունները՝ անհրաժեշտ են հիմա, շինարարության մոմենտին, նույնպես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Առանց այդ օրգանների առկայության անհնար է դիկտատուրայի փոքրիշատե ապահովված շինարարական աշխատանքը։ Չպետք է մոռանալ, վոր հեղափոխությունը հաղթանակել է առայժմ ընդամենը մի յերկրում։

Չպետք է մոռանալ, վոր՝ քանի կա կապիտալիստական շրջապատումը, կլինի և՛ ինտերվենցիայի վտանգը՝ այդ վտանգից բղխող բոլոր հետևանքներով։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Վերը յես խոսեցի պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա պատմական անխուսափելիության տեսակետից, նրա դասակարգային բովանդակության տեսակետից, նրա պետական բնության տեսակետից, վերջապես նրա կործանիչ և ստեղծագործական խնդիրների տեսակետից, — խնդիրներ, վորոնք իրագործվում են մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի ընթացքում, վորը կոչվում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջան։

Հիմա մենք պետք է խոսենք պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա կառուցվածքի տեսակետից, նրա «մեխանիզմի» տեսակետից, այն «տարբերիչների» (приводов), «լծակների» և «ուղղություն տվող ուժի» դերի նշանակության մասին, վորոնց միագումարը կազմում է «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմը» (Լենին) և վորոնց օգնությամբ իրականացվում է պրոլետարիատի դիկտատուրայի ամենօրյա աշխատանքը։

Այդ ինչ «տարբերիչներ» կամ «լծակներ» են պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։ Այդ ինչ «ուղղություն տվող ուժ է»։ Դրանք ինչի՞ համար են հարկավորվել։

Լծակները կամ տարբերիչները — այդ պրոլետարիատի հենց այն մասսայական կազմակերպություններն են, առանց վորոնց օգնության անհնարին է դիկտատուրայի իրականացնելը։

Ուղղություն տվող ուժը — այդ պրոլետարիատի առաջավոր ջոկատն է, այդ նրա ավանգարդն է, վորը պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական ղեկավար ուժն է։

Այդ տարբերիչները, լծակները և ուղղություն տվող ուժն անհրաժեշտ են պրոլետարիատին, վորովհետև, առանց նրանց, հաղթանակի համար մղած իր պայքարում նա կլիներ անզեն բանակի դրության մեջ՝ կազմակերպված և զինված կապիտալի հանդեպ։ Այդ կազմակերպությունները պրոլետարիատին անհրաժեշտ են այն պատճառով, վոր առանց դրանց պրոլետարիատն անխուսափելի պարտություն կկրեր իր պայքարում հանուն բուրժուազիայի տապալման, իր պայքարում հանուն իր իշխանության ամրապնդման, իր պայքարում հանուն սոցիալիզմի շինարարության։ Այդ կազմակերպությունների սիստեմատիկ օգնությունը և ավանգարդի ուղղություն տվող ուժն անհրաժեշտ են այն պատճառով, վոր առանց այդ պայմանների անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե տևական և ամուր դիկտատուրան։

Այդ ինչ կազմակերպություններ են։

Այդ, նախ՝ բանվորների արհմիություններն են, նրանց ճյուղավորումներով կենտրոնում և տեղերում՝ հանձին մի ամբողջ շարք արտադրական, կուլտուրական, դաստիարակչական և այլ կազմակերպությունների։ Նրանք միավորում են բոլոր արհեստների բանվորներին։ Այդ կազմակերպությունը կուսակցական չէ։ Արհմիությունները կարելի յե անվանել մեզ մոտ գերիշխող բանվոր դասակարգին գլխավոր ընդգրկող կազմակերպություն։ Նրանք կոմունիզմի դպրոց են։ Նրանք իրենց միջից զատում են լավագույն մարդկանց՝ ղեկավար աշխատանք կատարելու կառավարման բոլոր ճյուղերում։ Նրանք կենսագործում են կապը բանվոր դասակարգի մեջ առաջավոր և հետամնաց հանդիսացողների միջև։ Նրանք բանվորական մասսաներին միացնում են բանվոր դասակարգի ավանգարդի հետ։

Յերկրորդ; այդ՝ խորհուրդներն են, նրանց բազմաթիվ ճյուղավորումներով կենտրոնում և տեղերում՝ հանձին վարչական, տնտեսական, զինվորական, կուլտուրական և այլ պետական կազմակերպությունների, պլյուս աշխատավորների ինքնածին մասսայական միավորումների անթիվ բազմությունը, միավորումներ, վորոնք շրջապատում են այդ կազմակերպությունները և դրանց միացնում են բնակչության հետ։ Խորհուրդները քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների մասսայական կազմակերպությունն են։ Այդ կուսակցական կազմակերպություն չէ։ Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի ուղղակի արտահայտությունն են։ Խորհուրդների միջով են անցնում դիկտատուրայի ամրապնդման և սոցիալիզմի շինարարության բոլոր և ամեն տեսակ միջոցառումները։ Խորհուրդների միջոցով կենսագործվում է գյուղացիության պետական ղեկավարությունը պրոլետարիատի կողմից։ Խորհուրդներն աշխատավորների միլիոնավոր մասսաներին միացնում են պրոլետարիատի ավանգարդի հետ։

Յերրորդ, այդ՝ բոլոր տեսակների կոոպերացիան է իր բոլոր ճյուղավորումներով։ Այդ աշխատավորների մասսայական կազմակերպությունն է, վոչ կուսակցական կազմակերպություն, վոր միավորում է նրանց, ամենից առաջ, վորպես սպառողների, ինչպես նաև, ժամանակի ընթացքում, վորպես արտադրողների (գյուղատնտեսական կոոպերացիա)։ Նա հատուկ նշանակություն է ստանում պրոլետարիատի դիկտատուրայի ամրանալուց հետո, լայն շինարարության ժամանակաշրջանում։ Նա հեշտացնում է պրոլետարիատի ավանգարդի կապը գյուղացիության մասսաների հետ և հնարավորություն է ստեղծում վերջիններին ներգրավելու սոցիալիստական շինարարության հունը։

Չորրորդ, այդ՝ յերիտասարդական միությունն է։ Այդ բանվորական և գյուղացիական յերիտասարդների մասսայական կազմակերպությունն

է, վոչ-կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպու-
թյուն։ Նրա խնդիրն է՝ օգնել կուսակցությանը՝ յերիտասարդ սե-
րունդը սոցիալիզմի վոգով դաստիարակելու գործում։ Այդ կազմակեր-
պությունը յերիտասարդ ռեզերվներ է տալիս պրոլետարիատի բոլոր
մնացած մասսայական կազմակերպությունների համար՝ կառավարման
բոլոր ճյուղերում։ Յերիտասարդական միությունը հատուկ նշանակու-
թյուն ստացավ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդվելուց հետո,
պրոլետարիատի լայն կուլտուրական և դաստիարակչական աշխատան-
քի ժամանակաշրջանում։

Այդ, վերջապես՝ պրոլետարիատի կուսակցությունն է, նրա ավան-
գարդը։ Նրա ուժը կայանում է նրանում, վոր նա իր մեջն է առնում
պրոլետարիատի բոլոր լավագույն մարդկանց՝ նրա բոլոր մասսայական
կազմակերպություններից։ Նրա դերն այն է, վոր միավորի պրոլետա-
րիատի առանց բացառության բոլոր մասսայական կազմակերպությու-
ների աշխատանքը և ուղղի նրանց գործողությունները դեպի մի
նպատակ, դեպի պրոլետարիատի ազատագրման նպատակը։ Իսկ միա-
վորել և ուղղել նրանց մի նպատակի գծով՝ բացարձակապես անհրա-
ժեշտ է, վորովհետև առանց դրան անհնարին է պրոլետարիատի պայ-
քարի միասնությունը, վորովհետև առանց դրան անհնարին է պրոլե-
տարական մասսաներին ղեկավարելը՝ իշխանության համար նրանց
մղած պայքարում, սոցիալիզմի շինարարության համար նրանց մղած
պայքարում։ Բայց միավորել և ուղղություն տալ պրոլետարիատի
մասսայական կազմակերպությունների աշխատանքին ընդունակ է
միայն պրոլետարիատի ավանգարդը, նրա կուսակցությունը, միայն
կոմունիստների կուսակցությունն ընդունակ է կատարելու հիմնական
ղեկավարի այդ դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։

Ինչու։

«Նախ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը հավաքակայանն է բանվոր
դասակարգի լավագույն տարրերի, վորոնք ուղղակի կապեր ունեն պրոլե-
տարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղե-
կավարում են նրանց. յերկրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը, վորպես
բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հավաքակայան, լավագույն դպրոցն
է՝ պատրաստելու բանվոր դասակարգի լիդերներին, վորոնք ընդունակ կլինեն
ղեկավարելու իրենց դասակարգի կազմակերպության բոլոր ձևերը. յերրորդ՝
այն պատճառով, վոր կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լիդերնե-
րի լավագույն դպրոց, իր փորձով և հեղինակությամբ միակ կազմակերպու-
թյունն է, վոր ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկա-
վարությունը և, այդպիսով, բանվոր դասակարգի բոլոր և ամեն տեսակ անկու-
սակցական կազմակերպությունները վերածելու նրան դասակարգի հետ միացնող
սպասարկու օրգանների և աղբերիչ փոկերի» (տե՛ս՝ «Լենինիզմի հիմունքների
մասին»)։

Կուսակցությունը հիմնական ղեկավար ուժն է պրոլետարիատի
դիկտատուրայի սիստեմում։

«Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն է» (Լենին)։

Այսպիսով՝ արհմիությունները, վորպես պրոլետարիատի մասսայական կազմակերպություն, վորոնք կուսակցությունը կապում են դասակարգի հետ, ամենից առաջ արտադրական գծով. խորհուրդները, վորպես աշխատավորների մասսայական կազմակերպություն, վորը կուսակցությունը կապում է այդ վերջինների հետ, ամենից առաջ պետական գծով. կոոպերացիան, իբրև գլխավորապես գյուղացիության մասսայական կազմակերպություն, վորը կուսակցությունը կապում է գյուղացիական մասսաների հետ, ամենից առաջ տնտեսական գծով, գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գծով. յերիտասարդական միությունը, վորպես բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, վորը կոչված է հեշտացնելու պրոլետարիատի ավանգարդի համար նոր սերնդի սոցիալիստական դաստիարակությունը և յերիտասարդ ռեզերվների պատրաստումը. և, վերջապես, կուսակցությունը, վորպես հիմնական ուղղություն տվող ուժ պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, վոր կոչված է ղեկավարելու այդ բոլոր մասսայական կազմակերպություններին,— այս է, ընդհանուր առմամբ, դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի» պատկերը։

Առանց կուսակցության, վորպես հիմնական ղեկավար ուժի, անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե տևական ու ամուր դիկտատուրա։

Այսպիսով, խոսելով Լենինի խոսքերով, «ընդհանրապես և ամբողջությամբ առած, ստացվում է ձևականապես վոչ-կոմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, խիստ հզոր, պրոլետարական ապարատ, վորի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված է դասակարգի և մասսայի հետ ու վորի միջոցով, կուսակցության ղեկավարությամբ, կենսագործվում է դասակարգի դիկտատուրան» (տես՝ հ. XXV, եջ 193, ռուս. հրատ.)։

Այդ, իհարկե, չի նշանակում, թե կուսակցությունը կարող է կամ պետք է փոխարինի արհմիություններին, խորհուրդներին և մյուս մասսայական կազմակերպություններին։ Կուսակցությունը կենսագործում է պրոլետարիատի դիկտատուրան։ Բայց նա այդ դիկտատուրան կենսագործում է վոչ թե անմիջականորեն, այլ արհմիությունների ոգնությամբ, խորհուրդների և նրանց ճյուղավորումների միջոցով։ Առանց այդ «առբերիչների» փոքրիշատե ամուր դիկտատուրան անհնարին կլիներ։

«Չի կարելի,— ասում է Լենինը,— իրականացնել դիկտատուրան առանց միքանի «առբերիչների»՝ ավանգարդից դեպի առաջավոր դասակարգի մասսան, նրանից՝ դեպի աշխատավորների մասսան»... «Կուսակցությունն, այսպես ասած, իր մեջն է առնում պրոլետարիատի ավանգարդը, և այդ ավանգարդն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան։ Յեթե չունենանք այնպիսի հիմք, ինչպես են արհմիությունները, չենք կարող իրականացնել դիկտատուրան, չենք կարող կատարել պետական ֆունկցիաներ։ Իսկ դրանց իրականացնել հարկադրված ենք լինում դարձյալ ինչ-վոր նոր տիպի մի շարք հատուկ հիմնարկների միջոցով*), այն է՝ խորհրդային ապարատի միջոցով» *) (տե՛ս՝ հ. XXVI, եջ 65 և 64, ռուս. հրատ.)։

Կուսակցության ղեկավար դերի, բարձրագույն արտահայտությունն, որինակ, մեզ մոտ, Խորհրդային միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում հարկավոր է ընդունել այն փաստը, վոր վոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպական հարց չի վճռվում մեզ մոտ մեր խորհրդային և ուրիշ մասսայական կազմակերպությունների կողմից առանց կուսակցության ղեկավար ցուցումների։ Այս իմաստով կարելի կլիներ ասել, վոր պրոլետարիատի դիկտատուրան, ըստ էության, նրա ավանգարդի «դիկտատուրան է», նրա կուսակցության, վորպես պրոլետարիատի հիմնական ղեկավար ուժի, «դիկտատուրան»։ Ահա թե այդ առթիվ ինչ եր ասում Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում.

«Տեններն ասում է, վոր ինքը կանգնած է պրոլետարիատի դիկտատուրայի կողմը, բայց պրոլետարիատի դիկտատուրան պատկերացնում է վոչ բոլորովին այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում մեզ։ Նա ասում է, վոր մենք պրոլետարիատի դիկտատուրա ասելով ըստ էության*) հասկանում ենք նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան։ Յեվ իսկապես, կապիտալիզմի եպոխայում, յերբ բանվորական մասսաները յենթարկվում են անընդհատ շահագործման և չեն կարող զարգացնել իրենց մարդկային ընդունակությունները, բանվորական քաղաքական կուսակցությունների համար ամենաբնորոշը հենց այն է, վոր նրանք կարող են ընդգրկել իրենց դասակարգի միայն փոքրամասնությունը։ Քաղաքական կուսակցությունը կարող է միավորել դասակարգի միայն փոքրամասնությունը, այնպես, ինչպես իսկապես գիտակից բանվորներն ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմում են բոլոր բանվորների միայն փոքրամասնությունը։ Այդ պատճառով մենք ստիպված ենք ընդունել, վոր միայն այդ գիտակից փոքրամասնությունը կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել։ Յեվ յեթե ընկ. Տեններն ասում է, վոր ինքը կուսակցության թշնամի յե, բայց միևնույն ժամանակ կողմնակից է, վոր ամենից լավ կազմակերպված և առավել հեղափոխական բանվորների փոքրամասնությունը ճանապարհ ցույց տա ամբողջ պրոլետարիատին, ապա յես ասում եմ, վոր մեր միջև իրականում տարբերություն չկա» (տես՝ հ. XXV, եջ 347, ռուս. հրատ.)։

Սակայն արդյոք այս նշանակում է, վոր պրոլետարական դիկտատուրայի և կուսակցության ղեկավար դերի (կուսակցության «դիկտատուրայի») միջև կարելի յե հավասարության նշան դնել, վոր առաջինը կարելի յե նույնացնել յերկրորդի հետ, վոր առաջինը կարելի յե փոխարինել յերկրորդով։ Իհարկե, չի նշանակում։ Իհարկե, չի կարելի։ Ա՛յ, որինակ, ընկ. Սորինն ասում է, թե «պրոլետարիատի դիկտատուրան

*) Ընդգծումն իմն է. Ի. Ստ.։

մեր կուսակցության դիկտատուրան է» *(տե՛ս «Учение Ленина о партии» — «Լենինի ուսմունքը կուսակցության մասին», եջ 95, ռուս. հրատ.):* Այս դրությունը, ինչպես տեսնում եք, «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրային: Կարելի՞ յե արդյոք ճիշտ համարել այդ նույնացումը, լենինիզմի հողի վրա մնալով: Վո՛չ, չի կարելի: Յեվ ահա թե ինչու:

Առաջին: Կոմինտերնի II կոնգրեսում Լենինի արտասանած ճառից վերը բերված ցիտատում Լենինը բնավ չի նույնացնում կուսակցության ղեկավար դերը պրոլետարիատի դիկտատուրայի հետ: Նա խոսում է միայն այն մասին, որ «միայն գիտակից փոքրամասնությունը (այսինքն կուսակցությունը: Ի. Ստ.) կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել», որ **հենց այդ իմաստով** «պրոլետարիատի դիկտատուրա ասելով մենք հասկանում ենք, **ըստ էության** *) նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան»: Ասել՝ «ըստ էության» դեռ չի նշանակում ասել՝ «ամբողջապես»: Մենք հաճախ ենք ասում, թե ազգային հարցը, ըստ էության, գյուղացիական հարցն է: Յեվ այդ միանգամայն ճիշտ է: Բայց այդ դեռ չի նշանակում, որ ազգային հարցն սպառվում է գյուղացիական հարցով, որ գյուղացիական հարցը հավասար է ազգային հարցին իր ծավալով, որ գյուղացիական հարցը համանման է ազգային հարցին: Հարկավոր չե ապացուցել, որ ազգային հարցն իր ծավալով գյուղացիական հարցից ավելի լայն է և հարուստ: Նույնը պետք է ասել, դրա հետ անալոգիա անցկացնելով, կուսակցության ղեկավար դերի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Յեթե կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրա յե անցկացնում, և այդ իմաստով պրոլետարիատի դիկտատուրան, **ըստ էության**, նրա կուսակցության «դիկտատուրան» է, ապա այդ դեռ չի նշանակում, թե «կուսակցության դիկտատուրան» (ղեկավար դերը) **համանման է** պրոլետարիատի դիկտատուրային, որ առաջինն իր ծավալով **հավասար է** յերկրորդին: Հարկավոր չե ապացուցել, որ պրոլետարիատի դիկտատուրան ծավալով ավելի լայն և հարուստ է կուսակցության ղեկավար դերից: Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրա յե անցկացնում, բայց նա անց է կացնում **պրոլետարիատի** դիկտատուրա և վոչ թե վորևե այլ դիկտատուրա: Ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրային, նա պրոլետարիատի դիկտատուրան փոխարինում է կուսակցության «դիկտատուրայով»:

Երկրորդ: Պրոլետարիատի մասսայական կազմակերպություններից վո՛չ մի կարևոր վճիռը չի անցնում առանց կուսակցության ղեկավար ցուցումների: Այդ միանգամայն ճիշտ է: Բայց արդյո՞ք այդ նշա-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.

նակում է, որ պրոլետարիատի դիկտատուրան **սպառվում է** կուսակ-
ցության ղեկավար ցուցումներով: Արդյո՞ք այդ նշանակում է, որ
կուսակցության ղեկավար ցուցումները, այդ պատճառով, կարելի յե
նույնացնել պրոլետարիատի դիկտատուրային: Իհարկե, չի նշանակում:
Պրոլետարիատի դիկտատուրան բաղկացած է կուսակցության ղեկավար
ցուցումներից, պլյուս այդ ցուցումների կիրառումը պրոլետարիատի
մասսայական կազմակերպությունների կողմից, պլյուս նրանց մարմ-
նավորումը կյանքում՝ բնակչության կողմից: Այստեղ, ինչպես տես-
նում եք, մենք գործ ունենք մի ամբողջ շարք անցումների և միջան-
կյալ աստիճանների հետ, վորոնք կազմում են պրոլետարիատի դիկ-
տատուրայի վոչ անկարևոր մոմենտը: Կուսակցության ղեկավար ցու-
ցումների և դրանք կյանքում մարմնավորելու միջև ընկած են, հետևա-
բար, ղեկավարողների կամքն ու գործողությունները, դասակարգի
կամքն ու գործողությունները, նրա պատրաստակամությունը (կամ
չցանկանալը) պաշտպանել այդպիսի ցուցումները, նրա շնորքը (կամ
անշնորքությունը) անցկացնելու այդ ցուցումները, նրա շնորքը (կամ
անշնորքությունը) անցկացնելու դրանք հատկապես այնպես, ինչպես
իրադրությունն է պահանջում: Հազիվ թե հարկ կա ապացուցելու,
վոր ղեկավարությունն իր վրա վերցրած կուսակցությունը չի կարող
հաշվի չառնել ղեկավարվողների կամքը, կացությունը, գիտակցության
մակարդակը, չի կարող հաշվից դուրս գցել իր դասակարգի կամքը,
կացությունը և գիտակցության մակարդակը: Այս պատճառով, ով
կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկ-
տատուրային, նա դասակարգի կամքն ու գործողությունները փոխա-
րինում է կուսակցության ցուցումներով:

Երրորդ: «Պրոլետարիատի դիկտատուրան, — ասում է Լենինը, —
հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլե-
տարիատի դասակարգային կռիվն է» (տե՛ս հ. XXIV, եջ 311, ռուս.
հրատ.): Ինչո՞ւմ կարող է արտահայտվել այդ **դասակարգային** կռիվը:
Նա կարող է արտահայտվել պրոլետարիատի մի շարք զինված յելույթ-
ներում ընդդեմ տապալված բուրժուազիայի արտելույթների (вылазки)
կամ ընդդեմ օտարերկրյա բուրժուազիայի ինտերվենցիայի: Նա կա-
րող է արտահայտվել քաղաքացիական պատերազմում, յեթե պրոլետա-
րիատի իշխանությունը դեռ ամրացած չե: Նա կարող է արտահայտվել
պրոլետարիատի լայն կազմակերպական և շինարարական աշխատանքում,
գործին լայն մասսաներին մասնակցության կանչելով, այն բանից հետո,
յերբ իշխանությունն արդեն ամրացած է: Բոլոր այս դեպքերում գոր-
ծող անձ հանդիսանում է պրոլետարիատը վորպես **դասակարգ**: Չի պա-
տահել, որ կուսակցությունը, միմիայն կուսակցությունը կազմակերպի
բոլոր այդ յելույթները բացառապես իր սեփական ուժերով, առանց դա-
սակարգի աջակցության: Սովորաբար նա միայն ղեկավարում է այդ յե-

լույթները և ղեկավարում է դրանց այն չափով, ինչ չափով իր կողմն ունի դասակարգի աջակցությունը։ Որովհետև կուսակցությունը չի կարող դասակարգի տեղը բռնել, չի կարող փոխարինել նրան։ Որովհետև կուսակցությունը, չնայած իր ամբողջ կարևոր, ղեկավար դերին, այնուամենայնիվ մնում է վորպես դասակարգի մասը։ Այդ պատճառով ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրային, նա դասակարգը փոխարինում է կուսակցությունով։

Չորրորդ։ Կուսակցությունն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան։ «Կուսակցությունը, դա — պրոլետարիատի անմիջականորեն կառավարող ավանգարդն է, դա — ղեկավար է» (Լենին)։ Այս իմաստով կուսակցությունը վերցնում է իշխանությունը, կուսակցությունը կառավարում է յերկիրը։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան՝ պետական իշխանությունը զանց առնելով, առանց պետական իշխանության, թե կուսակցությունը կառավարում է յերկիրը՝ խորհուրդներին զանց առնելով, վոչ խորհուրդների միջոցով։ Այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել խորհուրդների հետ, պետական իշխանության հետ։ Կուսակցությունն իշխանության կորիզն է։ Բայց նա պետական իշխանություն չէ և չի կարող նույնացվել պետական իշխանության հետ։ «Վորպես կառավարող կուսակցություն,— ասում է Լենինը,— մենք չէինք կարող կուսակցական «վերնախավերին» չձուլել խորհրդային «վերնախավերը»,—նրանք մեզ մոտ ձուլված են և այդպես կլինեն» (տես՝ հ. XXVI, եջ 208, ռուս. հրատ.)։ Այս միանգամայն ճիշտ է։ Բայց սրանով Լենինը բնավ չի ուզում ասել, թե մեր խորհրդային հիմնարկները, ամբողջությամբ առած, որին.՝ մեր բանակը, մեր տրանսպորտը, մեր տնտեսական հիմնարկները և այլն՝ մեր կուսակցության հիմնարկներն են, թե կուսակցությունը կարող է փոխարինել խորհուրդներին և նրանց ճյուղավորումներին, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել պետական իշխանությանը։ Լենինը քանիցս ասել է, վոր «խորհուրդների սիստեմը — պրոլետարիատի դիկտատուրա յե», վոր «խորհրդային իշխանությունը — պրոլետարիատի դիկտատուրա յե» (տես՝ հ. XXIV, եջ 14 և 15, ռուս. հրատ.), բայց նա յերբեք չի ասել, թե կուսակցությունը պետական իշխանություն է, թե խորհուրդները և կուսակցությունը միևնույնն են։ Կուսակցությունը, վոր ունի միքանի հարյուր հազար անդամ, ղեկավարում է միքանի միլիոն կուսակցական և անկուսակցական մարդ ընդգրկող խորհուրդներին և նրանց ճյուղավորումներին կենտրոնում և տեղերում, բայց նա ինքը չի կարող և չպետք է փոխարինի նրանց։ Ահա թե ինչու յե Լենինն ասում, վոր «դիկտատուրան իրականացնում է խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատը, վորին ղեկավարում է բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը», վոր կուսակցության ամբողջ աշխատանքն անցնում է խորհուրդների միջով*), վորոնք միավորում են աշխատավոր մասսաներին՝ առանց պրոֆեսիաների խտրության» (տես՝ հ. XXV, եջ 193—194, ռուս. հրատ.), վոր դիկտատուրան «ստիպված ենք լինում իրականացնել... խորհրդային ապարատի միջոցով*)» (տես՝ հ. XXVI, եջ 64, ռուս. հրատ.)։ Այս պատճառով նա, ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խորհուրդները, պետական իշխանությունը փոխարինում է կուսակցությամբ։

Հինգերորդ։ Պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունը պետական հասկացողություն է։ Պրոլետարիատի դիկտատուրան պարտավորապես բովանդակում է բռնության հասկացողությունը։ Առանց բռնության դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան հասկանանք այդ բառի ճշտորոշ իմաստով։ Լենինը բնորոշում է պրոլետարիատի դիկտատուրան վորպես «անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն» (տես՝ հ. XIX, եջ 315, ռուս. հրատ.)։ Այդ պատճառով խոսել կուսակցության դիկտատուրայի մասին՝ պրոլետարների դասակարգի նկատմամբ և այդ դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նշանակում է խոսել այն մասին, վոր կուսակցությունն իր դասակարգի նկատմամբ պետք է լինի վոչ միայն ղեկավար, վոչ միայն առաջնորդ և ուսուցիչ, այլև նրա նկատմամբ բռնություն կիրառող իր տեսակի պետական իշխանություն։ Այդ պատճառով ով «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա լռելյայն յելնում է այն բանից, վոր կուսակցության հեղինակությունը կարելի յե կառուցել բռնության վրա,— մի բան, վորն աբսուրդ է և միանգամայն անհամատեղելի լենինիզմի հետ։ Կուսակցության հեղինակությունը պահպանվում է բանվոր դասակարգի վստահությամբ։ Իսկ բանվոր դասակարգի վստահությունը ձեռք է բերվում վոչ բռնությամբ,— բռնությունը միայն սպանում է նրան,— այլ կուսակցության ճիշտ թեորիայով, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության նվիրվածությամբ բանվոր դասակարգին, նրա կապով բանվոր դասակարգի մասսաների հետ, նրա պատրաստակամությամբ, նրա շնորքով՝ համոզելու մասսաներին, վոր իր լոզունգները ճիշտ են։

Այս բոլորից ինչ է հետևում։

Այս ամենից հետևում է, վոր՝

1) կուսակցության դիկտատուրա խոսքը Լենինը գործ էր ածում վոչ թե այդ բառի ճշգրիտ իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ փոխաբերական իմաստով, ղեկավարության իմաստով.

2) ով կուսակցության ղեկավարությունը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա աղավաղում է Լենինին, սխալ

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

կերպով վերագրելով կուսակցությանը բռնության ֆունկցիաներ ամբողջ բանվոր դասակարգի վերաբերմամբ.

3) ով վերագրում է կուսակցությանը նրան անհատուկ բռնության ֆունկցիաներ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խախտում է ավանգարդի և դասակարգի, կուսակցության և պրոլետարիատի միջև ճիշտ փոխհարաբերությունների տարրական պահանջները։

Այսպիսով մենք ընդհուպ մոտեցանք կուսակցության և դասակարգի, կուսակցության և բանվոր դասակարգում յեղած անկուսակցականների փոխհարաբերությունների հարցին։

Լենինը այդ փոխհարաբերությունը բնորոշում է վորպես «փոխվստահություն բանվոր դասակարգի ավանգարդի և բանվորական մասսայի միջև» (տես՝ Հ. XXVI, էջ 235, ռուս. հրատ.)։

Այդ ինչ է նշանակում։

Նախ՝ այդ նշանակում է, վոր կուսակցությունը պետք է նրբազգաց կերպով ունկնդրի մասսաների ձայնին, վոր նա պետք է ուշադիր վերաբերվի մասսաների հեղափոխական բնազդին, վոր նա պետք է ուսումնասիրի մասսաների պայքարի պրակտիկան, դրանով ստուգելով իր քաղաքականության ճշտությունը, վոր նա պետք է, հետևաբար, վոչ միայն սովորեցնի, այլև սովորի մասսաներից։

Յերկրորդ՝ այդ նշանակում է, վոր կուսակցությունը պետք է որը-որին նվաճի պրոլետարական մասսաների վստահությունը, վոր նա պետք է իր քաղաքականությամբ և իր աշխատանքով կոփի մասսաների աջակցությունն իրեն, վոր նա պետք է վոչ թե հրամայի, այլ նախ և առաջ համոզի՝ մասսաների համար հեշտացնելով սեփական փորձով կուսակցության քաղաքականության ճշտությունը ճանաչելը, վոր նա պետք է, հետևաբար, լինի իր դասակարգի ղեկավարը, առաջնորդը, ուսուցիչը։

Այս պայմանների խախտումը նշանակում է խախտումն ճիշտ հարաբերությունների ավանգարդի և դասակարգի միջև, «փոխվստահության» խախտում, և՛ դասակարգային, և՛ կուսակցական կարգապահության խորտակում։

«Հավանորեն,—ասում է Լենինը,—հիմա արդեն համարյա ամեն վոք տեսնում է, վոր բոլշևիկներն իշխանության գլուխ մնալ չեյին կարող վոչ թե 2½ տարի, այլև 2½ ամիս, յեթե չլիներ մեր կուսակցության մեջ հաստատված խստագույն, իսկապես յերկաթե կարգապահությունը, յեթե չլիներ բանվոր դասակարգի վողջ մասսայի ամենալրիվ ու անվերապահ աջակցությունը նրան *), այսինքն այն ամենը, վոր կա նրա մեջ խորհող, ազնիվ, անձնվեր, ազդեցիկ՝ ընդունակ իր հետևից տանելու կամ հրապուրելու հետամնաց խավերին» (տես՝ Հ. XXV, էջ 173, ռուս. հրատ.)։

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է այնուհետև Լենինը,— համառ պայքար է՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար ընդդեմ հին հասարակու-

*) Ընդգծումն իմն է։ Ի.Ստ.։

թյան ուժերի և տրադիցիաների։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների սովորության ուժը—ամենասարսափելի ուժն է։ Առանց պայքարում կոփված, յերկաթե կուսակցության, առանց այնպիսի կուսակցության, վորը վայելելիս լինի այն ամենի վստահությունը, ինչն ազնիվ է տվյալ դասակարգում*), առանց այնպիսի կուսակցության, վորը կարող լինի հետևել մասսայի տրամադրությանը և ազդել նրա վրա,—անհնարին է հաջողությամբ վարել այդպիսի պայքարը» (տես՝ Հ. XXV, էջ 191, ռուս. հրատ.)։

Բայց կուսակցությունն ինչպես է ձեռք բերում դասակարգի այդ վստահությունն ու աջակցությունը։ Ի՞նչպես է առաջ գալիս պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթե կարգապահությունը, ինչ հողի վրա յե նա աճում։

Ահա թե ինչ է ասում դրա մասին Լենինը.

«Ինչո՞վ է պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կարգապահությունը, ինչո՞վ է նա ստուգվում, ինչո՞վ է ամրապնդվում։ Նախ և առաջ՝ պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ և նրա նվիրվածությամբ հեղափոխությանը, նրա տոկունությամբ, անձնազոհությամբ, հերոսականությամբ։ Յերկրորդ՝ նրա շնորհքով՝ կապվելու, մոտիկանալու, վորոշ չափով, յեթե կուզեք, ձուլվելու աշխատավորների ամենալայն մասսայի*), առաջին հերթին պրոլետարականի՝ հետ, սակայն նաև վոչ-պրոլետարական աշխատավոր մասսայի հետ։ Յերրորդ՝ այդ ավանգարդի կողմից իրականացվող քաղաքական ղեկավարության ճշտությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտիկայի ճշտությամբ, պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն այդ ճշտության մեջ։ Առանց այս պայմանների կարգապահությունը հեղափոխական կուսակցության մեջ, վորն իսկապես ընդունակ է լինելու առաջավոր դասակարգի կուսակցություն,— այն դասակարգի, վորը պետք է տապալի բուրժուազիային և վերափոխի ամբողջ հասարակությունը,—անիրագործելի յե։ Առանց այս պայմանների, կարգապահություն ստեղծելու փորձերն անխուսափելիորեն դառնում են դատարկ բան, ֆրազ, ծամածռություն։ Իսկ այդ պայմաններն էլ, մյուս կողմից, չեն կարող մեկ անգամից ծագել։ Նրանք մշակվում են միայն յերկարատև աշխատանքով, ծանր փորձով։ Նրանց մշակումը հեշտանում է ճիշտ հեղափոխական թեորիայով, վորը, իր հերթին, դոգմա չի, այլ վերջնականապես ձևավորվում է իսկապես մասսայական և իսկապես հեղափոխական շարժման պրակտիկայի հետ սերտորեն կապակցվելով միայն» (տես՝ Հ. XXV, էջ 174, ռուս. հրատ.)։

Յեվ ապա.

«Կապիտալիզմին հաղթելու հաջողության համար պահանջվում է ճիշտ հարաբերություն ղեկավար, կոմունիստական կուսակցության, հեղափոխական դասակարգ՝ պրոլետարիատի և մասսայի, այսինքն աշխատավորների ու շահագործվողների վողջ միագումարի միջև։ Միայն կոմունիստական կուսակցությունը, յեթե նա իսկապես հեղափոխական դասակարգի ավանգարդն է, յեթե նա իր մեջ է առել այդ դասակարգի լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա բաղկացած է միանգամայն գիտակից ու նվիրված կոմունիստներից, վորոնք լուսավորված են և կոփված համառ հեղափոխական պայքարի փորձով, յեթե այդ կուսակցությունը կարողացել է իրեն անխզելիորեն կապել իր դասակարգի ամ-

* Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

կերպով վերագրելով կուսակցությանը բռնության ֆունկցիաներ ամբողջ բանվոր դասակարգի վերաբերմամբ.

3) ով վերագրում է կուսակցությանը նրան անհատուկ բռնության ֆունկցիաներ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խախտում է ավանգարդի և դասակարգի, կուսակցության և պրոլետարիատի միջև ճիշտ փոխհարաբերությունների տարրական պահանջները։

Այսպիսով մենք ընդհուպ մոտեցանք կուսակցության և դասակարգի, կուսակցության և բանվոր դասակարգում չեղած անկուսակցականների փոխհարաբերությունների հարցին։

Լենինը այդ փոխհարաբերությունը բնորոշում է վորպես «փոխվստահություն բանվոր դասակարգի ավանգարդի և բանվորական մասսայի միջև» (տես՝ հ. XXVI, եջ 235, ռուս. հրատ.)։

Այդ ինչ է նշանակում։

Նախ՝ այդ նշանակում է, վոր կուսակցությունը պետք է նրբազգաց կերպով ունկնդրի մասսաների ձայնին, վոր նա պետք է ուշադիր վերաբերվի մասսաների հեղափոխական բնազդին, վոր նա պետք է ուսումնասիրի մասսաների պայքարի պրակտիկան, դրանով ստուգելով իր քաղաքականության ճշտությունը, վոր նա պետք է, հետևաբար, վոչ միայն սովորեցնի, այլև սովորի մասսաներից։

Յերկրորդ՝ այդ նշանակում է, վոր կուսակցությունը պետք է որը-որին նվաճի պրոլետարական մասսաների վստահությունը, վոր նա պետք է իր քաղաքականությամբ և իր աշխատանքով կռփի մասսաների աջակցությունն իրեն, վոր նա պետք է վոչ թե հրամայի, այլ նախ և առաջ համոզի՝ մասսաների համար հեշտացնելով սեփական փորձով կուսակցության քաղաքականության ճշտությունը ճանաչելը, վոր նա պետք է, հետևաբար, լինի իր դասակարգի ղեկավարը, առաջնորդը, ուսուցիչը։

Այս պայմանների խախտումը նշանակում է խախտումն ճիշտ հարաբերությունների ավանգարդի և դասակարգի միջև, «փոխվստահության» խախտում, և՛ դասակարգային, և՛ կուսակցական կարգապահության խորտակում։

«Հավանորեն,—տեսում է Լենինը,—հիմա արդեն համարյա ամեն վոք տեսնում է, վոր բոլշևիկներն իշխանության գլուխ ՝ մնալ չեյին կարող վոչ թե $2^1/_2$ տարի, այլև $2^1/_2$ ամիս, յեթե չլիներ մեր կուսակցության մեջ հաստատված խստագույն, իսկապես յերկաթե կարգապահությունը, յեթե չլիներ բանվոր դասակարգի վողջ մասսայի ամենալրիվ ու անվերապահ աջակցությունը նրան *), այսինքն այն ամենը, վոր կա նրա մեջ խորհող, ազնիվ, անձնվեր, ազդեցիկ՝ ընդունակ իր հետևից տանելու կամ հրապուրելու հետամնաց խավերին» (տես՝ հ. XXV, եջ 173, ռուս. հրատ.)։

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է այնուհետև Լենինը,— համառ պայքար է՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար ընդդեմ հին հասարակու-

*) Ընդգծումն իմն է։ Ի.Ստ.:

թյան ուժերի և տրադիցիաների։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների սովորության ուժը—ամենասարսափելի ուժն է։ Առանց պայքարում կոփված, յերկաթե կուսակցության, առանց այնպիսի կուսակցության, վորը վայելում է տվյալ դասակարգում*), լելիս լինի այն ամենի վստահությունը, ինչն ազնիվ է տվյալ դասակարգում*), առանց այնպիսի կուսակցության, վորը կարող լինի հետևել մասսայի տրամադրությանը և ազդել նրա վրա,—անհնարին է հաջողությամբ վարել այդպիսի պայքարը» (տես՝ հ. XXV, եջ 191, ռուս. հրատ.)։

Բայց կուսակցությունն ինչպես է ձեռք բերում դասակարգի այդ վստահությունն ու աջակցությունը։ Ի՞նչպես է առաջ գալիս պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթե կարգապահությունը, ինչ հողի վրա յե նա աճում։

Ահա թե ինչ է ասում դրա մասին Լենինը.

«Ինչո՞վ է պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կարգապահությունը, ինչո՞վ է նա ստուգվում, ինչո՞վ է ամրապնդվում։ Նախ և առաջ՝ պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ և նրա նվիրվածությամբ հեղափոխությանը, նրա տոկունությամբ, անձնազոհությամբ, հերոսականությամբ։ Յերկրորդ՝ նրա շնորհքով՝ կապվելու, մոտիկանալու, վորոշ չափով, յեթե կուզեք, ձուլվելու աշխատավորների ամենալայն մասսայի *), առաջին հերթին պրոլետարականի՝ հետ, սակայն նաև վոչ-պրոլետարական աշխատավոր մասսայի հետ։ Յերրորդ՝ այդ ավանգարդի կողմից իրականացվող քաղաքական ղեկավարության ճշտությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտիկայի ճշտությամբ, պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն այդ ճշտության մեջ։ Առանց այս պայմանների կարգապահությունը հեղափոխական կուսակցության մեջ, վորն իսկապես ընդունակ է լինելու առաջավոր դասակարգի կուսակցություն,— այն դասակարգի, վորը պետք է տապալի բուրժուազիային և վերափոխի ամբողջ հասարակությունը,—անիրականալի են։ Առանց այս պայմանների, կարգապահություն ստեղծելու փորձերն անխուսափելիորեն դառնում են դատարկ բան, ֆրազ, ծամածռություն։ Իսկ այդ պայմաններն էլ, մյուս կողմից, չեն կարող մեկ անգամից ծագել։ Նրանք մշակվում են միայն յերկարատև աշխատանքով, ծանր փորձով։ Նրանց մշակումը հեշտանում է ճիշտ հեղափոխական թեորիայով, վորը, իր հերթին, դոգմա չէ, այլ վերջնականապես ձևավորվում է իսկապես մասսայական և իսկապես հեղափոխական շարժման պրակտիկայի հետ սերտորեն կապակցվելով միայն» (տես՝ հ. XXV, եջ 174, ռուս. հրատ.)։

Յեվ ապա.

«Կապիտալիզմին հաղթելու հաջողության համար պահանջվում է ճիշտ հարաբերություն ղեկավար, կոմունիստական կուսակցության, հեղափոխական դասակարգ՝ պրոլետարիատի և մասսայի, այսինքն աշխատավորների ու շահագործվողների վողջ միագումարի միջև։ Միայն կոմունիստական կուսակցությունը, յեթե նա իսկապես հեղափոխական դասակարգի ավանգարդն է, յեթե նա իր մեջ է առել այդ դասակարգի լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա բաղկացած է միանգամայն գիտակից ու նվիրված կոմունիստներից, վորոնք լուսավորված են և կոփված համառ հեղափոխական պայքարի փորձով, յեթե այդ կուսակցությունը կարողացել է իրեն անխզելիորեն կապել իր դասակարգի ամ-

* Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.:

բողջ կյանքի հետ, իսկ այդ դասակարգի միջոցով շահագործվողների վողջ մասսայի հետ, և այդ դասակարգին ու այդ մասսային լիակատար վստահությունը ներշնչել *),—միայն այդպիսի կուսակցությունն ընդունակ է ղեկավարել պրոլետարիատին ամենաանողոք, վճռական, վերջին պայքարում ընդդեմ կապիտալիզմի բոլոր ուժերի։ Մյուս կողմից, միայն այդպիսի կուսակցության ղեկավարությամբ պրոլետարիատն ընդունակ է ծավալել իր հեղափոխական հարձակման վողջ զորությունը, վոչնչի վերածելով կապիտալիզմի փչացրած բանվորական արիստոկրատիայի վոչ-մեծաքանակ փոքրամասնության, հին արեդ-յունիոնիստական և կոոպերատիվ առաջնորդների և այլն անխուսափելի ապատիան ու մասամբ դիմադրությունը,—ընդունակ է ծավալել իր ամբողջ ուժը, վորն անչափելիորեն ավելի յե, քան նրա քանակը բնակչության մեջ՝ կապիտալիստական հասարակության հենց տնտեսական կառուցվածքի շնորհիվ» (տե՛ս հ. XXV, եջ 315, ռուս. հրատ.)։

Այս ցիտատներից հետևում է, վոր՝

1) կուսակցության հեղինակությունը և յերկաթե կարգապահությունը բանվոր դասակարգի մեջ, վորն անհրաժեշտ է պրոլետարիատի դիկտատուրայի համար, կառուցվում են վոչ թե ահի կամ կուսակցության «անսահմանափակ» իրավունքների վրա, այլ բանվոր դասակարգի կողմից կուսակցության նկատմամբ տածած վստահության վրա, բանվոր դասակարգի կողմից կուսակցությանը ցույց տրվող աջակցության վրա.

2) բանվոր դասակարգի վստահությունը դեպի կուսակցությունը ձեռք է բերվում վոչ մեկ անգամից և վոչ բանվոր դասակարգի նկատմամբ բռնություն գործ դնելով, այլ կուսակցության յերկարատև աշխատանքով մասսաների մեջ, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության շնորքով՝ համոզելու մասսաներին իր քաղաքականության ճշտությունը—մասսաների սեփական փորձով, կուսակցության շնորքով՝ ապահովելու իր համար բանվոր դասակարգի աջակցությունը, տանելու իր հետևից բանվոր դասակարգի մասսաներին.

3) առանց կուսակցության ճիշտ քաղաքականության, ամրապնդված մասսաների պայքարի փորձով, և առանց բանվոր դասակարգի վստահության չի լինում և չի կարող լինել կուսակցության իսկական ղեկավարություն.

4) կուսակցությունը և նրա ղեկավարությունը՝ յեթե կուսակցությունը վայելում է դասակարգի վստահությունը, և յեթե այդ ղեկավարությունն իսկական ղեկավարություն է՝ չեն կարող հակադրվել պրոլետարիատի դիկտատուրային, քանի վոր առանց բանվոր դասակարգի վստահությունը վայելող կուսակցության ղեկավարության (կուսակցության «դիկտատուրայի»), անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե ամուր դիկտատուրա։

Առանց այս պայմանների կուսակցության հեղինակությունը և յերկաթե կարգապահությունը կամ դատարկ ֆրազ է, կամ սնապարծություն և ավանտյուրա։

*) Ընդգծումը իմն եւ Ի. Ստ.։

Պրոլետարիատի դիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցու-
թյան ղեկավարությանը («դիկտատուրային»)։ Չի կարելի, վորովհետև
կուսակցության ղեկավարությունը գլխավոր հանգամանքն է պրոլե-
տարիատի դիկտատուրայում, յեթե նկատի ունենանք փոքրիշատե
ամուր և լրիվ դիկտատուրան, և վոչ թե այնպիսին, վորպիսին եր,
որին., Պարիզի կոմունան, վորը լրիվ և ամուր դիկտատուրա չեր։ Չի
կարելի, վորովհետև պրոլետարիատի դիկտատուրան և կուսակցության
ղեկավարությունը գտնվում են, այսպես ասած՝ աշխատանքի միևնույն
գծի վրա, գործում են միևնույն ուղղությամբ։

«Հենց միայն հարցի այսպիսի դրումը,—ասում է Լենինը, — «կուսակցու-
թյան դիկտատուրա, թե՞ դասակարգի դիկտատուրա, առաջնորդների դիկտա-
տուրա (կուսակցությունը), թե՞ մասսաների դիկտատուրա (կուսակցությունն»)
վկայում է մտքի ամենաանհավատալի և անելանելի շփոթության... Բոլորին
հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են դասակարգերի... վոր դասակարգե-
րին սովորաբար և մեծ մասամբ ղեկավարում են՝ գոնե ժամանակակից քաղա-
քակիրթ յերկրներում՝ քաղաքական կուսակցությունները, վոր քաղաքական
կուսակցություններին, վորպես ընդհանուր կանոն, ղեկավարում են առաջնորդ
կոչվող առավել հեղինակավոր, ազդեցիկ, փորձված, ամենապատասխանատու
պաշտոնների ընտրվող անձերի փոքրիշատե կայուն խմբակները... Հասնել...
ընդհանրապես մասսաների դիկտատուրան առաջնորդների դիկտատուրային հա-
կադրելուն՝ ծիծաղելի անհեթեթություն է և հիմարություն» (տե՛ս հ. XXV,
եջ 188 և 189, ռուս. հրատ.)։

Այդ միանգամայն ճիշտ է։ Բայց այդ ճիշտ դրությունը մեկնում
է այն նախադրյալից, վոր առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ
ավանգարդի և բանվորական մասսաների միջև, կուսակցության և դա-
սակարգի միջև։ Նա մեկնում է այն յենթադրությունից, վոր փոխհա-
րաբերություններն ավանգարդի և դասակարգի միջև մնում են, այս-
պես ասած՝ նորմալ, մնում են «փոխվստահության» սահմաններում։
Իսկ ինչ անել, յեթե ճիշտ փոխհարաբերություններն ավան-
գարդի ու դասակարգի միջև, յեթե «փոխվստահության» հարաբերու-
թյունները կուսակցության և դասակարգի միջև խախտված են։ Ի՞նչ
անել, յեթե կուսակցությունն ինքն սկսում է այս կամ այն կերպ
իրեն հակադրել դասակարգին, խախտելով դասակարգի հետ ունեցած
ճիշտ հարաբերությունների հիմունքները, խախտելով «փոխվստահու-
թյան» հիմունքները։ Հնարավո՞ր են արդյոք առհասարակ այդպիսի
դեպքեր։ Այո՛, հնարավոր են։ Դրանք հնարավոր են՝
1) յերբ կուսակցությունն սկսում է կառուցել իր հեղինակու-
թյունը մասսաներում վոչ թե իր աշխատանքի և մասսաների վստա-
հության վրա, այլ իր «անսահմանափակ» իրավունքների վրա.
2) յերբ կուսակցության քաղաքականությունն ակնհայտորեն
սխալ է, իսկ նա չի ցանկանում վերանայել և ուղղել իր սխալը.
3) յերբ քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց

մասսաները դեռևս պատրաստ չեն նրա յուրացմանը, իսկ կուսակցությունը չի ցանկանում կամ շնորք չունի սպասելու, վորպեսզի մասսաներին հնարավորություն տա սեփական փորձով համոզվելու կուսակցության քաղաքականության ճշտության մեջ:

Մեր կուսակցության պատմությունը տալիս է այդպիսի դեպքերի մի ամբողջ շարք: Զանազան խմբավորումներն ու ֆրակցիաները մեր կուսակցության մեջ ընկնում և ցրիվ եյին գալիս այն պատճառով, վոր նրանք խախտում եյին այդ յերեք պատճառներից մեկնումեկը, իսկ յերբեմն էլ բոլոր այդ պատճառները՝ միասին առած:

Բայց սրանից հետևում է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հակադրումը կուսակցության «դիկտատուրային» (ղեկավարությանը) չի կարող ճիշտ ճանաչվել միայն այն դեպքում՝

1) յերբ բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով հասկանանք վոչ թե դիկտատուրա՝ այս բառի բուն իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության ղեկավարությունը, վորը բացառում է բռնությունը ամբողջ դասակարգի վերաբերմամբ, նրա մեծամասնության վերաբերմամբ, ինչպես իսկապես այդ հասկանում է Լենինը.

2) յերբ կուսակցությունը տվյալներ ունի լինելու դասակարգի իսկական ղեկավարը, այսինքն՝ յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է, յեթե այդ քաղաքականությունը համապատասխանում է դասակարգի շահերին.

3) յերբ դասակարգը, յեթե դասակարգի մեծամասնությունն ընդունում է այդ քաղաքականությունը, յուրացնում է այն, կուսակցության աշխատանքի շնորհիվ համոզվում է այդ քաղաքականության ճշտության մեջ, վստահում է կուսակցությանը և աջակցում է նրան:

Այս պայմանների խախտումն անխուսափելիորեն առաջ է բերում կոնֆլիկտ կուսակցության և դասակարգի միջև, պառակտում նրանց միջև, նրանց հակադրումը միմյանց:

Կարելի՞ յե արդյոք կուսակցության ղեկավարությունն ուժով փաթաթել դասակարգի վզին: Վո՛չ, չի՛ կարելի: Համենայն դեպս՝ այդպիսի ղեկավարությունը չի կարող լինել փոքրիշատե տևական: Կուսակցությունը՝ յեթե նա կամենում է մնալ պրոլետարիատի կուսակցություն, պետք է իմանա, վոր ինքն ամենից առաջ և գլխավորապես ղեկավարն է, առաջնորդը, ուսուցիչը բանվոր դասակարգի: Մենք չենք կարող մոռանալ Լենինի այն խոսքերը, վոր նա ասել է այդ առթիվ «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրում.

«Բանվորական կուսակցություն դաստիարակելով՝ մարքսիզմը դաստիարակում է պրոլետարիատի ավանգարդ, վորն ընդունակ է վերցնելու իշխանությունը և տանելու ամբողջ ժողովուրդը դեպի սոցիալիզմ, ուղղություն տալու

և կազմակերպելու նոր հասարակակարգը, լինելու բոլոր աշխատավորների և շահագործվողների ուսուցիչը, ղեկավարը, առաջնորդը*)՝ իր հասարակական կյանքն առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի կառուցելու գործում» (տես՝ հ. XXI, էջ 386, ռուս. հրատ.):

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր կուսակցությունը դասակարգի իսկական ղեկավարն է, յեթե նրա քաղաքականությունը սխալ է, յեթե նրա քաղաքականությունն ընդհարվում է դասակարգի շահերին: Հարկավ, չի կարելի: Այդպիսի դեպքերում կուսակցությունը, յեթե նա ցանկանում է մնալ ղեկավար, պետք է վերանայի իր քաղաքականությունը, պետք է ընդունի իր սխալը և ուղղի այն: Այս դրության հաստատման համար կարելի յեր հիշատակել թեկուզ այնպիսի մի փաստ մեր կուսակցության պատմությունից, ինչպես է պարենմասնատրման ժամանակաշրջանը, յերբ բանվորական և գյուղացիական մասսաները բացահայտորեն դժգոհ յեղան մեր քաղաքականությունից և յերբ կուսակցությունը դիմեց՝ բացահայտ ու ազնիվ կերպով դիմեց այդ քաղաքականության վերանայման: Ահա թե այն ժամանակ ինչ եր ասում Լենինը X համագումարում պարենմասնատրումը վերացնելու և տնտեսական նոր քաղաքականություն մտցնելու հարցի առթիվ.

«Մենք չպետք է ջանանք վորևե բան թաքցնել, այլ պետք է ասենք ուղղակի, վոր գյուղացիությունը դժգոհ է մեր և նրա միջև հաստատված հարաբերություններից, վոր նա փոխհարաբերությունների այդ ձևը չի ուզում և այսուհետև այդպես չի ապրի: Այս անվիճելի յե: Նրա այս կամքն արտահայտվել է վճռական կերպով: Այդ—աշխատավոր բնակչության հսկայական մասսաների կամքն է: Մենք այդ պետք է հաշվի առնենք, և մենք բավականաչափ լրջախոհ քաղաքագետներ ենք, վորպեսզի ուղղակի ասենք՝ յեկեք վերանայենք»*) (տես՝ հ. XXVI, էջ 238, ռուս. հրատ.):

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր կուսակցությունը մասսաների ղեկավարության գործը պետք է հիմնի գլխավորապես մասսաների ներգործման վրա, վոր իր վրա վերցնի միմիայն այն հիման վրա, վոր նրա քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ է, յերբ այդ քաղաքականությունը դեռևս դասակարգի վստահությունն ու աջակցությունը չի վայելում, ասենք թե շնորհիվ վերջինիս քաղաքական հետամնացության, յերբ կուսակցությանը դեռևս չի հաջողվել համոզելու դասակարգին իր քաղաքականության ճշտությունը, ասենք թե շնորհիվ այն հանգամանքի, վոր անցքերը դեռ չեն հասունացել: Վո՛չ, չի՛ կարելի: Այսպիսի դեպքերում կուսակցությունը՝ յեթե նա ցանկանում է իսկական ղեկավար լինել, պետք է շնորք ունենա սպասելու, պետք է համոզի մասսաներին իր քաղաքականության ճշտությունը, պետք է

---

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

ոգնի մասսաներին՝ իրենց սեփական փորձով համոզվելու այդ քաղաքականության ճշտության մեջ:

«Յեթե հեղափոխական կուսակցությունը,— ասում ե Լենինը,— հեղափոխական դասակարգերի առաջավոր ջոկատներում և յերկրում մեծամասնություն չունի, ապա խոսք չի կարող լինել ապստամբության մասին» (տես՝ հ. XXI, եջ 282, ռուս. հրատ.):

«Առանց բանվոր դասակարգի մեծամասնության հայացքների փոփոխության հեղափոխությունն անհնարին ե, իսկ այդ փոփոխությունն ստեղծվում ե մասսաների քաղաքական փորձով» (տես՝ հ. XXI, եջ 223, ռուս. հրատ.):

«Պրոլետարական ավանգարդը գաղափարապես նվաճված ե: Այդ գլխավորն ե: Առանց դրան չի կարելի անել նույնիսկ առաջին քայլը դեպի հաղթանակը: Բայց դրանից մինչև հաղթանակը դեռևս բավական հեռու յե: Միայն ավանգարդով հաղթել չի լինի: Վճռական մարտ նետել միմիայն ավանգարդը, յերբ դեռ ամբողջ դասակարգը, դեռ լայն մասսաները չեն գրավել ավանգարդին ուղղակի աջակցելու, կամ, գոնե, նրա նկատմամբ բարյացակամ չեզոքություն պահպանելու և նրա հակառակորդին աջակցելու լիակատար անընդունակության դիրքի,— վոչ միայն հիմարություն կլիներ, այլև հանցագործություն: Իսկ վորպեսզի իսկապես ամբողջ դասակարգը, վորպեսզի աշխատավորների և կապիտալի կողմից ճնշվածների՝ իսկապես լայն մասսաները հասնեն այդպիսի դիրքի, դրա համար միայն պրոպագանդը, միայն ագիտացիան քիչ ե: Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձը» (տես՝ նույն տեղը, եջ 229):

Հայտնի յե, վոր մեր կուսակցությունը հենց այդպես էլ վարվում եր Լենինի ապրիլյան թեզիսներից մինչև 1917 թվի հոկտեմբերյան ապստամբությունը հասնող ժամանակաշրջանում: Յեվ հենց այն պատճառով, վոր նա գործում եր համաձայն Լենինի այդ ցուցումների, նա ապստամբությունը շահեց:

Սրանք են հիմնականում ավանգարդի և դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների պայմանները:

Ի՞նչ ե նշանակում ղեկավարել, յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ ե, իսկ ճիշտ հարաբերություններն ավանգարդի և դասակարգի միջև չեն խախտվում:

Ղեկավարել այդպիսի պայմաններում—նշանակում ե շնորք ունենալ համոզելու մասսաներին կուսակցության քաղաքականության ճշտությունը, առաջադրել ու անցկացնել այնպիսի լոզունգներ, վորոնք մասսաներին մոտեցնում են կուսակցության դիրքերին և հեշտացնում են նրանց համար իրենց սեփական փորձով ճանաչելու կուսակցության քաղաքականության ճշտությունը, մասսաներին բարձրացնել մինչև կուսակցության գիտակցության մակարդակը և, այդպիսով, ապահովել մասսաների աջակցությունը, նրանց վճռական պայքարի պատրաստակամությունը:

Այս պատճառով համոզելու մեթոդը կուսակցության կողմից դասակարգին ղեկավարելու հիմնական մեթոդն ե:

«Յեթե վոր մենք,—ասում ե Լենինը,—այս պահին Ռուսաստանում, յերկու և կես տարի Ռուսաստանի և Անտանտի բուրժուազիայի նկատմամբ տարած չտեսնված հաղթանակներից հետո, պրոֆմիություններ ընդունվելու պայման դնեյինք «դիկտատուրայի ճանաչումը», մենք հիմարություն կանեյինք, կփչացնեյինք մասսաների վրա ունեցած մեր ազդեցությունը, կօգնեյինք մենշևիկներին: Վորովհետև կոմունիստների ամբողջ խնդիրն ե՝ կարողանալ համոզել հետամնացներին, կարողանալ աշխատել նրանց շրջանում, և վոչ թե նրանցից սահմանագծվել (отгораживаться) հնարովի մանկական-«ձախ» լոզունգներով» (տես՝ հ. XXV, եջ 199, ռուս. հրատ.):

Այդ չի նշանակում, իհարկե, թե կուսակցությունը պետք ե համոզի բոլոր բանվորներին, մինչև վերջին մարդը, թե միայն դրանից հետո կարելի յե դիմել գործողությունների, թե միայն դրանից հետո կարելի յե գործողություններ սկսել: Ամենևին: Այդ միայն նշանակում ե, վոր նախքան վճռական քաղաքական գործողությունների անցնելը, կուսակցությունը յերկարատև հեղափոխական աշխատանքի միջոցով պետք ե ապահովի բանվորական մասսաների մեծամասնության աջակցությունն իրեն, գոնե դասակարգի մեծամասնության նպաստավոր չեզոքությունը: Հակառակ դեպքում լենինյան դրույթն այն մասին, վոր բանվոր դասակարգի մեծամասնությունը կուսակցության կողմը նվաճելը հաղթական հեղափոխության անհրաժեշտ պայմանն ե,—զրկված կլիներ վորևե իմաստից: Ե՛, ապա ինչպես վարվել փոքրամասնության հետ, յեթե նա համաձայն չե կամովին յենթարկվելու մեծամասնության կամքին: Կարո՞ղ ե արդյոք կուսակցությունը, պարտավո՞ր ե արդյոք կուսակցությունը՝ իր կողմն ունենալով մեծամասնության վստահությունը՝ հարկադրել փոքրամասնությանը յենթարկվելու մեծամասնության կամքին: Այո, կարող ե և պարտավոր ե: Ղեկավարությունն ապահովվում ե մասսաներին համոզելու մեթոդով, ընդունելով այն վորպես մասսաների վրա կուսակցության ներգործելու հիմնական մեթոդ: Բայց այդ վոչ թե բացառում, այլ յենթադրում ե հարկադրանքը, յեթե այդ հարկադրանքի պատվանդանը բանվոր դասակարգի մեծամասնության վստահությունն ու աջակցությունն ե կուսակցությանը, յեթե այն գործադրվում ե փոքրամասնության նկատմամբ այն բանից հետո, յերբ կարողացել են մեծամասնությանը համոզել: Արժեր վերհիշել կուսակցության մեջ այդ առթիվ յեղած վեճերը, վորոնք տեղի ունեցան արհմիութենական դիսկուսիայի ժամանակաշրջանում: Այն ժամանակ վո՞րն եր ոպոզիցիայի սխալը, Ցեկտրանի*) սխալը: Այն չե՞ր արդյոք, վոր ոպոզիցիան այն ժամանակ հնարավոր եր համարում հարկադրանքը: Վո՛չ, այդ չեր: Ոպոզիցիայի սխալն այդ ժամանակ այն եր, վոր նա՝ անկարող լինելով համոզել

*) **Центральный комитет союза транспортников**—Տրանսպորտի աշխատողների միության կենտրոնական կոմիտե: Հայ. հրատ. խմբ.:

մեծամասնությանը իր դիրքի ճիշտ լինելը, կորցնելով մեծամասնության վստահությունը, այնուամենայնիվ սկսեց հարկադրանք գործադրել, սկսեց պնդել մեծամասնության վստահությամբ օժտված մարդկանց «թափ տալու» վրա։

Ահա թե այդ ժամանակ ինչ էր ասում Լենինը կուսակցության X համագումարում արհեստակցական միությունների մասին արտասանած իր ճառում.

«Բանվոր դասակարգի ավանգարդի և բանվորական մասսայի միջև փոխհարաբերություն, փոխվստահություն հաստատելու համար հարկավոր էր՝ եթե Ցեկտրանը սխալ էր գործել... հարկավոր էր այն ուղղել։ Բայց երբ այդ սխալն սկսում են պաշտպանել, ապա այդ դառնում է քաղաքական վտանգի աղբյուր։ Եթե չստեղծեյին դեմոկրատիայի իմաստով առավելագույն հնարավորն այն տրամադրություններից, որ այստեղ արտահայտում է Կուտուզովը, մենք կհանգեյինք քաղաքական կրախի։ Ամենից առաջ մենք պետք է համոզենք, յետ ապա հարկադրենք։ Մենք պետք է ինչ կուզի լինի նախ համոզենք ու հետո հարկադրենք*)։ Մենք չնորք չունեցանք համոզել լայն մասսաներին ու խախտեցինք ճիշտ հարաբերակցությունն ավանգարդի և մասսաների միջև» (տես՝ հ. XXVI, էջ 235, ռուս. հրատ.)։

Նույն այդ բանն է ասում Լենինը «Արհմիությունների մասին» վերնագրով իր բրոշյուրում.

«Մենք այն ժամանակ ճիշտ և հաջող էինք կիրառում հարկադրանքը, երբ կարողանում էինք համոզման պատվանդան ստեղծել նրա համար» (տես՝ նույն տեղը, էջ 74)։

Եվ այդ միանգամայն ճիշտ է։ Վորովհետև առանց այդ պայմանների հնարավոր չէ վոչ մի ղեկավարություն։ Վորովհետև միայն այդ կերպ կարելի յե ապահովել գործողությունների միասնությունը կուսակցության մեջ՝ յեթե խոսքը վերաբերում է կուսակցությանը, դասակարգի գործողությունների միասնությունը՝ յեթե խոսքը վերաբերում է դասակարգին՝ իր ամբողջությամբ առած։ Առանց դրան — բանվոր դասակարգի շարքերում կլինի՝ պառակտում, տարընթացություն, քայքայում։

Սրանք են ընդհանուր առմամբ կուսակցության ճիշտ ղեկավարության հիմունքները։

Ղեկավարության վորևէ այլ ըմբռնումը սինդիկալիզմ է, անարխիզմ, բյուրոկրատիզմ, այն ամենը, ինչ կուզեք, միայն թե վոչ բոլշևիզմ, միայն թե վոչ լենինիզմ։

Պրոլետարիատի դիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցության ղեկավարությանը («դիկտատուրային»), յեթե առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ կուսակցության և բանվոր դասակարգի միջև, ավանգարդի և բանվորական մասսաների միջև։ Բայց սրանից

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

հետևում է, որ առավել ևս չի կարելի կուսակցությունը նույնացնել բանվոր դասակարգի հետ, կուսակցության ղեկավարությունը («դիկտատուրան») բանվոր դասակարգի դիկտատուրայի հետ։ Այն հիման վրա, որ կուսակցության «դիկտատուրան» չի կարելի հակադրել պրոլետարիատի դիկտատուրային՝ ընկ. Սորինը յեկել է այն սխալ յեզրակացությանը, որ «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան է»։ Բայց Լենինը խոսում է վոչ միայն այդպիսի հակադրության անթույլատրելիության մասին։ Դրա հետ մեկտեղ նա խոսում է «մասսաների դիկտատուրան առաջնորդների դիկտատուրային» հակադրելու անթույլատրելիության մասին։ Հաճելի չէ՞ արդյոք այս հիման վրա առաջնորդների դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Այս ուղիով ընթանալով, մենք պետք է ասեյինք, որ «պրոլետարիատի դիկտատուրան մեր առաջնորդների դիկտատուրան է»։ Իսկ չէ վոր, խիստ ասած, հենց դեպի այդ հիմարությունն է տանում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու քաղաքականությունը...

Այս գործն ինչ դրության մեջ է ընկ. Զինովյեվի մոտ։

Ընկ. Զինովյեվը, ըստ էության, կանգնած է կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու նույն այն տեսակետի վրա, ինչ և ընկ. Սորինը, սակայն այն տարբերությամբ, որ ընկ. Սորինն արտահայտվում է ավելի շիտակ ու պարզ, իսկ ընկ. Զինովյեվը «դես ու դեն է ընկնում»։ Բավական է վերցնել ընկ. Զինովյեվի «Լենինիզմ» գրքից թեկուզ հետևյալ տեղը՝ դրանում համոզվելու համար.

«Ի՞նչ է, — ասում է ընկ. Զինովյեվը, — ԽՍՀ Միության մեջ գոյություն ունեցող հասարակակարգը՝ նրա դասակարգային բովանդակության տեսակետից։ Այդ — պրոլետարիատի դիկտատուրա յե։ Վո՞րն է իշխանության անմիջական զսպանակը ԽՍՀՄ-ում։ Ո՞վ է իրականացնում բանվոր դասակարգի իշխանությունը։ Կոմունիստական կուսակցությունը՜ Այդ իմաստով մեզ մոտ *) կուսակցության դիկտատուրա յե։ Ի՞նչ իրավաբանական ձև ունի իշխանությունը ԽՍՀՄ-ում։ Վո՞րն է Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած պետական կարգի նոր տիպը։ Այդ — խորհրդային սիստեմն է։ Մեկը բնավ չի հակասում մյուսին» (տես՝ «Լենինիզմ», էջ 370 — 371)։

Վոր մեկը մյուսին չի հակասում, այդ, իհարկե, ճիշտ է, յեթե ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով հասկանանք կուսակցության ղեկավարությունը։ Բայց ինչպես կարելի յե այս հիման վրա հավասարության նշան դնել պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության «դիկտատուրայի» միջև, խորհրդային սիստեմի և կուսակցության «դիկտատուրայի» միջև։ Լենինը խորհուրդների սիստեմը նույնացնում էր պրոլետարիատի դիկ-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

տատուրային, և նա իրավացի յեր, վորովհետև խորհուրդները, մեր խորհուրդները հանդիսանում են կուսակցության ղեկավարության պայմաններում աշխատավոր մասսաներին պրոլետարիատի շուրջը համախմբելու կազմակերպությունը։ Բայց յե՞րբ, վո՞րտեղ, իր վո՞ր աշխատության մեջ Լենինը հավասարության նշան է դրել կուսակցության «դիկտատուրայի» և պրոլետարիատի դիկտատուրայի միջև, կուսակցության «դիկտատուրայի» և խորհուրդների սիստեմի միջև, ինչպես այժմ ընկ. Զինովյևն է անում։ Պրոլետարիատի դիկտատուրային չի հակասում վոչ միայն կուսակցության ղեկավարությունը («դիկտատուրան»), այլև առաջնորդների ղեկավարությունը («դիկտատուրան»)։ Հաճելի չէ՞ արդյոք, այս հիման վրա, հռչակել, վոր մեր յերկիրը պրոլետարիատի դիկտատուրայի յերկիր է, այսինքն կուսակցության դիկտատուրայի յերկիր, այսինքն առաջնորդների դիկտատուրայի յերկիր։ Իսկ չէ՞ վոր հենց դեպի այդ հիմարությունն է տանում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու «սկզբունքը», վոր դաղտագողի ու անհամարձակ անց է կացնում ընկ. Զինովյևը։

Լենինի բազմաթիվ աշխատություններում ինձ հաջողվել է նշել ընդամենը հինգ դեպք, վորտեղ նա անցողակի շոշափում է կուսակցության դիկտատուրայի հարցը։

Առաջին դեպքը — էս-էռների և մենշևիկների հետ ունեցած բանավեճն է, վորտեղ Լենինն ասում է.

> «Երբ մեզ հանդիմանում են մի կուսակցության դիկտատուրայի համար և առաջարկում են, ինչպես դուք լսեցիք, միասնական սոցիալիստական ճակատ, մենք ասում ենք. «Այո՛, մի կուսակցության դիկտատուրա։ Մենք այդ հողի վրա յենք կանգնած և դրանից չենք կարող հրաժարվել, վորովհետև դա այն կուսակցությունն է, վորը տասնամյակների ընթացքում նվաճել է ամբողջ ֆաբրիկա-գործարանային և արդյունաբերական պրոլետարիատի ավանգարդի դիրքը» (տե՛ս հ. XXIV, եջ 423, ռուս. հրատ.)։

Երկրորդ դեպքն է — «Նամակ բանվորներին և գյուղացիներին՝ Կոլչակին հաղթելու առթիվ», վորտեղ նա ասում է.

> «Գյուղացիներին վախեցնում են (մանավանդ մենշևիկները և էս-էռները, բոլորը, նույնիսկ նրանց «ձախերը») «մի կուսակցության դիկտատուրայի», բոլշևիկ կոմունիստների կուսակցության «դիկտատուրայի» խրտվիլակով։ Կոլչակի օրինակը գյուղացիներին սովորեցրեց չվախենալ խրտվիլակից։ Կամ կալվածատերերի և կապիտալիստների դիկտատուրա (այսինքն յերկաթե իշխանություն), կամ բանվոր դասակարգի դիկտատուրա» (տե՛ս հ. XXIV, եջ 436, ռուս. հրատ.)։

Երրորդ դեպքը—այդ Լենինի ճառն է Կոմինտերնի II կոնգրեսում, Տանների հետ բանավիճելիս։ Այդ ճառից վերևում յես ցիտատ բերել եմ։

Չորրորդ դեպքը—այդ միքանի տող է «Երեխայական հիվանդությունը» բրոշյուրում։ Համապատասխան ցիտատներն արդեն վերևում բերված են։

Եվ հինգերորդ դեպքը—այդ պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ սխեմայի ուրվագիծն է, վոր հրապարակված է III «Լենինյան ժողովածվում» («Ленинский сборник»), վորտեղ կա յենթագլուխ «Մի կուսակցության դիկտատուրա» անունով (տե՛ս «Ленинский сборник» III, եջ 497)։

Հարկավոր է նշել, վոր հինգ դեպքից յերկուսում՝ վերջին և յերկրորդ դեպքում, «մի կուսակցության դիկտատուրա» բառերը Լենինը չակերտների մեջ է առնում, ակնհայտ կերպով ընդգծելով այդ ձևակերպման վոչ ճշտորոշ, փոխաբերական իմաստը։

Հարկավոր է նույնպես նշել, վոր այդ բոլոր դեպքերում «կուսակցության դիկտատուրա» բանվոր դասակարգի նկատմամբ բառերի տակ Լենինը հասկանում է վո՛չ թե դիկտատուրա՝ այդ բառի իսկական իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության ղեկավարությունը։

Բնորոշ է, վոր իր հիմնական և յերկրորդական աշխատություններից վոչ մեկում, վորտեղ Լենինն արծարծում է կամ հիշատակում է պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության դերի մասին, պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում ակնարկ անգամ չկա այն առթիվ, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան է»։ Ընդհակառակը, այդ աշխատությունների յուրաքանչյուր եջը, յուրաքանչյուր տողիկն աղաղակում է այդպիսի ֆորմուլի դեմ (տե՛ս «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», «Երեխայական հիվանդությունը», և այլն)։

Ե՛լ ավելի բնորոշ է, վոր Կոմինտերնի II կոնգրեսի՝ կուսակցության քաղաքական դերի վերաբերյալ թեզիսներում, վորոնք մշակվել են Լենինի անմիջական ղեկավարությամբ, վորոնք Լենինը բազմիցս մատնանշում էր իր ճառերում, վորպես կուսակցության դերի և խնդիրների ճիշտ ձևակերպման տիպար օրինակ,— մենք չենք գտնում վո՛չ մի, տառացի վո՛չ մի խոսք կուսակցության դիկտատուրայի մասին։

Այս բոլորն ինչ է ասում։

Այն, վոր՝

ա) «կուսակցության դիկտատուրա» ֆորմուլը Լենինը չէր համարում անթերի, ճշտորոշ, ուստի և Լենինի աշխատություններում այն չափազանց հազվադեպ է գործածվում և յերբեմն չակերտների մեջ է առնվում.

բ) այն սակավաթիվ դեպքերում, յերբ Լենինը հարկադրված էր՝ հակառակորդների հետ բանավիճելիս՝ խոսել կուսակցության դիկտա-

տուրայի մասին, նա խոսում էր սովորաբար «մի կուսակցության դիկտատուրայի» մասին, այսինքն այն մասին, վոր մեր կուսակցությունը մենակ է իշխանության գլուխ կանգնած, վոր նա իշխանությունը չի բաժանում ուրիշ կուսակցությունների հետ, ընդ վորում նա միշտ պարզաբանում էր, վոր կուսակցության դիկտատուրա բանվոր դասակարգի նկատմամբ ասելով հարկավոր է հասկանալ կուսակցության ղեկավարությունը, նրա ղեկավար դերը.

գ) բոլոր այն դեպքերում, յերբ Լենինը հարկավոր էր համարում գիտականորեն բնորոշել կուսակցության դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, նա խոսում էր բացառապես կուսակցության ղեկավար դերի մասին (իսկ այդպիսի դեպքերը—հազարներ են)՝ բանվոր դասակարգի նկատմամբ.

դ) հենց այդ պատճառով Լենինը «գլխի չընկավ» կուսակցության դերի վերաբերյալ բանաձևի մեջ մտցնել—յես նկատի ունեմ Կոմինտերնի II կոնգրեսի բանաձևը—«կուսակցության դիկտատուրա» ֆորմուլը.

ե) լենինիզմի տեսակետով անիրավացի յեն և քաղաքականապես կարճատես այն ընկերները, վորոնք նույնացնում են կամ ջանում են նույնացնել կուսակցության «դիկտատուրան», ուրեմն և «առաջնորդների դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ, վորովհետև նրանք դրանով խախտում են ավանգարդի և դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների պայմանները։

Յես էլ չեմ խոսում այն մասին, վոր «կուսակցության դիկտատուրա» ֆորմուլը, վերցրած առանց վերը մատնանշված վերապահումների, կարող է ստեղծել մի ամբողջ շարք վտանգներ և քաղաքական մինուսներ մեր պրակտիկ աշխատանքում։ Առանց վերապահումների վերցրած այդ ֆորմուլով կարծես թե հուշում են՝

ա) անկուսակցական մասսաներին՝ չհամարձակվեք ընդդիմախոսել, չհամարձակվեք դատողություն անել, վորովհետև կուսակցությունն ամեն ինչ կարող է, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

բ) կուսակցական կադրերին՝ գործեցեք ավելի համարձակ, ավելի պինդ հուպ տվեք, կարելի յե և ուշադրություն չդարձնել անկուսակցական մասսաների ձայնին,—մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

գ) կուսակցական վերնախավերին՝ կարող եք թույլ տալ ձեզ վորոշ ինքնագոհության շռայլություն, թերևս, կարելի յե նույնիսկ մի քիչ գոռոզանալ, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե, «ուրեմն» և առաջնորդների դիկտատուրա։

Այս վտանգների մասին տեղին է հիշեցնել հատկապես հիմա, մասսաների քաղաքական ակտիվության վերելքի ժամանակաշրջանում, յերբ կուսակցության պատրաստակամությունը՝ ուշադիր լինելու դեպի մասսաների ձայնը՝ մեզ համար առանձին արժեք է, յերբ նրբազգաց վերաբերմունքը դեպի մասսաների պահանջմունքները մեր կուսակցության հիմնական պատգամն է, յերբ կուսակցությունից պահանջվում է հատուկ շրջանկատություն և հատուկ ճկունություն քաղաքականության մեջ, յերբ գոռոզանալու վտանգը կուսակցության առաջ կանգնած ամենալուրջ վտանգներից մեկն է մասսաների ղեկավարման գործում։

Չի կարելի չվերհիշել Լենինի վոսկե խոսքերը, վոր ասել է նա մեր կուսակցության XI համագումարում.

> «Ժողովրդական մասսայի մեջ մենք (կոմունիստներս։ Ի. Ստ.) այնուամենայնիվ մի կաթիլ ենք ծովի մեջ, և մենք կարող ենք կառավարել միայն այն ժամանակ, յերբ ճիշտ ենք արտահայտում այն, ինչ ժողովուրդը գիտակցում է։ Առանց դրան կոմունիստական կուսակցությունը չի առաջնորդի պրոլետարիատին, իսկ պրոլետարիատը չի առաջնորդի մասսաներին, և ամբողջ մեքենան կկործանվի» (տե՛ս հ. XXVII, էջ 256. ռուս. հրատ.)։

«Ճիշտ արտահայտել այն, ինչ ժողովուրդը գիտակցում է»—հենց այս է այն անհրաժեշտ պայմանը, վորը կուսակցության համար ապահովում է պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի հիմնական ղեկավար ուժի պատվավոր դերը։

VI. ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԵԼՈՒ ՀԱՐՑԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում (1924 թ. ապրիլ, առաջին հրատարակություն*), կա մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցի վերաբերյալ յերկու ձևակերպում։

Առաջին ձևակերպումն ասում է.

> «Առաջներում հեղափոխության հաղթանակը մի յերկրում անհնար էին համարում, յենթադրելով, վոր բուրժուազիային հաղթելու համար անհրաժեշտ է բոլոր առաջավոր յերկրների պրոլետարների, կամ համենայն դեպս այդպիսի յերկրների մեծ մասի պրոլետարների միատեղ յելույթը։ Այժմ այդ տեսակետն իրականությանն չի համապատասխանում։ Այժմ հարկավոր է յելնել այդպիսի հաղթության հնարավորությունից, վորովհետև զանազան կապիտալիստական յերկրների՝ իմպերիալիզմի պայմաններում տեղի ունեցող անհամաչափ և թռիչքաձև զարգացման բնույթը, դեպի անխուսափելի պատերազմներ տանող կատաստրոֆիկ հակասությունների զարգանալն իմպերիալիզմի ներսում, հեղափոխական շարժման աճումն աշխարհի բոլոր յերկրներում—այդ բոլորը տանում է վոչ միայն դեպի պրոլետարիատի հաղթանակի հնարավորությունն առանձին յերկրներում, այլև դեպի այդ հաղթանակի անհրաժեշտությունը» (տե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին»)։

Այս դրույթը միանգամայն ճիշտ է և կարոտ չե վոչ մի մեկնաբանության։ Նա ուղղված է սոցիալ-դեմոկրատների թեորիայի դեմ,

*) Խոսքը ռուսերեն հրատարակության մասին է։ Հայ. հրատ. խմբ.։

վորոնք ուտոպիա յեն համարում պրոլետարիատի կողմից իշխանությունը մի յերկրում վերցնելը, առանց միաժամանակ հաղթական հեղափոխության մյուս յերկրներում:

Բայց «Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում կա և յերկրորդ ձևակերպումը: Այնտեղ ասված ե*).

«Բայց տապալել բուրժուազիայի իշխանությունը և հաստատել պրոլետարիատի իշխանություն մի յերկրում դեռևս չի նշանակում ապահովել սոցիալիզմի լրիվ հաղթանակը: Սոցիալիզմի գլխավոր խնդիրը՝ սոցիալիստական արտադրության կազմակերպումը — դեռևս մնում ե հետագային: Կարելի՞ յե արդյոք լուծել այդ խնդիրը, կարելի՞ յե արդյոք ձեռք բերել սոցիալիզմի վերջնական հաղթանակ մի յերկրում առանց միքանի առաջավոր յերկրների պրոլետարների միահամուռ ջանքերի: Վոչ, անհնարին ե: Բուրժուազիայի տապալման համար բավական են մի յերկրի ջանքերը, — այդ ե ասում մեզ մեր հեղափոխության պատմությունը: Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, սոցիալիստական արտադրության կազմակերպման համար մի յերկրի ջանքերը, մանավանդ այնպիսի գյուղացիական յերկրի, ինչպես Ռուսաստանն ե՝ արդեն բավական չեն, դրա համար անհրաժեշտ են միքանի առաջավոր յերկրների պրոլետարների ջանքերը» (տես՝ «Լենինիզմի հիմունքների մասին», առաջին հրատարակություն **):

Այս՝ յերկրորդ ձևակերպումն ուղղված ե լենինիզմի քննադատների պնդումների դեմ, տրոցկիստների դեմ, վորոնք հայտարարում եյին, վոր պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, յերբ բացակայում ե հաղթանակը մյուս յերկրներում, չի կարող «դիմանալ պահպանողական Յեվրոպայի հանդեպ»:

Այդ չափով — բայց միայն այդ չափով — այս ձևակերպումն այն ժամանակ (1924 թ. ապրիլ) գոհացուցիչ եր, և այն, անկասկած, վորոշ օգտակար ծառայություն մատուցեց:

Բայց հետագայում, յերբ լենինիզմի քննադատության այս մասում արդեն հաղթահարվել եր կուսակցության մեջ և յերբ կուսակցության մեջ հերթական դարձավ մի նոր հարց՝ մեր յերկրի ուժերով, առանց դրսի օգնության լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության հարցը, — յերկրորդ ձևակերպումը դարձավ արդեն ակնհայտորեն թերի և, այդ պատճառով, անճիշտ:

Վո՞րն ե այդ ձևակերպման թերությունը:

Նրա թերությունն այն ե, վոր նա մի հարցի յե վերածում յերկու տարբեր հարցեր՝ մի յերկրի ուժերով սոցիալիզմ կառուցելու հնարավորության հարցը, վորին դրական պատասխան պետք ե տրվի, և այն հարցը, թե՝ պրոլետարիատի դիկտատուրա ունեցող մի յերկիր կարո՞ղ ե իրեն լիովին ապահոված համարել ինտերվենցիայից և, հե-

*) Խոսքը վերաբերում ե առաջին (ռուսերեն: Հայ. հրատ. խմբ.) հրատարակությանը:

**) Խոսքը վերաբերում ե ռուս. հրատարակությանը: Հայ. հրատ. խմբ.:

տևաբար, հին կարգերի ռեստավրացիայից, առանց հաղթական հեղափոխության մի շարք ուրիշ յերկրներում, վորին բացասական պատասխան պետք ե տրվի: Յես ել չեմ խոսում այն մասին, վոր այդ ձևակերպումը կարող ե առիթ տալ մտածելու, թե մի յերկրի ուժերով սոցիալիստական հասարակություն կազմակերպելն անհնարին ե, — մի բան, վորն, ինարկե, ճիշտ չե:

Այս հիման վրա իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրում (1924 թ. դեկտեմբեր) յես ձևափոխեցի, ուղղեցի այդ ձևակերպումը, այդ հարցը բաժանելով յերկու հարցի՝ բուրժուական կարգերի ռեստավրացիայից լիովին ապահովելու հարցի և մի յերկրում լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության հարցի: Այս բանին հասանք, նախ՝ «սոցիալիզմի լիակատար հաղթանակը» մեկնաբանելով վորպես «լիակատար ապահովություն հին կարգերի վերականգնումից», վորը հնարավոր ե միայն «միքանի յերկրների պրոլետարների միահամուռ ջանքեր թափելու» կարգով, և յերկրորդ՝ Լենինի «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի հիման վրա հռչակելով այն անվիճելի ճշմարտությունը, վոր մենք ունենք բոլոր անհրաժեշտը՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար (տես՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան»)*):

Հարցի հենց այս նոր ձևակերպումը դարձավ XIV կուսկոնֆերենցիայի «Կոմինտերնի և ՌԿԿ**) խնդիրների մասին» հայտնի բանաձևի հիմքը, — այն բանաձևի, վորը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը քննության եր առնում կապիտալիզմի ստաբիլիզացիայի հետ կապակցելով (1925 թ. ապրիլ) և հնարավոր ու անհրաժեշտ եր համարում սոցիալիզմի կառուցումը մեր յերկրի ուժերով:

Այդ բանաձևը հիմք ծառայեց իմ «XIV կուսկոնֆերենցիայի աշխատանքների արդյունքների շուրջը» բրոշյուրին, վորը հրատարակվեց XIV կուսկոնֆերենցիայից անմիջապես հետո, 1925 թ. մայիսին:

Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի դրման հարցի առթիվ այդ բրոշյուրում ասված ե.

«Մեր յերկիրը ներկայացնում ե հակասությունների յերկու խումբ: Հակասությունների մի խումբը — ներքին հակասություններն են, վորոնք գոյություն ունեն պրոլետարիատի և գյուղացիության միջև (այստեղ խոսքը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու մասին ե: Ի. Ստ.): Հակասությունների մյուս խումբը —

*) Հարցի այս նոր ձևակերպումը հետո փոխարինեց նրա հին ձևակերպմանը «Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրի հետագա հրատարակություններում:

**) Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն (РКП) — այսպես եր կոչվում Համամիութենական կոմունիստական (բ) կուսակցությունը մինչև XIV կուսհամագումարը, վորի վորոշմամբ նա ընդունեց իր այժմյան անունը: Հայ. հրատ. խմբ.:

առաջին հակասություններն են, որոնք գոյություն ունեն մեր՝ սոցիալիզմի՝ յերկրի և բոլոր մնացած յերկրների՝ որպես կապիտալիզմի յերկրների միջև (խոսքն այստեղ սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին է: Ի. Ստ.)»... «Ով շփոթում է մի յերկրի ջանքերով միանգամայն հաղթահարելի հակասությունների առաջին խումբը հակասությունների յերկրորդ խմբի հետ, որոնք իրենց լուծման համար պահանջում են մի քանի յերկրների պրոլետարների ջանքերը, — նա թույլ է տալիս ամենակոպիտ սխալը լենինիզմի հանդեպ, նա կամ խճճված մարդ է, կամ անուղղելի օպորտունիստ» (տես՝ «XIV կոնֆերենցիայի աշխատանքների արդյունքների շուրջը»):

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցի առթիվ բրոշյուրն ասում է.

«Մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել և մենք այն կկառուցենք գյուղացիության հետ միասին, բանվոր դասակարգի ղեկավարությամբ»... որովհետև «պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում մեզ մոտ կան... բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար՝ բոլոր և ամեն տեսակ ներքին դժվարությունները հաղթահարելով, որովհետև մենք կարող ենք և պետք է հաղթահարենք դրանք մեր սեփական ուժերով» (տես՝ նույն տեղը):

Իսկ սոցիալիզմի վերջնական հաղթանակի հարցի առթիվ այնտեղ ասված է.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիակատար ապահովություն է ինտերվենցիայի փորձերից, ուրեմն և՛ ռեստավրացիայի փորձերից, որովհետև ռեստավրացիայի որևէ լուրջ փորձը կարող է տեղի ունենալ դրսի լուրջ աջակցությամբ միայն, միջազգային կապիտալի աջակցությամբ միայն: Այդ պատճառով բոլոր յերկրների բանվորների աջակցությունը մեր հեղափոխությանը, իսկ առավել ևս այդ բանվորների հաղթանակը թեկուզ մի քանի յերկրում, առաջին հաղթած յերկրի համար անհրաժեշտ պայմանն է լիակատար ապահովության ինտերվենցիայի և ռեստավրացիայի փորձերից, անհրաժեշտ պայմանը սոցիալիզմի վերջնական հաղթության» (տե՛ս՝ նույն տեղը):

Թվում է, որ պարզ է:

Հայտնի յե, որ այդ հարցը այդ իսկ ոգով է մեկնաբանվում իմ «Հարցեր և պատասխաններ» բրոշյուրում (1925 թ. հունիս) և Համ ԿԿ XIV համագումարին ԿԿ տված քաղաքական հաշվետվության մեջ (1925 թ. դեկտեմբեր):

Սրանք են փաստերը:

Այս փաստերը հայտնի յեն, յես կարծում եմ, բոլորին և ամեն մեկին, այդ թվում և ընկ. Զինովյեվին:

Յեթե հիմա, կուսակցության մեջ յեղած գաղափարական պայքարից և XIV կոնֆերենցիայում ընդունված բանաձևից (1925 թ. ապրիլ) գրեթե յերկու տարի անց, ընկ. Զինովյեվը հնարավոր է համարում XIV կուսհամագումարի (1925 թ. դեկտեմբեր) իր յեզրափակման խոսքում դուրս քաշել հին, միանգամայն պակասավոր ձևակերպումը Ստալինի բրոշյուրից, որ գրված է 1924 թ. ապրիլին, որ-

պես պատվանդան՝ լուծելու համար արդեն լուծված հարցը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին, — ապա ընկ. Զինովյեվի այդ յուրօրինակ մաներն ասում է միայն այն, որ նա վերջնականապես խճճվել է այդ հարցում: Կուսակցությունը քաշել դեպի հետ այն բանից հետո, յերբ նա արդեն առաջ է անցել, խուսափել XIV կոնֆերենցիայի բանաձևից այն բանից հետո, յերբ այն արդեն հաստատված է ԿԿ պլենումի կողմից, — այդ նշանակում է անհուսալիորեն խրվել հակասությունների մեջ, չհավատալ սոցիալիզմի շինարարության գործին, հեռանալ Լենինի ուղուց և ստորագրել իր սեփական պարտությունը:

Ի՞նչ է մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հնարավորությունը:

Այդ՝ պրոլետարիատի և գյուղացիության միջև յեղած հակասությունները մեր յերկրի ներքին ուժերով լուծելու հնարավորությունն է, պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու և մյուս յերկրների պրոլետարների համակրության ու աջակցության պայմաններում, բայց առանց պրոլետարական հեղափոխության նախնական հաղթանակի մյուս յերկրներում՝ մեր յերկրում լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար այդ իշխանությունն օգտագործելու հնարավորությունը:

Առանց այդպիսի հնարավորության սոցիալիզմի կառուցումն՝ անհեռանկար կառուցում է, կառուցում, որը զուրկ է սոցիալիզմ կառուցելու վստահությունից: Չի կարելի սոցիալիզմ կառուցել, հավատացած չլինելով, որ այն կարելի յե կառուցել, հավատացած չլինելով, որ մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհաղթահարելի խոչընդոտ չի: Այդպիսի հնարավորության ժխտումը թերահավատություն է դեպի սոցիալիզմի կառուցման գործը, նահանջ լենինիզմից:

Ի՞նչ է մի յերկրում սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթանակի անհնարինությունը, յերբ չկա հեղափոխության հաղթանակ մյուս յերկրներում:

Այդ՝ ինտերվենցիայից, ուրեմն և բուրժուական կարգերի ռեստավրացիայից լիակատար ապահովություն ունենալու անհնարինությունն է, յերբ չկա հեղափոխության հաղթանակ գոնե մի շարք յերկրներում: Այս անվիճելի դրության բացասումը նահանջ է ինտերնացիոնալիզմից, նահանջ լենինիզմից:

«Մենք ապրում ենք, — ասում է Լենինը, — ոչ միայն պետության մեջ, այլև պետությունների սիստեմի մեջ, և Խորհրդային հանրապետության յերկարատև գոյությունն իմպերիալիստական պետությունների կողքին անհավանակալի յե: Վերջիվերջո կամ մեկը կհաղթանակի, կամ մյուսը: Իսկ մինչև որ այդ վերջը կգա, մի շարք ամենասոսկալի ընդհարումները Խորհրդային հանրապետության և բուրժուական պետությունների միջև անխուսափելի յեն: Այս նշանակում է, որ գերիշխող դասակարգը՝ պրոլետարիատը, յեթե միայն նա ցանկանում

է գերիշխել և կղերիշխել, պետք է ապացուցի այդ նաև իր զինվորական կազմակերպությամբ» (տես՝ հ. XXIV, եջ 122, ռուս. հրատ.):

«Մենք մեր առջեն ունենք, — ասում է Լենինը մեկ ուրիշ տեղում, — վերին աստիճանի անկայուն, բայց ելի անկասկածելի, անվիճելի, վորոշ հավասարակշռություն: Արդյոք այդ յերկա՞ր կտևի — չգիտեմ և կարծում եմ, վոր այդ իմանալ կարելի չէ: Յեվ այդ պատճառով մեր կողմից հարկավոր է մեծագույն զգուշավորություն: Յեվ մեր քաղաքականության առաջին պատգամը, մեր մի տարվա կառավարական գործունեությունից բղխող առաջին դասը, — մի դաս, վոր պետք է յուրացնեն բոլոր բանվորներն ու գյուղացիները, — այս է՝ զգաստ լինել, հիշել, վոր մենք շրջապատված ենք այնպիսի մարդկանցով, դասակարգերով, կառավարություններով, վորոնք բացահայտորեն արտահայտում են մեծագույն ատելություն դեպի մեզ: Հարկավոր է հիշել, վոր ամեն մի արշավանք մեզ համար միշտ վերահաս վտանգ է» (հ. XXVII, եջ 117, ռուս. հրատ.):

Թվում է, վոր պարզ է:

Ի՞նչ վերաբերմունք ունի ընկ. Զինովյևը դեպի մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցը:

Լսեցե՛ք.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակ ասելով հարկավոր է հասկանալ, գոնե՝ 1) դասակարգերի վոչնչացումը և, հետևաբար, 2) մի դասակարգի դիկտատուրայի, տվյալ դեպքում պրոլետարիատի դիկտատուրայի վերացումը»... «Վորպեսզի ել ավելի ճշտորոշ պարզենք մեզ համար, — ասում է այնուհետև ընկ. Զինովյևը, — թե հարցն ինչպես է դրված մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում 1925 թվին, պետք է զանազանենք յերկու բան՝ 1) սոցիալիզմ կառուցելու ապահովված հնարավորությունը, — սոցիալիզմ կառուցելու այդպիսի հնարավորությունը, հարկավ, լիովին կարող է յենթադրվել նաև մեկ յերկրի շրջանակներում, — և 2) սոցիալիզմի վերջնական կառուցումն ու ամրացումը, այսինքն սոցիալիստական հասարակակարգի, սոցիալիստական հասարակության իրականացումը» (տես՝ ընկ. Զինովյևի «Լենինիզմը», եջ 291 և 293, ռուս. հրատ.):

Այս բոլորն ի՞նչ կարող է նշանակել:

Հենց այն, վոր ասելով սոցիալիզմի վերջնական հաղթանակ մի յերկրում, ընկ. Զինովյևը հասկանում է վո՛չ թե ապահովություն ինտերվենցիայից և ռեստավրացիայից, այլ սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորություն: Իսկ ասելով սոցիալիզմի հաղթանակ մի յերկրում, ընկ. Զինովյևը հասկանում է սոցիալիզմի այնպիսի կառուցումը, վորը չի կարող և չպետք է հասցնի սոցիալիզմի կառուցմանը: Կառուցում՝ հույսը բերմունքի վրա դնելով, առանց հեռանկարի, սոցիալիզմի կառուցում, յերբ անհնարին է սոցիալիստական հասարակության կառուցումը, — այս է ընկ. Զինովյևի դիրքը:

Կառուցել սոցիալիզմ՝ առանց այն կառուցելու հնարավորության, կառուցել, իմանալով, վոր չես կառուցի, — ահա թե մինչև ինչպիսի անհեթեթությունների է հասնում ընկ. Զինովյևը:

Բայց այդ չէ՞ վոր հարցի ծաղրումն է և վոչ թե նրա լուծումը:

Ահավասիկ ևս մի տեղ ընկ. Զինովյևի յեզրափակման ճառից, վոր արտասանվել է XIV կուսհամագումարում.

«Դուք տեսաք, թե մինչև ինչ տեղն է հասել, օրին., ընկ. Յակովլևը Կուրսկի վերջին կուսկոնֆերենցիայում: «Արդյոք մենք կարող ենք մի յերկրում, — հարցնում է նա, — բոլոր կողմերից կապիտալիստական թշնամիներով շրջապատված լինելով, կարող ենք արդյոք այսպիսի պայմաններում սոցիալիզմ կառուցել մի յերկրում»: Յեվ պատասխանում է. «Ամբողջ ասվածի հիման վրա մենք իրավունք ունենք ասելու, վոր մենք վոչ միայն կառուցում ենք սոցիալիզմը, այլև, չնայած այն բանին, վոր առայժմ մենք մենակ ենք, առայժմ մենք աշխարհի միակ խորհրդային յերկիրն ենք, միակ խորհրդային պետությունը, — մենք այդ սոցիալիզմը կկառուցենք» («Курская Правда» № 279, 1925 թ. դեկտ. 8): Մի՞թե այս հարցի լենինյան դրումն է, մի՞թե սրանից ազգային սահմանափակության հոտ չի փչում» *):

Այսպիսով ըստ Զինովյևի դուրս է գալիս, վոր մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը ճանաչել, — նշանակում է կանգնել ազգային սահմանափակության տեսակետի վրա, իսկ ժխտել այդպիսի հնարավորությունը, — նշանակում է կանգնել ինտերնացիոնալիզմի տեսակետի վրա:

Բայց յեթե այդ ճիշտ է, — արժե՞ արդյոք ընդհանրապես պայքար մղել մեր տնտեսության կապիտալիստական տարրերին հաղթելու համար: Սրանից չի՞ հետևում արդյոք, վոր այդպիսի հաղթանակն անհնարին է:

Կապիտուլյացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ, — ահա թե ինչի յե հասցնում ընկ. Զինովյևի արգումենտացիայի ներքին տրամաբանությունը:

Յեվ այդ անհեթեթությունը, վորն ընդհանուր վոչինչ չունի լենինիզմի հետ, ընկ. Զինովյևը հրամցնում է մեզ վորպես «ինտերնացիոնալիզմ», վորպես «հարյուր տոկոսանոց լենինիզմ»:

Յես պնդում եմ, վոր սոցիալիզմի կառուցման կարևորագույն հարցում ընկ. Զինովյևը հեռանում է լենինիզմից, գլորվելով մենշևիկ Սուխանովի տեսակետին:

Դիմենք Լենինին: Ահա թե նա ինչ է ասում մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, 1915 թվի օգոստոսին.

«Տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափությունը կապիտալիզմի անպայման օրենքն է: Սրանից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է նախապես մի քանի կամ նույնիսկ մի՝ առանձին վերցրած՝ կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, էքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր յերկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպելով *), կծառանար մնացած՝ կապիտալիստական աշխարհի դեմ, իր կողմը գրավելով մյուս յերկրների ճնշված դասակարգերին, այդ-

*) Ընդգծումը իմն է: Ի. Ստ.:

երկրներում ապստամբություն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ զինվորական ուժով դուրս գալով շահագործող դասակարգերի և նրանց պետությունների դեմ» (տես՝ հ. XVIII, եջ 232—233, ռուս. հրատ.)։

Ի՞նչ է նշանակում Լենինի ընդգծված ֆրազը՝ «իր երկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպելով»։ Այդ նշանակում է, որ հաղթած երկրի պրոլետարիատը կարող է և պետք է՝ իշխանությունը վերցնելուց հետո՝ իր երկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպի։ Իսկ ի՞նչ է նշանակում՝ «սոցիալիստական արտադրություն կազմակերպել»։ Այդ նշանակում է սոցիալիստական հասարակություն կառուցել։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ Լենինի այս պարզ ու որոշ դրությունը կարիք չի հետագա մեկնաբանությունների։ Հակառակ դեպքում անհասկանալի կլինեյին Լենինի կոչերը, որ պրոլետարիատը 1917 թվի հոկտեմբերին իշխանությունը վերցնի։

Դուք տեսնում եք, որ Լենինի այս պարզ դրությունը տարբերվում է, ինչպես երկինքը երկրից, ընկ. Զինովյևվի շփոթ և հակալենինյան «դրությունից» այն մասին, որ մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել «մի երկրի շրջանակներում» նրա կառուցման անհնարինության պայմաններում։

Լենինն այդ ասել է 1915 թվին, մինչև պրոլետարիատի կողմից իշխանություն վերցնելը։ Բայց գուցե նրա հայացքները փոխվել են իշխանություն վերցնելու փորձառությունից հետո, 1917 թվից հետո։ Դիմենք Լենինի «Կոոպերացիայի մասին» բրոշյուրին, որը գրված է 1923 թվին։

«Յեվ իսկապես, — ասում է Լենինը, — պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը բազմամիլիոն մանր և մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիությանը ղեկավարելու գործն այդ պրոլետարիատի համար ապահովելը և այլն — միթե սա այն ամենը չէ, որ հարկավոր է, կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, որին մենք առաջ արհամարհում էինք, որպես չարչիական, և որին որոշ տեսակետից իրավունք ունենք արհամարհելու այժմ՝ նեպի պայմաններում նույնպես, — մի՞թե սա բոլոր անհրաժեշտը չէ՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար *)։ Այդ դեռևս սոցիալիստական հասարակության կառուցում չէ, բայց դա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և յիվ բավական՝ այդ կառուցման համար» *) (տես՝ հ. XXVII, եջ 392, ռուս. հրատ.)։

Այլ կերպ ասած՝ մենք կարող ենք և պետք է կառուցենք լիակատար սոցիալիստական հասարակություն, որովհետև մեր տրամադրության տակ մենք ունենք այն բոլորը, որ անհրաժեշտ է և բավական է այդ կառուցման համար։

*) Ընդգծումը իմն է։ Ի. Ստ.։

Թվում է, դժվար է ավելի պարզ արտահայտվել։
Համեմատեցեք Լենինի այս կլասիկ դրությունն ընկ. Ցակովլևվի
դեմ ուղղած ընկ. Զինովյևվի հակալենինյան հարձակման հետ և
կհասկանաք, որ Ցակովլևը միայն կրկնել է Լենինի խոսքերը մի
երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին, իսկ Զի-
նովյևը, այդ դրության դեմ դուրս գալով, ընկ. Ցակովլևվին խարա-
զանելով, հեռացել է Լենինից և կանգնել մենշևիկ Սուխանովի տեսա-
կետի վրա, մեր երկրում՝ նրա տեխնիկական հետամնացության շնոր-
հիվ՝ սոցիալիզմ կառուցելու անհնարինության տեսակետի վրա։
Հայտնի չէ միայն, թե ինչու էինք մենք 1917 թ. հոկտեմբերին
իշխանություն վերցնում, եթե հույս չունեինք սոցիալիզմ կառուցել։
Հարկավոր չէր իշխանություն վերցնել 1917 թ. հոկտեմբերին,—ահա
թե ինչ եզրակացության է բերում ընկ. Զինովյևվի արգումենտա-
ցիայի ներքին տրամաբանությունը։
Ապա ես պնդում եմ, որ սոցիալիզմի հաղթության կարևորա-
գույն հարցում ընկ. Զինովյևը դեմ է գնացել մեր կուսակցության
որոշակի վճիռներին, որոնք արձանագրված են XIV կուսկոնֆերեն-
ցիայի՝ «Կոմինտերնի և ՌԿԿ խնդիրները՝ ԿԻԳԿ *) ընդլայնված պլենումի
կապակցությամբ» հայտնի բանաձևում։
Դիմենք այդ բանաձևին։ Ահա թե ինչ է ասված այնտեղ մի երկ-
րում սոցիալիզմի հաղթելու մասին.

«Յերկու ուղղակի հակադիր հասարակական սիստեմների առկայությունն առաջ
է բերում կապիտալիստական բլոկադի, տնտեսական ճնշման ուրիշ ձևերի, զին-
ված ինտերվենցիայի, ռեստավրացիայի մշտական սպառնալիք։ Սոցիալիզմի
վերջնական հաղթանակի միակ յերաշխիքը, այսինքն ապահովությունը ռեստավ-
րացիայից**), հետևաբար, հանդիսանում է հաղթական սոցիալիստական հեղա-
փոխությունը մի շարք յերկրներում»... «Լենինիզմն ուսուցանում է, որ սո-
ցիալիզմի վերջնական հաղթանակը՝ բուրժուական հարաբերությունների ռես-
տավրացիայից լիովին ապահով լինելու իմաստով**) հնարավոր է միայն մի-
ջազգային մասշտաբով»... «Սրանից բնավ չի հետևում**), որ անհնարին է լիա-
կատար սոցիալիստական հասարակության*) կառուցումն այնպիսի հետամնաց
յերկրում, ինչպիսին է Ռուսաստանը, առանց տեխնիկա-տնտեսական տեսակե-
տով ավելի զարգացած յերկրների «պետական օգնության» (Տրոցկի) (տես բա-
նաձևը)։

Դուք տեսնում եք, որ բանաձևը մեկնաբանում է սոցիալիզմի
վերջնական հաղթանակը որպես ապահովություն ինտերվենցիայից և
ռեստավրացիայից,—ի հակառակություն ընկ. Զինովյևվի
մեկնաբանության՝ նրա «Լենինիզմ» գրքում։
Դուք տեսնում եք, որ բանաձևը հնարավոր է գտնում լիակա-
տար սոցիալիստական հասարակության կառուցումն այնպիսի հետա-

*) Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտե (ИККИ)։ Հայ. հրատ. խմբ.։
**) Ընդգծումը իմն է։ Ի. Ստ.։

նաց յերկրում, ինչպիսին է Ռուսաստանը, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետով ավելի զարգացած յերկրների «պետական օգնության»՝ ի լիակատար հակադրություն ընկ. Զինովևի հակառակ պնդման, XIV կուսհամագումարի իր յեզրափակման խոսքում ընկ. Յակովլևի դեմ ուղղած իր հարձակման մեջ:

Ինչպե՞ս անվանել այս, յեթե վոչ ընկ. Զինովևի պայքար XIV կուսկոնֆերենցիայի բանաձևի դեմ:

Իհարկե, կուսակցական բանաձևերը յերբեմն անմեղ չեն: Պատահում է, վոր կուսակցական բանաձևերը սխալներ են պարունակում: Ընդհանրապես ասած, կարելի յե յենթադրել, վոր XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը նույնպես վորոշ սխալներ է պարունակում: Հնարավոր է, վոր ընկ. Զինովևը սխալ է համարում այդ բանաձևը, բայց այն ժամանակ դրա մասին պետք է խոսել պարզ և բացահայտ կերպով, ինչպես վայել է բոլշևիկին: Սակայն ընկ. Զինովևն ինչ-վոր պատճառով այդպես չի անում: Նա գերադասել է ընտրել ուրիշ ճանապարհ, XIV կուսկոնֆերենցիայի բանաձևի թիկունքային գրոհման ճանապարհ, լռություն պահպանելով այդ բանաձևի մասին և բանաձևի վորևէ բացահայտ քննադատություն հրապարակ չբերելով: Ընկ. Զինովևը, յերևի, կարծում է, թե այդ ճանապարհն ամենից լավ է հասնում նպատակին: Իսկ նրա նպատակը մեկն է—«բարելավել» բանաձևը և «մի քիչ» ուղղել Լենինին: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ընկ. Զինովևը սխալվել է իր հաշիվներում:

Վորտեղից է ծագում ընկ. Զինովևի սխալը: Վո՞րն է այդ սխալի արմատը:

Այդ սխալի արմատը, ըստ իս, այն է, վոր ընկ. Զինովևը համոզված է, թե մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման անհաղթահարելի խոչընդոտ է, վոր պրոլետարիատը, մեր յերկրի տեխնիկական հետամնացության շնորհիվ, սոցիալիզմ կառուցել չի կարող: Ընկ. Զինովևը և ընկ. Կամենևը մի ժամանակ փորձ էին անում հանդես գալ այդ արգումենտով կուսակցության ԿԿ նիստերից մեկում, ապրիլյան կուսկոնֆերենցիայի նախօրեյին: Բայց նրանք հակահարված ստացան և ստիպված յեղան նահանջել, ձևականորեն յենթարկվելով հակադիր տեսակետին, ԿԿ մեծամասնության տեսակետին: Բայց, ձևականորեն նրան յենթարկվելով, ընկ. Զինովևն ամբողջ ժամանակ շարունակում էր պայքար նրա դեմ (տե՛ս ընկ. Զինովևի «Լենինիզմ» գիրքը և յեզրափակման խոսքը XIV կուսհամագումարում): Ահա թե ինչ է ասում ՀամԿԿ ԿԿ-ում տեղի ունեցած այդ «միջադեպի» մասին մեր կուսակցության Մոսկվայի կոմիտեն՝ Լենինգրադի նահանգական կուսկոնֆերենցիայի նամակին տված իր «Պատասխանում».

«Դեռ շատ առաջ ընկերներ Կամենևը և Զինովևը Քաղբյուրոյում պաշտպանում էին այն տեսակետը, թե իբր մենք չենք կարող դուրս գալ մեր ներքին դժվարությունների տակից՝ մեր տեխնիկական և տնտեսական հետամնացության շնորհիվ, յեթե միայն մեզ չփրկի միջազգային հեղափոխությունը: Իսկ մենք, ԿԿ մեծամասնության հետ մեկտեղ, կարծում ենք, վոր մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել, կառուցում ենք և կկառուցենք այն, չնայած մեր տեխնիկական հետամնացությանը, և հակառակ նրան: Մենք կարծում ենք, վոր այդ շինարարությունն ընթանալու յե, իհարկե, շատ ավելի դանդաղ, քան համաշխարհային հաղթանակի պայմաններում, բայց և այնպես մենք առաջ ենք գնում ու պիտի գնանք: Մենք նաև յենթադրում ենք, վոր ընկ. ընկ. Կամենևի և Զինովևի տեսակետն արտահայտում է թերահավատություն դեպի մեր բանվոր դասակարգի և նրա հետևից գնացող գյուղացիական մասսաների ներքին ուժերը: Մենք յենթադրում ենք, վոր այդ տեսակետը նահանջ է լենինյան դիրքից» (տե՛ս «Պատասխան»-ը):

Այս փաստաթուղթը մամուլի մեջ յերևան յեկավ XIV կուսհամագումարի առաջին նիստերի ժամանակ: Ընկ. Զինովևը, իհարկե, հնարավորություն ուներ դեռևս համագումարում դուրս գալ այս փաստաթղթի դեմ: Բնորոշ է, վոր ընկ. ընկ. Զինովևի և Կամենևի մոտ արգումենտներ չգտնվեցին այս ծանր մեղադրանքի դեմ, վոր առաջադրել էր նրանց մեր կուսակցության Մոսկվայի կոմիտեն: Պատահակա՞ն է այս արդյոք: Յես կարծում եմ, վոր պատահական չէ: Մեղադրանքը, ըստ յերևույթին, հասավ նպատակին: Ընկ. Զինովևը և ընկ. Կամենևը լռությամբ «պատասխանեցին» այդ մեղադրանքին այն պատճառով, վոր այդ մեղադրանքը «հերքելու» բան չունեյին:

Նոր օպոզիցիան վիրավորվում է, վոր ընկ. Զինովևին մեղադրում են թերահավատության մեջ՝ դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակի գործը մեր յերկրում: Բայց յեթե ընկ. Զինովևը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը մի ամբողջ տարի քննարկելուց հետո, ընկ. Զինովևի տեսակետը ԿԿ Քաղբյուրոյի կողմից մերժվելուց հետո (1925 թ. ապրիլ), այն բանից հետո, յերբ արդեն կազմվել է կուսակցության վորոշակի կարծիքն այդ հարցի մասին, վորն արձանագրվել է XIV կուսկոնֆերենցիայի հայտնի բանաձևում (1925 թ. ապրիլ),—յեթե այդ բոլորից հետո ընկ. Զինովևը վճռում է իր «Լենինիզմ» գրքում հանդես գալ (1925 թ. սեպտեմբեր) կուսակցության տեսակետի դեմ, յեթե նա այնուհետև կրկնում է այդ յելույթը XIV համագումարում,—ապա ինչպե՞ս բացատրել այդ բոլորը, այդ համառությունը, իր սխալը պաշտպանելու այդ հաստատակամությունը, յեթե վոչ նրանով, վոր ընկ. Զինովևը վարակված է, անհուսալի կերպով վարակված թերահավատությամբ դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը մեր յերկրում:

Ընկ. Զինովևին հաճելի յե իր այդ թերահավատությունը մեկնաբանել վորպես ինտերնացիոնալիզմ: Բայց այդ յերբվանի՞ց է, վոր

լենինիզմի կարդինալ հարցում լենինիզմից հեռանալն սկսել է մեկնաբանվել մեզ մոտ վորպես ինտերնացիոնալիզմ։

Արդյոք ավելի ճիշտ չի լինի ասել, վոր վոչ թե կուսակցությունը, այլ ընկ. Զինովյևն է մեղանչում այստեղ ինտերնացիոնալիզմի և միջազգային հեղափոխության դեմ։ Վորովհետև ինչ է «կառուցվող սոցիալիզմի» մեր յերկիրը, յեթե վոչ համաշխարհային հեղափոխության բազա։ Բայց արդյոք նա կարող է լինել համաշխարհային հեղափոխության իսկական բազա, յեթե նա ընդունակ չե սոցիալիստական հասարակություն կառուցելու։ Նա կարող է արդյոք մնալ այն մեծագույն ձգողական կենտրոնը բոլոր յերկրների բանվորների համար, վորպիսին նա, անտարակույս, հանդիսանում է հիմա, յեթե նա անընդունակ է իր յերկրում հաղթանակ ձեռք բերելու մեր տնտեսության կապիտալիստական տարրերի նկատմամբ, ձեռք բերելու սոցիալիստական շինարարության հաղթանակ։ Յես կարծում եմ, վոր չի կարող։ Բայց արդյոք սրանից չի հետևում, վոր թերահավատությունը դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը, այդ թերահավատության քարոզը տանում է դեպի պսակազրկումը մեր յերկրի, վորպես համաշխարհային հեղափոխության բազայի, իսկ մեր յերկրի պսակազրկումը տանում է դեպի համաշխարհային հեղափոխական շարժման թուլացում։ Պ. պ. սոցիալ-դեմոկրատները բանվորներին ինչով եյին խրտնեցնում մեզանից։ Քարոզ կարդալով այն մասին, վոր «ռուսների ձեռնարկածից բան դուրս չի գա»։ Մենք հիմա ինչով ենք հարվածում սոցիալ-դեմոկրատներին, բանվորական պատվիրակությունների ամբողջ շարաններ գրավելով դեպի մեր յերկիրը և դրանով իսկ ամրացնելով կոմունիզմի դիրքերն ամբողջ աշխարհում։ Մեր հաջողություններով սոցիալիզմի շինարարության գործում։ Բայց միթե սրանից հետո պարզ չէ, վոր ով քարոզում է թերահավատություն դեպի մեր հաջողությունները սոցիալիզմի շինարարության գործում, նա անուղղակի կերպով ոգնում է սոցիալ-դեմոկրատներին, նա թուլացնում է միջազգային հեղափոխական շարժման թափը, նա անխուսափելիորեն հեռանում է ինտերնացիոնալիզմից։

Դուք տեսնում եք, վոր «ինտերնացիոնալիզմի» գործն ընկ. Զինովյևի մոտ բոլորովին էլ ավելի լավ վիճակում չէ, քան «հարյուր տոկոսանոց լենինիզմի» գործը՝ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցում։

Այդ պատճառով XIV կուսհամագումարը ճիշտ վարվեց, նոր ոպոզիցիայի տեսակետները բնորոշելով վորպես «թերահավատություն դեպի սոցիալիզմի կառուցման գործը» և «լենինիզմի աղճատում»։

VII. ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Յես կարծում եմ, վոր թերահավատությունը դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը նոր ոպոզիցիայի հիմնական սխալն է։ Այդ սխալն, ըստ իս, հիմնական է այն պատճառով, վոր նրանից են առաջ գալիս նոր ոպոզիցիայի բոլոր մնացած սխալները։ Նոր ոպոզիցիայի սխալները նեպի, պետկապիտալիզմի, մեր սոցիալիստական արդյունաբերության բնության հարցում, այն հարցում, թե ինչ դեր ունի կոոպերացիան պրոլետարիատի դիկտատուրայի օրով, կուլակության դեմ պայքարելու մեթոդների, միջակ գյուղացիության դերի և տեսակարար կշռի հարցում,—այս բոլոր սխալներն արտաբերվող են ոպոզիցիայի հիմնական սխալից, թերահավատությունից դեպի մեր յերկրի ուժերով սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորությունը։

Ի՞նչ է թերահավատությունը դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը մեր յերկրում։

Այդ, ամենից առաջ, բացակայությունն է վստահության, վոր գյուղացիության հիմնական մասսաները կարող են՝ մեր յերկրի զարգացման հայտնի պայմանների շնորհիվ՝ ներգրավվել սոցիալիստական շինարարության գործի մեջ։

Յերկրորդ, այդ՝ բացակայությունն է վստահության, վոր մեր յերկրի պրոլետարիատը, վորի տնօրինության տակ են ժողովրդական տնտեսության իշխող բարձունքները, ընդունակ է գյուղացիության հիմնական մասսաներին ներգրավելու սոցիալիստական շինարարության գործի մեջ։

Այս դրույթներից է յելնում ոպոզիցիան լռելյայն՝ մեր զարգացման ուղիների վերաբերյալ իր կառուցումներում, — միևնույնն է՝ գիտակցաբար է անում այդ, թե անգիտակցաբար։

Արդյոք խորհրդային գյուղացիության հիմնական մասսան կարելի է ներգրավել սոցիալիստական շինարարության գործի մեջ։

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում այդ առթիվ կա յերկու հիմնական դրույթ.

1) «Խորհրդային Միության գյուղացիությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ։ Մի գյուղացիություն, վորն անցել է յերեք հեղափոխության շկոլա, կռվել է ցարի դեմ և բուրժուական իշխանության դեմ՝ պրոլետարիատի հետ մեկտեղ և պրոլետարիատի գլխավորությամբ, վորը հող և հաշտություն է ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից և այդ պատճառով դարձել է պրոլետարիատի ռեզերվը, — այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուական հեղափոխության ժամանակ կռվել է լիբերալ բուրժուազիայի գլխավորությամբ, հողն ստացել է այդ բուրժուազիայի ձեռքից և այդ պատճառով դարձել է բուրժուա-

զիայի ռեզերվը: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ խորհրդային գյուղացիությունը, որը սովորել է գնահատել պրոլետարիատի քաղաքական բարեկամությունը և քաղաքական գործակցությունն ու իր ազատությունը պարտական է այդ բարեկամությանը և այդ գործակցությանը, — չի կարող չծառայել իբրև բացառիկ նպաստավոր նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական գործակցություն ունենալու համար»:

2) «Ռուսաստանի գյուղատնտեսությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղատնտեսության հետ: Այնտեղ գյուղատնտեսության զարգացումն ընթանում է կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խոր շերտավորման պայմաններում, մի բևեռում ունենալով՝ խոշոր կալվածքներ ու մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաներ, մյուսում՝ պաուպերիզմ, աղքատություն և վարձու ստրկություն: Դրա պատճառով անկումն ու քայքայումն այնտեղ միանգամայն բնական են: Այդպես չէ Ռուսաստանում: Մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղիով թեկուզ հենց այն պատճառով, որ խորհրդային իշխանության առկայությունը և արտադրության հիմնական գործիքների ու միջոցների ազգայնացումը չեն թույլատրում այդպիսի զարգացում: Ռուսաստանում գյուղատնտեսության զարգացումը պետք է ընթանա ուրիշ ուղիով, միլիոնավոր մանր և միջակ գյուղացիության կոոպերացման ուղիով, պետության կողմից արտոնյալ վարկավորման կարգով պաշտպանվող մասսայական կոոպերացիան գյուղում զարգացնելու ուղիով: Կոոպերացիայի վերաբերյալ հոդվածներում Լենինը ճիշտ է մատնանշել, որ գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք է ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոոպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղիով, սկզբում գյուղատնտեսության արտադրանքը շուկա հանելու ասպարեզում, իսկ հետո — գյուղատնտեսության մթերքների արտադրության ասպարեզում կոլեկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատավորելու ուղիով»... «Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ գյուղացիության հսկայական մեծամասնությունը սիրով վոտք կդնի զարգացման այս նոր ուղին, դեն նետելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաների և վարձու ստրկության ուղին, աղքատության և քայքայման ուղին»:

Ճի՞շտ են արդյոք այս դրույթները:

Ես կարծում եմ, որ այս յերկու դրույթունն էլ ճիշտ և անվիճելի յեն մեր ամբողջ շինարարական ժամանակաշրջանի համար՝ նեպի պայմաններում:

Նրանք միայն արտահայտությունն են Լենինի հայտնի թեզիսների՝ պրոլետարիատի և գյուղացիության զոդման, գյուղացիական տնտեսությունները յերկրի սոցիալիստական զարգացման սիստեմի մեջ մտցնելու մասին, այն մասին, որ պրոլետարիատը պետք է շարժվի դեպի սոցիալիզմ գյուղացիության հիմնական մասսաների հետ միասին, այն մասին, որ գյուղացիության միլիոնավոր մասսաների կոոպերացումը լայն ճանապարհն է գյուղում կատարվող սոցիալիստական շինարարության, որ մեր սոցիալիստական ինդուստրիայի աճման պայմաններում «կոոպերացիայի հասարակ աճումը մեզ համար համանման է սոցիալիզմի աճմանը» (տես՝ հ. XXVII, եջ 396, ռուս. հրատ.):

ղացիությունը, չնայած նրա վոչ-սոցիալիստական լինելուն, այն ժամանակ գնաց սոցիալիստական պրոլետարիատի հետևից:

Նույն այդ բանը պետք է ասել մեր յերկրի սոցիալիստական շինարարության մասին, գյուղացիությունն այդ շինարարության հունի մեջ ներգրավելու մասին: Գյուղացիությունը վոչ-սոցիալիստական է ըստ իր դրության: Բայց նա պետք է բռնի, և պարտավորապես կբռնի, սոցիալիստական զարգացման ուղին, վորովհետև չկան և չեն կարող լինել գյուղացիությունն աղքատությունից ու քայքայումից փրկելու ուրիշ ճանապարհներ, բացի շաղկապից՝ պրոլետարիատի հետ, բացի շաղկապից սոցիալիստական արդյունաբերության հետ, բացի գյուղացիության մասսայական կոոպերացման միջոցով գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունի մեջ մտնելուց:

Ինչո՞ւ անպատճառ գյուղացիության մասսայական կոոպերացման միջոցով:

Այն պատճառով, որ մասսայական կոոպերացման մեջ «մենք գտանք՝ մասնավոր շահը, մասնավոր-առևտրական շահը միացնելու, այդ շահը պետության կողմից ստուգելու և վերահսկողության յենթարկելու այն աստիճանը, այդ շահն ընդհանուր շահերին յենթարկելու այն աստիճանը» (Լենին), վորն ընդունելի և ձեռնտու յե գյուղացիության համար և վորը պրոլետարիատի համար ապահովում է գյուղացիության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության գործի մեջ մտցնելու հնարավորությունը: Հենց այն պատճառով, որ գյուղացիության համար ձեռնտու յե կազմակերպել իր ապրանքների վաճառահանումը և իր տնտեսությանը գյուղատնտեսական մեքենաներ հայթայթելը կոոպերացիայի միջոցով, հենց այդ պատճառով նա պետք է գնա, և նա կգնա մասսայական կոոպերացման ճանապարհով:

Իսկ ի՞նչ է նշանակում գյուղացիական տնտեսությունների մասսայական կոոպերացումը՝ սոցիալիստական արդյունաբերության գլխավորման պայմաններում:

Այդ նշանակում է մանր-ապրանքային գյուղացիական տնտեսության հեռանալը հին կապիտալիստական ճանապարհից, վորը հղի յե գյուղացիության մասսայական քայքայումով, և անցումը դեպի զարգացման նոր ճանապարհ, սոցիալիստական շինարարության ճանապարհը:

Ահա թե ինչու պայքարը հանուն գյուղացիական տնտեսության զարգացման նոր ուղու, պայքարը հանուն գյուղացիության հիմնական մասսայի ներգրավման սոցիալիզմի կառուցման գործի մեջ — մեր կուսակցության հերթական խնդիրն է:

Համ ԿԿ XIV համագումարը ճիշտ վարվեց, վորոշելով, վոր՝

«Սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին գյուղում այն է, վոր սոցիալիստական պետարդյունաբերության, պետական վարկային հիմնարկների և

պրոլետարիատի ձեռքին գտնվող այլ խոշոր բարձունքների աճող տնտեսական ղեկավարության պայմաններում գյուղացիության հիմնական մասսան ներգրավել կոոպերատիվ կազմակերպության մեջ և այդ կազմակերպության համար ապահովել սոցիալիստական զարգացումը, օգտագործելով, հաղթահարելով և արտամղելով նրա կապիտալիստական տարրերը» (տես՝ համագումարի բանաձևը ԿԿ զեկուցման առթիվ):

Նոր օպոզիցիայի խորագույն սխալն այն է, վոր նա չի հավատում գյուղացիության զարգացման այդ նոր ճանապարհին, չի տեսնում կամ չի հասկանում այդ նոր ճանապարհի ամբողջ անխուսափելիությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Իսկ այդ բանը նա չի հասկանում այն պատճառով, վոր չի հավատում սոցիալիստական շինարարության հաղթանակին մեր յերկրում, չի հավատում մեր պրոլետարիատի ընդունակությանը՝ իր հետևից տանելու գյուղացիությունը սոցիալիզմի ճանապարհով:

Այստեղից առաջ է գալիս նեպի յերկակի բնույթի չհասկանալը, նեպի բացասական կողմերի չափազանցելը և նեպի մեկնաբանելն իբրև նահանջ առավելապես:

Այստեղից առաջ է գալիս մեր տնտեսության կապիտալիստական տարրերի դերի չափազանցումը և մեր սոցիալիստական զարգացման լծակների (սոցիալիստական արդյունաբերություն, վարկային սիստեմ, կոոպերացիա, պրոլետարիատի իշխանություն և այլն) դերի նվազեցումը:

Այստեղից առաջ է գալիս մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնության չհասկանալը և կասկածները Լենինի կոոպերատիվ պլանի ճշտության վերաբերմամբ:

Այստեղից առաջ է գալիս գյուղի շերտավորման փքելը, խուճապը կուլակի հանդեպ, միջակի դերի նվազեցումը, միջակի հետ ամուր դաշինք ապահովելու վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը վիժեցնելու փորձերը և, ընդհանրապես, պատեպատ ընկնելը՝ գյուղում կուսակցության վարելիք քաղաքականության հարցում:

Այստեղից առաջ է գալիս չհասկանալը կուսակցության այն հսկայական աշխատանքի, վոր կատարվում է բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաներին արդյունաբերության ու գյուղատնտեսության շինարարության, կոոպերացիայի և խորհուրդների աշխուժացման, յերկրի կառավարման, բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի, մեր պետական ապարատի բարելավման ու վերափոխման համար մղվող պայքարի ասպարեզ ներգրավելու համար,— աշխատանք, վորը նախանշանում է զարգացման նոր շրջանի սկսվելը և առանց վորի յերևակայելի չէ վոչ մի սոցիալիստական շինարարություն:

Այստեղից առաջ է գալիս անհուսությունն ու շփոթվածությունը մեր շինարարության դժվարությունների առաջ, կասկածները մեր-

Իսկապես՝ ինչ ճանապարհով կարող է և պետք է ընթանա գյուղացիական տնտեսության զարգացումը մեր յերկրում:

Գյուղացիական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չէ: Գյուղացիական տնտեսությունը, յեթե վերցնենք գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-ապրանքային տնտեսություն է: Իսկ ինչ է մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունը: Դա մի տնտեսություն է, վոր կանգնած է կապիտալիզմի և սոցիալիզմի միջև՝ ճամպարաժանին: Այն կարող է զարգանալ և՛ դեպի կապիտալիզմը, ինչպես այդ տեղի յե ունենում այժմ կապիտալիստական յերկրներում, և՛ դեպի սոցիալիզմը, ինչպես այդ պետք է տեղի ունենա մեզ մոտ, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի օրոք:

Վորտեղից է առաջ գալիս գյուղացիական տնտեսության այդպիսի անկայունությունը, անինքնուրույնությունը: Այդ ինչո՞վ բացատրել:

Այդ բացատրվում է գյուղացիական տնտեսությունների ցրվածությամբ, նրանց անկազմակերպությամբ, նրանց կախումով քաղաքից, ինդուստրիայից, վարկային սիստեմից, յերկրի իշխանության բնույթից, վերջապես, բացատրվում է այն հանրահայտ դրությամբ, վոր գյուղը գնում է և պետք է գնա քաղաքի հետևից ինչպես նյութական, այնպես էլ կուլտուրական տեսակետով:

Գյուղացիական տնտեսության զարգացման կապիտալիստական ուղին նշանակում է զարգացում գյուղացիության խորագույն շերտավորման ճանապարհով՝ մի բևեռում ունենալով խոշոր լատիֆունդիաներ և մյուս բևեռում՝ մասսայական աղքատացում: Զարգացման այսպիսի ուղին անխուսափելի յե կապիտալիստական յերկրում, վորովհետև գյուղը, գյուղացիական տնտեսությունը կախման մեջ է գտնվում քաղաքից, ինդուստրիայից, քաղաքում համակենտրոնացված վարկից, իշխանության բնույթից,— իսկ քաղաքում թագավորում է բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը:

Գյուղացիական տնտեսությունների զարգացման այս ուղին պարտադի՞ր է արդյոք մեր յերկրում, վորտեղ քաղաքն ունի բոլորովին այլ դեմք, վորտեղ ինդուստրիան գտնվում է պրոլետարիատի ձեռքին, վորտեղ տրանսպորտը, վարկային սիստեմը, պետական իշխանությունը և այլն կենտրոնացված են պրոլետարիատի ձեռքերում, վորտեղ հողի ազգայնացումն ընդհանուր օրենք է յերկրում: Իհարկե, պարտադիր չէ: Ընդհակառակը: Հենց այն պատճառով, վոր քաղաքը գյուղի ղեկավարն է, իսկ քաղաքում մեզ մոտ թագավորում է պրոլետարիատը, վորի ձեռքերում են ժողովրդական տնտեսության բոլոր իշխող բարձունքները, հենց այդ պատճառով գյուղացիական տնտեսությունների

զարգացումը պետք է ընթանա այլ ճանապարհով, սոցիալիստական շինարարության ճանապարհով։

Այդ ինչ ճանապարհ է։

Այդ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները կոոպերացիայի բոլոր գծերով մասսայաբար կոոպերացնելու ճանապարհն է, ցրված գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ինդուստրիայի շուրջը միավորելու ճանապարհն է, կոլեկտիվիզմի սկզբունքները գյուղացիության մեջ՝ սկզբում հողագործության մթերքների վաճառահանման և գյուղացիական տնտեսություններին քաղաքի արտադրանքներ մատակարարելու գծով, իսկ հետո գյուղատնտեսական արտադրության գծով արմատավորելու ճանապարհը։

Յեվ քանի գնում, այս ճանապարհն այնքան ավելի անխուսափելի յե դառնում պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, վորովհետև կոոպերացումը վաճառահանման գծով, կոոպերացումը մատակարարման գծով, վերջապես, կոոպերացումը վարկի և արտադրության գծով (գյուղատնտեսական ընկերություններ)—գյուղի բարեկեցության բարձրացման միակ ճանապարհն է, գյուղացիական լայն մասսաներին աղքատությունից և քայքայումից փրկելու միակ միջոցը։

Ասում են, վոր մեր գյուղացիությունն ըստ իր դրության վոչ սոցիալիստական է, վոր դրա շնորհիվ նա անընդունակ է սոցիալիստական զարգացման։ Այդ, իհարկե, ճիշտ է, վոր գյուղացիությունը վոչ-սոցիալիստական է ըստ իր դրության։ Բայց այդ արգումենտ չե գյուղացիական տնտեսությունների՝ սոցիալիզմի ուղիով զարգանալու դեմ, յեթե ապացուցված է, վոր գյուղը գնում է քաղաքի հետևից, իսկ քաղաքում իշխում է սոցիալիստական արդյունաբերությունը։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ գյուղացիությունը նույնպես վոչ-սոցիալիստական էր ըստ իր դրության և բնավ չէր ցանկանում յերկրում սոցիալիզմ հաստատել։ Այն ժամանակ նա ձգտում էր գլխավորապես կալվածատիրական իշխանության լիկվիդացիայի և պատերազմի վերջացման, խաղաղության հաստատման։ Սակայն և այնպես այն ժամանակ նա գնաց սոցիալիստական պրոլետարիատի հետևից։ Ինչու։ Այն պատճառով, վոր բուրժուազիայի տապալումը և պրոլետարիատի կողմից իշխանության վերցնելը այն ժամանակ իմպերիալիստական պատերազմից դուրս գալու միակ ճանապարհն էր, խաղաղություն հաստատելու միակ ճանապարհը։ Այն պատճառով, վոր այն ժամանակ ուրիշ ճանապարհներ չկային և չեյին կարող լինել։ Այն պատճառով, վոր այն ժամանակ մեր կուսակցությանը հաջողվեց շոշափել, գտնել գյուղացիության սպեցիֆիկ շահերը (կալվածատիրոջ տապալում, հաշտություն) յերկրի ընդհանուր շահերին (պրոլետարիատի դիկտատուրա) միացնելու և յենթարկելու այն աստիճանը, վորը գյուղացիության համար ընդունելի և ձեռնտու հանդիսացավ։ Յեվ գյու-

նական ձև, իսկ կոոպերացիան դիտում էր պետկապիտալիզմին զուգակցած։ Բայց այդ մեկնաբանությունն այժմ արդեն բավական չէ, և պատմությունը գերազանցել է նրան, վորովհետև այդ պահից իվեր ժամանակները փոխվել են, սոցիալիստական արդյունաբերությունը մեզ մոտ զարգացել է, պետկապիտալիզմը չի արմատացել այն չափով, ինչ չափով այդ ցանկալի յեր, իսկ կոոպերացիան, վորը հիմա տասնյակ միլիոնից ավելի մարդ է ընդգրկում, սկսել է զոդվել սոցիալիստական ինդուստրիայի հետ։

Այլ կերպ էլ ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր «Պարենհարկից» արդեն յերկու տարի անց, 1923 թվին, Լենինն սկսեց այլ կերպ դիտել կոոպերացիան, գտնելով, վոր «կոոպերացիան մեր պայմաններում ամենուրեք միանգամայն համընկնում է սոցիալիզմին» (տես՝ հ. XXVII, եջ 396, ռուս. հրատ.)։

Այլ կերպ էլ ինչո՞վ բացատրել այդ, յեթե վոչ նրանով, վոր այդ յերկու տարվա ընթացքում սոցիալիստական արդյունաբերությունը կարողացավ աճել, իսկ պետկապիտալիզմը պատշաճ չափով չարմատավորվեց, վորի հետևանքով Լենինն սկսեց դիտել կոոպերացիան վոչ թե պետկապիտալիզմին զուգակցած, այլ սոցիալիստական արդյունաբերությանը զուգակցած։

Փոխվել եյին կոոպերացիայի զարգացման պայմանները։ Պետք է փոխվեր նաև մոտեցումը կոոպերացիայի հարցին։

Ահա, օրինակ, մի նշանակալից տեղ Լենինի «Կոոպերացիայի մասին» (1923 թ.) բրոշյուրից, վորը լույս է սփռում այս հարցի վրա.

«Պետական կապիտալիզմի պայմաններում *) կոոպերատիվ ձեռնարկությունները զանազանվում են պետական-կապիտալիստականներից, նախ՝ վորպես մասնավոր ձեռնարկություններ և, յերկրորդ՝ վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ։ Մեր գոյություն ունեցող կարգերում *) կոոպերատիվ ձեռնարկությունները զանազանվում են մասնավոր — կապիտալիստական ձեռնարկություններից, վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն զանազանվում սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են հողի վրա, յերբ արտադրության միջոցները պատկանում են պետությանը, այսինքն բանվոր դասակարգին» (տես՝ հ. XXVII, եջ 396, ռուս. հրատ.)։

Այս փոքրիկ ցիտատում լուծված է յերկու խոշոր հարց։ Նախ՝ այն հարցը, վոր «մեր գոյություն ունեցող կարգերը» պետկապիտալիզմ չեն։ Յերկրորդ՝ այն հարցը, վոր կոոպերատիվ ձեռնարկությունները, վերցրած «մեր կարգերի հետ» զուգակցած, «չեն զանազանվում» սոցիալիստական ձեռնարկություններից։

Յես կարծում եմ, վոր ավելի պարզ դժվար է արտահայտվել։

Ահա և մի տեղ Լենինի նույն այդ բրոշյուրից.

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

«Կոոպերացիայի պարզ աճումը մեզ համար համանման ե (վերը նշված «փոքր» բացառությամբ) սոցիալիզմի աճմանը, և դրա հետ մեկտեղ մենք ստիպված ենք ընդունել սոցիալիզմի նկատմամբ մեր ունեցած ամբողջ տեսակետի արմատական փոփոխությունը» (տես՝ նույն տեղը)։

Ակներև ե, վոր «Կոոպերացիայի մասին» բրոշյուրում մենք գործ ունենք կոոպերացիայի նոր գնահատման հետ, վոր նոր ոպոզիցիան չի ցանկանում ընդունել և ջանասիրաբար լռություն ե պահպանում դրա մասին, հակառակ փաստերին, հակառակ ակներև ճշմարտությանը, հակառակ լենինիզմին։

Ուրիշ բան ե կոոպերացիան՝ վերցրած պետկապիտալիզմին զուգակցած և ուրիշ բան՝ կոոպերացիան, վերցրած սոցիալիստական արդյունաբերությանը զուգակցած։

Սակայն սրանից չի կարելի անել այն յեզրակացությունը, թե «Պարենհարկի» և «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի միջև անդունդ կա։ Այդ, իհարկե, սխալ ե։ Բավական ե վկայակոչել, որինակ, հետևյալ տեղը «Պարենհարկից», վորպեսզի մեկ անգամից ըմբռնենք անխզելի կապը «Պարենհարկի» և «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի միջև՝ կոոպերացիայի գնահատության հարցում։ Ահա դա.

«Կոնցեսիաներից սոցիալիզմին անցնելը, անցում ե խոշոր արտադրության մի ձևից խոշոր արտադրության մեկ ուրիշ ձևի։ Մանր տնտեսատերուկների կոոպերացիայից սոցիալիզմին անցնելը, անցում ե մանր արտադրությունից խոշորին, այսինքն մի անցում, վորն ավելի բարդ ե, բայց դրա փոխարեն ընդունակ ե ընդգրկելու, հաջողության դեպքում, բնակչության ավելի լայն մասսաներ, ընդունակ ե դուրս քաշելու առավել խորունկ և առավել կենսունակ արմատները հին, մինչ-սոցիալիստական *), նույնիսկ մինչ-կապիտալիստական հարաբերությունների, վորոնք ամենահամառն են ամեն մի «նորույթի» դիմադրելու իմաստով» (հ. XXVI, եջ 337, ռուս. հրատ.)։

Այս ցիտատից յերևում ե, վոր Լենինը դեռևս «Պարենհարկի» ժամանակ, յերբ մեզ մոտ դեռ չկար զարգացած սոցիալիստական ինդուստրիա, հնարավոր եր համարում, վոր կոոպերացիան, հաջողության դեպքում, կարող ե դառնալ «մինչ-սոցիալիստական», ուրեմն և կապիտալիստական հարաբերությունների դեմ ուղղվող պայքարի հզոր միջոց։ Յես կարծում եմ, վոր հետագայում հատկապես այս միտքն ե մեկնակետ ծառայել նրա «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի համար։

Բայց այս բոլորից ինչ ե հետևում։

Իսկ սրանից հետևում ե, վոր նոր ոպոզիցիան կոոպերացիայի հարցին մոտենում ե վոչ թե մարքսիստորեն, այլ մետաֆիզիկորեն։ Ոպոզիցիան դիտում ե կոոպերացիան վոչ թե վորպես պատմական յերևույթ, վերցրած ուրիշ յերևույթներին զուգակցած, ասենք՝ պետկապիտալիզմին (1921 թվին) կամ սոցիալիստական արդյունաբերությանը

*) Ընդգծումն իմն ե։ Ի. Ստ.:

յերկրի ինդուստրացման հնարավորության նկատմամբ, հոռետեսական շաղակրատությունը կուսակցության վերասերման մասին և այլն։

Նրանց մոտ՝ բուրժուաների մոտ — ամեն ինչ ավելի կամ պակաս չափով լավ վիճակում ե, իսկ մեզ մոտ՝ պրոլետարներիս մոտ — ավելի կամ պակաս չափով վատ վիճակում. յեթե Արևմուտքից հեղափոխությունը չհասնի՝ մեր բանը բուրդ ե, — այս ե նոր ոպոզիցիայի ընդհանուր տոնը, վորն, ըստ իս, լիկվիդատորական տոն ե, բայց ինչ-վոր բանի համար (հավանորեն զվարճության համար) ոպոզիցիայի կողմից ներկայացվում ե իբրև «ինտերնացիոնալիզմ»։

Նեպը կապիտալիզմ ե, ասում ե ոպոզիցիան։ Նեպն առավելապես նահանջ ե, ասում ե ընկ. Զինովյեվը։ Այս բոլորն, իհարկե, ճիշտ չե։ Իսկապես նեպը կուսակցության քաղաքականությունն ե, վորը թույտարում ե սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքար և հաշվի յե առել, վոր սոցիալիստական տարրերը պետք ե հաղթեն կապիտալիստական տարրերին։ Իսկապես նեպը նահանջով սկսվեց միայն։ Բայց նա հաշվի յե առել նահանջի ընթացքում ուժերի վերախմբավորում կատարել և հարձակում սկսել։ Իսկապես մենք արդեն միքանի տարի յե, ինչ հարձակվում ենք և հարձակվում ենք հաջողությամբ, զարգացնելով մեր ինդուստրիան, զարգացնելով խորհրդային առևտուրը, նեղելով մասնավոր կապիտալին։

Բայց վո՞րն ե այս թեզիսի իմաստը — նեպը՝ կապիտալիզմ ե, նեպը՝ նահանջ ե առավելապես։ Վո՞րն ե այս թեզիսի յելակետը։

Նրա յելակետն այն սխալ յենթադրությունն ե, թե մեզ մոտ հիմա կատարվում ե կապիտալիզմի պարզ վերականգնում, կապիտալիզմի պարզ «վերադարձ»։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի կասկածները մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի վերաբերմամբ։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի խուճապը կուլակի հանդեպ։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել այն փութկոտությունը, վորով ոպոզիցիան բռնեց գյուղացիության շերտավորման վերաբերյալ սխալ թվերի պոչից։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի հատուկ մոռացկոտությունն այն առթիվ, վոր միջակը մեզ մոտ հողագործության կենտրոնական դեմքն ե։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել միջակի տեսակարար կշռի թերագնահատումը և կասկածները Լենինի կոոպերատիվ պլանի նկատմամբ։ Միայն այս յենթադրությամբ կարելի յե «հիմնավորել» նոր ոպոզիցիայի չհավատալը գյուղի զարգացման նոր ուղուն, գյուղը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղուն։

Իսկապես հիմա մեզ մոտ տեղի յե ունենում վոչ թե կապիտալիզմի վերականգնման միակողմանի պրոցես, այլ կապիտալիզմի զարգացման և սոցիալիզմի զարգացման յերկկողմանի պրոցես, սոցիալիս-

տական տարրերի կողմից կապիտալիստական տարրերի դեմ ուղղված պայքարի հակասական պրոցես, սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական տարրերին հաղթահարելու պրոցես: Սա հավասարապես անվիճելի յե ինչպես քաղաքի նկատմամբ, վորտեղ սոցիալիզմի բազան պետական արդյունաբերությունն ե, այնպես ել գյուղի նկատմամբ, վորտեղ սոցիալիստական զարգացման հիմնական ակոսը (зацепка) մասսայական կոոպերացիան ե, վորը շղկապվում ե սոցիալիստական արդյունաբերության հետ:

Կապիտալիզմի պարզ վերականգնումն անհնարին ե թեկուզ այն պատճառով, վոր մեզ մոտ իշխանությունը պրոլետարական ե, խոշոր արդյունաբերությունը պրոլետարիատի ձեռքին ե, տրանսպորտը և վարկը գտնվում են պրոլետարական պետության տրամադրության տակ:

Շերտավորումը չի կարող նախկին չափերն ընդունել, միջակը մնում ե գյուղացիության հիմնական մասսան, իսկ կուլակը չի կարող առաջվա ուժն ստանալ թեկուզ հենց այն պատճառով, վոր հողը մեզ մոտ ազգայնացված ե, շրջանառությունից հանված ե, իսկ մեր առևտրական, վարկային, հարկային և կոոպերատիվ քաղաքականությունը նպատակադրել ե սահմանափակել կուլակության շահագործական ձգտումները, բարձրացնել գյուղացիության ամենալայն մասսաների բարեկեցությունը և հարթել ծայրահեղությունները գյուղում: Յես ել չեմ խոսում այն մասին, վոր պայքարը կուլակության դեմ մեզ մոտ հիմա ընթանում ե վոչ միայն հին գծով, չքավորներին կուլակության դեմ կազմակերպելու գծով, այլև նոր գծով, պրոլետարիատի և չքավորների դաշինքը միջակ գյուղացիական մասսաների հետ՝ ընդդեմ կուլակության ամրապնդելու գծով: Այն փաստը, վոր նոր ոպոզիցիան չի հասկանում այս յերկրորդ գծով կուլակության դեմ պայքարելու իմաստն ու նշանակությունը, այդ փաստը մի ավելորդ անգամ հաստատում ե, վոր ոպոզիցիան սահում ե գյուղի զարգացման հին ուղին, նրա կապիտալիստական զարգացման ուղին, յերբ կուլակն ու չքավորը կազմում եյին գյուղի հիմնական ուժերը, իսկ միջակը «վողողվում եր»:

Կոոպերացիան պետական կապիտալիզմի այլաձևությունն ե, ասում ե ոպոզիցիան, ընդսմին հենվելով Լենինի «Պարենհարկի» վրա, վորի պատճառով նա չի հավատում կոոպերացիան վորպես սոցիալիստական զարգացման հիմնական ակոս ոգտագործելու հնարավորությանը: Ոպոզիցիան այստեղ ել ամենակոպիտ սխալն ե գործում: Կոոպերացիայի այդպիսի մեկնաբանումը բավական և բավարար կլիներ 1921 թվին, յերբ գրվել ե «Պարենհարկը», յերբ մենք չունեյինք զարգացած սոցիալիստական արդյունաբերություն, յերբ Լենինը պետկապիտալիզմը պատկերացնում եր վորպես մեր տնտեսավարության հնարավոր հիմ-

(1923 թվին) զուգակցած, այլ վորպես ինչ-վոր մշտական և մեկ անգամ ընդմիշտ տրված բան, վորպես «իրն ինքնին»:

Այստեղից են առաջ գալիս ոպոզիցիայի սխալները կոոպերացիայի հարցում, այստեղից ե առաջ գալիս նրա թերահավատությունը, վոր գյուղը դեպի սոցիալիզմ զարգանում ե կոոպերացիայի միջոցով, այստեղից ե առաջ գալիս ոպոզիցիայի շեղվելը դեպի հին, ուղին, գյուղի կապիտալիստական զարգացման ուղին:

Ընդհանուր առմամբ այս ե նոր ոպոզիցիայի դիրքը սոցիալիստական շինարարության պրակտիկ հարցերում:

Յեզրակացությունը մեկն ե—ոպոզիցիայի գիծը, ինչ չափով վոր նա գիծ ունի, ոպոզիցիայի տատանումներն ու յերերումները, նրա թերահավատությունն ու շփոթվածությունը դժվարությունների հանդեպ—տանում են դեպի կապիտուլյացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ: Վորովհետև, յեթե նեպը նահանջ ե առավելապես, յեթե պետական արդյունաբերության սոցիալիստական բնությունը կասկածի յե յենթարկվում, յեթե կուլակը համարյա թե ամենակարող ե, քիչ հույս կա կոոպերացիայի վրա, միջակի դերը պրոգրեսիվ կերպով փոքրանում ե, գյուղի զարգացման նոր ուղին կասկածելի յե, կուսակցությունը համարյա թե վերասերվում ե, իսկ Արևմուտքի հեղափոխությունը դեռ այնքան ել մոտ չի,—ապա այս բոլորից հետո ոպոզիցիայի զինապահեստում ել ինչ ե մնում, նա ինչի՞ վրա յե հույս դնում մեր տնտեսության կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարում: Հո չի՞ կարելի կռիվ գնալ միմիայն «Եպոխայի փիլիսոփայությամբ»:

Պարզ ե, վոր նոր ոպոզիցիայի զինապահեստն աննախանձելի յե, յեթե ընդհանրապես կարելի յե այն՝ զինապահեստ անվանել: Այդ զինապահեստը պայքարի համար չե: Առավել ևս նա հաղթանակի համար չե:

Պարզ ե, վոր այդպիսի զինապահեստ ունենալու դեպքում կուսակցությունը «մի աչքախփոցում» կկործաներ իրեն, յեթե կռվի մեջ մտներ,—նա ստիպված կլիներ պարզապես զենքերը ցած դնել մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ:

Այդ պատճառով կուսակցության XIV համագումարը միանգամայն ճիշտ վարվեց, վորոշելով, վոր՝ «պայքարը հանուն սոցիալիստական շինարարության հաղթանակի ԽՍՀՄ-ում՝ կուսակցության հերթական խնդիրն ե». վոր այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ պայմաններից մեկն ել «պայքարն ե ընդդեմ թերահավատության դեպի սոցիալիզմի կառուցման գործը մեր յերկրում և ընդդեմ փորձերի՝ դիտելու մեր ձեռնարկությունները, վորոնք հետևողական-սոցիալիստական տիպի» (Լենին) ձեռնարկություններ են, վորպես «պետա-

կան-կապիտալիստական» ձեռնարկություններ. որ «այդպիսի գաղափարական հոսանքները, անհնարին դարձնելով մասսաների գիտակից վերաբերմունքը դեպի սոցիալիզմի շինարարությունն ընդհանրապես և սոցիալիստական արդյունաբերությունը՝ մասնավորապես, ընդունակ են միայն արգելակելու տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և հեշտացնելու մասնավոր կապիտալի պայքարը նրանց դեմ». որ «այդ պատճառով համագումարն անհրաժեշտ է համարում լայն դաստիարակչական աշխատանքը՝ լենինիզմի այդ աղավաղումները հաղթահարելու համար» (տես՝ ՀամԿԿ ԿԿ հաշվետվության առթիվ ընդունված բանաձևը)։

ՀամԿԿ XIV *համագումարի պատմական նշանակությունն այն է, որ նա կարողացավ մինչև արմատները բացահայտել նոր օպոզիցիայի սխալները, դեն նետեց նրա թերահավատությունն ու նվոցը, պարզ և հստակ կերպով ուրվագծեց սոցիալիզմի համար մղվող հետագա պայքարի ուղին, հաղթանակի հեռանկար տվեց կուսակցությանը և դրանով իսկ պրոլետարիատին զինեց անխորտակելի հավատով դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը։*

1926 թ. հունվարի 25։

Հայ. թարգմ. խմբ. Զ. Աշրաֆյան
Թարգմ. Ա. Խոնդկարյան
Սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 7 սեպտեմբերի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 2 նոյեմբերի 1933 թ.
Գլավլիտ 7774 (բ). Հրատ. № 137
Պատվեր № 50. Տիրաժ 6.000

Կուսհրատի տպարան. Երևան. 508,000 տպ. նշ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0179046

ԳԻՆԸ 2 Ռ.
ԿԱԶՄԸ 50 ԿՈՊ.

ՀԿ(բ)ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍՀՐԱՏ

И. СТАЛИН

1. ОБ ОСНОВАХ ЛЕНИНИЗМА
2. К ВОПРОСАМ ЛЕНИНИЗМА

Эривань. 1933. Партиздат